

—
—
—
—
—

САМОДЕРЖАЦИЯ

0000000000

22

U 33

Գիլեարդ Ռ Վ Ի Ե Լ

ՍԵՐԵԲՐԱԿԱՆԻ

ԵՄԵԱԾՏՈՅ

ՊԵՏՈՒԹՅՈՒՆ Տ 1981 թ.

ԳԱՐԱՎԱՑՏՈՅ ԵՊԻՍԿՈՊՈՍԻ

ՃԵՂԻՔ ԺԵ

100

30577




Դ Վ Ե Կ Ե Տ Ի Կ

Դ Տ Պ Ա Ր Ա Խ Ե Մ Մ Բ Ո Յ Ե Վ Ա Ր Ա Խ

ՅԱՄԻ 1830 ԹՄՀԹ

100

本草綱目



西漢本草綱目

明李時珍著 本草綱目圖說

卷一百一十五

ՅԱՌԱՋԱԲԱՆ

Արեւի ամենայն այս, որ և Արեւի ամենոս, որպէս
թուի եմեսացի էր և գաբաղացւոց եպիսկոպոս, և
Երբեմն՝ ի պայծառ քեմն յունական եկեղեցեացն Կոս
տանդնուուզօլսի՝ Երկրորդ յետ սրբոյ Ասկերերանին և
բազում անգամ նորին իսկ փոխանակ՝ գովութեամբ
ողջունելոյ գտեալ արժանի : Ա ամս որոյ և մեք ոչ
ինչ խղճեցաք յետ նորա տալ զսա՝ ի վայելս մերազ-
նեաց . յուսացեալ՝ թէ որպէս արդիւնական նախ-
նիքն իբրև ցանկալոյ իմիք կարօտելով յեղին զսա՝ ի
հայ բան , ոչ ինչ ընդհատ և որդիք այնպիսի հարցն՝
ընթերցասիրութէն նոցին պիտոյից ելցեն՝ ի ինդիք ,
նա և աւելի ևս : Վանդի և լինիցի իսկ սա նոցա պի-
տանի՝ ոչ միայն , որպէս նախնեացն , պարզ և յստակ
պերճախօսութեամբն և ածարանական հըմտութեցն
հարստութեամբ , այլ և գեղեցիկ հայկաբանութեց
հարտար թարգմանութեանն , որ և այս ոչ փոքր ինչ
օգուտ համարեցի յետ այնքան և այնպիսի ծանր
վոանդից հայկեան լեզուի և դպրութեցն : Կա, զի
և ամօք ինչ յառաջ տուեալ մեր զսա՝ ի մերոց աստի
մամլոց և մերով լատին թարգմանութեամբ՝ ի վայե-
լումն հնախոյզ գրասիրաց Կարոպիոյ՝ որք անձաշակ

կային ցայն ժամ՝ առ ՚ի չգոյէ յունական օրինակաց,
ոչ ևս այսուհետեւ իրաւունս դատեալ եղեւ զրկել
զմերազգիմն :

Ո՞նչ չեր մեր տուեալ զսոսա Եւրոպեանց,
երեք միայն ՚ի ճառից աստի ծանօթ էին նոցա . եւթէ
ներորդն և երեքտասամներորդն խառնեալ ՚ի գիրս
Ասկերերանին, և տասներորդն սրբոյն Շարաղի կար-
ծեցեալ և այնպէս ՚ի նորայն ածեալ : Վեսք ևս կար-
ծեօք վարեին՝ թէ այլոց ոմանց կրաերազունից բանք
իցեն, և ոչ վաւերական վաղեմի հօր : Շայց սոքա
փաշաման ՚ի թարգմանութենէս մերմէ վաղվաղակի
կրիցեն, յոսկեղեն ժամանակայն հայկարանութենէն՝
ուր ամենայն տիագը կերպարանաց խօսից զհինգերորդ-
դարուն տան մեզ յայտնի նշանակս . թող զի և յե-
տինք ոմանք ՚ի մերոցն առ ութ դարուն և առ տասն՝
ուրեք ուրեք ՚ի գիրս իւրեանց սորա բանիսք պաշտե-
ցան, զոր օրինակ իմաստասերն Յովհան () ձնեցի և
Գրիգոր ՚լարեկացի . և զի գըշագիր նախագաղա-
փար ճառիցս ուներ թուական ցՅօ, յորմէ մերս օրի-
նակեալ է ՚ի 1673 :

Դ գըշագրի աստ մերում տամն միայն էին ճառք
կարգաւ . զայլմն ՚ի ճառընտրաց ժողովեցաք ՚ի մի .
սակայն և այնպէս այս հնգետասամն ճառք ոչ բովան-
դակեն զամենայն գիրս Երերիանոսի զառ ՚ի հարցն
թարգմանեալս : Ա ամս զի Գրիգոր ՚լարեկացի ՚ի
մեկնութեան Յովհայ յիշատակէ բան ՚ի նմանէ, որ
այժմ չերեկի ուրեք ՚ի միջի :

- ՃԱՐԻ Ա.** ՚ Փ մեծի աւուր ճրագալուցին, երանելոյն Աեւ
բերիանու Եմեսու եպիսկոպոսին խօսեցեալ յԵւ
րուսաղէմ վասն հաւատոյ և 'ի հօրէ ծնըն-
դեանն :
- Բ. Երանելոյն Աեւերիանոսի Եմեսու եպիսկոպոսի
ասացեալ 'ի անօրէնութի փրկչին :
- Գ. Վ ասն կընից և մլրտութե՛, և զՄովսէս և զՄ
հարոն և կերկոտասան ականցն առ լանջն բե-
րելց , և այլ ևս երկուց ականցն օրինակս բե-
րեալ սրբոյն Սեբերիանոսի Եմեսու եպսի :
- Դ. Նորին Սեբերիանոսի եպիսկոպոսի ասացեալ
վասն Առաքելցն 'ի կընս :
- Ե. Երանելոյն Սեբերիանոսի խօսք վասն Զատկի ,
Կաթարոսաց՝ որ կոշին Անարատք , և վասն խո-
հակերաց :
- Զ. Նորին երանելոյն Սեբերիանոսի Եմեսու եպիս-
կոպոսի ասացեալ 'ի բանն թէ Դպրութիւնք
բացան :
- Է. Նորին սրբոյն Սեբերիանոսի ասացեալ 'ի նոյն
կընս :
- Ը. Նորին ասացեալ 'ի նը վկայն յԱկակ մարտիրոս :
Ուր և ած զՅուսէփ յօրինակ Քնի :
- Թ. ՚Ի բանն աւետարանին՝ որ ասէ , Հայր՝ եթէ-
հնար ինչ իցէ , անցցէ յինէն բաժակս այս .
բայց ոչ որպէս ես կամիմ , այլ որպէս դոռ :
- Ժ. Նորին սրբոյն Սեբերիանոսի 'ի հրաւիրեալս 'ի
մկրտութիւն :
- Ժ. Արբոյն Սեւերիանոսի Եմեսու եպսի 'ի գալուստ
տն յովանակաւ յԵրուսաղէմ :
- Ժ. Երբորդ կեւրակէի՝ երանելոյն Սեբերիանոսի
եպսի ասացեալ յաւետարանի մեկնութենէ :
- Ժ. Երանելոյն Սեւերիանոսի եպսի 'ի թավենին որ
ցամաքեցաւ :
- Ժ. Երանելոյն Եմեսու եպսի 'ի չարչարանս Քնի :
Ժ. Երանելոյն Եւսեբի եպիսկոպոսի 'ի խորհուրդ
մատնութեան :

子雲賦
子雲賦者，漢成帝時郎官子雲所作也。子雲字仲尼，少好《周易》，家有漢室之書，皆得其精義。及入侍，常以《周易》說解，故成帝特愛之。子雲嘗作賦，辭藻富麗，音節流美，人多傳誦。其賦有《上林賦》、《長安賦》、《甘泉賦》等，皆為後世所稱。子雲卒後，其子玄、玄孫玄孫，皆繼其業，著述不絕。今存其賦，共三卷。

ԱՅԻ ԵՐԻՄՆԱՍԻ

Ե Մ Ե Ս Ե Յ Ե Ա Յ

ԳԱՐԱԴԱՑԻՈՑ ԵՊԻՍԿՈՊՈՍԻ

Ճ Ա Ռ Ա Ա Ջ Ա Խ Ա Վ Ա Հ Ա Խ Ի Ւ

'Ի մեծի աւուր Տրադալուցին, Երանելւցին Աէրերիանու Եմեսու
Եպիփապոտին, խօսելեալ յԵրուսաղէմ վասն հաւատոյ
և ՚ի հօրէ ծննդեանն :

՚Ի Մ Ե Զ ՔՇԱՍԻՐԱԳ Գ Բ Շ Ե Խ Ո Ս Մ Խ Ո Վ Ա Գ Ա Յ Ճ Ա Ո Ւ Ե Լ ։ զի
և ես ըստ իմում չափու քնասէր եմ։ Յորդորէ և
տեղիս տէրունական ՚ի խօսել զտեառնէն տեղոյս,
և օրս տէրունական եկեալ հասեալ։ լսողացդ յօ-
ժարութի, և որ շուրջդ նստին՝ աղօթք ։ ասելեացս
սէր, և կենարարին պատիւ։ Յիշեմ, զի խօստացայ
կարգաւ Ճառել յաղագս անսկզբանն՝ անսկիզբն
ծննդեանն, և զկնի՝ մարմնական ծննդեանն։ և փու-
թամ մտադիւրութի հատուցանել։ կարօտիմ և
ձերովք աղօթիւք, քանզի հասարակաց է շահն և օ-
գուտն։

՚ԱՅԼ Թերես պարտ և պատշաճ իցէ նախ քան
զոր խօստացայն ասել, իմանսալ՝ թէ զի՞նչ ոք իցէ, և
ոյր ուրուք, որչափ մարթի մարդկան մտօք և լե-
զուաւ Ճառել զանճառէն։ Օ ՚ի եթէ իմասցուք ըլ-
պատիւն՝ որչափ և մեզ պարտ է զիտել, ապա ծա-
նիցուք՝ թէ զիարդ յայտնեցաւ մարմնով, և իմա-
նայցեմք՝ եթէ ոչ ինչ առ իբրև յաւելուած, այլ և
զիւրն ևս եթող։ Որպիսի շահաւետ բարբառովք
կարիցեմք զայ Ճառել, ո՞ր միտք բաւական լինել կա-
րասցեն՝ հրեշտակաց կամ մարդկան։ ՚ԱՅԼ ապաւե-

Նեալ 'ի ձեր աղօթսդ՝ լիցուք արժանաւոր շնորհաց
հոգւոյն :

Վանզի անձառ է անծ և անպատում, որում ոչ
միտք հասանեն, և ոչ խորհուրդք բաւեն, ոչ լե-
զուաւ պատմի, և ոչ բերանով ձառի : Ոչ միայն ըստ
մարդկան զիտութի անցանէ, այլ և ոչ երկինք բա-
ւեն, որ լուսաւոր վառեալ, և զայ գուշակեն . և
ոչ ամենայն արարածք, որ 'ի միասին օրհնեն, և
միանգամայն վրիսկեալ գտանին : Ոչ արեգակն ծա-
գեալ, և ոչ լուսին փոփոխեալ և զանփոփոխն քա-
րովեալ . և ոչ պարքն աստեղացն յօրինական կայա-
նիւքն զյօրինին : Ոչ տիւ առ զիւեր միաբանեալ,
և ոչ ծովընդ ցամաք չմարտուցեալ, որ և մարտու-
ցեալ՝ նահանջի : Ոչ երկրաւոր կենդանիքն զկեն-
դանին, և ոչ ծովական կայտառք զպարգեին, և ոչ
թեականք՝ օդոյս կոտորիւք : Եւ զի՞ ևս յաձախե-
ցից զերևելեացս ձառել . ուր ոչ հրեշտակք, և ոչ
հրեշտակապետք կարեն տալ զայ զշանդամանս . բայց
միայն հոգին քնննէ զխորս այ, ըստ այնմ որ երանելի
առաքեալն ասէ, թէ ոչ զիտէ զմարդոյն՝ որ ինչ
'ի մարդն է, բայց միայն հոգի մարդոյն՝ որ 'ի նմայն
է . նոյնպէս և ոչ զաստուծոյն ոք զիտէ, եթէ ոչ հո-
գին նբ : Մտադիւրութիւն սկսանիմ ձառել, ախոր-
ժելով և գուք արժանի արարէք լսել :

Ոկիզըն ամենայնի՝ անծ է . և ինքն և ոչ 'ի միոջէ
սկզբանէ եղեալ : Ոի է սկիզբն ամենեցուն, աղ-
բեւը ամենայնի . աղբեւը՝ ոչ բզիսեալ յիւրմէ վտակս,
այլ ինքն կացեալ մնացեալ որպէս երն . և զայլն ա-
րար կազմեալ արարըութիւն : Ոին միայն է ձշմա-
րիտ թագաւոր . ոչ 'ի նմանեաց յառաջագոյն գտեալ,
և ոչ 'ի հանգիտապատուաց աղնուագոյն երեւեալ:
Ոչ կարօտ սպասաւորօք . քանզի ոչ 'ի նորա պէտո
ինչ են պաշտօնեայքն, այլ ամենեցուն օգնէ, և ա-
մենեցուն բաւական է . և զնա՝ ինչ ոչ տանի, քանզի
ինքն անբաւ բնութիւն է, անփոփոխական հաստատու-
թիւն, անայլայլական պատիւ . ոչ 'ի խոնարհ նուա-
զեալ գտանի, և ոչ 'ի վեր զարգացեալ և աձեցեալ.
քանզի կատարելոյ և աձելն նուազութիւն է :

Ոի է յիւրմէ ինքնակաց, և ոչ ինչ յումբքէ լն-

կալեալ : Ու ընդ ծրով անկանի , կամ փակեալ և սահմանեալ . ու փոխ առեալ յումեքէ՝ թէ հատուցանիցէ . ու այլովք և այլովք 'ի մի ինչ կատարեալ , և ու 'ի բազում իրաց 'ի մի ինչ բովանդակեալ . քանզի և ու ինչ յառաջքան զնա : Անմարմնական և պարզական , զատեալ և մեկնեալ յամենայն իմաստական ¹ յօդուածոց , որոշեալ և զատեալ յամենայն կարծեաց : Անքն միայն իւր բաւական , և ամենեցուն որ ըստ նմանէ միաք յօժարեալ նկրտին : Այլ մարմին տկարութէ վրիպեալ գտանի , և ու տրտմի թէ ընդէր վրիպեցաւ ² . քանզի փառաւորի ամենազօրն յաղթօդ :

Եւ քանզի չնորհեաց մեզ բանս և խօսս , տացնէք պտուղ պարզեատուին՝ յորոց մեզս պարզեաց : Օրհնեսցնէք որչափ և կարօղիցեմք , և ձառեսցուք շափով զանձառէն . և պատմեսցուք կըռով զանպատում զօրութէն . զի հասանել կարասցուք , թէ անհասական է : Եւ զայս համարեսցուք մեզ հասանել , զիտել զայս թէ անհասական է : Եւ թէ պարտ և պատշաճ ինչ իցէ բերել սմա օրինակ յերեկելեաց , յորժամ ոք ընդ զննական արեգակամքս նայիցի , պշնելով , և ընշմարելովն , ձանալէ զպայծառութիւն լուսաւորութէն . և ու զի ետեսն ետես , այլ զի ու ստեպ պշեաւ՝ իմացաւ : Այլ անսպատիժս , այսպիսի օրինակս 'ի մէջ բերել վասն այ . քանզի մարմնական արեգակնա՝ թէպէտ և լուսաւորագոյն է , մարմին լուսաւոր է , և ու ած անմարմնական : Այլ թէպէտե առնուցումք 'ի պէտս իբրև օրինակ , այլ մի յայսպիսի ինչ իրս իջուցանել զանհասականն . քանզի 'ի վեր է ած քան զամենայն օրինակս , և ու ինչ է նման նմա , կամ հանգոյն . ու համեմատ , և ու հաւասար . ու կարծիք , և ու կշիռ :

Եւ արդ՝ զիարդ . լուսցնէք , և ու ձառեսցուք . և ուր երեկեսցի մեր մտերմնութէն : Այլ 'ի ձառելն նշանակեսցուք , թէ չեմք բաւական ասել . զի յասելոյ անտի՝ ածութին յայտնեսցի , և յու բաւական

1. 'Ի Ճառընտրին 'ի յարհական :

2. Ճ . Պարտէաւ :

լինելոյ՝ զաքանչելական փառան քարողեսցուք : Ի՞ն
սկիզբն է ած, անձառ և անհասական՝, անհան
գուրժական, անպատում. որ ոչ տեղեօք սահմանի,
և ոչ վայրեօք բովանդակի . զատական յամենայնի,
որ զամենայն ունի, և ամենեցուն առաջնորդէ : Ոչ
վաղվաղակի յետ իւր զերեելի և զղնական և զգետ-
նական հաստատեաց կացոյց. նա և ոչ զգօրսն երկնա-
ւորս իսկ և իսկ . այլ յառաջ քան զամենայն և ըդ-
բնաւ յաւիտեանս՝ ծնաւ անծնն զծնունդն իւր հան-
գունակ :

Եւ մի, յորժամ լսիցես ծնունդ, մարմնական ինչ
իրս կարծիցես . քանզի զանմարմնականէն է ձառս .
և մի, վասն զի չարչարանօք և միջնորդաւ ծնանիմք
մեք՝ ՚ի հօրէ և ՚ի մօրէ ժամանակաւ, չարչարանս և
միջնորդս և ժամանակս անժամանակականին համա-
րիցիս : ՚Ի՞անզի բաւական է ինքն առանց իրիք պատ-
ճառանաց իւրում՝ կատարեալ ծննդեանն . ոչ ժա-
մանակաց թիւ, և ոչ օդնականութեն սպասել . զի
յառաջ քան զյաւիտեանս է ծնօդն, յառաջ քան
զյաւիտեանս և ծնունդն . որով ամենայն ինչ եղեւ,
և ժամանակք և յաւիտեանք : Եւ զոր օրինակ ոչ
զոյ այլ հայր՝ բայց միայն ՚ի միոյն . նոյնպէս և ոչ
այլ որդի՝ բայց ՚ի միոյն . և ոչ այլ հոգի հանդունա-
կից՝ բայց յայ հոգւոյն : Եւ հայր՝ հայր հմարիտ .
և որդի՝ որդի հաւաստեաւ . և ամենանք հոգին՝ ըս-
տոյդ հոգի այ : Ծնաւ ած՝ առանց չարչարանաց,
առանց հատուածոյ, առանց կարեաց . քանզի չէ
հնար հատանել անհատականին, կամ բաժանել ան-
բարժանականին :

Կպա եթէ ամբարիշտ մտօք որ իմանայցէ այսպիւ
սի ինչ, անկատար զկատարեալն առնիցէ . զի ոչ
հայր գտանի ամբողջ մնացեալ, և ոչ հատածն ՚ի
նմանէ ողջ կացեալ² . այլ եղիցի նմանականն հայր՝
ողջ կատարեալ, և ծնունդն՝ լի բովանդակ . քանզի
կատարեալն՝ այ է ծնունդ : Եւ եթէ այսպիս է,

1 Յօրինակին պակասէր, և անհասական եդաք ՚ի ձառընորդէն :

2 Յօրինակին պակասէր և աւ հարածն ՚ի նմանէ ուշ իսկեւ .
եդաք ըստ Ճ :

քանզի և է իսկ ճշմարիտ , ոչ երկինք ճանաչեն զանպատռմն զճունդն , քանզի չելին մօտ . և ոչ երկիր , քանզի չեւ ևս էին հաստատեալ . և ոչ ծով , զի չեւ ևս էր զատեալ և մեկնեալ . քանզի ամենայն ինչ՝ չի լինել . Աչ ժամանակը , քանզի ան ժամանակական է . և ոչ յաւիտեանք , քանզի յառաջ քան զյաւիտեանս է . ոչ հրեշտակք , ոչ հրեշտակապետք . ոչ ոք միջնորդ , ոչ ոք խորհրդակից :

Վին ծնաւ , մինն ևեթ գիտէ . ո՞ իցէ որ ծնաւն , ած . զի՞նչ ոք իցէ ծնունդն այ , եթէ ոչ ած . որպիսի ինչ որսորդն ասիցէ , որ ոչ զծովակաց կամ զգետոց պատմէ , և ոչ զաստեղս երկինց նշմարել յառաջնորդութիւն որսոյն : Աչ ասաց , որպէս Վովուէսն , եթէ 'ի սկզբանէ արար ած զերկին և զերկիր . այլ անյեալ ընդ երկինս , և ըստ ամենայն երևելի և ան երեսոյթ արարածս , ըստ ժամանակս և ըստ յաւիտեանս , ասէ , 'Վսկզբանէ էր բանն . Եւ Բան՝ ոչ եթէ խառնարձակ իբրև զայն ինչ 'ի շրթանց արձակեալ , և լեզուովք բարբառեալ , շրթամբք ընտրեալ , ընդօդ բախեալ , ասկա կատարելի արձակական . և այս պիսի ինչ խմանալ՝ զմարմնականաց է , և ոչ զանմարմնականաց : Օի՞նչ յարեսցի յայս , էրն 'ի սկզբանէ 'ի բարբառ՝ որ ոչ յառաջքան զասելն էր , և ոչ յետ ասելոյն . որ առ սակաւ սակաւ ասի , և այս չափ ինչ , որչափ որ բարբառին՝ բարբառիցի : Իսկ միաձինն միշտ և մշտնջենաւոր առ ծնողին . ոչ բան 'ի բերան այ , այլ ած առ ած . ոչ բան 'ի շրթանց , այլ բան յայ ած :

Վի՞ լսեր յինէն , այլ 'ի չովհաննէ , որ անկաւ զանջօքն տէրունականօք , և լոււաւ զշշմարիտն : Վի՞ յինէն և մի 'ի չովհաննէ , այլ 'ի ոք հոգւոյն , որ 'ի նմայն խօսեցաւ : Եր հայր անծին , և որդի ծրնունդ . էն յէականէ անտի , կեանք 'ի կենաց : Որպէս հայր , ասէ , ունի կեանս յանձին իւրում , նոյն պիս և որդւոյ ետ ունել կենդանութիւն . ոչ եթէ նախ ծնաւ՝ և ասկա ետ զկենդանութիւն , այլ կենդանականն կենդանի կեանս ծնաւ , և արարին՝ արարիւ

և դատաւոր : Քանզի ոչ թէ պիտակութք իրբեւ եւ կամուտ ունիցի զհօրն զօրութի՝, այլ բնութք հանգոյն նմին . ըստ այնմ որ յաւետարանին կայ , թէ ամենայն որ ինչ հօրն է՝ այն իմ է . և ես և հայր իմ մի եմք . և որ ետես զիս՝ ետես զհայր իմ :

Ամենայն ինչ՝ զինչ հօր է , նոյն և որդւոյ . բայց միայն զի հայր չէ . և ամենայն ինչ՝ զինչ որդին է , նոյն և հայր . բայց միայն զի որդի չէ , և մարմին ոչ էառ . և ամենայն ինչ՝ զինչ հայր է և որդի , նոյն և հոգին ոք . բայց միայն զի հայր և որդի չէ , և ոչ մարդ եղեւ որպէս որդին : Աենդանի է հայր . կենդանին եմ ես ասէ տոք զօրութեանց : Աենդանի է և որդին . ես եմ ասէ կեանք և լոյս և ձշմարտութի : Աենդանի է և հոգին սք . մարմին ինչ ոչ օգնէ , այլ հոգին է՝ որ կենդանի առնէ :

Եւ մի է տոք , և մի ած , և մի թագաւոր . և ոչ տեարս , և ոչ ածս , և ոչ թագաւորս դաւանեմք զոր զլորորդութին . ըստ այնմ զոր սերորեն աղաղակէին 'ի տաճարին , սք , սք , սք . երիցս սք , և մի անգամ տոք . քանզի մի է տէրութի հօր և որդւոյ և հոգւոյն սք : Ո՞ի տոք և ած հայր , քանզի և ոչ զոյ այլ ած հայր . և մի տոք և ած որդի , քանզի ոչ զոյ այլ որդի . և մի տոք և ած ոք հոգին , քանզի ոչ զոյ այլ հոգի ած , բայց յայ հոգւոյն : Ո՞ի է ած հայր , յորմէ ամենայն ինչ . և մի տոք չիս վիս , որով ամենայն ինչ . և մի հոգի ամենասք՝ որ զամենայն նորոգէ եւ սրբէ : Ո՞ի մլրտութիւն , և մի եկեղեցի Պաւղոս քարոզէ . ոչ ինքն , այլ զորմէ ասերն , թէ զիորձ ինչ ինդրէք զինի՝ որ ինեւս ընդ ձեզ խօսի :

Օնաւ հայր զորդի , և ոչ եթէ 'ի ծնունդն փոխեցաւ , այլ է հայր՝ հայր , և որդի՝ որդի , և հոգի ոք՝ հոգի այ : Օնաւ որդի , և ոչ եթէ 'ի հայր փոխեցաւ . զի՝ ոչ յանարդանս կամ յանկածուի է որդի հօր , այլ 'ի զիտութենէ անծնին ծնունդն : Ո՞ի թերահաւատեսցուք յածական ծննդենին , մի արհամարհեսցուք և զնորին մարմնական ծնունդն , մի աղարտեսցուք և զկամաւորն աղքատութի : Պատիւ

Հրեշտակաց առաջինակաց կայանք . սպատիւ միաձնին՝
նստելն ընդ աջմէ հօր¹ : Հրեշտակի և անունն սպա-
սաւորութեան է , և Հրեշտակապետի՝ գլուխ սպա-
սաւորութե² : Խոկ ած առ ած ասել՝ անուն այ է :
Ած առ ած , և ոչ ածք . քանզի ոչ երկուս անծինս³ ,
և կամ երկուս ծնունդս խոստովանիմք , այլ միա-
ծին , և մի ծնունդ . և մի հոգի ճշմարտութե⁴ որ ՚ի
հօրէ ելանէ :

Երիս՝ և մի , մի և երիս . քանզի մի էութի որ Եր-
րորդութեանն դաւանեմք՝ յերիս կայս կատարեալ
անձանց : Օ ի ոչ անձն հօր՝ է անձն որդւոյ , և ոչ
անձն որդւոյ կամ մը հոգւոյն է անձն հօր . թէպէտե
անդստին ՚ի միոջէ էութէ հօր է որդի և հողին որ :
Օ ի միածին որդին՝ որ յառաջքան զյաւիտեանս ,
է և ՚ի հօրէ՝ և առ հայր . ած առ ած , և նոյն՝ մարդ
ընդ մարդկան , ոչ անկեալ յածութէն , թէպէտե
մարմնացեալ դասնի , ոչ քայլքայեալ յառաջին ծնըն
գենէ անտի , թէպէտե մարմնական ծննդեամք ՚ի
կուսէն երկեցաւ մարմնով ծնեալ . ՚ի և մինչդեռ
յորովայնի կուսին էր , ոչ էին ՚ի նմանէ թափուը
երկինք և երկիր և ամենայն արարածք :

՚ն ծնին այ հօր , և ծնելոյն⁴ ՚ի նմանէ որդւոյն
միածնի , և որ հոգւոյն ելողին ՚ի նոցունց էութէ ,
երիցն ՚ի միում էութէ⁵ , ամենայն փառք՝ այժմ և
միշտ , և յաւիտեանս յաւիտենից . ամէն :

1 Յօրին . պակասէր հօր , եղաք ըստ Ճ :

2 Յօրին . պակասէր և հրէշտակապետի՝ գլուխ սպատութե :

Եղաք ըստ Ճ :

3 Յօրին . երիշտակապետին . Եղաք ըստ Ճ :

4 Ճ . երիշտակապետի :

5 Ճ . երիշտակապետի :

Ճ Ա Ռ Ե Բ Կ Բ Ո Ր Դ

Եղանելոյն Սեբերիանտով Եշմեսու Եպիսկոպոսի ասացեալ
՚ի տնօրէնութիւն Փրկչին :

Օ Պ Ո Ր Դ Ա Մ Ը Լ Ո Ւ Ս Ա Վ Ո Ր Ե Ն Ճ Ա Ռ Ա Վ Ա Յ Ժ Ք, և լու-
սոյն պատգամքն պայծառաւացուցանեն : | Ոյս անձա-
պաշտաց՝ անձպաշտութիւնն է, որ զմէդ և զմառա-
խուղ անգիտութեն փարատէ : | Ոյս ճշմարտութեն՝
յուսամասէրս ծագէ . որպէս երևելի լսյս՝ մարմնոյ
լուսաւորութիւն է, նոյնպէս և հոգւոյն՝ ճշմարտութիւն :
Դա որպէս ցորեկ ընտրեմք՝ ՚ի միմեանց զհիւանդն և
զառողջն, զգեղեցիկն և զտգեղն, զխոնարհն և ըզ-
բարձրն, զհարթն և զգեղբուկն, զճանապարհն և
զմոլորութիւն, զփուն և զբարունակն, զտիղմն և զաղ-
բերս . և զցայդ՝ ամենայն երեւեօք : ՚ի ոյնպէս, եղ-
բարք, և ճշմարտութիւնն ծագեալ՝ զանգիտութիւնն
ծածկէ, և զառողջութիւն հաւատոցն ցուցանէ, և
զհիւանդութիւն անհաւատութեն, զգեղեցիկութիւն
ցածութեն, և զտգեղութիւն զեխութեն, զվատթա-
րութիւն ամբարշտութեն, և զհարթութիւն ուղղութեն,
զկամակարութիւն չարութեն, զբարունակս առաքի-
նութեն, և զփուշ մեղաց, զտիղմն ցանկութեն, և
զաղբիւրս արդարութենց :

Ա ասն այնորիկ իսկ երանելին ՚ի աւելթ զլոյն և
զճշմարտութիւն միուլ նուազեաւ նուազեալ հնչէ, թէ
առաքեալ զլոյս քո և զճշմարտութիւն քո : Օ ո՞ր լոյս
և զճշմարտութիւն կամբցի առաքել : ՚ի այս իսկ է, եթէ
զլոյն լոյմն, զորմէ չչովշաննէս ասէ, թէ էր լոյմն ճըշ-
մարիա՝ որ լուսաւոր առնէ զամենայն մարդ որ գալոց
է յաշխարհ : Օ ի տը մեր Յանաչէ լոյս ճշմարիտ,
ճառագայթ անձպաշտութեն, արդարութեանն արե-
գակն, արեելք ճշմարտութեն . որ ՚ի բարձանց ծա-
գէ, և յերկրէ լուսաւորէ . ՚ի բարձանց՝ ըստ անձու-

1 Զ յաւելուածդ ՚ի բնօրէնութէ իրէնն եղաք ըստ Յովհաննու
իմաստասիրի որ ՚ի ճառան ընդդէմ երեսութականաց :

թեն պատուով ծագէ , և յերկրէ՝ ըստ մարմնոյ տըն
տեսութեն՝ ի վլր ամբառնայ : Դրեւելք՝ որ է իմանաւ
լի լոյմն , ՚ի բարձանց ծագեալն ըստ երանելոյն Օ ա-
քարիայ հօրն Հովաննու կաղապետին , որով եղեւ մեզ
ասէ , այցելու արևելք՝ ՚ի բարձանց : ՚Ի՞ն արևելք
դարձեալ յերկրէ ծագեն , զորմէ նորին անուանա-
կիցն Օ աքարիաս յերկոտասան մարդարէմն ասէ , և
թէ աչաւ այր , և անուննորա արևելք :

՚Եւ ուսաի ծագէ , ՚Դաւիթ մեկնէ , Հշմարտութի
յերկրէ ծագեաց : Ո՞ր Հշմարտութիւն : Ո՞ի յինէն
ուսանիր , այլ անդստին՝ ՚ի կենարարէն ամենեցուն .
ես եմ , ասէ , Հանապարհ և Հշմարտութիւն կեանք :
Ո՞ր և յառաջագոյն իսկ ասացաւ յառաջին խօսն ,
թէ պարզ և տարած բնութիւն է , անբաժին և ան-
մարմնական , և անկերպարան . որպէս և ծնօղն նո-
րա հայր : ՚Եւ ազգի ազգի յորթորջմանս յանձն առ-
նու առ իւրում բարերարութեանն . կոչի և Հանա-
պարհ , առ ՚ի զմոլորութիւնն հալածելոյ . և Հշմար-
տութիւն , առ ՚ի զսուեին եղծանելոյ . և կեանք , առ
՚ի զմաշն քակելոյ :

՚Եւ տես , զիարդ բաղում անդամ զգենու յոր-
ջորջանս , որ հակառակ իմն թուին բանիւք , և միա-
բանին արդեամբք : ՚Ի՞ն հովիւ . նոյն ոչխար . ես
եմ , ասէ , հովիւ քաջ : ՚Եւ զիարդ ոչխար . Հովաննէս
ասէ , աչաւասիկ գառն այ : ՚Եւ որ կամին օտարու-
թիս այլ այլ անուամբք մուծանել ասեն , զիարդ ,
ոչխարի և հովուի մի բնութիւն իցէ . մի թէ բաժա-
նեսցի . ՚Նոյն բնուեին պէսպէս յորթորջմամբք . և յայտ
երեկի , եթէ ոչ էութեն , այլ գործոյն իսկ են նշանա-
կիւ ազգի ազգի անուանքն : ՚Կոչի զանձն հովիւ , ան-
ուանի և ոչխար . կոչի և քահանայ , յորթորջի և տա-
ճար քահանայի : ՚Ստ այսմ , դու ես քահանայ ըստ
կարգին Ո՞ելքիսեղեկի . և տաճար , ըստ այսմ , ե-
թէ քակեցէք զտաճարդ՝ և յերիր աւուր կանգնե-
ցից զգա :

՚Կուսոցի ՚ի բաց ամենայն մոլորուի , և կալցի և տի-
բեսցէ ամենեցունց թագաւորեալ՝ Հշմարտութիւն :

Եւ զինը մեր ջնախն անուանեաց զանձն իւր որթ, որպէս էր, և 'ի հանդիսին անցուցաք. և զհայր մը շակ, ոչ այլակերպութիւնը ինչ ի բնութեն մուծանելով, այլ զիւրոյ զանտեսութեն զնորոգութիւն պատմելով. Ի՞նչնզի ամենայն ինչ որ 'ի հնումն ժողովը գեանն տուաւ, եղծաւ. տուաւ քահանայութիւն, և ապականեցաւ. տուաւ թագաւորութիւն, տուաւ մարդարենութիւն. եղեւ որթ տաշտագեղ Խարայէլ, որպէս և ասէ Երեմիա մարդարէ, և փոխանակ պտղց անձագտութեն երեր անիրաւութիւն. 'Ի, մին հանդօյն և Երայի ասէ, եթէ կացի մնացի խաղողց, և երեր փուշ. և քանզի ետես զամենայնն եղծեալ և հնացեալ 'ի ծուլութիւն, եկն և անձամբ նորոգեաց զամենայն. Ե ինչի ամենայն ամենեցուն. ոչ ինքն բարժանեալ, այլ ըստ մի տեսութեն զամենայն յարդարեաց:

Եւ զի այս ամենայն եղծեալ և ապականեալ էր 'ի մէջ հրեիցն, վկայեն գիրք. քահանայք նոցա, ասէ, չասէին՝ թէ ուր իցէ տը, և մարդարէ նոցա արծաթուլ հմայէին, և առաքեալք նոցա ոչ ծանեան զիս, և իշխանք նոցա անարդեցին զիս, և ժողովուրդ իմ ոչ ծանեաւ զիս: Եւ քանզի ամենայնն, և անձագտութեն կարդք եղծան, եկեալ անձամբ իսկ յարուցանէ զքահանայութիւն, և կանգնէ զթագաւորութիւն, և նորոգէ զմարդարէ ութիւնն, և զամենայն եղծեալսն և զապականեալսն իւրովք նորհօքն նորոգէ: Եղծաւ քահանայութիւն, ինքն եղեւ քահանայ. զորմէ ասէ առաքեալ, եթէ այնպիսի քահանայապէտ ունիմք՝ որ նստաւ ընդ աջմէ մեծութեն 'ի բարձունս: Եւ զի բարձաւ թագաւորութիւն հրեից, եկն եմուաթագաւորն սրբ. զորմէ ասէ՝ Կաթանայէլ ուարդի, գու ես որդի այ, գու ես թագաւոր Խորայէլի: Եւ քանզի զմարդարէ ութիւնն ծածկեցին սուտ մարդարէ ութիւնն, երարձ անձագտութիւն մարդարէ ութիւնն՝ վասն անարժանութեն բնակչաց երկրին. եկն միւսանզամ անձամբ նորոգել զմարդարէ ութիւնն, որպէս և երանելին Ո՛ովսէս ասաց, եթէ մարդարէ ձեզ յարուցէ տը անձ:

Երդ էր մարդարէ, և քահանայ, և թագաւոր. ոչ զի ինքն կարօտ էր այնմ պատուայ, այլ վասն զան-

կեալմնյարուցանել . քանզի ոչ թագաւորութե՛ կա
բօտ էր թագաւորն թագաւորաց . և ոչ քահանայու-
թե՛ աղքատ , այն որ յամենայն խակ քահանայութե՛
առնոյր պաշտօն . և ոչ մարդարէութե՛ պէտք՝ այսմ ,
որ աղբեւրն էր մարդարէուե , և յամենայն մարդա-
րէս բղիսէր զվտակս արդարութե՛ . այլ վասն զի զա-
մենայն անկեալմն եկն յարուցանել , և զամենայն եղ-
ծեալմն յարուցանել և նորոգել : Երգիտ և զորթն
Խարայէլի ապականեալ . զորմէ Խաւիթն ասէ , թէ
զորթն՝ զոր հաներ յերկրէն եգիպտացւոց , խլեցեր
զհեթանոսս , և անկեցեր զնա . և նորոգեալ զապա-
կանեալն , ասէ , ես եմ որթն ճշմարիտ : ||' թէ ընու-
թք ինչ գործելի , այլ չնորհօք զապականեալն նորո-
գէ : Եթէ որթն գործելի իցէ , զիարդ սերմանիցէ
իբրև զմակ որթոյ . ճառեալ զիւրմէ վարդապէտու-
թէն ասէ , ահաւասիկ ել սերմանահան սերմանել .
և ինքնին մեկնէ , եթէ որ սերմանահանն իցէ . որ
սերմանէն ասէ զսերմն , որդի մարդոյ : Եւ արդ-
զիարդ , մարթիցի միում և որթ գործելի լինել , և
մշակ սերմանահան սերմանեաց : Եթէ ոչ ընտրես-
ցես , և տացես զմին անձութե՛ նորա , և զմիւսն ես
նորին մարմնաւոր տնտեսութե՞ն , ապա ընդ միմեանս
խակ զիրմն շփոթես , և չլինիցիս գիտակ ճշմարտու-
թե՞ն : Ես եմ ասէ որթ , և կոչէ զանձն իւր մշակ
որթոյն . որպէս և այլուր հովիւ և ոչխար : Եւ ան-
տի խակ հերձուածողք զբարիոք գրեալմն չարաչար
ընթեռնուն . որպէս և մարդարէն ասէ , եթէ ուզիդ
են ճանապարհք տն , և արդարք զնացեն 'ի նոսա :
Չիմանան զուղղորդն , և ոչ զզտեալն և զընտրեալն
յարդարումն մտաց , զկէսն տալ անձութե՞ն պատուոյ ,
և զկէսն նորին մարմնաւոր տեսչութե՞ն . և վասն այ-
նորիկ խառնեցին զամենայն ընդ միմեանս՝ և եղծին .
և միզով մոլորութե՞ն լցին զամենայն տիեզերս :

Վանզի փրկիչ և տը և մարդասէր եկնյաշխարհս
վասն մեր . չէ հեռացեալ 'ի պատուէն՝ զոր յառաջ
քան զյաւիտեանս ունէր , այլ զարդարեաց վասն
մեր մարդասիրութքն , եցոյց զերկուս լուսաւորսնկա-
րագիր ճշմարտութե՞ն , զանձութե՞ն նշանօքն , և ըզ-
մարդկութե՞ն չարաչարնօք . քանզի եմուտ ընդ չար-

չարանօք անչարչարելին չարչարելեաւն : ոչ ընդ այնու կարեօք որ 'ի մեղս տանիցին , այլ որ զհասարակաց բնութես պատեալ իցեն : Վանզի մարմին և ոգի ծառայեն կարեաց՝ որ 'ի մեղս տանիցեն . և որ այնց կարեաց արտաքոյ է , արտաքոյ է և քան զմեղս :

Այսպիսի ինչ է : Վաղցնուլ և ծարաւել , վաստակել և ննջել՝ մարմնոյն կարիք են , այլ ոչ եթէ 'ի մեղս համարիցին . իսկ պոռնկութի , և պղձութի , և անառակութի՝ որ զմարմնոյ գեղեցկութի պղձեն , այն կարիք մեղաց են : Կարձեալ և ոգին ունի պատեալ զիւրեաւ կարիս յարարէն բնութերն կալեալ զկարեւորն փրկութե , զերկիւղն , զտրտմութին , և զցառումն . և եթէ առանձին քննեցեն , կարիք կոչին , բայց չափով և 'ի ժամանակի՝ օգնական բնութեանս մերոյ :

Եշ միտ դիր . գոյ ցասումն արդար , և բարկութի արդարութեան անուանեալ . ոչ որ վայրապարն բորբոքեսցի , այլ որ յանձային արդարութին շարժեսցին 'ի ցասումն , բազում ինչ 'ի հոգւոյն սըյ աղեցութէ , և ոչ որ վայրապար ոք ցասնուցու , այլ յորժամ վասն անձպաշտութէ զայրասցի . և վկայէ գիր , եկն ասէ հոգի տն 'ի վերայ ։ աւղի , և ցասեաւ : Հորժամ արդար ցասումն վասն արդարուեց 'ի կիր արկանիցի՝ զայն գովեաց , Հորժամ ընդդէմ ամբարցութեն վառեսցի , յորժամ զհերձուածողն կարկեցուցանել իցէ , յորժամ վասն փառաց մեծի արքային պատերազմն իցէ , անդ զցասումն ցուցանելաւութի է , և թագուցանել նենդութի : Ո՞իտ դիր , եղայր , և ցանկութեանն , մի այնմ որ 'ի մեղս արկանիցէ , այլ այնմ որ զարդարէ զազգս օրինաւոր ամուսնութէ : Ո՞իտ դիր երկեղին , մի որ զուր ինչ իցէ , այլ որ յօգուտ և 'ի շահ . զի ուր երկեղ այ իցէ , պարզեք բարութեն են . և ուր երկեղ ամբարցութէ , անդ գործք մնոտիք : Երկիւղ ասեմ , զկարիս մարմնոյ և ոգւոյ՝ որ արտաքոյ քան զմեղս իցեն , կաւ յանձին կենարաբն մեր : Վաղցեաւ ըստ մար-

¹ Յովհան իմաստասէր 'ի ճառն որ ընդդէմ երևութականաց 'ի համարն . 40 :

մնոյ , ծարաւեցաւ , վաստակեցաւ , ննջեաց . և այնու
ու եթէ զածութիւնն ինչ թշնամանեաց , այլ վասն
զմարմնոյն բնութին ճշմարտութք յայտ առնելոյ ,
Նյնպէս և ըստ չնցյն երկեաւ , տատամնեցաւ ,
տրտմեցաւ . տրտում է , ասէ , շունչ իմ մինչեւ 'ի
մահ . և դարձեալթէ սկսաւ տրտմել և տատամնել .
և այն չելին կարիք մեղաց , այլ բնութե մարմնոյն
ծանուցիչք :

Եւ զի ևս յայտ առաւել առնիցէ կենարարն , ե-
թէ այնպիսի բանք ըլայելեն առջութեն , այլ մարմնոյն ,
մեկնէ աշակերտացն , եթէ զինչ օրինակ կարեացն ի-
ցէ , տրտում է , ասէ , շունչ իմ մինչեւ 'ի մահ , արթուն
կացէք , զի մի մտանիցէք 'ի փորձութիւն . և անդէն
վաղվաղակի ասէ , հոգիս յօժար է , բայց մարմնս
տկար է . և այնպէս ամեննեխմբ ցուցանէ ճշմարտու-
թք զածութեն պատիւն , և զմարմնոյն տնտեսուի :
Եկերիբռե զմարդ , կերակրեաց իբրև զմարդառիր :
Եւ առաւել այն զարմանալի է , զի մինչ գեռ խընդ-
բէր ըմբել արբուցանէ զտիեզերս . ցկինն սամա-
բացի ասէ՝ տո՞ւր ինձ ըմբել . և զաղաղակ բարձեալ
ասէ , եթէ ոք ծարաւի իցէ՝ եկեսցէ առիս և արբցէ .
Ննջէ 'ի ծովուն առ 'ի ճշմարտելոյ զմարմնոյն բնու-
թի , և յարուցեալ 'ի քուն առնէ զալիս ծովուն , զի
ուսանիցիս , թէ և ննջէ և 'ի քուն առնէ : Հառա-
ջագոյն տեսանէ իբրև զած զամենայն ինչ՝ որ ընդ ա-
մենայն տեղիս գործէր , և շնջէր 'ի կողմանս գալի-
ւեացւոց իբրև զմարդ . և եկեալ կայ հանդէսպ Րա-
թանիայ գեօղջն | ազարու , անջրպետութք տեղեացն
վասն բացեայ և 'ի մօտ ցուցանէ զանձն . և զօրուքը
ածութեն զամենայն յառաջագոյն զիտէ . պատմէ 'ի
Կալիլեա որ ինչ 'ի հրէաստանի գործք գործէին .
Պազար , ասէ , բարեկամ մեր ննջեաց . և որ չեր մօտ
'ի տեղիսն՝ տեսանէր զամենայն որ ինչ 'ի տեղիսն գոր-
ծէր . եկեալ կայ 'ի վերայ գեօղջն , և ասէ , ուր ե-
գիք զնա . և ով իշխեսցէ ամբաստամութի անգիտու-
տուե զի՞նէ յառաջ բերել վասն հարցանելոյն , թէ
ուր եղիք զնա : Եւ եթէ զայթակղեցուցանիցեն
զքեզ ինչ բանքն , ած զմտաւ , զի այնպիսի ինչ բանք
և զհօրէն Վի՞նի ասացեալ են . միթէ անգիտութեան

բարբառ իցէ և հօրն ասելն, թէ ուր ես Վդամ. և
այս բարբառ այն բարբառաւ ընկեր է: Հարցանէ Վ՛ռ
թէ ուր եղիք զնա, հարցանէ և ած 'ի հին կտակա-
րանն, թէ ուր ե Վդել եղբայր քո:

Վ. թէ թերես ասիցէ ոք, եթէ այդ չէ լուծումն
խորհրդոյդ, այլ յաւելուած տարակուսանաց. քան
զի յայտ արարեր՝ թէ ոչ միայն Վ՛ռ հարցանէ, այլ
և հայրն Վ՛ռի: Եթէ այնպէս իցէ, և միտք ես հար-
ցուածոյն մեկնեսցին և հօր և որդւոյ. ուսիր նախ
զմիտսնորա, որ անդն եհարց, և զսրա աստ: Ինյոց
յորժամ ասիցեմ, թէ զնորա անդ, և զսրա աստ,
ոչ այլում զնա ասեմ, և ոչ այլում զսա. այլ որ ինչ
յաւետարանին ասացեալ է, 'ի հայր համեմ. և որ
ինչ 'ի հնումն, որդւոյ մատուցանեմ: Վ՛ռանզի չիք
ինչ ոչ 'ի նորոցս և ոչ 'ի հնոցն, թէ առանց Վ՛ռի զօ-
րութեն եղեւ. որպէս և Քովշաննէս վկայէ ոչ միայն
զարարութեն, այլ զբնաւ իսկ զտնտեսութեն, ամե-
նայն ինչ, ասէ, նովաւ եղեւ, և առանց նորա եղեւ ոչ
ինչ որ ինչ եղեն:

Եւ թէ զի՞նչ միտք հարցանելցն իցեն ընդ կային,
թէ ուր է Վդել եղբայր քո, ուսիր, զի հարցանելովն
հորդիցէ նմա Ճանապարհ պատասխանատուութեն.
դատի իբրև զարդար դատաւոր, և յապաշարուի
կոչէ իբրև զմարդասէր. ուր է ասէ Վդել եղբայր
քո. յատեան մուծանէ զնա որպէս դատաւոր: Եւ
նորա անզիտութեն կարծիս զհարցուածն համարեալ
թարուցանել կամէր 'ի բարերարեն. չգիտեմ, ասէ,
մի թէ պահապա՞ն ինչ էի ես եղբօրն իմոյ: Եւ զի՞նչ.
առ 'ի միտ զայ գիտաւորութին. մեկնէ նմա որ զա-
մնայն գիտէ, եթէ ես կամօք պատճառեցայ զան-
գիտութի. և գու համարեիր՝ եթէ առանց գիտու-
թեն հարցանիցեմ: Ուէ այնպէս իցէ, ուսիր ըզ-
գիտութի ամենազիտին, գոզիւն արեան եղբօր քո
բողոք ունի առ իս յերկը է:

Ուսիր այսուհետեւ և զգիտաւորութիւն բարերա-
րին, թէ յո՞ր միտս ասաց ցհրեայս, թէ ուր եղիք
զնա. ժողովք թատերց ապախտաւորաց էին, ժողո-
վուրդ՝ որ ոչ կարեր 'ի միտ առնուլ զայ պանչելին.
մանաւանդ թէ իմանային իսկ, և առ ապախտաւո-

րութեանն ծածկել կամէին զսքանչելիսն . տեսանէր զնոսա խրոխտեալ , և ընդ հենդն ելեալս սքանչելեացն . հայէր 'ի նոսա՝ զի տեսանէին զջօրութիսն , և ուրանային զարուեստագործն . որպէս և վկայէ 'Դաւիթ , թէ 'ի բազում զօրութեան քում ստեցին քեղ թշնամիք քու : Խւ առ այն զի՞նչ զործիցէ . մարթ էր լուելեայն երթալ . մանաւանդ թէպէտև չերթայր իսկ մարմնով , այլ զջօրութին առաքէր , և ձառագայթիւք զօրուեն կարող էր բակել զգերեզմանն , յարուցանել զմեռեալն , և ածել 'ի լոյս զիսաւարարգեալն . այլ կամի զապախտաւորսն իսկ վկայս սքանչելեացն . և կանխէ ձգէ նախ քան ցուցանել զգերեզմանն բազում ապահուտաւորայն , ուր ասէ եղիք զնա : Խ'կ ասեն , և տես զգերեզմանն . և ասէ ցնոսա , 'ի բաց թաւալեցուցէք զվլէմի : Որ աշակերտացն երաշխաւոր եղեր , և զառհաւատչեայ զջօրութին ետուր , եթէ ունիցիք , ասէ , հաւատս իբրև զշատ մանանխոյ ' ասասմիք լերինս , փոխեաց , և փոխեսցի . որ նոցա այնչափ իշխանուի պարզեցեր , զու զվլէմի փոքր 'ի գուռան գերեզմանին՝ չկարիցեն 'ի բաց թաւալեցուցանել : Վայլ որպէս յառաջոյն ասացի , վասն նորին պատճառաւանաց , զի անհաւան իրաւընտիրք և անհնազանդ տեսողք էին , և առէին՝ խարեւուի ինչ և առ աջօք գործն իցէ մեռելոյն , պատճառեալ կայցէ 'ի կարծեցուցանող եկաւորութին ունինդիր լինել , վասն այնորիկ զնոսա իսկ ածէ 'ի գերեզմանն , զի յորժամ զվլէմի թաւալեցուցանիցեն , և հոտընդ երեսս հարկանիցի , լիցի նոցա վկայ հոտ մեռելոյն , թէ արդարեւ մեռեալ է . զի յորժամ մեռելութէ մեռելոյն հաւատասցեն , ապա և 'ի յարութին չլինիցին երկիմիտ :

Խւ զի զայսպիսի հնարս հնարէր ո՞ն զիջանելն , անդէն կարգին միտ դիր , և ուսանիս : Վատեաւ Վարթա առ վլէմն , և ասէ , տէր , հոտեալ է աւասիկ , քանզի չորեքօրեայ է : Վայլ կենարարն քանզի զօրութեանն տեղեակ էր , զայդ իսկ կամիմ ուսանել 'ի ձէնջ , ասացէք 'և յաճախեցէք զասելն՝ թէ հոտեալ է . հաստատեցէք թէ մեռեալ է , զի և յարութին ճշմարտիւ քարոզեսցի : Վազում անդամ


մահու անունն յաջախեաց , զի գէթ միանդամ և
չշմարտութիւն յարութեն դաւանեսցի : Հայնժամ
այնուհետեւ , եղլարք , այլ իմն յարդարէ կենարարն .
յերկինս նայի , և զհայր կոչէ : Հայր , ասէ , գոհա-
նամզքէն , զի լուար ինձ : Իռուժուիմն'ի բանիս դտա-
նեն հերձուածողացն աշակերտք , վաղլաղակի 'ի վե-
րայ յարձակեալ . տեսանես , ասեն , որչափ 'ի միջի կայ ,
զի մին աղաւէ , և մին աղացի ¹ . մին պաղատի , և մին
պաղատանաց անսայ . տեսանես , զի աղբիւը սքանչե-
լեացն հայր է , և չնորհէ որդւոյ զօրութի սքանչե-
լեացն : Այլ որպէս յառաջադոյն բազում անդամ
ասացի , եթէ չառին 'ի միտ չնորհակալութք ընտրել
զգործու կենարարին . այլ միանդամ իսկ կանխաւ ըմ-
բռոնեալք 'ի հայհոյութի՝ կուրացան առ 'ի ընտրե-
լոյ զշմարտութին :

Հայր գու զպատճառսն յայսր աւուր ընթերցուա-
ծոյ ուսիթ : Այէ ցնոսա կենարարն . բազում գործս
բարիս ցուցի ձեզ 'ի հօրէ իմմէ , վասն որոյ գործոյ
'ի նոցանէ քարկոծ առնելք զիս : Այէն ցնա հրեայքն .
վասն բարեաց գործոց ոչ առնելք զբեզ քարկոծ ,
այլ վասն հայհոյութէ . զի գու մարդ ես , և զանձն
քո անձ առնես , և կոչես քեզ հայր զանձ : Այն իմն
կարի տրտմեցուցանէր զհրեայն՝ զի հայր իւր կոչէր
զանձ . զայրանային հրեայքն Հնիթ , ոչ միայն զի զա-
բաթմն լուծանէր , այլ զի և հայր իւր կոչէր զանձ ,
և հաւասար առնէր զանձն այ : Այս քանզի 'ի հայ-
հոյութի հանէին՝ հայր կոչէլ զանձ , ատեան գործէ
'ի գերեզմանն , և դատաւոր զձշմարտութին նստու-
ցանէր . ածէ շուրջ վկայս զպախստաւորսն , զի ա-
չօք տեսցեն , և ականջօք լուիցեն , որք ասէին՝ եթէ
հայհոյես , զի զանձնդ որդի այ կոչես : Կոչէ հայր ,
և զրեթէ այնու իսկ խրատէ զնոսա , թէ ահաւասիկ
ձեր իսկ առաջի կոչէմ . եթէ ցամսուցու ինչ զի հայր
կոչէմ զնա , և հայհոյութի իցէ որպէս և դուք կար-
ծէք , ապա մի լուիցէ . և եթէ ցցամսու՝ ապա յայտ
է թէ արդարե հայր իմ է : Հայր , ասէ , գոհանամ

¹ Ա Մամբրէ գրեթէ զսոյն բանս երկրորդէ 'ի ճառն յարու-
թէ Պաղարու :

զքէն, զի լուար ինձ : Եթէ հնազանդութեն գործ
եին աղօթքն, զիարդ յառաջ քան զաղօթսն կալ
ասէ, թէ լուար ինձ . զի նախ քան զաղօթսն կալ
ասէ, հայր գոհանամ զքէն զի լուար ինձ : Եւ միտս
դնէ նոցա որ շուրջն կային . եթէ ցանու, ասէ, հայր,
զի հայր կոչեմ զնա, և հայհոյութի ինչ է այ՝ որպէս
դուքդ կարծէք, մի լիցի գործակից հայհոյիս, աստա
թէ կոչեմ զմեռեալն, և լաէ հրամանին, արդեամբք
իսկ առէք զհանդէս ճշմարտութեն . զի զմեռեալ
յարուցանել ոչ հայհոյի գործ է, այլ որդւոյ այ
հրաման : Եւ զի այս միտք են աղօթիցն, և ոչ վամն
իւրոյ ինչ պիտոյից, այլ վասն լողացն օգտի և ուղ-
ղութեն արկ'ի կիր զաղօթսն, ինքն իսկ վկայէ՝ յոր
ժամ ասաց, թէ հայր գոհանամ զքէն՝ զի լուար
ինձ, ասէ առ նմին, թէ ես գիտէի իսկ' եթէ յամե-
նայն ժամ լսես ինձ . այլ վասն ժողովրդեանս որ
շուրջ կան ասացի :

Ո՞ն ոք պյսուչէտե շփոթեսցէ զճշմարտութին,
մի ոք թշնամանեսցէ զածպաշտութին, մի ոք զի-
ջանելն՝ որ վասն մերոյ փրկութէ, 'ի տկարութի և
'ի թշնամանս սէյն համարեսցի: Ո ասն քո եղեւ մարդ
մարդասէրն, ոչ եթէ զիւր բնութին 'ի բաց ընկեց՝
այլ զանկեալն յարուցանէ, և զմեռեալն կենդանի
առնէ: առնու զքոյդ, և տայ զիւրն: Ո՞չ թէ 'ի
տնտեսութին եկն յառաջին պատիւն, այլ յածու-
թին եկն ունել յանձին զանտեսութին: Ո՞չ, որպէս
հերձուածողաց աշակերտքն կարծեն, եթէ յետ խա-
շնն և տնտեսութեանն, եկն յառաջ 'ի պատիւն.
քանզի բիծո իմն ամբարշտութք 'ի բանին առաքե-
լց կամին կարկատել, որ յորժամ ճառեալ զկե-
նարարէն՝ ասէ, որ երն 'ի կերպարանս այ՝ ովնչ
յափշտակութին համարեցաւ զլինելն հաւասար այ,
այլ զանձն ունայնացոյց՝ զկերպարանս ծառայի էառ,
և 'ի նմանութիւն մարդոյ եղեալ, և կերպարանօք
զտեալ իբրև զմարդ, խոնարհեցոյց զանձն լինել
հնազանդ մաշու չափ և մաշու խացի . և ածէ զնո-
վիմք, թէ և վասն այնորիկ ած զնա առաւել բարձ
բացոյց, և չնորհեաց նմա անուն՝ որ 'ի վեր է քան
զամենայն անուն : Տեսանես, ասեն, զի ընդ հնա-



զանդութեն էառ զինս զպատիւն . քանզի խոնարհ հեցաւ մահու չափ , վասն այնորիկ և ած զնա բարձրացոյց , և չնորհեաց նմա անուն՝ որ ՚ի վեր է քան զամենայն անուն : իմակ այնպէս իցէ՝ լուիցէն . եթէ զվարձս ընդ անտեսութեն զառաջն գալն էառ , ապա ուրեմն յաղբատութէ՝ ՚ի մեծութի եկն յառաջ : Եւ արդ միտ զիր աղաւեմ , եթէ վարձս ընդ հնար զանդութեն զառաջն գալ էառ , ապա յաղբատութէ՝ ՚ի մեծութի եկն , յամենեցունց երկրապատութի առնուլ , զի ամենայն ծունը յանուն ՀՅոի ՔՅոի կըրկնեսցի : ՚ի ու ասես , թէ աղբատ էր , և ՚ի մեծութի եկն անտեսութքն . այլ Պաւղոս չառնու քեզ յանձն , քանզի ցուցանէ զնա յաղբատութէ՝ ՚ի մեծութիւն եկեալ , այլ մեծութքն զաղբատութի յանձնն կալեալ :

Օ ի՞նչ ասէ առաքեալ . “ Պահտէք , ասէ , եղբարք զշնորհս տն մերոյ ՀՅոի ՔՅոի , զի վասն մեր աղբատացաւ որ մեծատունն էր , զի դուք նորա աղբատութն մեծանայցէք ” . զի մեծանայցէս , և ոչ զի հայհոյէս ցէս . աղբատացաւ տէր մեր ՀՅու ՔՅու , ոչ զյաւիտենական մեծութին ՚ի բաց ընկեցեալ , զածութենէն ասեմ , այլ զայն ծածկեալ , և զայս յանձնն կալեալ : Օ ի՞նչ իցէ մեծութի նորա : Լոյփ հայր մեծատուն . կոչի և որդի մեծատուն . մեծատուն ՚ի մեծատունոյ : Օ որմէ Պաւղոսն ասէ , թէ ինքն ած մեծացուցանէ զամենեսեան որ կարդան առ նա . և դարձեալ թէ ովլ խորք մեծութեն և իմաստութեն և գիտութեան այ : ՚Այնպէս և ՀՅու մեծատուն է , և աղբատացաւ վասն մեր : Եւ իւ իցէ մեծատուն . զի ՚ի միասին էական է հօր և լցոս փառաց , և նկարագիր էութեան և պատկեր աներեւութին հօր : Ո՞չ ստացուածով այնպիսի լիեալ , այլ բնութք այնպիսի երկեալ : Ո՞նճութի ՔՅոի այն է , զի նմին հօր հաւասար է , և զնոյն զօրութի և զփառս և զթագաւորութի ունի , ալժուակից հօր , և նմին պատուի , ՚ի նոյն մեծարանս : Վայլ որ յայնպիսի մեծութեն էր , և ՚ի վեր ընդ հօր նստէր , տես յորպիսի աղբատութի էջ , զի առաջն Պիղատոսի իբրև զմահապարտ կայր յատենի : Ո՞նճութի ՔՅոի բիւր բիւրուց հրեշտակացն են՝ որ կան

նմա՞ի սպասու . և աղքատութի՞ Քնի երկոտասան
ձկնորսքն որ զհետ շրջէին : Ա'եծուի՞ Քնի՝ աթոռն
յերկինս է, և ընդ աջմէ հօր նստելն . և աղքատու
թիւն նորին, զի աղուեսուց որջք գոյին և թռչնոց
երկնից դադարք, և որդւոյ մարդոյ ոչ գոյր տեղի,
ուր զգլուխն դիցէ: Աղքատութի՞ Քնի՝ ի յովանա-
կի նստելն, և մեծուի՞ Քնի՝ ի քերոբէս ելանելն .
զորմէ ասէ մարգարէն, թէ կառք այ բիւրապատիկք
էն, և հազարք ուղղիչք: Տեսե՞ր զառաւել մեծու-
թին, տեսե՞ր զաղքատութին լի անտեսութիք :

Այլ թերես որ մորմօքեալ 'ի հերձուածողաց
ընդ բարձրութի՞ ածխօսութես՝ ասիցէ, միթէ 'ի կե-
նարարն ելանիցէ բանն, թէ կառք այ բիւրապատիկ
էն, միթէ 'ի նա՞ ինչ անկ իցէ վկայութիդ՝ զոր բե-
րեր, միթէ կառս որդւոյ ասաց, կամ կառս միած-
նին պատուոյ: Եւ արդ զի մի վաճառիցի անձպաշ-
տութին առ 'ի յախտաւոր լսողացն, և կարծիցի թէ
չէ ինչ 'ի գէպ վկայութին, հարկ է յանդիման կա-
ցուցանել, զի կառք այ բիւրապատիկք և հազար
ուղղիչք՝ 'ի տէր մեր ՀՅՇ ՔՇ 'ի գէպ ելանեն: Եւ
զհանդէս աստստին իսկ առ . չեն ինչ պէտք ինդրոյ
խորհրդոց, և ոչ պատիր բանից հաւանութե, այլ
չշմարառութե, որ յայտ յանդիման ծագեալ կայ ա-
ռաջի: Երանելին Պաւիթ ասէ, կառք այ բիւրա-
պատիկք էն, և հազարք ուղղիչք, և տէր 'ի նոսա 'ի
Աինա 'ի սրբութե. ել 'ի բարձունս և գերեաց զգե-
րութի, և ետ պարզես որդւոց մարդկան . զայս
Պաւիթ ասէ: Առեսցուք 'ի մէջ զմեկնիչ մարգա-
րէիցն, զփողն մեծաձայն, զլեզուն հոգւոյն սք,
զվառեալն զօրութիք և ամենայն չնորհօք զՊաւզոս
զսրբոյն երգիչ. տեսցուք յովլ առնու զկառսն այ,
և զելն 'ի բարձունս և գերեաց զգերութի, և ետ
պարզես որդւոց մարդկան: Ասէ առաքեալ. մի տէր
և մի հաւատ, և մի մկրտութի, և մի ան հայր ամե-
նեցուն, և ամենայնիւ, և յամենեսեան: Պայց իւ-
րաքանչիւր ումեք 'ի մէնջ տուեալ են չնորհք ըստ
չափոյ սպարգեացն Քնի. քանզի ասէ իսկ, ել 'ի բար-
ձունս՝ գերեաց զգերութի, և ետ պարզես որդւոց
մարդկան: Եւ 'ի զործս արկեալ զմիտս բանին Պաւ-

ղոսի, ասէ, եթէ որ ելն ովէ, եթէ ոչ որ էջն նախ ՚ի ստորին կողմ երկրի . որ էջն նոյն է՝ որ ելն յերկինս, զի լցցէ զամենայն :

Չեն ինչ պիտոյ բազում լեզուք մեկնելոյ, և ոչ շատ ինչ խօսք հաւանեցուցանելոյ, այլ միտք չնորհակալք և միաբանութիւն հաւատոց, միաբանեալընդ դաւանութիւն որդւոյն այ : Վանզի չասաց անձին և ծնունդ, և ոչ անարար և արարած . զի այն չե միաբանութիւն հաւատոց : Այսմին զիտել զի՞նչ է միաբանութիւն հաւատոց, լուր Պաւղոսի՝ որ ասէ, մինեւեկեցուք հասցուք ամենեքեան ՚ի մի միաբանութիւն հաւատոց և գիտութե որդւոյն այ : Վիաբանութիւն հաւատոց՝ զիտութիւն որդւոյն այ է, և ոչ գիտութիւն անձնին և ծնելոյ : Ինդէք խլես զգրեալմն, և յառաջ բերես զու զրեալմն . չիցէ հաւատարմագոյն անունն հօր և որդւոյ և հոգւոյն սըյ, քան զանձնին և զձնելոյ, և զրեալքն քան զգրեալմն :

Gamma՝ ի զիմի հարկանի հերձուածողն . իսկ դու ընդէք ասիցես, ասեն, զմիասին էականն, որ չէ զրեալ ՚ի վտանիի պատերազմաց հարկ է առնուլ զանօթա՝ որ չիցեն ինչ պիտոյ ՚ի խաղաղութեան : Ո՞ կալ մեզ ՚ի մարտիկս պատերազմացն, ո՞ ապաքէն ծովական թշնամութիւն . և կամ ո՞ ոք կաղմիցէ զէն ընդդէմ թշնամեացն՝ յորժամ խաղաղութիւն յամենայն կողմանց յորդիցէ : ՚ի բաց առ դու նախ զօտար էականն, զի մի ՚ ՚ի զիմի հարկանիցի քեզ ՚ի միասին էականն . իսկ եթէ ասիցես զօտար էականն, հարկ է՝ զի ՚ի զիմի բախիցէ քեզ ՚ի միասին էականն . ապա եթէ լուիցես, լուեմ և ես, և զնոյն էութիւ որ հօրն է՝ ճանաչեմ և որդւոյ . զի հօր և որդւոյ անուն զնոյն զօրութիւն ունի . քանզի ՚ի միասին էական է անուն հօր և որդւոյ . զի հայր որդւոյն հայր է, և որդի՝ հօրն է որդի . և հոգին սը՝ այ է հոգի :

Gamma տես զի՞նչ կրեն հերձուածողքն . քանզի կանխեցին զրգուել ՚ի պատերազմ, և ամաչեն զայն պիսի միտս ՚ի բաց ընդենուլ տես, առ այն զի՞նչ զործեն այ : Հնորհհքն . ետես զնոսա անհնազմդս օրի-

նացն այ, և արկ զնոսա ընդ հարկաւ օրինացն Հռոռո
մոց . քանզի ցանկի խսկ ած զնոյն գործէ , յորժամտե-
սանէ զոք մարտուցեալ ընդ օրէնս ածպաշտուե , յա-
րուցանէ 'ի վերայ նոցա զա՞մ մարդկան , զի ոչ կա-
լան ՝ զերկեղն այ , ջես , զի նչ գործ գործէ . վառի
ցասումն 'ի միտս ածապաշտ թագաւորին , և զրէ
հրովարտակս ածպաշտութեն 'ի ձեռն ածապաշտ
սպասաւորաց , և արձակէ նետս զհրամանսն իբրև
յօրինացն աղեղանէ :

Որպէս և կենարարն բազում անդամ արար
Հրեից ապախտաւորաց , որոց ուրացեալ զածպաշ-
տութի նորա , յորժամ զշմարտութին խօսէր՝ ա-
սէին , որով իշխանութք առնես դու զայդ , առնէ
անդրէն պատախանի՝ որ կարօղն էր ածել զնոսա
յերկիւղ մարդկան , հարցից և ես զձեզ բան մի .
մլրտութին չովաննու ուստի՝ էր , յերկնից , թէ 'ի
մարդկանէ . խորհէին ընդ միմեանս Հրեայքն և ա-
սէին . եթէ ասեմք , եթէ յերկնից , ասէ , թէ և
ընդէր ոչ հաւատացէք նմա . և եթէ ասեմք՝ թէ 'ի
մարդկանէ էր , երկնչոմք 'ի ժողովրդոցն , դուցէ
քարկոծ լինիցիմք : Եւ քանզի ոչ ունէին զերկիւղն
այ , զմարդկան երկիւղն եղին առաջի , թէ վասն
մարդկան երկեղի չիշխեմք ասել : Իակ կենարարն
առ այն զի՞նչ . և ոչ ես ասեմ ձեզ . դուք չգիտէք
իսկ , բայց ես զիտեմ , և չասեմ :

Եւ արդ յարոյց ած զմիտս ածապաշտ թագաւոր .
քանզի թագաւորուի արդարութին է : Վիտ դիր ,
թագաւորուի և արդարութին է , յորժամ այ 'ի սպա-
սու կայցէ . 'ի միտս աշտիշանի կան թագաւորուի
և արդարուի . յորժամ շշմարտութք սպասաւորք
թագաւորութեանն լինիցին , ոյ պատուակից լինի-
ցին : Եւ լուր , զի՞նչ ասէ դիր . ոգիք արդարոց 'ի
ձեռին այ են . և զթագաւորացն զի՞նչ ասիցէ , սիրտ
թագաւորի , ասէ , 'ի ձեռս այ է : Եւ վասն էր ար-
դեւք զսիրտն . և քանզի աղբիւր մտացն սիրտն է ,
և արմատ խորհրդոյն , անդուստ յաղբիւրէն ելա-
նեն օրէնք . քանզի բանք թագաւորաց օրէնք են ,

ունի զսիրտն՝ի ձեռին, զի մի գուցէ իբրև 'ի մարդկաղեկն ինչ մտաց բղխիցեն, այլ իբրև յածեղեկն ձեռանէ ելանիցեն օրէնք. դնէ թագաւոր օրէնս՝ միաբան օրինացն այ. 'ի հաստի կայ թագաւորութիւնը լինել վրէժինդիր երկնաւոր թագաւորութիւնն առնուլ վրէժս՝ի հակառակորդացն, այլ զի նոյնորհքն բանայցեն զգուռն ածպաշտութեան նախանձախընդրացն:

Եւ եթէ հաւաստեաւ խնդրիցեմք, գտանիցեմք, զի յամենայն ժամ ուր և մարտեաւ ամբարշտութին, ու էառ անձ վրէժ առանց արդարոյ ուրուք. եթէ չգուցէ միջնորդ՝ի միջի այր արդար, չառնուվրէժս՝ի չարեաց. այլ 'ի կիրականէ զմարդկեղեկն գործին լի արդարութիւն: Վմբարշտեցաւ Առդոմ և Կոմոր, և ու ննջեցան հինգեքին քաղաքն, մինչընքնակեաւ Պովտայ յերկրին. զի մի ասասցեն ընակիչք երկրին, թէ չեր ընդ ոք նայել, չգոյր վարուց ուրուք նախանձաւոր լինել, ածէ քնակեցուցանէ զարդարն՝ի Առդոմ, որ 'ի նոյն տեղիս կեայր, և արտաքոյ քան զնոսա եր կարգօք. զի մի գտցեն պատճառուս պատասխանւոյ, թէ չունեին զոք վարդապետ, երևեցաւ Պովտ՝ի Առդոմ, և եկն եհաս վրէժինդրութիւնն. քանզի ու օրինակին ² և ու առն արդարոյ եղեն նախանձաւորք, սատակեցան՝ի հրացան բարկութենէն:

Այնպէս մարտնչէր և փարաւոն եգիպտացի ընդայ՝ անդիտութիւն պատճառեաւ. և չեկին նմա հարուածք, մինչեւ յայտնեցաւ Առդոմէս Խարայէլի: Վմբարշտէր և Վմբայաբ թագաւոր խրայէլացւոց, որ յանօրէն ամբարշտութին զառածեաւ. և չդոյին ուրեք սպառնալիք բարկութե, մինչեւ յայտնեցաւ Աղիաս նախանձաւոր: Այնպէս և այժմ կարող է ած առնուլ զիւր վրէժ, և զեկեղեցւոյս՝ որ կայ 'ի պատերազմի. այլ յարուցանէ զվան ածպաշտուե մարտիկս, և կամի խնամարկել եկեղեցւոյ ամոխախիւք՝³

1 Յօրին. Դաշտայ:

2 Յօրին. գըհալ էլ ունավին:

3 Յօրին. ամ-սիւիս+:

ածպաշտութեանն : Այսնպէս և երանելին Եղիայ ամբաստան լինէր այ զ խարայէլէ , յորժամ եմուտ յանապատն հալածեալ չեղաբելայ . փոխանակ ասելոյն , ասէ ցնա ած , զի՞ դու Եղիա . հարցանէ ցնա ած , [թէ զի՞նչ գործես դու ասու : Չոդաւյայն անապատն՝ ուստի Վովսէս զօրէնան առ , և ասէ , նախանձեցայ զնախանձ տն այ ամենակալի , զի թողին զքեզ որդիքն Խորայէլի . զսեղանս քո կործանեցին , և զմարգարէս քո կոտորեցին , ես միայն մնացի , և խնդրեն զանձն իմ : Օ այս ասէ , ոչ որպէս թէ ուսուցանէ , այլ ամբաստան լինի , ոչ որպէս զանգէտ ոք դիտակ առնիցէ , այլ իբրև դատաւորի դատախազութիւն մատուցանէ . զսեղանս քո կործանեցին , զմարգարէս քո կոտորեցին . ես միայն մնացի , և խընդ ըն զանձն իմ :

Եւ քանզի գրդուէր իբրև զդատաւոր , և 'ի ցառումն ածէր ամբաստանութքն իբրև զսաստարար , կամեցաւ ած հաւանեցուցանել զմարգարէն , եթէ երկայնամտութքն էրէ ամբարշտելոցն , ոչ թէ առտկարութեն չպատճէ . ասէ ցնա , ահաւանիկ ելանից ես դու վաղիւ առաջի իմ . և ահաւասիկ հողմ սաստիկ փշրել զլերինս , և մանրեսցէ զբլուրս , և չիցէ 'ի հողմն տէր . և ահաւասիկ շարժումն , և չիցէ 'ի շարժումն տէր . և ահաւասիկ հուր , և չիցէ 'ի հուրն տէր : Եւ զի՞նչ միտք իյեն այսր ամենայնի . քանզի համարիս թէ չկարեմ վրէժինդիր լինել , հաւանեցուցից զքեզ , թէ ոչ առ տկարութեն չածեմ պատիժս մեղաւորին , տես որպիսի գործս վրիժուց ունիմ . զոր ինչ առ ձեր դատաւորսն՝ սուրբն և հուրն և ծովընկեցիկն գործեն , զայն մեծի դատաւորիս սոքա վշարեն : Տես որպիսի անօթս պատժոց ունիմ : Հողմ սաստիկ՝ որ ոչ միայն զմարդիկ փշրել կարիցէ , այլ և զլերինս խորտակել , և զբլուրս մանրել , և չէ 'ի հողմն տէր : Փոխանակ ասելոյ , թէ չկամիմ խստութք ճանաչել , այլ հանդարատութք զարմանալի լինել : Եհաւասիկ հողմ սաստիկ ասէ , և փշրէ զլերինս , և մանրէ զբլուրս , և չէ 'ի հողմն տէր : Եհաւասիկ շարժումն . փոխանակ ասելոյ , թէ կարող եմ և շարժմամբ կորուսանել . և ահաւասիկ հուր ,

և չէ՝ 'ի հուրն տէր . ցուցանել ցուցանէ՝ և 'ի կիր չարկանէ :

Եւ այսմ գուք իսկ ձեզէն վկայէք, զի և շարժումն եցոյց, և հուր շողացոյց զքաղաքաւս, երկեցոյց, և չպատժեաց, եցոյց, և արգել . շողաց հուր զքաղաքաւս, եկին հասին սպառնալիկ և կանխեաց մարդասիրութին : Եւ էր, ասէ, տեսանել զժողովուրդս ամրացեալ և պարսպեալ մարդասիրութը . և էր տեսանել զամենեսին 'ի մեծաց բարեխօսաց օդնականութիւն գտեալ, և վերակացու լեալ բարեխօսութագաւորութեն և քահանայութէ : Վանզի ածապաշտ թագաւորն ընդ քահանայութեն զուգեալ բարեխօսեր, և ածէր յաղերս զած : Վանզի թագաւոր արդար նոյնապէս կարող է վճարել, որպէս և քահանայութիւն որ պաշտէ, և թագաւորութին բարեխօսութէ ածեալ 'ի հաւան զած : Նեղութեն ցուցաւ փառաւորութիւն և ուղեղ կարգք նորա, յայտ է թէ որդի է մեծի թագաւորին . զի նա զնետս բարբարոսացն խափանեաց, և սա՝ զնետս որ յամսոցն տեղային՝ աղօթիւք փարատեաց :

Եղել այսպիսի ինչ և առ երանելեաւն Դաւթիւ . քանզի ցասումն ինչ յայ շարժեցաւ 'ի վերայ Դաւթիւ . սպառնայ ած, և մարդասիրութիւն ցուցանէ : Ծես զի՞նչ գործէ մարդասիրն . առաքեցաւ առ Դաւթիւ, ահաւասիկ երիս հարուածս յընաիր առնեմ քեզ, ինսդրեամ մի ինչ զոր և կամիս . կամ զսով զերիս ամս, կամ պատերազմն զերիս ամիսս, կամ մահ ժամնդութեն զերիս աւուրս : Եթէ իբրև զդատաւոր դատիցիս, զի առնես նմա յընտիր . այլ պատժեամ իսկ . քանզի մեծ արարեր զարդարութիւ : Եռալւ դնէ զվահուն, զի՞նչ և կամիս, ասէ, զայն արարից . բարկացեալ և անսալ խոստանայ : Իսկ երանելին Դաւթիւ 'ի վարանս ընդ ընտրութին մտեալ, անձուկ է ինձ, ասէ, յամենայն կողմանց, և չգիտէ զի՞նչ ընտրիցէ . սո՞վն լաւ իցէ, թէ պատերազմն, թէ մահն : Նարկաւ յանձն առնու զմահն ժանդամահ զերից աւուրց . և զայն ոչ եթէ վայրապար ինչ, այլ զի յայտ ածապաշտութիւն թագաւորին լինիցի : Եթէ ինսդրեցից, ասէ, զսով, 'ի կարծիս անկանիմ,

թէ չհամարիցիմ ինչ զբազմացն կորուստ վասն բազում ոռոջիկս թագաւորութես ունելոյ . և եթէ ըզպատերազմն ինդրեցից՝ մարթի զզօրականսն ՚ի մահմատնել, և զանձն ապրեցուցանել . առից ինդրեցից զմահն, որ ընդ ամենեսեան առհամարակ անցանէ, ոչ ՚ի հարատաց աշառէ, և ոչ անաւագաց ողորմի, որ ոչ զիշխանս մեծարէ, և ոչ յաղքատս ընկրկէ . զի յայտ լիցի, թէ ընդ ամենեսին և զանձնեդ առաջի :

Եշ ընդխառնեցաւ, ասէ, հրեշտակ տն յայգուէ մինչեւ ցվեց ժամ՝ և կոտորեաց ՚ի ժողովրդէնէ անտի եւթանասուն հազար այր : Իբրև ետես ած, եթէ սաստկացաւ հարուածքն, և չէ ոք՝ որ ածէ յաղերս, քանզի չէին յայտնի հարուածքն, ետ տեսանել՝ Դաւթի զհրեշտակն՝ զի ունէր սուր ՚ի ձեռին, և թռուցեալ կայր ՚ի վերայ օդոց : Իբրև ետես Դաւթի զսուրն մերկացեալ, և մինչեւ ցվեց ժամայնչափ հազար տապաստ արկեալ, զմուա ած, թէ մինչեւ ցերիս աւուրս որպիսի ինչ հարուածս զործիցէ : Եդ առաջի զանձն և ասէ, եթէ ես հովիւս մեզայ, խաշնքդ զի՞ մեղան . եղիցի ձեռն քո յիս և ՚ի տան հօր իմոյ : Ո՞հս դիր աղաւեմ . եղիցի ձեռն քո յիս, և ՚ի տան հօր իմոյ :

Այս բարբառ այնը բարբառոյ ընկեր է՝ զոր յաւետարանին ասէ, եթէ ես եմ հովիւս քաջ . հովիւս քաջ զանձն իւր դնէ ՚ի վերայ ոչխարաց իւրոց : Իբրև եդ զանձն առաջի, ած յաղերս զած, և ասէ ցհրեշտակն . դարձն զսուրն ՚ի պատեանս իւր . կանխեաց խոնարհութին, առաջի անկեալ ած ՚ի հաւան զմեծ դատաւորն : Օ որ օրինակ անդ թագաւորն եդ զանձն առաջի, և զամենեցուն բարկութին փարատեաց, սոյնպէս և աստ առաւել ածապաշտ մեր թադաւորն ընդ ամենեսին զխոնարհութի զգեցեալ՝ փռխանակ կառաց և երիվարաց ՚ի հետիսոս ընթանայր . և ցածոյց հեղութին զպատիժն : Եշ քանզի բարի եգիտ, փոխարէնս հատուցանէ բարերարին, և քանզի պատսպարեցաւ թագաւորութին, ած զպարիսպ զեկեղեցեաւս, և քանզի ունի պահպան թագաւորութին, գործէ ամրութի եկեղեցւոյ :

Կմին իրի իսկ ասաց ած յլշղիա , թէ երթ օծ ինձ
զլշղիսէ՝ մարգարէ փոխանակ քո , և զէնուորդի լը
մասեայ 'ի թագաւոր 'ի վերայ Խարայէլի . և առցես
վրէժս 'ի տանէն Աքայաբու : Եւ այ՝ մարդ վրէժ-
խնդիր լինիցի . այլ վի յայտ արասցէ , թէ ածա-
պաշտ թագաւորութի վրէժխնդիր է ձշմարտուեն .
և այս այսչափ :

Ժախիցնէք այսուհետեւ եղբարք 'ի վնասուց հեր-
ձուածողաց և 'ի բազմապատիկ ալեացն , և հասուս-
ցուք զնաւն 'ի յանքոյթ և 'ի խաղաղ նաւահան-
գիստն : Աճապարեսցնէք , գուցէ հասեալ այ արդա-
րութեանն՝ գերփիցէ զմեղմն : Օ որ օրինակ փայտ ,
խոտ , եղէզն , թէ ընդ վայր անգեալ կայցեն 'ի դաշ-
տի , մինչ ջեր իցէ և պարզ , թէպէտ և ցիր կայցէ ,
չխարիսարի 'ի տեղւոյն . իսկ յորժամ հեղեղ սաս-
տիկ յառնիցէ , խաղացուցանէ միանգամայն զփայտն
և զխոտն և զեղէզն : Կոյնպէս և յորժամ այ դա-
տաստանն գայցէ , և մեծ ատեանն Քնի յայտնեացի ,
գերփի զամենայն մոլորութի , և սրբէ զամենայն
մեզս . որպէս մարգարէն վկայէ , յորդիցէ , ասէ , իբ-
րև զջուր դատաստանն , և խաղացէ սաստիկ ար-
դարութին իբրև զհոսանս :

Այլ աստ հանգուցնէք զբանս , և կոչեսցնէք
զհայրն հասարակաց զփողն հնչական և զնուազա-
րանն հոգեւոր . կոչեսցուք զծածուկ և զյայտնի 'ի
գանձս եղիպատացւոց , քանզի չիք յեկեղեցւոջ մի-
մեանց ոսոխ ելանել , այլ միմեանց պատսպարան լի-
նել՝ թէպէտ և լեզուք ազգի ազգի իցեն , այլ մին
յամենայն լեզուաց քարոզի . ըբաժանեն խօսք՝ զորս
ոչ բաժանեն հաւատք . ըբաժանեն բանք՝ զորս 'ի մի-
մեանս յարեն միաբան իմաստունք եկեղեցւոյ : Խօ-
սեցնէք զամենայն արուեստս յեկեղեցւոջ : (Օրհ-
նեցէք զտէր յաղբիւրացն Խարայէլի : Աղբիւրք Խա-
րայէլի մարգարէական վարդապետութիւնքն են և
օրէնք . աղբիւրքն փրկութեան առաքեալքն , են և
աւետարանն փրկութե . նորա աղբիւրք Խարայէլի , և
սոքա աղբիւրք փրկութե : Աատերնէք ամենեքին ,
և առէք ջուր ուրախութե յաղբիւրաց փրկութեն :

ՃԱՌԻ ԵՐԵՌՈՒԴԻ

Վասն կրօնից և մղրտութե՛ք . և զ Մովսէս և զ Անհարոն և զ Երկուսասան
ականցն առ լանջն բերելը , և այլ ևս երկուց ականցն օրինակս
բերեալ , Արբոյն Սեբերիանոսի Եմեսու և պիտիուպոսի :

ԽՐԱԵՄՆ զ մեզ կենարարին վերանալ՝ վայելուչ և
տօնսական պսակօք պսակեաց . զի զմարդկեղէն բնոււ
թիւնս վերացոյց և յերկինս տնկեաց . այն իսկ էթ
սկիզբն ձառին , թէ փրկին զամենայն շահս մեզ շա
հեցաւ . ոչ իւր ինչ շնորհեաց , այլ մեզ փրկութի
պարզեւեաց . զի հողեղէն բնոււթիս երկնաւոր կա
տարեաց , և զգերեզմաննակուր հողս՝ մասն յերկնից
բնոււթիս հաստատեաց : Վանզի գիտէ իսկ անդային
առաքեալ պատկեր հողեղէն կուչել , և պատկեր երկ
նաւոր . և 'ի նորին բանիցն է լսել եղեւ , ասէ , մարդն
առաջին յերկրէ հողեղէն , երկրորդ մարդն՝ տէր 'ի
յերկնից . և 'ի նոյն յարէ , թէ որպէս հողեղէնն ,
նոյնպէս և հողեղէնքս . և որպէս երկնաւորն , նոյն
պէս և երկնաւորքն ² : Խւ հողեղէն ոչ այնու զի
յերկրէ եղեւ՝ կոչէ հողեղէն , այլ վասն զհողեղէն
գործս գործելոյ . և երկնաւորն՝ ոչ վասն յերկ
նից ինչ զմարմինն ունելոյ , քանզի 'ի կուսէ և յերկ
րէ կալաւ զմարմինն , այլ երկնաւոր՝ վասն զառաքի
նութի յանձին ունելոյ , և երկնաւորին մարմին լի
նելոյ . որ ոչ բնոււթը երկնաւոր կուէր , այլ վասն
երկնաւորին՝ որ նա զգեցաւ :

Խռաջին մարդն 'ի հողոյ եղեւ , և հողեղէն գոր
ծովք շրջեցաւ . հող կոչի փոշին՝ որ յառնէ , և եր
կիր՝ որ զպտուղ բերէ : Խւ արդ չկոչէ լոկ զմարդն
երկրաւոր ³ , այլ հողեղէն ընդ փոշի մեղացն եկեալ :
Որպէս հանդերձ և աչք 'ի փոշւոյ վնասին , նոյնպէս
և ողիք 'ի մեղաց . զոր օրինակ յորժամ փոշին թա-

1 Յօրին . հ-գեղէնն :

2 Յօրին . երկնաւորք :

3 Յօրին . երկնաւոր :

փիցի՝ սրբին հանդերձն և երեսք, նոյնպէս և յորժամ զմեղս քո ընկենուցուս՝ սրբին և թեթևանան հոգիք։ Որպէս և երանելին Դաւիթ ասէ, եթէ որպէս նետք ՚ի ձեռս հզօրի, այնպէս են և որդիք թօթափելոց. և որպէս ցիրուսաղեմ ասէ, թէ արի և թօթափեա զփոշիդ ՚ի քէն։ Իստ հողեղինի մարդոյն որ հողեղին գործովլք զգածեալ իցէ, նոյնպէս և երկինք կերպարանին։ յորժամ մարդիկ իբրև ընդ փոշի մեղօք թաթաւիցին, և երկինք հող մաղեն։ Իշլ չէ ինչ օտար բանս՝ թէ յերկնից փոշի մաղեսցի, ոչ յերկնից ինչ բնութենէ, այլ յընդունելեացն արժանաւորութենէ։ Իշլ ովլ վկայիցէ բանիցո, ած ՚ի ձեռն Ո՞ովսէսի, որ ասաց, եթէ ոչ լուիցէք օրինաց տն այ ձերոյ, անձրև ձեր եղիցի ձեզ ՚ի փոշի, և հող յերկնից իցցէ։ եթէ ոչ կայցէք յօրէնս տն այ ձերոյ, եղիցի անձրև ձեր ՚ի փոշի, և հող յերկնից իցցէ։ և հողեղինին հող մաղի, քանզի փոշով մեղացն զգածաւ։

Իշլ զոր օրինակ այնպիսեացն զայն օրինակ ՚ի մէջ բերէ, թէ հողեղինին՝ երկինք հող տեղասցեն, նոյնպէս ըստ իւրաքանչիւր կամաց պատշաճն։ եթէ խիստ միտս տեսանիցէ, ըստ խստութեանն գնայ։ և եթէ կակուղ, ըստ կակզութեն։ ՚իա և բաղզումք խիստ և բիրտ են իբրև զերկաթ և զպղինձ։ որպէս և ՚իսայի զ ՚իսրայէլէ ասէ, ես ծանեայ՝ զի խիստ ես դու, և ջիլք երկաթիք պարանոց քո, և Ճակատ քո պլնձի։ ՚Ն իլք երկաթի՝ զանհազանդ պարանոց ասէ, որ տաղտկայցէ և խուսափիցի մտանելընդ լծով ածապաշտութե, որ յօրինացն խրտնուցու. ըստ այնմ, եթէ երինջ լծընկեց եղեւ ՚իփրեմ, և չառ զլուծն։ Իշլ յօրժամ յայնպիսի խստութե և յանհազանդութե և յանհաւանութե կայցեն մարդիկ, և ած զարարածս ըստ նմին շրջէ։ ՚իշլ եթէ ոչ լուի ջիթ օրինաց իմոց, եղից զերկինս ՚ի վերայ ձեր պղընձիս, և զերկիր ՚ի ներքոյ ձեր երկաթի։ այն իսկ է, զի անսերմն և անպտուղ առնէ։

Իստ հողեղինին՝ նոյնպէս և արարածք կերպարանին առնուլ վրէժս չարեաց նոցա, և զարհամարհանաց օրինաց արարչին։ ՚իսկ որ զկերպարանս երկնա-

ւորին բերիցէ, ըստ այնմ թէ որպէս զգեցաք զպատկեր երկնաւորին, ըստ նմին և երկինք կերպարանին. և որոյ միտք կակուղ իցեն՝ անձրև քաղցրութեան յորդէ նմա: Եւ զի կատարեաց զածեղէն պատգամն՝ լուղ զանդս նորա երկնային ցօղովն. դու ընկած, ասէ, զցող պատգամաց իմոց, և ես ածից քեզ զցող անձրևոյն: Եթէ ոռոգանիցին ոգիք մեր ածային պատգամօքն, ոռոգանէ և զանդս մեր շահեկան անձրևովք: Եթէ լուիցէք օրինաց ո՞յ ձերոյ, երկինք տայցեն զցող իւրեանց, և երկիք ըդպտուղ իւր. բերէ երկիք վասն հնազանդից:

Օ գեցցուք այսուհետեւ զպատկեր երկնաւորին: Կոչէ զկենարարն երկնաւոր, ոչ միայն զի յերկնից իցէ, զի այն յայտ իսկ է, զի բանն ած ոչ միայն երկնաւոր է, այլ և երկնից տէր է և հրեշտակաց, այլ և ըստ մարմնոյ, զի յերկրի զերկնից առաքինութիւն առաքինացաւ: Օ ի թէ վասն զի միայն յերկնից է կենարարն՝ կոչէ զնա երկնաւոր, զիարդ և զայլսն կոչէ երկնաւոր, որ ոչ յերկնից ունեին զբնութիւնն: Կոչնարէս և երանելին Դաւիթ կոչէ զնա երկնաւոր. քանզի գտանեմ զանունն զայն և 'ի հնումն միանդամ 'ի կիր արկեալ, և 'ի նորումն: Պաւզոս ասէ, զգեցցուք զպատկեր երկնաւորին. և Դաւիթ թէ 'ի զատանել երկնաւորին զթագաւորս 'ի վերայ նորա: 'Ի վերայ նորա, յոյր. յերկրի:

Եւ զի 'ի կենարարն եհան զբանն Դաւիթ զերկնաւորն, և չէ բռնազրօսութիւնը բանից, և ոչ անուանց անուանակցութիւն, այլ արդեանց Ճշմարտութեամբ վկայելոց միաբանութիւն, անդստին 'ի կարգէն ուսիր, զի զկենարարն կոչէ Դաւիթ երկնաւոր. 'ի զատանել, ասէ, երկնաւորին 'ի վերայ նորա՝ ձիւնացի 'ի Վաղմնն, լեառն այ, լեառն պարարտ, լեառն մածեալ, լեառն պարարտ: Վսացից զկարգն մի ըստ միոջէ, զի մի բռնազրօսութիւնն ինչ մտածին բանից կարծեսցի. վասն զի և 'ի կենարարն զանուն երկնաւորին հանեմբ. այլ յայտնի և առանց խառնակ ինչ շփոթութիւն յառաջ խաղացէ կարգն և բանք ասողացս. և մի ոք բռնազրօսութիւն կարծիցէ, այլ Ճշմարիտ պատշաճութիւն:

Դ զատանել, ասէ, երկնաւորին զթագաւորս՝ի վերայ նորա՝ ձիւնասցին 'ի Սաղմօն։ Տես, զի միտք իւրաքանչիւր բանից զիւրաքանչիւր հանդէս մեկնութեն ունին։ Թէ զի՞նչ ձիւնասցին, ասէ, և զի՞նչ զատանել երկնաւորին զթագաւորս՝ի վերայ երկըի։

Ուագաւորս երկըի կոչէ ասա՛ ոչ զայնոսիկ, որ աշխարհական պատուովն են, այլ որ երկնային մոռօք պայծառացեալ իցեն, զսքմն զորոց ասէ Պաւղոս, եթէ չարչարիմք, ընդ նմին և թագաւորեսցուք։ Դառէ Պաւղոս զթագաւորութէն սրցն, ոչ վայրապար մեծամեծ ինչ բանիւք, և յաճախուեն պատուոյ՝ որ հազարտացուցանէ զլսողս քանզի մարթի բազուման գամ աւելիս ինչ խօսել, զի զլսելիս լսողացն մեծամեծս կոտորելով խախտիցէ ածել յիրս ինչ որ առաջի կայցեն։ Ի այց Պաւղոս ոչ եթէ մեծամեծս ինչ կոտորելով պատրէ։ Լա և արժանի ըստ խոստմանցն չի ատակ ասել։ և վկայէ ինքն իսկ, եթէ զոր ակն ոչ ետես, և ունին ոչ լուաւ, և 'ի սիրտ մարդոյ ոչ անկաւ, պատրաստեաց ՛՛ սիրելեաց իւրոց։ Արքայունի տալոց է սրց, ոչ աշխարհականս, այլ զերկնաւորն։ ըստ այնմ նմանութեն զոր կենարարն ունի, որ հարցաւն 'ի Պիհատոսի, եթէ դո՞ւ ես թագաւոր հրէից։ և նա աւսէ, արքայունի իմ չէ յայսմ աշխարհի։ եթէ յայսմ աշխարհի էր, մարտնչեին վասն իմ սրաշտօնեայքն իմ։ Արքայունի տալոց է սրց, որպէս Պաւղոս ասէ, և 'ի անիւշ նմին միաբան։ յետ այնորիկ, ասէ, յարուցէ ած թագաւորութի մեծ և սաստիկ, որ կայցէ մնասցէ յաւիտեանս։ և գարձեալ եթէ առցեն զարքայութին սրքն քարձրելցն։ Եւ աստ, ասէ, 'ի զատանել երկնաւորին զթագաւորս՝ի վերայ նորա։

Օ ի՞նչ իյէ զատանելն. որոշել, մեկնել։ Օ իսարդորոշեսցէ զթագաւորսն։ Այն իսկ է, զի Պաւղոսի հրաման տուեալինել քարոզ արքայութեն, յըրուսաղեմէ մինչեւ 'ի կողմանս լիւրիկացւոց առաքեաց քարոզ արքայութեն։ և զոմն 'ի հնդիկս, զոմն 'ի կողմանս արևելից, զոմն 'ի կողմանս արեմտից, զոմն 'ի հարաւ, և զայլս 'ի հիւսիսի։ 'Դ զատանելն, այսինքն

յորոշել և՝ ՚ի մեկնել, թէ որո՞ց կամ ում պարտ իցէ հաւանել, և ոյք ում լիցեն և հաւատասցեն, ըստ իւրաքանչիւր պատշաճից, նոյնպէս և զքարողն առաքեաց : ՚Ի զատանել ասէ, երկնաւորին զթագաւորս ՚ի վերայ նորա, ձիւնասցին ՚ի Ավագմն, այսինքն սպիտակասցին : ՚Ի անզի քարոզութիւն առաքելոցն սպիտակասցոյց զտիեզերս, և առաւել քան զձիւն եցոյց սպիտակ զերկիր . քանզի լուայ բանիւ Ճշմարտութեանն, և Ծնծեալ մաքրեաց ըստ բանին, թէ լուասցես զիս, և քան զձիւն սպիտակ եղէց : ՚Ի՞տ դիր կարգին . ՚ի զատանել երկնաւորին զբագաւորս ՚ի վերայ նորա, ձիւնասցին ՚ի Ավագմն : Ավագմն երբայեցի է, և թարգմանի խաղաղութիւն, փոխանակ ասելոյ՝ թէ սրբեսցին ՚ի խաղաղութե :

՚Իքը կուեաց զկենարարն երկնաւոր, գուշակէ ապա և զմարմնաւոր տեսութիւն, այնու՝ զի լեառն կոչէ զնա . լեառն այ, լեառն պարարտ : ՚Օ երկնաւոր անունն ՚ի լերին անուն փոխեաց . ոչ եթէ ինքն ինչ ՚ի Ճշմարտութիւն փոխեցաւ, այլ ըստ իւրում տնտեսութեն, նոյնպէս և զանուանսն զումարէ յանձնու կոչի կենարարն մեր՝ ած, և տէր, և արարիչ, և ամենակալ, և երկնաւոր, և թագաւոր, և լեառն : ՚Օ այսմ լեառնէ, ասէ, երանելին ՚Հայի մարգարէ, և թէ եղիցի յաւուրս յետինս, ասէ, տէր՝ յայտնի լեառն տն և տուն այ ՚ի վերայ գլսոց լերանց . և երթիցեն ազգք բազումք, և ասասցեն, եկայք երթիցուք ՚ի լեառն տն, և ՚ի տուն այ Հակովրայ . զի ՚ի Այսոնէ եցեն օրէնք և բան տն յլրուսազեմէ, և դատեսցի ՚ի մէջ ազգաց բազմաց :

՚Օ այս լեառն և երանելին ՚Ի անիէլ յառաջագոյն փառաւորէ, մինչ զպատկերն բազմախառն յազգի ազգի նիւթոց մեկնէր, որ յասկւոյ և յարձաթոյ և ՚ի պղնձոյ և յերկաթոյ և ՚ի խեցոյ հաստատեալ կայր . և ՚ի վախճանին ասէ, թէ հատաւ վէմ առանց ձեռին, հար զպատկերն և մանրեաց, և վէմն եղել լեառն մեծ, և ելից զամենայն տիեզերս : ՚Տես, զիարդ չմիաբանին բանք ինչ որ մարմնապէս ասիցեն՝ հոգեռոր մեկնութեանց . զի եթէ զյայտնի ինչ լեռնէ ասէր, եթէ եղել վէմն ՚ի լեառն մեծ, և ելից

զտիեղերս, լնուլն արդիւնս ինչ յայտ առնէ. և լեառն յորժամ յամենայնի լինիցի, լըսու, այլ ծածկէ: Եւ յայտ է թէ զիենարարին տնտեսութին կոչ չէ լեառն, զի քան զամենայն շահաւետ հնարս՝ այն բարձրագոյն է, քան զօրինացն և զմարդարեիցն առաւելութի, քան զննախօսացն՝ որք զօրհնութիս զրեցին: Ի՞արձրասցի, ասէ, քան զամենայն բլուրս:

Եւ աստ իսկ կենարարին ձառեալ զեկեղեցւոյ՝ ասէ ցառաքեալսն, թէ ոչ կարէ քաղաք թաքելոր ՚ի վերայ լերին կայցէ: Ո՞ր քաղաք. եկեղեցի: Երուսաղէմ շինեալ որպէս քաղաք. զոր և մարդարէն տուն կոչէ ՚ի վերայ գլխոց լերանց: Ո՞ր տուն. եկեղեցի: Ի յլ զգուշ լեր, զուցէ այլ այլս ինչ խօսիցիմք, և բունազբոսիցեմք զՃշմարտութին. տեսցնուք և վկայութինչ ինչ սմին պատշաճական, թէ արդարեւ տուն կոչի եկեղեցի: Ի ուր Պաւղոսի որ զրէ առ ջիմնթէսու, զի գիտացես՝ թէ որպէս պարտ իցէ քեզ ՚ի տան այ շրջել որ է եկեղեցի այ կենդանւոյ: Եւ եթէ տուն այ կենդանւոյ է եկեղեցի, ապա ուրեմն բարիոք ասաց մարդարէն, թէ տուն այ ՚ի վերայ գլխոց լերանց. այս իսկ է, զի ՚ի վերայ քան զամենայն բարձրուիս է եկեղեցի: Եւ երթիցեն ազգք բազում ՚ի տունն. քանզի ոչ թէ ՚ի հրէական փարախն ընթանան ազգք բազում, այլ յեկեղեցի: Եւ ասացեն, եկայք եցնուք ՚ի լեառն տն և ՚ի տուն այ Յակովեայ: Իսացաք բազում անդամ, թէ ոլ է ածն Յակովայ, ըստ մոտաց բանին, զի երևեցաւ ած Յակովայ, ած և մարդ:

Եւ արդ ասէ երանելին՝ Կաւիթ, եթէ ՚ի զատանել երկնաւորին զթագաւորմն ՚ի վերայ նորա՝ ձիւնասցի ՚ի Ոաղմօն, լեառն այ, լեառն պարարտ: Օ տնտեսութի կենարարին կոչէ լեառն պարարտ, այն իսկ է, թէ գէր և զօրաւոր և ամենածաղիկ է. զի պարարտն զամենայն ծաղիկ ծննդական յայտ առնէ, որպէս և ՚ի միում վայրի ասէ, թէ պարարտասցի գեղեցկութի անապատի. և դարձեալ թէ սոքա են երկու որդիք պարարտութե: Ի եառն մածեալ կոչէ. զցիրն և զլոյձն և զջրին ժողովէ և հաստատէ. զոր

օրինակ զկաթին զլոյծ բնութենին խախացն ժողովէ և պնդէ, և 'ի մի միաբանութիւն զմեզկն և զտարածն ածէ, և չէ հնար այնուշետե մեկնելոյ յայնմանէ յորում միացաւն, ուսա 'ի նմանէ, և ոչնա 'ի սմանէ. նոյնպէս և ՎՇ յորմէ հետէ միացաւ ընդ ոգիս մեր՝ իբրեւ խախաց ընդ կաթին, չքակի և չլուծանի: Այսպիսի էր և Պաւղոսի ոգին. երբեմն էր իբրեւ զկաթն լոյծ, և յորմէ հետէ միացաւ ընդ ՎՇի՝ ասէր, ոմեկնէ զմեզ 'ի սիրոյն ՎՇի: Եաւոն այ, լեառն պարարտ, լեառն մածեալ: Եաւոն պարարտ՝ զկենարարն կոչէ. որպէս և զմարգարէնն լերինս կոչեն զիլք: Հիմունք նորա, ասէ, 'ի լերինս սրբ: Եւ 'ի միւսում վայրի՝ նոյն, թէ լուսատու ես դու սքանչելապէս լերանցն յաւիտենից: Եերինս յաւիտենականս կոչէ զմարգարէնն. ըստ այնմ, թէ (Ը) ընեալ է տէր ած Խըրայէլի, զի յայց ել, և արար փրկութի ժողովրդեան իւրոյ, որպէս խօսեցաւ 'ի բերան մարգարէլիցն՝ որք յաւիտենիցն էին: Եւ վասն այնորիկ լուսաւորես դու սքանչելապէս լերանցն յաւիտենից: Հիմունք նորա. ոյր. կենարարին. 'ի լերինս սրբ: քանզի հիմունք աւետարանական քարոզութեամարգարէականքն էն: Վմին իրի իսկ և առաքելոյ յայնագոյն զբանն արարեալ ասէ, դուք եք տաճար այ կենդանւոյ, շննեալ 'ի վերայ հիման առաքելոց և մարգարէից, որոյ է գլուխ անկեան ՔՅ ՎՇ:

Եւ յայն սակս կոչին լերինք՝ մարգարէքն, զի որպէս լեառն յերկրէ է, և անցանէ բարձրութի ըստ երկիր. 'ի նմանէ է, և 'ի վեր քան զնա. նոյնպէս և մարգարէքն, քանզի 'ի մարգարանէ էին, և 'ի վեր քան զմարդիկ, կոչեին լերինք: Ասի և կենարարն լեառն. քանզի ունի ազգակցութի ընդ նոսա ըստ մարմնոյ, և անցանէ ըստ ամենայն մարմին, և ըստ բնաւ միտս մարգարան ածութեն: Եւ զի մարգարէքն լերինք կոչեցան, և կենարարն լեառն, համարեցան՝ եթէ մի ոք 'ի մարգարէիցն իցէ. որպէս և ինքն ասէ, եթէ զ՞ոք ոք ասեն զինէն մարդիկ, թէ իցեմ, զորդիս մարդոյ: Եւ նոքա ասեն, եթէ ոմանք ասեն զ՞ովաննէս մլրտիչ, և ոմանք զիշբեմիայ, և

ոմանք զլշղիայ, և ոմանք զմի ոք 'ի մարդարէիցն . և կարծէին զնը լեառն՝ եթէ մի ոք 'ի մարդարէիցն իցէ . Երանելին Դաւիթ ասէ յառաջագոյն, թէ զի՞ կարծէք լերինք մածեալս զլեառն յորում հաճեցաւ ած բնակիլ 'ի նմա : Օ՞ ասեն մարդիկն զորդւոյ մարդոյ : Պատասխանի ետուն և ասեն, ոմանք զլշղեմիայ, և ոմանք զլշղիայ, և ոմանք զի՞ովաննէս մկրտիչ : Տեսանես, զիարդ յառաջագոյն ասէ մարդարէն զկարծիսն . զի՞ , ասէ, կարծէք լերինս մածեալս զլեառն յորում ած հաճեցաւ բնակիլ 'ի նմա Եւ զիարդ բնակեաց . քանզի այսպէս 'ի մարդարէնս ոչ բնակեաց, որպէս և աստ ասէ, թէ տէր բնակեսցէ 'ի նմա 'ի սպառ . անդ ժամանակաւ արար ասպնջան կանութի, և աստ յաւիտենական բնակութի :

Եւ միտ դիր կարգին, զիարդ ցուցանէ զիւնը ըզնոյն երկնաւոր, զնոյն՝ լեառն, զնոյն և ած, զնոյն և փրկիչ տիեզերաց . զնոյն, զմին որ երկեցաւ յաշխարհի . քանզի և տէր, ասէ, բնակեսցէ 'ի սպառ . և ապա՝ թէ կառք ո՞յ բիւրապատիկ են : 'Կախ կոչեաց զնա երկնաւոր, ապա լեառն, ապա և ած . կառք ո՞յ բիւրապատիկ են, հազարք ուղղիչ, և տէր 'ի նոսա 'ի Աինայ 'ի սրբութի : ել 'ի բարձունս, գերեաց զգերութի : Արգարէն զայ խօսի, որոյ կառքն բիւրապատիկ են, և հազարք ուղղիչ, ել 'ի բարձունս, գերեաց զգերութի : Եւ պարզես որդւոց մարդկան . և Պաւղոսի առեալ հաստատութե զմարդարէական դիտաւորութին յաւետարանական միտս ածէ, թէ իւրաքանչիւր ումեք տուեալ են չնորհք ըստ չափոյ պարզեացն Վատի . յարէ 'ի նոյն և զմարդարէին վկայութի . քանզի ասէ իսկ, ել 'ի բարձունս : Ո՞վէ ածն՝ որ են . որոյ կառքն բիւրապատիկ են, և հազար ուղղիչ . ո՞վէ իցէ որ ելն . զորմէ ասաց, թէ 'ի զատանել երկնաւորին զթագաւորս 'ի վերայ նոցա : քանզի ասէ, ել 'ի բարձունս, և զերեաց զգերութի : Եսդ զբանն առաջի, և ինքն մեկնէ, ելն, ասէ, զի՞նչէ, եթէ ոչ զի էջն նախ 'ի ստորին կողմ երկրի . որ էջ, նոյն է, և որ ելն 'ի վերոյ քան զերկինս : Արգարէն . ասէ թէ ետ պարզես մարդկան . և առաքեալ մեկնէ, թէ ովլետ զպարզեսն . որ ելն, ասէ, 'ի

վերոյ քան զերկինս , նա ետ : Որպէս անդ ասէ , [թէ ետ , նոյնպէս և աստ , եթէ ետ զոմանս առաքեալս , զոմանս մարդարէս , զոմանս աւետարանինս : Տես զծոխութիւն ածութէն . տէս զիշխանութիւն փառաց փառաւորին : Կա ետ ասէ , չինդրեաց , այլ ետ :

Եւ ՚ի բարձունս , և գերեաց զգերութիւն : Ո՞ր գերութիւն կայը ՚ի բարձունս . բարձունս աստ զիսաշն կոչէ . ըստ այնմ , թէ որպէս Վովսէս բարձրացոյց զօձն յանապատին , նոյնպէս բարձրանալ պարտ է որդւոյ մարդոյ : Վաղա յայտ է եթէ բարձունս զիսաշն կոչէն . քանզի ՚ի խաչին ձգեաց առ ինքն զամենայն մարդկութիւն , զորս վտարանդեալ ունէր սատանայ իբրև զգերի : Վամն այնորիկ զիսաշն բարձունս անուանէ , զի ՚ի խաչին զբոնաւորութիւն բոնաւորացն քակեաց , և զգերեալսն դարձոյց . ըստ այնմ , եթէ կոչեսցես զգերիս ՚ի թողուն . զնոյն գերեալսն գերեաց ՚ի : Վայլ ազգ սատանայ գերեաց , և այլ ազգ ՚ի : նա յաղատուէ ՚ի ծառայութիւն , իսկ ՚ի ՚ի ծառայութէ յաղատութիւն , յանհաւանութէ ՚ի հաւանութիւն : Եւ զի կանխակալ էր սովորութիւնն , և սոսկալի անուն գերութէն , կարծէր աշխարհ՝ եթէ ՚ի բոնութէնէ բոնաւորի ուրուք գերեսցի . քանզի չեր գիտակ ճշմարտութէն , ՚ի կռիւ պատրաստեցաւ ընդ աւետարանին : Իսկ կենսարարին ծածկեալ զդիտաւորութիւն մարդասիրութէն , ճակատու պայմանաւ յառաջ մատուցեալ՝ փայլատակունս արձակէ ՚ի թշնամիսն . նետս տեղայ ՚ի հոգւոյն աղեղանէ . ըստ այնմ զոր առաքեալ ասէ , թէ զէն զինուորութէ մերոյ ոչ է մարմնաւոր , այլ զօրաւոր , քակել զիսոր հուրդս ամրացեալս , և զամենայն հպարտութիւն բարձրացեալ ընդդէմ զիտութէն ՚ի : և գերեմք զամենայն միտս ՚ի հնազանդուի ՚ի : Եւ քանզի զգերութիւնն բոնազգօսեաց մարդասիրութիւնն , և կարծէր աշխարհ՝ եթէ բոնութիւն ինչ իցէ բարկութիւն ապա յիրաւի ասէր մարդարէն , եթէ եւ ՚ի բարձունս ՚ի խաչն , և գերեաց զգերութիւն , և ետ պարզես մարդկանն Վարդիկյորժամ գերեսցեն , զինչս յափշտակեն . իսկ մեծի թագաւորի գերութէն դէտ ակն մարդասիրութէն կալեալ չէառ ինչ ՚ի գերեացն , այլ և ետ ևս :

Վայնպիսի էր Պաւղոս. գերեր երբեմն մինչ յան
գիտութիւն պատրեալ էր, և յետոյ գերեցաւ զօրու-
թիւն ՚Ի՞սի. և խոստովան լիներ զրարւոք գերութիւն.
ողջոյն տայ ձեզ, ասէ, Ուարկոս գերեկից իմ: ՚Իար-
ձաւ ՚ի դառն գերութենէն, և եկն ՚ի ոք գերութիւն.
և շրջեցուցանէր զնա կենարարն աւետարանին կա-
պանօք՝ ՚ի ցոյց և յօրինակ. ոչ որպէս թէ ձաղիցէ,
այլ զի փառաւոր առնիցէ: Եւ այնպէս հեշտ զգե-
րութիւն համարէր, մինչև պարծել ևս ՚ի կապանս
գերութիւն. և լուր նմին, աղացեմ զձեղ ևս Պաւղոս
ծերացեալ, բայց այժմ կապեալ ևս ՚Ի՞սի ՚Ի՞սի. և
այլուր՝ շղթայքն ՚ի յանձն, և ասէր, վասն յուսոյն
Խարայէլի ունիմ զշղթայս. և առ Տիմոթէոս զըէ,
թէ չարչարակից լեր աւետարանին, վասն որոյ ևս ես
չարչարիմ կապանօք իբրև զշարագործ: ՚Իայց տես
զշամարձակութ ընտիր ողւոյն. այլ բանն այ, ասէ,
ոչ եթէ կապեալ իցէ. զամենայն ինչ կրեմ վասն
ընտրելոցն, զի ինձ նախանձաւորք լիցին:

Ծեսանես, որպիսի գերութ գերեաց. ել, ասէ, ՚ի
բարձունս, և գերեաց զգերութիւ: Ուստի. ՚ի սա-
տանայէ. քանզի անօթ սատանայի էին մարմինք
մարդկան, և անօթք ազգի ազգի: Եւ որպէս ՚ի
տան՝ այլ անօթ իւղոյ է, և այլ զինոյ, և այլ քա-
ցախոյ, և այլ անօթ ինչ երկաթի, կամ յայլմէ ինչ
նիւթոյ. և ամենայն միոյ տն է: ՚Իցնպէս ևս սատա-
նայ՝ էառ զմարդկութիւն և ազգի ազգի ամանս գոր-
ծեաց. զոմն ամանս պունկութիւ, զոմն չնութիւ, զոմն
խաբէութիւ, զոմն բռնաւորութիւ, զոմն ագահյութիւ,
զոմն անածութիւ, զոմն հայհօյութիւ, զոմն խառնա-
խօսութիւ, զոմն անարգութեան: Եկն և ետես կեն-
արարն գրաւեալ զամենեսեան. ասէ յաշակերտոն,
ոչ ոք կարէ ՚ի տուն հզօրի մտանել, և զամանս նորա
յափշտակել: Հզօր զատանայ կոչէ. ոչ եթէ առ-
նա ինչ հզօր էր, այլ առ մարդիկ որ ընդ նմա պա-
տերազմ տային: Եթէ ոչ նախ զհզօրն կապեսցէ,
և ասկա զամանս նորա յափշտակեաց զյափշտակեալսն, և
գերեաց զգերեալսն:

Եւ յիրաւի իսկ՝ զոր ասացն արար. քանզի ոչ

ուրեք դտանես զկենարարն եթէ ձեռն՝ ի գործ արկ
 'ի վարդապետութիւն մարդկան, և ետ հանգա մանա
 բանին ճշմարտուե՛, կամ ձգեաց զոք ՚ի ճանապարհու
 փրկութե՛, եթէ ոչ նախ զբանսարկուն կապեաց :
 Հյորժամ զկենարար մկրտուին առ յանձն՝ որ զա-
 մենեսին սրբէ, և խառնեաց զբարիոք խմորն ընդ-
 ջուրն՝ զիւր սրբութիւն, և արկ զանձն ընդ ջրով, զի
 ծածկեսցէ ընդ ջրովն զբօրուի խմորյն . մկրտեցաւ,
 և իսկ ե իսկ ելանէ ՚ի Հյորժանանէ յանապատն
 փորձել ՚ի սատանայէ : Վիթ դիր այսմ քաջ, աղա-
 շեմ, զիամբդ միաբան է ընդ այսմ, չկարէ ոք յափը-
 տակել զանօթս հզօրին՝ եթէ ոչ նախ զհզօրն կա-
 պիցէ : Չերեկի ուրեք փրկին՝ թէ ուսոյց, և կամ
 նշանս ինչ արար, մինչև նախ զսատանայ կապեաց
 յանապատին, ընդ նմա և զամենայն չարութիւն նո-
 րա : Խւ արդար գարձեալ յանապատէն՝ սկիզբն առ-
 նէ անձային պատգամացն, և յափշտակէ զյափշտա-
 կեալն՝ ՚ի սատանայէ, ոչ անձական զօրութիւն, այլ
 մարմնաւոր տեսչութիւն : Վանզի այն իսկ կայր ա-
 ռաջի, զի մարմնովն յաղթեսցէ սատանայի, և ոչ
 անձութիւն . զի այն՝ նախատանաց պատերազմ էր և
 յաղթութիւն, եթէ անձ ընդ սատանայի ՚ի կուիւ մտա-
 նիցէ . այլ որպէս բազում անգամ ասացի, քանզի
 ընդ մարդկան էր կուիւ թշնամոյն, զմարդկան բնու-
 թիւ վառէ յինքեան ընդդէմ ախոյանին . զի որով
 խոցեցաւն՝ զնոյն խոցեսցէ :

Խւ արդ առեալ ՚ի նմանէ զամանս, այսինքն զո-
 գիս մարդկան, որք մոլորեալ և գայթակղեալ ըր-
 ջէին ընդ ամենայն չարիս, առաքէ այնուհետեւ իբրև
 զիւր անօթս զոգիս մարդկան զթառամեալս յամե-
 նայն չարիս, ախոյեան սմին՝ յորմէ եհանն : Իման
 չարեաց էր և հալածին Պաւղոս, թշնամանիւ և
 անձամարտ . քանզի անձամարտ էր՝ որ ընդ Վոհին
 մարտնէր . որ զորդի ուրանայ, ասէ, և զհայր անար-
 դէ : Վիթ դիր, զիամբդ և ինքն իսկ առաքեալ զվայ-
 րովք ածէ զկանխակալ անդիտութիւն իւր . հաւա-
 տարիմ է, ասէ, բանս, զի ՀՅ ՎՇ եկն յաշխարհս
 փրկել զմեզաւորս, որոց առաջին ես իսկ եմ : Իւնու-
 զանձամարտն և զնախանձախնդիր օրինացն, որ ընդ

Վասի յանդէտս տայրը զպատերազմ, զամանն լի անզիտութիւն և նախանձու, և կատարէ անօթ ընտրութէ. և լուր նմին իսկ՝ որ ասէց յԱնանիա, թէ երթ, զի անօթ ընտրութէ է նա ինձ. Տեսանես, զիարդի շարեաց ամանոց՝ արար անօթ ընտրութէ: Եշտ այլուր Պաւլոս կոչէ զմարդիկ ամանս. եթէ կամէր, ասէց, ոճ ցուցանել զբարկութիւն, և յայտնի առնել զգօրութիւն, զոր համբեր բազում երկայնստութիւնի վերայ ամանոցն բարկութէ: Մանս բարկուել զան հաւանիցն ոգիսն կոչէ. զի ցուցցէ զմեծութիւն ողորմութէ իւրոց ՚ի վերայ ամանոցն ողորմութէ, զորս յառաջագոյն պատրաստեաց զմեզ անօթս ողորմութէ. զայնցանե ասէ, որք արժանի մարդասիրութիւն եղեն, և անօթ ընտրութէ. և այն իսկ է են ՚ի բարձունս և գերեաց զգերութիւն: Եւ և ինքն իսկ զնոյն ակնարկէ. ես, ասէ, յորժամ բարձրացայց, այս իսկ է՝ յորժամ՝ ի խաչ ելից, զամենեսեան ձգեցից առ իս:

Վպա ուրեմն եհան ՚ի յիւր զյափշտակեալսն, և դարձոյց զգերեալսն. ազատեաց զվտարանդիսն, և բժշկեաց զախտացեալսն. խզեաց զկապանս, զոր մեղքն կապեցին, և փոխանակ այնը՝ եդ պսակ ՚ի գլուխ կապելոցն: Եշտ զի մեղքն կապանք են, լուր դրոյն՝ որ ասէ, ՚ի տոռունս մեղաց իւրոց, ասէ, կապի իւրաքանչիւր ոք: Եշտ քանզի զմեզս եգիտ կապանս, խզեաց զմեզս գառն այ, որ եբարձ զմեզս աշխարհի: Ո՞ մարդասիրութիւն բարերարին և ոն: Տէր ոք յորժամ զծառայի փախուցելոյ զչետ երթիցէ և հասանէ, եթէ արձակ գտանիցէ՝ կապէ. և եթէ առողջ զան հարկանէ. և եթէ ՚ի լոյս՝ խաւարաբանդ արգել առնէ. և փրկին զչետ եղեւ փախստական բնութիւն մարդկան ՚ի ճշմարտութէ և ՚ի բարերարութենէ, և յօրինաց, և ՚ի պատուիրանաց. եգիտ ոչ արձակ, այլ կապեալ, և արձակեաց. մերկ, և զգեցոց. որք միանգամ, ասէ, ՚ի Ք՛սմկրտեցայք՝ զի՞ս զգեցեալ էք: ՚Ի բանդի եցիտ զամենեսեան, և եհան ՚ի բանդէն. ՚ի խաւարի, և լուսաւորեաց. երկիր, ասէ, Օ աբողովին և ՚եփմաղիմայ, հանապարհ ծովու յայնկոյս Քորդանանու, ժողովուրդ որ նստէր ՚ի խաւարի ետես զցյս մեծ:

Եշւ ուր եղիտ կապեալս , և արձակեաց : 'Եքազմ
ածեան մոլորութեն , իբրև 'ի գըի ինչ և 'ի ներքին
վիրապի : Եշւ զի գուք՝ կռոցն երկրպագութին է ,
ըստ Երեմիայի մարդարէի , հիացան , ասէ , երկինք ,
և զարհուրեցաւ երկիր , զի երկու չարիս արար ժողո-
վուրդն . զիս թողին , ասէ , զաղըիւրս ջուրց կենդա-
նութե , և փորեցին իւրեանց գուբս ծակոտկեանս :
Վզրիւր կոչէ զանձն , զի աղըիւրն յիւրոց ականցն
բզիէ զջուրն . և գուքն՝ մուրացածոյ և եկամուտ
զջուրն ունի . և քանզի զբուն ածն թողին , և 'ի
սիրտակմն զառածան . որպէս և Պաւղոս ասէ , եթէ
մինչ ոչն գիտէիք զտծ , ծառայէիք այնոցիկ՝ որ ոչ
էին 'ի բնէ ածք . 'ի գըի անդիտութե կապեալ կայիք
'ի կռապաշտութե վիրապի : Ուստի Դաւիթ իսկ ըզ-
բոլոք բարձեալ աղաղակէ , թէ փրկեա զիս յայն-
ցանէ՝ որք իթանեն 'ի գուք : Ուստի և երանելին Եշ-
սայի ասէ , եթէ ժողովուրդ՝ որ նստէր 'ի խաւարի՝
ետես զլոյս մեծ . և զի մեկնէ իսկ՝ թէ յորում մթի
էին , ածէ զնովիլմբ , թէ ժողովուրդ՝ որ նստէր 'ի խաւ-
արի և 'ի ստուբրս մահու : Խակ միւսն՝ և 'ի դէմա
իսկ կենարարին խօսի , եթէ դու արեամբ ուխտի քո
արձակեցեր զկապեալս 'ի գըոյ անջրդոյ : Վքեան
ուխտի զթողութի մեղացն ասէ . և կապեալս՝ որ-
պէս Պաւղոս կապեալ Հոգի Վշի , ոչ 'ի գըոյ յան-
ջրդոյ . և զիարդ արեամբ ուխտին . այն իսկ է , թէ
այս է արիւն իմ նորոյ ուխտի՝ հեղեալ վասն ձեր 'ի
թողութի մեղաց :

Եշւ միտ գիր հաւաստեաւ : 'Դաւիթ ասէ , թէ ել
'ի բարձունս և գերեաց զգերութի , և ետ պարգևս
մարդկան . և պարտ է ամենայն իսկ մարդարէիցն
միաբան խօսել , քանզի մի հոգի էր յամենեսին : Ու
ասէ , թէ արձակեցեր զկապեալմն յանջրդի գըոյն .
և միւսն՝ թէ ուրախ լիցին առաջի քո , որպէս ուրախ
լինին յաւուրս ամարայնոյ . արձակեալքն , ասէ , իբրև
յամարայնոյ ուրախ լիցին : Ուստի և փրկին իսկ ա-
սէր՝ եթէ հունձք բաղում են , և մշակք սակաւք ,
աղաւեցէք զտէր հնացն՝ զի հանցէ մշակս 'ի հունձս

իւր 'ի գործ : Ի շնապէս , ասէ , ուրախ լինիցին փըր-
կեալքն քո , որպէս որք ուրախ լինին 'ի հունձս , որք
զպտուղս իւրեանց վաստակոցն ժողովեն , կամ իբրև
որք զաւարն բաժանեն : Ի աղումաւար առնուն բըռ-
նաւորք 'ի պատերազմի , ոսկի և արծաթ և հան-
դերձք . և ամենայն իսկ առն՝ աւար կոչի , քանզի
ցիր և վայրավատին կայ ամենայն խառն , հան-
դերձքն և զէնն և սուրն , ոսկին և արծաթն և
հացն , և ամենայն զինչ և իցէ . նոյնպէս և սատա-
նայի առեալ զամենեսեան , և ընդ միմեանս խառնա-
կեալ , իշկն ՎՌՇ , և խառն զամենեսեան յափշտա-
կեաց 'ի նմանեն , զարբեցողս և զադահօ և զյափշտա-
կողս , վասն այնորիկ ասէ , ուրախ լինիցին առաջի
քո , զոր օրինակ ուրախ լինին յամարայնի , և զոր օ-
րինակ որք բաժանեն զաւար . որպէս և Պաւիթ ա-
սէ , թէ ցնծացայց ես 'ի բանս քո , որպէս զայն՝ որ
գտանէ աւար բազում :

Տես զարմանալիս . զոր օրինակ որ յանդն յաղ-
թիցէ , և զապստամբն կապիցէ , և զըմբռնեալսն
յապստամբէն թափիցէ , և ապստամբն միշտ զմահն
առաջի աչաց նկարէ , և վտարանդիքն ուրախ լինին ,
զի 'ի բռնաւորութենէն արձակեցան , և 'ի թագա-
ւորութիւն եկին : Ի այց սակայն և ապստամբն որ մե-
ռանելցն իցէ , և նոքա որ ազատելց իցեն , 'ի ցոյց
շրջին վասն յաղթութեան թագաւորին . նոյնպէս և
կենարարն կալաւ զսատանայ 'ի պատերազմի և զդես ,
և զնոսա որ 'ի նմանէ ըմբռնեալ էին , և 'ի միասին
'ի ցոյց շրջեցուցանէ : Խըւ զերկոսին Պաւզոս ասէ ,
ՎՌՇ է , ասէ , խաղաղութիւն մեր , որ արար զերկոսեան
մի . և զկրծիմն ցանկոյն քակեաց զթշնամութիւն 'ի
մարմի իւրում , ելցյծ և զօրէնս պատուիրանաց իւ-
րովք հրամանովքն , խափանեաց և եթարձ 'ի միջոց
զդատակնիքն մերոյ հակառակութեան և բեեեաց
ընդ խացին , և մերկեաց զիշխանութիւնն և զպետու-
թիսն , և յայտ յանդիման խայտառակեաց զնոսա :
Որպէս զձողոյ ինչ նշան յաղթութեան կապիցեն ,
կամ աղաղաւարտ կամ զրահն և կամ այլ ինչ զնշխար
կոտորելոցն և շրջեցուցանիցեն . նոյնպէս իբրև յար-
քունի նշանի կապեաց զզէն սատանայի . և արար

խայտառակ զդես 'ի խալին: Վ. Հ. Դեքն ձաղին և 'ի սպանումն պահին: Նաև և յափշտակեալքն նախ ձաղին, և ապա յաղատութիւն ելանեն. և լուր Պառոսի, չնորհք, ասէ, ոյ որ յամենայն ժամ հռչակն հարկանէ զմէնջ 'ի ԲՌՇ, և բուրէ 'ի մէնջ զշոտ գիտութե իւրոյ: Չաղի ապստամբն, ձաղիմք և մեք որ ընդ ապստամբան էաք. զի յայտնի լիցի, թէ ով յաղթեաց, և ով ապստամբն էր, և ո ոք ընդ ապստամբան. և քանզի զմին կալաւ և սպանանելոց է, և զայլն թափեաց և ազատեաց, հարկ է և առցա առ անդամ մի և ընդ նմին ձաղել՝ որ մահապարտն իցէ, և 'ի մահ երթայցէ: Խւ զայնպիսի զձազելոցն և զկալանաւորացն՝ ասէ Խսայի, եթէ վաստակ եղեւ երկիրն եգիպտացւոց, և վաճառականք եւ թուպացւոց, և սաբայացիքն՝ արք մեծամեծք առ քեզ եկեսցեն, և զկնի քո շրջեսցին կապեալք 'ի ձեռակապս, և 'ի քեզ աղօթս արասցեն: Օ ի ցուցցէ թէ գան 'ի գերութին, ոչ 'ի կորուստ, այլ 'ի գիւրութի. զկնի քո, ասէ, շրջեսցին կապեալք 'ի ձեռակապս, և 'ի քեզ յաղօթս կայցեն, զի 'ի քեզ ած դոյ, և միք ած բայց 'ի քէն:

'Չաղին դեք, ձաղին և առաքեալք. նոքա ընդ պարտութն զամօթի հարեալք, և սոքա զյաղթուի թագաւորին հռչակն հարկանել: Չաղեցան յայն ժամ դեքն, ձաղին և այժմ հերձուածողք, որք 'ի դէմս ընտանեաց զթշնամեաց գործս գործեն: Օ որ օրինակ քան զամենայն պատերազմ, ընտանի պատերազմն չար է. նոյնակէս քան զամենայն մոլորութին՝ հերձուածողացն մոլորութիւն: Հեթանոսն եթէ թշնամանիցէ ինչ զԲՌՇ, չհամարիմ ինչ օտարութին, քանզի թշնամի է խալին. զհրեայն չգրեմ ինչ, քանզի յայտնի իսկ թշնամի է: Հերձուածողն՝ որ պատճառի դաւանել լԲՌՇ, և ուրանայ 'ի ԲՌՇ. որ բարրի քարոզել զհոդին ոք, և հայհոյէ զոք հոգին, այն պատերազմ տագնապէ զիս իբրև զընտանի պատերազմ: Որպէս որ 'ի քաղաքի կոիւ լինիցի, քան զամենայն կոիւս չար է. և քան զամենայն կոիւս քաղաքի՝ որ աղմուկ 'ի տանն լինիցի՝ դառն է. և քան զքաղաքին և զամն՝ այն չար խռո.

վութի է, որ ընդ այր և ընդ կին կայցէ, և քան զայն ևս դժնդակ ծուխ՝ որ ընդ մէջ մորուին և ըր ջուաց ծխիցի. և ևս չար աղմուկ այն՝ որ 'ի մէջ յօ բային և խորթիցն կայցէ : 'Ի միտ առ զընտանի թշնամութին : Օ մտաւ ած զայր՝ որ 'ի հրապարակէ 'ի տուն զայցէ, և կարէ ձմեռն զերեսօք կայցէ. յորժամ սեղանոյն ժամ իցէ և ուրախութե՛, յայն ժամ 'ի պատերազմի հասանիցէ կալ. հոգք և տրտմութիք յաճախիցեն, և հողմակոծ զնաւահանգիստս առնիցեն, և իբրև 'ի ծովու կայցէ 'ի ծփանս 'ի տանն . զտունն թողուցուն, և 'ի հրապարակն իբրև 'ի նաւահանգիստ դիմեսցեն : Վ յնախիսի խուովութեց տարան վասն ՞ի արք անձապաշտք, զորոց ասէր ՞ո՛, եթէ մատնեսցէ եղբայր զեղբայր 'ի մահ, և հայր զորդի, և յարիցեն որդիք 'ի վերայ հարց : ՞ամանեսցի որդի 'ի հօրէ, և հայր յորդւոյ, մայր 'ի դստերէ, սկեսուր 'ի նուոյ, և նու 'ի սկեսրէ, և թշնամիք տանուտեառն՝ ընտանիք իւր իցեն : Օ որ օրինակ քան զամենայն պատերազմ՝ տան պատերազմ դժընդակէ, նոյնպէս քան զամենայն մոլորութիւն՝ հերձուածողացն մոլորութիւն . որ թուին թէ զնոյն ընտանութիւնիցի, և զնոյն խոստումն անձպաշտութե՛, զգեցեալ զկերպարանս անձպաշտութեան, և մարտնչիցի ընդ ձշմարտութենն . զորոց ասէ Պաւղոս, եթէ զկերպարանս ձշմարտութենն ունին, և 'ի զօրութէ՛ ուրացեալ են :

Եշ արդ եթէ զնոյն ասիցեմք, մի ոք ընդ այն դժկամակ լինիցի . քանզի ոչ եթէ այնը ինչ խնդիր է, եթէ ևեթ նորս ասիցեմք, այլ եթէ ձշմարիտ ինչ մարթի 'ի զնոյն ասել, և այլ ազգ մեկնել . թէ պէտ և միաբանիցէ՝ բազմազիմի մեկնութիւն են բանին : 'Ա և անձ մի է, և բազում մասամբք և բազում օրինակօք խօսեցաւ ընդ հարս մեր մարդարէսն և ընդ առաքեալսն . ոչ զի նոյն հոգի ոք խօսեցաւ 'ի նոսաւ և 'ի սոսա, խորչիցիմք ինչ յառաջնոցն և յերկ բորդէն, այլ տեսանեմք մի զօրութիւն և ազգի ազգի աղղմունս : Եշ յորժամ խօսիցի հայր 'ի մարդարէսն, որդի խօսի . և յորժամ խօսիցի որդի յառաքեալսն, հայր խօսի . և յորժամ խօսիցի հոգին

որ ՚ի մարգարեմն և յառաքեալսն, հայր և որդի խօսին. չի՞ք անդ բաժինք, և ոչ հատանել զանհատ ընութին, և ոչ բաժանել զառանց բաժանելոյ թագաւորութին :

Կամիցին գիտել՝ թէ զիավրդ անբաժին իցէ, լուր այ՝ որ ասէրն ցՈ՞վսէս, յորժամ դանդաղէրն երթալ յերկիրն եզիպտացւոց . չեմ բաւական, ասէ, մտանել ՚ի տուն ֆարաւոնի՝ զի նրբաձայն եմ և ծանրալեզու. աղաւեմ տէր, զայլ ոք առ ՚ի ձեռին։ Իբրև ետես զնա, եթէ վարան տիկարուե տաղտկայ ընդ հրաման հրամանատուին, ցուցանէ նմա, թէ ովէ ճարտարապեան, և ովէ է կարող զանդամն՝ յօրինել, ասէ, ովէ ետ բերան մարդոյ, և կամ ովէ արար զաւեայսն և զկոյրս . ոչ ապաքէն ես տէր. ես ետու ամենեցուն բերան, և քեզ կարիցեմ տալ որ ամենեցուն չնորչեցի, զիմ մարգարեդ զրկեմ՝ ՚ի պարգևացն : Ո՞ ետ բերան մարդոյ, ոչ ապաքէն ես տէր ածճ : Եւ ցլզեկիէլ ասէ, որդի մարդոյ աշաւասիկ յարուցից եղջիւր ամենայն տանն իսրայէլի, և քեզ տաց բերան բաց : Ո՞ եթէ բերան տայր նմա՝ զոր ՚ի ծնէն ունէր, այլ զհամարձակութին բերան կոչէ : Եւ խնդրեսցուք զայս յաւետարանի, ով տայ զբերանն . յորժամ տանիցեն զձեզ, ասէ, յատեանս, մի հոգայցէք՝ թէ զինչ խօսիցիք, զի ես տաց ձեզ բերան և խմաստուի : Եւ յայտ է՝ թէ որ Ո՞վսէսին ասաց թէ ովէ ետ բերան մարդկան, և ցլզեկիէլ ասէ, թէ ես տաց քեզ բերան : Իսայց ինքն է որ ՚ի հնումն խօսեցաւ, և ՚ի մարգարեսն ազգեաց, և յաւաքեալսն արկ զիւր զօրութին :

Իսրայէեալ կոչեն զիրք շրթունս՝ ոչ զերեելի շրթունս, այլ զհամարձակութին . յորժամ ասիցէ ՚Իւափիթ, տէր եթէ զշրթունս բացցես, ոչ եթէ շրթունքն փակեալ էին, այլ զհամարձակութին զոր կորոյս՝ խնդրէ . և եթէ փակեալ էին, զայն իսկ զիավրդ կարէր ասել, տէր եթէ զշրթունս իմ բացցես : Եւ ՚ի հին կտակարանս՝ մինչեւ խառնակեալ էր, մի լեզու էր ՚ի բազում լեզուս, կամեցաւ Ո՞վէ

սէս ցուցանել՝ եթէ մի խօսք և մի լեզու էր . և ա-
սէ , երկիր ամենայն մի շուրթն . մի եթէ մի շուրթն
էր ամենայն մարդկան . ոչ ապաքէն զմի խօսս բերա-
նոյ կոչեաց մի շուրթն . ամենայն երկիր , ասէ , մի
շուրթն և մի բարբառ էր . և յայտ է թէ մի խօսք
էին ամենեցուն :

Լաս , ասէ , տաց բերան և իմաստութի . և ուր գտա-
նիցի՝ թէ ետ : Ծնէ միում գտանիցեմք տուեալ , ա-
պա և յայլոցն չլինիցիմք երկմիտ : Հարեան , ասէ ,
ոմանք ՚ի կիւրենացւոց և յաղեքսանդրացւոց . և ՚ի
հարց և ՚ի խնդիր մտին ընդ Ատեփաննոսի . յիշեալ,
զի ես տաց բերան և իմաստութի , և չկարիցին ՚ի
դիմի հարկանել . և ոչ կարէին զգէմ ունել իմաս-
տութեն և հոգւոյն ¹ որով խօսէր : Տես , զիարդ տայ
ած բերան մարգարէից , և բանայ ՎՇ զբերանս ա-
ռաքելոց , և խօսի ՚ի նոսա հոգին ո՞բ :

Վ. ՅԼ զի մի ոք համարիցի , թէ որդին տայ , և հո-
գին զազդումն գործէ . որպէս թէ այլոյ տալն իցէ ,
և այլոյ զազդումն գործել , հարկ է յանդիման կա-
ցուցանել , թէ և հոգին ո՞բ տայցէ . որպէս և ՚ի
հնումն ասէ՝ եթէ տայ . և յաւետարանին ցառա-
քեալսն ՎՇ , թէ ես տաց ձեզ բերան : Հարկ է
խնդրել , թէ այլ է որ տայցէն , և այլ որ բերիցէ :
Եա և թագաւորք այժմ յորժամ պարգևս տայ-
ցեն . սպասաւորքն զպարգևն տանիցին , չէ ընդ մի
համար : Տեսութք , գուցէ որդի տայցէ , և հոգին
իբրև զսպասաւոր արբանեակ լինիցի : Վ. ՅԼ զի ու-
սանիցիս , թէ որպէս որդի տայ զբանն մարգարէից
և առաքելոց , նոյնպէս և հոգին չլինի արբանեակ ,
այլ տայ Ճոխութք , ասէ ՚ի գործս առաքելոցն .
իբրև եկն էջ ՚ի վերայ նոցա հոգին ո՞բ , խօսէին ՚ի
պէսպէս լեզուս , որպէս հոգին տայը նոցա բար-
բառել : Պաւզոս , ասէ , զայս ամենայն ազդէ մի և
նոյն հոգի , և բաժանէ իւրաքանչիւր ումեք , որ-
պէս և ինքն կամի : Որպէս կամի , և ոչ որպէս հրա-
ման առնու : Լաւ զի ցուցցէ դարձեալ փրկին , թէ
զոր ինքն տայ նոյն և հոգւոյն սըյ տուրք են , և

1 Յօրին . դբեալ էր ՚ի դիմ հաբեանու . . . հոգառւ :

զոր ինքն ազդեցին և հոգւոյն ազդեցութիւն է, ասէ ցառապետալսն . յորժամ տանիցին զձեղ յատեանս, մի հոգայցէք թէ զինչ խօսիցիք . զի ոչ եթէ դուք իցէք որ խօսիցիքն, այլ հոգին ոք ուսուցանէ զձեղ ՚ի ժամուն յայնմիկ զինչ խօսիցիք : Տեսանես, զի ուր հայր ազդէ, ազդեցութիւն է որդւոյ, ճոխութիւն հոգւոյն ոք :

Ուր վարդապետութիւն իցէ և լուսաւորութիւն և ածապաշտ կրօնից ճառք, չպտանի ուրեք անդ արարած ինչ բնութիւն՝ որ ազդիցէ, այլ միայն անարար բնութիւն : Եթէ ՚ի մկրտութեն լուսաւորութեն, և եթէ յանձառ խորհուրդն՝ չէ իշխանութիւն հրեշտակի լուսաւորել և սրբել, այլ տերունական իշխանութեանն սցը և անարար բնութեն : Հյորժամ ՚ի մարգարէնն խօսի, չխօսի արարած ինչ բնութիւն, այլ ածն անարար . ըստ այնմ, եթէ որպէս խօսեցաւ ՚ի բերան սցը իւրոց մարգարէց՝ որ յաւիտենիցն եին : Իայց յորժամ ՚ի վշտաց ապրեցուցանել իցէ, առաքէ ած հրեշտակս . կամ յառիւծուց ապրեցուցանել, կամ ՚ի հրոյ փրկել լինին այնպիսի փրկութեան պատաւոր հրեշտակք . որպէս և Պաւղոս ասէ, թէ ոչ ամենեքեան ոգիք հարկաւորք են ՚ի պաշտօնն առաքելութեան, վասն այնոցիկ որ ժառանդելոցն են զիրկութիւն : Իսկ հոգին ոք անդք երեկի, յորժամ զիսորհուրդն կատարել իցէ, յորժամ զջոխութիւն վարդապետութեն պարզեցել իցէ, յորժամ զմկրտութեան զանձառ խորհուրդն բաւանդակելու

Եւ մի ուրեք զմիտս խարխարիցէ ջրովն և հոգւովն զսրբութիւն ընդունելու : Օ ի եթէ ՚ի լուսաւորութիւն մկրտութեն, ասեն, անարար բնութիւն գայցէ, ջրոյն՝ որ արարած է, զինչ պէտք իցեն . և ընդերջ խակ, ասեն, փրկիչն զանարար բնութիւն ընդ արարեալ բնութեն յօդեաց . եթէ ոչ մկրտես զիք, ասէ, ՚ի ջրոյն, ոչ մտանեք յարքայութիւն երկնից : Եւ ոչ զիտիցէ, թէ ջուրն արարած է . բայց թէ որովք բանիւ, և յոր սակս ջուրն արարած՝ ընդ անարար հոգւոյն յօդիցի, հարկ է յանդիման կացուցանել:

Վ զաշեմ, մի ձանձրանայք զլսելն, և յշտեմարանս մտացդ ամփոփեալ զիմաստսխօսիցս, զի մի վայրապար առ լսելեօքդ հոսեսցին . որպէս ջուր ընդ վայր ծաւալեալ՝ չմտանել ընդ երկիր, և չարբուցանէ զանդս. այլ յորժամ յառու անկանիցի, և ընդ կորիմն գնայցէ՝ չձախի ընդ վայր, այլ զանդմն ոռոգանէ, և այժմ մի ցրուեսցին բանքս, այլ ոռոգանիցեն զանդս մտաց ձերոց իմաստք բանիցս :

Ի ազումինչ ետ ած մարդկան . և ինքն այնու՝ զոր ետն, չէ կարօտ . այլ քանզի մահկանացու բնութիւն չէ բաւական ընդունել զաներեռեոյթ պարդեսն, և ըսելի իրօք ընդելացուցանէ ընդ այնպիսի ինչ : Կարեր կենարաբն առանց ջրոյ տալ թողութիւն մեղաց, և բաւական էր հոգւոյն յայտնութիւն լուանալ զյանցուցեալն, մաքրել զաղտեղին, սրբել զպիղծն, յորդէգրութիւն ածել զտարագիրն . այլ քանզի բնութիւն մարդկան զերեելեացս իմն կղկղայ, թէ և սակաւաւոր և նուազագոյն է մտացն աշօք ընդունել զանականնն, դիւրին ինչ երեսօք վասն սոցա որ չկարեն այնչափ 'ի վեր ամբառնալ՝ և զաներեռեոյթն տեսանել, տանի հասուցանէ յայն, եդ առաջի երեւելի ինչ օրինսակ, զի յայտնի հաստատութիւն աշացն առնուցուն հաւանութիւն ոգիքն աներեռեոյթ : Այսպիսի ինչ . ած յորժամ զերանելին Վհարովն զեղուայրն Ոնվսէսի առ՝ իւր 'ի քահանայութիւն, ասէ, զգեցն դմա պատմուձան ծաղկեայ 'ի խառնուածոյնարօտից, գործեալ 'ի ծիրանւոյ 'ի կարմրոյ, և 'ի բեհեղէ և 'ի կապուտակէ : Կապուտակն և կարմիր և ծիրանի ամենեցուն յայտ է . թէ զի՞նչ է բեհեղն, սպիտակ իւրեղ զկտաւ : Կը ըրեցունց նիւթոցս երանդոցս այսոցիկ նիւթեցին և անզին զպատմուձանն . և ընդ նմին ոսկի և ականս պատուականս ընդելուզեալ, և խոյր քահանային 'ի գլուխ, և թիթեղն ոսկի 'ի ձակատն, որ բերէ զօրինակ հոգւոյն անը . և 'ի կամարի քահանային երկոտասան ակն՝ յականց պատուականաց, սարդիովն և տպաղիովն և զմրուստ՝ ասկին և շափիւղայն և յասպիս՝ զոհազմ՝ ակատ և կարկեհան՝ ոսկեակն և բիւրեղ և եղենդնաբար : Հրաման ետ ած զերկոտասաննեան ա-

կանսն ընդելուզանել + յառաջին կարդին զսարդիոնն և զտոլազլուսն և զմբուխտն . և յերկրորդում զասկնն և զշափիղայն և զյասսիխն . և յերրորդումն զգո-ձագմն և զյակատ և զկարկեհան . և 'ի չորրորդումն զոսկեակն և զբիւրիդ և զեղնպնաքարն : Եւ յիւրա-քանչիւր յականց վերայ զանուանս ազգացն Խարայէլի հրամայէաց գրել . յառաջնում զազգին Խուբենի , և յերկրորդում զազգին Շ մաւոնի , և յերրորդումն զազգին Ո եւեայ . և զայլոցն ևս ամենեցուն մի ըստ միոջէ : Եւ հրաման տայ ածել ընդ մէջ քահանային զկամարն , և զվական զուսովլքն պատեալ , և զլան ջօքն բաժանեալ , 'ի նիւթոյ կարմրոյ և 'ի բեհեզդոյ և 'ի ծիրանոյ և 'ի կապուտակէ : Եւ դիցես , ասէ , երկուս ակունս յուսոցն վերայ՝ մի ընդ աջմէ , և մի ընդ աչեկէ . և զրեսցես 'ի միումն զվեց ազգաց ա-նուանս , և 'ի միւսումն զայլոցն վեցից : Եւ ընդէլ կրկնակի հրամայէ գրել զանուանս որդւոցն Խարայէ-լի . չէր բաւական յուսոցն միայն վերայ , այլ և 'ի լանջացն ևս . վասն զաղփաղփուն մտաց նոցա՝ կրկին հրամայէ : Ղարձեալ և 'ի պատմուձանին առ օձեօքն ասէ , նունաձե ծաղիկս . և այնպէս հրամայէր քահա-նային մտանել յարտաքին սրբութիսն :

Եւ զայն ամենայն վասն տխմարութեն նոցա հրա-մայէաց ած , զի գեթ այնպիսի ինչ շքով ահազին համարեսցին զսրբութիսն : Ի այց քահանայի պա-աիւ՝ ոչ ծիրանին և կարմիր և բեհեզդ և կապուտակն են , այլ արդարութիսն . որպէս և 'Ի աւիթ իսկ ասէ . թէ քահանայք քո զգեցցին զարդարուի . այլ քան-զի արդարութեան հանդերձն՝ մտացն աշացն ևեթ երեի , և այ դիտաւորութիսն ոչ այն միայն է , զի կատարելոցն յաւելուած առնիցէ , այլ զի և զամե-նեսեան առ հասարակ կեցուցանէ , յորժամ տեսա-նիցեն զմեծ ածաշուք քահանային , զմտաւ ածիցեն՝ թէ մեծին այ քահանայ է : Եւ զի ցուցցէ՝ թէ պատ-մուձանն այնպիսի՝ ոչ 'ի պէտս ինչ այ պաշտամանն գործեցաւ , այլ 'ի փառս տեսօղացն , և չէ ինչ կա-րօտ այնու , այլ զմիամտութիւն ոգւոցն ինդրէ , և ընդ սրբութի սրտին ուրախ լինի , զի այն իսկ է ծի-րանի արքունական՝ և ծաղիկն հաւատոց . որ զիւթ-

Թեալ առաքինութիւնն յանձին ունիցի : Հրաման ետ
Առվակեսի , թէ յորժամ մտանիցէ Դհարոն՝ ի սրբու-
թի սրբցն , մերկասցի զպատմուշանն՝ որ՝ ի բեշեզէն և
՚ի կարմրոյ և՝ ՚ի ծիրանոյ և՝ ՚ի կապուտակէնիւթոյ իցէ ,
և ագանիցի կտաւի պատմուշան , և մոտանիցէ՝ ՚ի սրբու-
թին : Աւոք ած տեսանիցէ , անդ չեն ինչ պետք կերպա-
րանաց , և ոչ պէսպէս պատմուշանաց . և զոր ինքն
պատմուշան ետ գործել վասն այլոց ինչ պիտոյից ,
և զայն ևս հրամեաց՝ ՚ի բաց մերկանալ . բայց զի մի
մերկութեամբ մարմնոյն զսրբութին թշնամնիցէ ,
հրամայի զկտաւի պատմուշանն զգենուլ և կտաւի
կօշիկս , զլոկն և զառանց պահուշանաց : Ա ամս այ-
նորիկ զլոկն խնդրէ , զի այնու ուրախ առնի՝ ած , և
ոչ պահուշանօքն : Ինայց սակայն եղբարը թէպէտ
և ետ զպատմուշանն Դհարոնի վասն տեսօղացն մե-
ծարանաց , այլ տնկէ ինչ անդ և օրինակ զհանդեր-
ձելոց , զի ամենեին մի ինչ իցէ դատարկ , և զսիրտս
այնոցիկ որ յապայն լինելոց իցեն՝ լուսաւորեսցէ :
Դանու զպատմուշանն զայն երանելին Դհարոն , և
զգենու իբրև զպարեգօտս զամենայն աշխարհս միան
դամայն . քանզի և աշխարհս՝ ՚ի չորից բնութենց հաս-
տատեալ կայ , ՚ի յերկրէ , ՚ի հրոյ , ՚ի ջրոյ , և յօդոյ :
Եբրկրէ , բեշեզն քաղցրագոյն՝ ՚ի հանդարտ երկրէ ,
և ՚ի ծովէ՝ ծիրանին , և կարմիր՝ ՚ի հրոյ նմանութի ,
և կապուտակն՝ օդոյ . քանզի կապուտակին բազում
անգամ օդք : Դայլ զայս որպէս զիամբդ և կամփցի
ոք ընդացի , բայց միայն ածապաշտ մտօք :

Դայլ որ ինչ առաջին կայ՝ զայն տեսցուք , թէ
ընդէր յականս ետ տապաւորել զանուանս : Կանզի
քահանայն մոտանէր առաջի սեղանոյն , և ժողո-
վուրդն արտաքոյ կայր և շիշնէր մօտ երթալ տըրտ-
մութիւն էր , որ մին միայն մոտեալ վայելէր՝ ՚ի սըր-
բութեն՝ և ամենեքեան արտաքոյ կային , յարդարէ
ած հնարս միիթարութե տարակուսելոցն մտաց ա-
կամբք գրելովք : Ակարես , ասէ , քեզէն մտանել , ես
զքեզ տարայց անուամբք գրելովք յականսն : Ա տա-
նէր քահանայն , և բարձեալ ունէր զերկոտասանե-
սին ազգսն , և մատուցանէր զամենեսին այ : Կարծ
քահանային՝ մատուցանել զժողովուրդն այ , քանզի

միջնորդ՝ այ և մարդկան է . յայ զօրհնուիսն ընդունի և տայ , և 'ի ժողովրդենէն զաղօթմն առնու՝ և մատուցանէ այ : Վասց , ասէ , տէր ցՈվլսէս , Էջ և գիր վկայուի ժողովրդեանն : Տես զիարդ լինի միջնորդ յայ առ մարդիկ , և զպատգամն այ ժողովրդեանն պատմէ : Դարձեալ ասէ , թէ հան Ո՞վլսէս զաղօթմ ժողովրդեանն առ ած , և երեր զպատգամն այ առ ժողովուրդմն : Ա ասն այնորիկ յորժամ զկարդ քահանայուեն մեկնէր Ո՞աղաքիա մարդարէ , ասէ , շրթունք քահանային պատմեն զդիտութի , և օրէնս խնդրեցեն 'ի բերանոյ նորա , զի հրեշտակ տն ամենակալի է : Հրեշտակ ասի , ոչ եթէ զհրեշտակաց բնութիւն ունիցի : Հրեշտակ կոչեն զիբրդ զպատգամաւոր պատգամացն . և հրեշտակք վասն այնորիկ կոչին հրեշտակք , զի պատմեն աշխարհի զկամն այ : Հրեշտակի անունն ոչ բնութեն է , այլ սպասաւորութեն է անուն . և զի հասարակաց է անուն , յորժամ առաքեաց Ուաւուղ առ մարդարէն , ասէ , առաքեաց հրեշտակս պատմել նմա զիբրդագաւորին . և այլ ուր , թէ առաքեաց Դաւիթ հրեշտակս առ Աբիգեա կին՝ Կաբաղայ՝ պատմել նմա զխորհուրդս Դաւթի :

Բայց առաջի այն կայ՝ ցուցանել , զի միջնորդ էր քահանայ , և առնոյր զժողովուրդմն 'ի լանջսն , և բառնայր յուս : Լրկին գործ է քահանայի . և մատուցանել զժողովրդըն այ , և բառնալ զտկարութիւն ժողովրդեանն : Որ պատարագ մատուցանիցէ , 'ի լանջս առեալ մատուցանէ զպատարագն . քանզի այն առանձինն կերպարանք են ընծայաւորացն . և որ զտկարութին բառնայցէ , յուսոցն վերայ բառնայ . վասն այնորիկ դրոշմէ զանուանս ժողովրդեանն յուս քահանային , զի ուսուցէ քահանային , թէ քեզ որ հզօրդ ես՝ պարտ է կրել զտկարութի տկարաց . զորս և Պաւղոս ասէ , դուք որ հզօրքդ էք՝ զտկարութի տկարացն էր կարագացն բարձէք : Եշ էր քահանայն այն օրինակ՝ Բնի . նա առնոյր անուամբք զերկոտասան ազգմն Խարայէլի՝ զբնաւ իսկ ժողովուրդմն . և սա առաւել կը , 'ի մարմնի իւրում զամենայն աշխարհ . բառնայ և 'ի լանջս իւր . քանզի իւրովին հանդոյց

զմարդկութին՝ ՚ի վերայ լանջացն իւրոց : ՚յւ զի յուս
ևս բառնայ զմարդկութին, լուր տէրունական իսկ
առակին, ո՞ւ ՚ի ձենջ ասէ, որոյ իցէ հարիւր ոչ-
խար, եթէ մոլորիցի մի ՚ի նոցանէն, ո՞ւ թողուցու
զիննառւն և զինն ոչխարսն ՚ի լերինս, և երթայցէ
խնդրիցէ զմօլորեալն . եթէ գտանիցէ, ամէն ասեմ
ձեզ, և ՚ի վերայ ուսոց իւրոց դնիցէ զնա : Ա ասն
այնորիկ և զխան բառնայ յուս կենարարն, զի՞նո-
վաւ երարձ զամենայն տիեզերս: ՚յւ ել ասէ, ՀՅԱ,
և ուներ զխան յուս: ՚յւ վասն էր յուս + զի մի ՚յւ
սայի ստեսցէ, որ ասէր, թէ մանուկ ծնաւ մեզ, և
որդի տուաւ, որոյ իշխանութի՞ն ՚ի վերայ ուսոց իւ-
րոց : Ի՞առնայ քահանայն ՚ի գիրկս և յուս . քան
զի գործ քահանայի մատուցանել զժողովուրդն է և
բառնաւ զտկարութի՞ն ժողովրդեանն : Ի՞այց որ ինչ
առաջիս կայ՝ յայս եկեսցուք :

Օ այն յուշ արարաք ցուցանել, եթէ ընդէ՞ր ջուրն
ընդ հոգւոյն լծիցի: Որպէս անդ պատմուհան տուաւ
քահանային ՚ի պէսպէս ծաղկանց կազմեալ, և չէին
ինչ պիտոյ այ պէսպէս զոյնքն ծաղկանցն . զի զնո-
ցա աչս որ ընդ դաստիարակութին էին՝ խտղտիցէ,
և երեելի փառօք յաներեոյթն յորդորեսցին :
՚յնպէս և ածն մեր իսերամուտ էր, եթէ ընութի՞
հոգւոյն անարար է, խառնեաց ընդ անարար բնու-
թեն՝ զարարեալ բնութին . զի աչք տիսմարացն որ
ընդ ջուրն նայիցին, իբրեւ ՚ի ջուր զարեւ տեսանի-
ցեն զհոգին ոք: Ծակ չիցես տեղեակ, որ ընդ արե-
գականն մերկ չկարիցեն հայել, նային ընդ ջուրն՝ և
զամենայն իսկ զանիւն տեսանեն . չտեսեր քեզէն,
տես գէթ ջրովդ . և անտի իսկ գտանես զառա-
քեալն ոչ ջրովլ մկրտեալս : Ի՞այց մի ինչ վայրա-
պար զբանս խծբըծիցեն, այլ անսամ ՚ի զլուխ հանե-
լոյ . զի առաքեալքն՝ քանզի կատարեալք էին, և
նախ քան զխան կենարին ընկալան զկատարումն,
չմկրտեցան ՚ի ջուր, այլ բաւական եղեւ նոցա չնորհք
հոգւոյն սէյ :

¹ Ի՞այց սովորական վարդա- քեալք նախ մկրտեցան ջրով,
պետութի՞ն, թէ նա և առա- և ապա զոյլս սկսան մկրտել:

Հայց ընդդեմ գան վաղվաղակի հակառակորդքն¹. մկրտեցան ասեն. և վկայէ փրկիչն, որ լուաւ ՚ի Պիետրոսէ, թէ մի միայն զոտս, այլ ե զգլուխ. և ասէ ցնա, թէ լուացեալն չէ կարօտ լուանալս. և յայտ է թէ առեալ էր զմկրտութին: Եւ զայն լիմանան, թէ մկրտութի առաքելոցն՝ ոչ զջուրն կուեաց, այլ զբանն. դուք, ասէ, արդէն իսկ որ էք վասն բանին զոր խօսեցայ ընդ ձեզ: Եւ զի լուացեալ՝ ոչ զջրովն մկրտեալ, այլ զբանին լուսաւորել ասէ, այնու յայտ է, զի նախ քան զբարչարանն ասէ, եթէ լուացեալն չէ կարօտ լուանալս. և յետ չարչարանացն և խացն և յարութեն, յորժամ մօտ ՚ի վերանալն էր՝ հարցին ցնա աշակերտքն ՚ի մի վայր եկեալ, և ասեն, տէր երբ կացուցանիցես զթագաւորութին Խորայելլի. ասէ ցնոսա, ոչ ձեր է ճանաւէլ զժամանակս կամ զժամն, զոր հայր եդ յիւրում իշխանութեն. այլ առնուցուք զօրութին ՚ի գալ հոգւոյն սբէ ՚ի վերայ ձեր: Եւ յետ այնը զի՞նչ ասիցէ. Հովաննես մկրտեաց, ասէ, ՚ի ջուր, բայց դուք մկրտիցիք. և չասաց թէ մկրտեցայք. զայս յետ յարութեն ասաց. և յառաջ քան զյարութին՝ զլուացեալն. զի եթէ յառաջ քան զբարչարանն մկրտեալ էին, ապա և չասէր իսկ միանգամ լուսաւորելոցն, եթէ դուք մկրտիցիք ՚ի հոգին որ ոչ յետ բազում աւուրց: Եւ զիսարդ ոչ² յետ բազում աւուրց. քանզի ՚ի կատարել քառասուն աւուրն յետ յարութեանն վերացաւ. և յետ տասն աւուր ՚ի լնուլ պենտակոստէիցըն՝ երեեցաւ հոգին որ: Եւ նմանազդոյնս իսկ ասաց կենարանն, եթէ դուք մկրտիցիք ոչ յետ բազում աւուրցս այսոցիկ. այն իսկ է, թէ յետ տասն աւուրն. դուք, ասէ, մկրտիցիք ՚ի հոգին սբ. չասաց թէ ՚ի ջուր, այլ թէ ՚ի հոգին. զի կատարելոցն և որբելոյ՝ բաւական է հոգւոյն միայն հաղորդութի: Խրբե եկն, ասէ, եհաս հոգին սբ, և ելից զտունն՝ ուր նստէինն, չգոյր ուրեք անդ ջուր. զի յայտ արասցէ, թէ ուր ածեղէն զօրութին երեի, չեն ինչ անդ պէտք գործոյ և նիւթոյ. այլ բաւական է հո-

1 Յօրին. հուսումիւն:

2 Յօրին. պակասէր ու:

զին և առանց ջրոյ կատարել զլուսաւորութիւնն :
 Բայց չկամի ած կատարմանն պատճառանօք ան-
 արգել զաւանդն խորհրդոցն . զի մի ասիցես , թէ
 որովհետեւ մտօք բաւական եմ հասանել , զի՞ պիտոյ
 իցէ մկրտութի ջրոյ . և մեր այնու ուշ եղեալ է՝ ցու-
 ցանել , թէ ած կարող է և առանց ջրոյ տալ զպար-
 գես չնորհացն , բայց մեք չկարեմք առանց ջրոյ ըն-
 դունել զնորհն . նա բաւական է և առանց ջրոյն
 լուսաւորել , բայց մեք չեմք բաւական առանց ջրոյն
 առնուլ զլուսաւորութիւն : Այս զի վասն մերոյ վար-
 դապետութեան եղել փրկչին՝ դաստիարակութիւն ,
 պարտիմք ՚ի միտ առնուլ , թէպէտ և կատարեալք
 իցեմք , այլ քան զի՞ս ոք չէ աւելի կատարեալ . կա-
 մեցաւ կենարարն զամենայն պատճառս ՚ի միջոյ բառ-
 նալ , զի մի թողուցու քեզ բարուրս ՚ի ջրոյն փախ-
 չելոյ , նախ ինքն մկրտի ՚ի Յորդանան գետ : Այս
 այսրէն որ առաջիս կայ եկեսցուք :

Հոգին յորժամ ՚ի վերայ հանգիցի , մկրտէ ըգ-
 մարդն , թէպէտ և չել իցէ մկրտեալ ՚ի ջուր . և չա-
 սեմ թէ միայն զառաքեալսն , այլ և ՚ի կոռնիելի
 տանն՝ իրբե չոգաւ Պիետրոս , մինչդեռ խօսեր , եկն
 հանգեաւ հոգին ՚ի վերայ կոռնիելեանց : Այս ոչ թէ
 վայրապար ինչ . այլ քան զի զիտէր հոգին ոք՝ եթէ
 միտքն Պիետրոսի խղձեին , և դանդաղէր մկրտել զնո-
 սա որ ՚ի չեթանոսացն էին . քանզի այնպէս թուէր
 առաքելոցն յայնժամ , եթէ չնորհքն ՚ի՞սի՝ միայն
 հրեից ժողովրդեանն տուեալ իցեն՝ խորշէին և խըզ-
 ձէին նոցա տալ մկրտութի որ ՚ի չեթանոսացն էին :
 Կամեցաւ ցուցանել ածեղէն հոգին , թէ չեն ձեռն-
 հաս մարդկեղէն միտք արգելուլ զոյ պարգեն , հան-
 գեաւ ՚ի վերայ նոցա նախ քան զմկրտութին , յա-
 ռաջքան զիսրատել և ՚ի գիր արկանել : Խակ Պիետ-
 րոս իրբե ետես զհոգին իջեալ և հանգուցեալ , ա-
 սէ , միթէ կարիցեմք զջուրն արգելուլ ՚ի սոցանէ ,
 որք արդէն իսկ ընկալան զհոգին սը , որպէս և մեք
 առանց ջրոյն : Պիետրոս ցուցանէր
 զիրացն հանգամանս առաքելոցն՝ որ յիշրուսաղէմ :

էին . քանզի խղձէին 'ի նմանէ և ասէին , եթէ ընդ չեթանոս եկեր և արբ . և Պետրոս կարգէր և դնէր առաջի զիրաւանցն պատասխանին , և ասէր . 'ի Յովապէ քաղաքի էի , կոչեցին զիս անդը . մինչ գեռ խօսէի ընդնոսա զրանն , եկն հոգին որ և հանգեաւ 'ի վերայ նոցա . և յիշեցի զբանն ոտն զոր ասաց , եթէ Յովաննէս մլրտեաց 'ի ջուր , բայց դուք մլրտիցիք 'ի հոգին որ :

Տեսանես , զիարդ վասն կարեոր իմն մարդկեղեն մտաց հաստատութե տուեալ է ջուրն . քանզի և որ լուսաւորելոցն իսկ իցէ , կրկին է՝ 'ի մարմնոյ և 'ի հոգւոյ . և հոգւոյն բնութի աներեսոյթ է , և մարմ նոյն՝ երեւելի կազմած . ետ ած երկոցունց կողմանցն կրկին պարգե . զջուրն յայտնի՝ երեւելի մարմնոյն . և զհոգւոյն որ զաներեսոյթ պարգեն՝ ծածուկ ոգւոյն մարդոյն : Այւ օրպէս արքունի ինչ պարգեք , և կենդանի ձեռօք , և մեռեալ անօթովվք պարգեն . քանզի եղէզն և սեւադեղն մեռեալ գործի են , և ձեռն թագաւորին կենդանի է . և ոչ վասն զի պէտք ձեռին թագաւորին են և եղեգանն և սեւադեղոյ , հանգիտապատիւ ինչ եղէզն և սեւադեղն՝ ձեռին թագաւորին իցեն : Կոյնապէս թէպէտ և պէտք ջրոյ իցեն՝ իբրև գեղջոյն թանաքի , զի երեւելի ջրովն գրոշ միցի գիրն ածեղէն , հանգիտապատիւ ինչ ջուրն հոգւոյն իցէ . այլ այնապէս պարտ է իմանալ , եթէ հոգին որ ջրովն գրէ զբարերարութին : Խազում անգամ զիր պաղատանաց մատուցաննին թագաւորաց . և մինչգեռ 'ի ձեռս մատուցանելեացն իցէ գիրն , պաղատանաց զիր կոչի . և յորժամ թագաւորն ձեռն արկանիցէ , պարգեաց մուրհակ անուանի : Յառաջ քան զթագաւորին ձեռնագիրն արկանելոյ՝ քարտեզէ , թէրևս տասն ձեռն արկանիցէ , պարգեաց մուրհակ անուանի . և յորժամ թագաւորն ձեռն արկանիցէ , պարգեաց մուրհակ անուանի : Օր օրինակ անդ քարտեզն և սեւագեղ և եղեզն , մինչև թագաւորին ձեռն արկեալ իցէ , թէթեսագին են , և յորժամ թագաւորն հաս-

տատիցէ, չնայիս այնուհետեւ 'ի քարտն և յեղեգն, այլ 'ի պարգենն ձեռին թագաւորին՝որ զրեաց. նոյն պէս և յորժամ զջուրն առանձինն տեսանիցես, իմա, թէ և դանդի միոջ գինք չեն. ապա եթէ զհողին իջեալ հանգուցեալ 'ի վերայ ջուրցն տեսանիցես, 'ի միտ առնուցուս՝ թէ աներեւոյթ աջն է իշխանական ընութեն՝ տէրունական չնորհօքն. և որ երեխն ջուր է, գործի աներեւոյթ չնորհացն :

Վասն այնորիկ ջուր, ոչ զի ընդ հոգւոյն թուիցի, այլ զի քեզ առ աներեւոյթն առաջնորդեսցէ: Ուր աներեւոյթ բնութիւնն այնորիկ իցէ՝ որ առ իւր կոցիցէ, անդ երեւելի միջնորդի պէտք են, զի երեւելեաւն առ աներեւոյթն մերձենայցեն: Եւր բերից օրինակ ինչ հին 'ի մէջ: Օ ած քարողէին օրէնքն, այլ աներեւոյթ էր իբրև զած: Ետ օրէնս, զի մի երեւելի օրինօքն արհամարհեալ զաներեւոյթն ուսանիցին, լինի Վովսէս միջնորդ այ և մարդկան, զի որք զած չտեսանիցեն՝ ընդ երեսս Վովսէսի հայիցին, և նովաւ զաներեւոյթն տեսանիցեն: Եծի Վովսէս ընդ այ, ոչիբրև զհանգիտապատիւ ոք, այլ որպէս մահկանացու՝ երեսօքն լինիցի առաջնորդ անմաշ բնուեն. Հաւատային այ ընդ Վովսէսի, և Վովսէսի ընդ այ: Շայց Վովսէսի չէր պարտ հաւատալ առանց այ: Քանզի Հաւատայը ոք 'ի մարդ, և ոչ առանց Վովսէսի պարտ էր հաւատալ այ: Քանզի առանց միջնորդի՝ մահկանացու բնութիւն չառաջնորդէր: Վասն այնորիկ, ասէ երանելին Պաւղոս, թէ օրէնք տուան՝ կարգեալ հրեշտակօք 'ի ձեռն միջնորդին: և միջնորդ այ և ժողովրդեանն Վովսէս էր:

Եւ տես զզաշմանալիմն. ասէ գիր, թէ հաւատաց ժողովուրդն յած և 'ի Վովսէս ծառայ նորա. մի թէ, վասն զի ասաց՝ թէ ժողովուրդն հաւատաց յած և 'ի Վովսէս, հանգիտապատիւ ինչ Վովսէս այ իցէ: Եթէ Վովսէս ընդ այ թուեալ չէ հանգիտապատիւ այ, ապա և ջուրն համարել ընդ հոգւոյն՝ չէ հանգիտապատիւ հոգւոյն սը: Եւ այլուր ասէ գիր, եթէ ամենայն ժողովուրդն երկնչէր յայ և 'ի Վամուելէ. մի թէ զի ասացն՝ թէ և 'ի Վամուելէ երկընչէր, հանգիտապատիւ ինչ Վամուել իցէ այ, այլ

'ի միոյն իբրեւ 'ի տնեւ երկնչէին, և 'ի միւսմէն իբրեւ 'ի միջնորդէ, 'լոյսապէս յորժամ լուիցէս՝ 'ի ջրոյ և 'ի հոգւոյ զլսորհուրդն, զձոխութիւն հոգւոյն ած զմտաւ, իբրեւ զձշմարիտ պարզես, իբրեւ զարքու նական իշխանութիւն, իբրեւ զանեղ չնորհս, իբրեւ զանվախճան արքայութիւն . յորժամ տեսանիցէս զջուրն, ծանիթ զմիջնորդութիւն երկելոյն առ աներեայթ և ածեղէն բնութիւն . ըստ այսմ, [թէ հաւատաց ժողովուրդն] Ո՞վսէսի և այյ. և երկեաւ 'ի տնեւ 'ի Ամմուելէ: Եւ այլուր, [թէ սուր տն և Գևդէնինի քանզի Գևդէօն զօրավար էր նոցա, և ած պաշտպան, ասէ, սուրն տն և Գևդէօվնի . միոյն իբրեւ թագաւորի, և միւսոյն իբրեւ միջնորդի :

Օ այս ամենայն ասեմ, զի մի վայրապար և խառն 'ի խունան զմիտս ածիցէք, և շիմանայցէք զազգի ազգի գէմն մոաց բանիցն և զիրաց: Որք զայսակիսի ինչ բանս և զանուանս և զկարգս ընդ միմեանս խառն զապահ ընդ միմեանս խառնեալ զպահանիցեն 'ի միմեանց, բազմախաղաղ ինչ նիւթոց ընդ միմեանս խառնելոց նման են . որպէս ոք թէ զոսկին և զարծաթն և զերկաթ և զպղինձ և զկապար ընդ միմեանս խառնիցէ . նոյնապէս և որոյ միտքն շփոթեալ իցեն, և չկարիցէ զիրսն 'ի միմեանց զատանել, թէպէտ և պատարագ մատուցանիցէ, չէ ընդունելի: Որպէս և ած իսկ ասէ, եթէ ուղեղ մատուցանիցէս, և ուղիւղ ոչ բաժանես, մեղար . առքեզ լիցի գարձ նորա: Ձէ պարտ միայն ուղեղ մատուցանել, այլ և ուղիղ բաժանել: Օ ի՞նչ իցէ բաժանեն . 'ի միտ առնուլ զհոգւոյն իշխանուի, ճանաչել և զջրոյն միջնորդուի . ապա [թէ զամենայն ընդ միմեանս խառնիցէս, և զՈ՞վսէս և զած, և զՈ՞ամուէլ և զաէր, և զջուրն և զհոգին նր, գտանիցիս այնուշետե զբազմախաղաղ նիւթս ընդ միմեանս խառնեալ: Որպէս և ած իսկ ասէ . որդի մարդոյ, տունդ Խարայէլի խառնեցին զպղինձ և զկապար և զերկաթ . վասն այնորիկ ասամ, փոխանակ զի խառնեցին զոսկին և զարծաթն և զերկաթ և զկապար ընդ միմեանս, աչաւասիկ ընդաւայց զձեզ իբրեւ ըզբովս հալոցաց, և ձուլեցից զձեզ 'ի սրբութիւ, և մի ևս լիցիք խառնակեալք:

Վ. Ա Յ Լ չպատճեմք, ասեն, զհողին որ իրը կ զանական
ինչ իշխանութիւն, այլ իրը կ զպարգե արքունական
շոխութե, Վանդի գրեալ է, թէ հողին որ օծումն
է. ՀՅՇ, ասէ, 'ի Կազարեթէ, զոր օծն ած հոգւովն
սբէլ. մի թէ ած իցէ հոգին. ահաւանիկ օծումն է.
ած օծ, և հողին օծումն է, և որպէս այլ կերպա-
րանք օձմանն են, և այլ օձանելեացն, նոյնպէս ա-
սեն, և այլ օծն, այլ էութիւն է, և հոգւոյն՝ որ օ-
ծումն է, այլ բնութիւն: Եւ քանզի որսան հերձուա-
ծողքն զբանան միայն թուել, և զմիտսն քննել, ըշ-
բանսն և եթ տանել ածել, և մարդկեղեն խորհըր-
դովք զանակաշութե կարդսն եղանել. տացուք և
մեք նոցա պատասխանի, թէ աշաւադիկ դու իսկ ա-
սես, այլ բնութիւն օձման է, և այլ օձանելեացն, և
զայն խոստովանիցիս, թէ այլ բնութիւն ձկնորսի է,
և այլ բնութիւն ձկան, այլ բնութիւն հանդերձին է, և
այլ ոստայնանզին. այլ բնութիւն հովուին է, և
այլ բնութիւն ոչխարին. այլ մշակին, և այլ այգւոյն.
ոչ ապարէն զատ 'ի միմեանց երևեսցին իւրաքանչիւր
տեալք :

Վ. պա միտ դիր. ասէ կենարարն ցառաքեալսն, ե-
կայք զինի իմ, և արարից զձեզ որսորդս մարդկան.
առաքեալքն որսորդ են, և որ յորսն ըմբռնիցին՝
մարդիկ են. և արդ ասասցէ հերձուածողն. որպէս
այլ բնութիւն ձկանցն է, և այլ մարդկան, նոյնպէս
և այլ ինչ բնութիւն մարդկանն իցէ, և այլ ինչ ա-
ռաքելոցն քարոզաց. որպէս այլ բնութիւն ձկնորսին
է, և այլ ձկանն. նոյնպէս այլ բնութիւն ուսանելեացն
է, և այլ ուսուցանելեացն: Եւ զայնպիսի զառան-
ցելոց բանս զվելոց ովկ իցէ որ յանձն առնուցու, և
ոչ գիտիցէ, թէ ուսուցիչքն յաշխարհէն էին, և ու-
սողքն 'ի մարդկանէ: 'Կա և առաքեալ ասէ, եթէ
այլ շինած էք, այլ հողագործութիւն: Եւ ոչ գիտիցէք,
թէ այլ բնութիւն շինածոյն է, և այլ շինողին: Եւ
դարձեալ թէ ես իրը զՃարտարապետ հիմն եղի.
եթէ Պաւղոս Ճարտարապետ էր, և նոքա շինուած,
մի թէ այլ և այլ ինչ բնութիւն Ճարտարապետին և
շինուածոյն էին: Եթէ զւանիցն և եթ զՃետ եր-
թայցես, տես ողջափ ընդարձակի մոլորութիւն: Վահ-

դարձեալ առաքեալ . ես տնկեցի , Վագաւղոս ջուր
ետ , այլ ած ածեցոյց . և աշաւանիկ տեսանեմք , զի
այլ կարդ տնկելեացն է , և այլ ոռոգանելեացն է .
այլ դարձեալ տնկելեացն , և այլ տնկոյն : Ո՞ի թէ
այլ բնութիւն Պաւղոսի իցէ՝ որ տնկեացն , և այլ
բնութիւն կորնթացւոցն՝ որ ՚ի նմանէ տնկեցան . ընդ-
էր գայթագղիցես ՚ի բանման , և չհայիցիս յիմաստման :

() ծումն կոչի հոգին ՚ոք , զի երեւելի անուամբն
զաներևոյթ չնորհն քարողեսցէ . քանզի զառաջինն
թագաւորք իւղով եղերն սրբլ օծանեին , և քահա-
նայք և մարդարեք . իսկ հոգին ՚ոք որ էջ հանգեաւ
՚ի վերայ կենարարին , յօրինակ , և ոչ ՚ի կարօտուի
ինչ , առանց իւղոյ երեւեցաւ . նա և յետոյ զբաղումն
առանց ջրոյ լուսաւորեաց , և առանց իւղոյ զբա-
ղումն էօծ : Եշ միտ դիր աղաշեմ , յօրժամ կամի-
ցի հոգին ՚ոք արդիւնս ցուցանել , և առանց իւղոյ
օծանէ , և առանց ջրոյ մկրտէ : Ո՞ովսէս զի՞հարոն
իւղով օծ . ինքն չօծաւ , և օծանէ . ուստի ընկալաւ
Ո՞ովսէս օծանել զի՞հարոն՝ որ ինքն չեր օծեալ . այլ
քանզի կատարեալ էր Ո՞ովսէս , առանց իւղոյ ընկա-
լաւ զիհանգիստն հոգւոյն սրբ . քանզի հոգին ՚ոք էր
՚ի Ո՞ովսէս , և վասն այնորիկ չեղեւ կարօտ իւղոյ :
՚ի ոյնպէս և առաքեալքն չկարօտացան ջրոյ : Օ որ
օրինակ առաքեալքն մկրտեցին ջրով և հոգւով , և
ինքեանք ջրով ոչ մկրտեցան , այլ հոգւովն . նոյն-
պէս և Ո՞ովսէս՝ որ չեր օծեալ իւղով , այլ հոգւովն ,
օծ սրբով իւղովն զի՞հարովն :

() ծումն կոչի վասն բազում ինչ պիտոյից . քան-
զի հիւանդացաւ ազգ մարդկան , և ախտ կալաւ
զտիեղես ամենայն , եկն եգիտ համօրէն զաշխարհս
անդամալոյծ . օծանէ , զի ասպաքինացուոցէ զբնու-
թին ՚ի ցաւոց . օծանէ զնա , զի կըթիցէ ՚ի մարտ
ընդդէմ սատանայի . որ ինչ եղն՝ մարտիկ նահատա-
կին է , նոյնպէս և զօրութիւն հոգւոյ՝ նահատակացն ,
որ ընդդէմ սատանայի իցեն : () ծումն կոչէ զհողին ,
զի ցուցցէ թէ զախտացեալ և զմահկանացու բնու-
թիս յանմահ փառման կազզուրեաց :

Կոչի և պարգև . քանզի ասեն հերձուածողքն ,
թէ պարգև այ է հոգին , քանզի զիր իսկ ասէ՝ եթէ

զհոգին որ ետ ած խոնարհաց իւրոց, այլ է ասէ՝ որ տայն, և այլ է պարգևն։ Եթէ վասն տալոյ զհոգին պարգևս կոչիցես, եթէ այնպէս իցէ՝ և զորդի պարգև կոչեաւ։ քանզի և որդի տուաւ։ այնպէս սիրեաց ած, ասէ, զաշխարհ, մինչեւ զորդին իւր ետ։ Եւ զհոգին ետ, և զորդին ետ։ ապա ուրեմն երկոքեան պարգևք են։ Կարիցես ուրանալ զորդի՝ թէ չէ ած, վասն զի պարգև հօր կոչեցաւ։ այլ պարգև ըստ անտեսութեն է, և ած ըստ բնական պատույն։ Եւ հոգին որ, ած վասն իշխանութեն, և պարգև վասն խորհրդոյն միջամտխ առնելոյ։ Օի որ ինչ տացի՝ պարգև է։ իսկ այն պարգև՝ բաղում անդամ և պարգևից գտանի։ Օ միաձին որդին ետ ած, և պարգև կոչեցաւ։ դարձեալ և պարգևն պարգևէ։ Եւ, ասէ, ՚ի բարձունս, և գերեաց զգերութի, և ետ պարգևս մարգկան։ ետ, և տուաւ։ ետ իրբե զած, և տուաւ իրբե զմարդ։ Այս ցայս վայր բաւական լիցի։

Դիտեմ, զի երկայնեցի զՃառու, ոչ եթէ զիմ ինչ միտս հաճել, այլ զՃեր փափաք հարկանել։ քանզի միշտ այնմ փափաքեալ էք, թէ զիարդ պարզեցի զրաբարտութիւնն, զօր զհոգւովն սբել արկանեն։ զի բարեկամք էք հօր, սիրելիք որդւոյ, փափաքեալք հոգւոյն սըյ։ Եւ մի ինչ զարմանայցես, թէ զՃառայս բառայս վարեկամն կոչեմ։ ծառայս վասն բնութեն, և բարեկամն յաղագս չնորհացն։ և լուր ո՞նն իսկ։ զՃեզ, ասէ, ոչ ես կոչեցից ծառայս, այլ բարեկամն։ տերն չգարցի կոչել բարեկամն, և մեք գարշիցիմք։ ՚ի, մին իրի և անանիանքն ասեին, թէ ողորմեաց մեզ վասն Վարահամու ծառայի քո, և Վահակայ սիրել ոյ քո։ և ՚յաւիթ, թէ ինձ յոյժ պատուական ելեն բարեկամք քո ած։

Օ այս ասասցուք համարձակութե, զսոյն քարո զեսցեն ամենայն բերանք։ քանզի բերանք մարդարէիցն հաւատացան մեզ, թէպէտ և շիցեմք արժանի մարգարէիցն։ բերանք առաքելոցն հաւատացան մեզ, թէպէտ և շիցեմք մօտյառաքեալն։ բայց սակայն զհաւատացեալ պատիւն մի առնել վտարանդի, այլ սրել զլեզուս, ոչ ՚ի կոտորումն անհաւատիցն,

այլ 'ի դարձ և յուղղութեան համաւանութեն : Ի՞եւ
ըան համարձակ առանձինն մարգարէիցն էր . բերան
համարձակ սեպհական առաքելոցն էր՝ որ հաստա-
տուն սիւնք անդաշտութեն էին . բերանք բացեալք,
և ոչ երբէք փակեալք . որպէս և Պաւղոս ասէ , ե-
թէ բերանք մեր բացեալ են առ ձեզ կորնթացիք :
Ի՞երանք բացեալք . ձեզ , ասէ , տաց բերան բաց :
Ի՞ացեալ են և մեր բերանք , որ բերանքս եմք ուղեղ
փառաւորութեն՝ ընդդէմ հերձուածողական մոլո-
րութեն . բացեալ են , և չփակին . թէպէտ և բանքս
լուիցեն , արդիւնքն ոչ դադարեն : Վ՞անզի զիտէ ան-
զայնոսիկ , որ փրկելոցն իցեն . Ճանաչէ զայնոսիկ , որ
դառնալոցն իցեն : ||'ի թէ վասն զի որք խօսին՝ չգի-
տիցեն , թէ ում մտանեն բանքս , և ան չճանալիցէ
զայնոսիկ որ ընդ որսովն անկանելոց իցեն :

Ի՞անն քարոզաց՝ ուռկան է . որպէս ձկնորսն սփռէ
զարձոյլ , արկանէ զուռկանն . և որ արկն՝ զիտէ , և
թէ զինչ ըմբռնեալ է , այսմ չէ տեղեակ . քանզի
ծածուկ 'ի խորս ջրոցն գործէ գործին : Վ՞ոյնպէտ և
յորժամ արձոյն անծեղէն բանին 'ի ծածուկ ողիսն
ձգիցի , որ խօսին՝ չգիտէ թէ ով անկաւ ընդ ուռ-
կանաւն . բայց որ քննէ զուռկանն ան , զիտէ , թէ
որ ձուկն ըմբռնեցաւ , զո՞ր 'ի հոգէմարտացն արկ
ընդ ուռկանաւ հոգւոյն անծիսութին , զո՞ր 'ի յա-
րիանոսաց ձգեցին Վ՞ոյի փառքն : Լայ ան և քննէ
զմիտս , և նայի ընդ գործս արձուլին : Եւ զի այլ
ևս օրինակ 'ի կիր արկից . որպէս որք զուռկանն
արկանիցեն , 'ի միմեանց զատեալք բացարձակք յիւ-
րերաց կան , և շուրջ փակեալ իբրև զպարիսպ ա-
ծել զձկամբն , և է ինչ միջին ծոց ջրոյն՝ պատեալ
յուռկանէն . և յորժամ ձգել կամիցին , բացար-
ձակքն տակաւ 'ի միմեանս մօտին , մինչև զայցէն 'ի
մի միաբանութիւն երկոքին կողմանք ուռկանին , և
ծայր 'ի ծայր խառնեսցին : Վ՞ոյնպէտ և ան յառա-
ջին բացարձակ ժամանակսն՝ կացոյց զմարգարէսն
ձգել զուռկանն . և յերկրորդ ժամանակս զառա-
քեալսն . նոքա հնովն ձգէին զուռկանն , և սոքա նո-

բովս : Հերկոցունց կողմանց երկու դասք ուռուկան արկացն՝ զմի գոգ 'ի մէջ արգելուն . և գոգ որ 'ի միջին իցեն՝ արևելք են . և հանդէպ նմա արևմտաք և հարաւ . և յանդիման նմին հիւսիսի . և լուր տնն իսկ , եկեսցեն , ասէ , յարևելց և յարևմտից , 'ի հիւսիսոյ և 'ի ծովէ , և բազմեսցեն ընդ Վրրահամու և ընդ Աահակայ և ընդ Աակովբայ : Հայնմ գողի 'ի նմին ծոց՝ ձկնորսքն 'ի կորուստ որսան ձկունս , և սոքա 'ի փրկութիւն . գան երկոքին կողմանքն 'ի միմեանս , և գտանի մի բնութիւն և մի արուեստ ուռկանարկացն , և բացականքն 'ի միմեանս յարին : Այսնպէս և 'ի վախճանի աշխարհիս , յորժամ ձգելոյ ուռկանին զրաւ լինիցի , ընթանան և ցուցանեն մարդարեքն զիւրեանց վաստակսն , թէ որչափ ձգեցին . և սոքա զիւրեանց աշխատութիս , թէ որչափ արկին ընդ ուռկանաւ :

Այն ուռկան արկեալ է և այժմ , և ոչ մերով ինչ ձեռամբ ձգէ , այլ առաքելական աջով քարշի . և եթէ 'ի մտաց ինչ ասիցեմ , մի ընդունիր , եթէ շասիցէ զայն Պաւղոս , եթէ ըլկայիցէ Լսայի . մարդարեիցն ձեռն ձգէ , և այժմ առաքելոցն աջն պարզէ զգործին : Իայց է և այլ ինչ օրինակ տեսանել . յորժամ ուռկան արկանիցի , ձուկնն հարթնու , և 'ի միջին ծոցն գիմէ . բազում անդամ և սոսիսի 'ի բաց իսկ ելանէ , որպէս և այժմ հերձուածողացն աշակերտք : Իւ տես զաքանչելիսն , զի զառաջինն սատանայ արկանէր ուռկան աշխարհի , և գեքն ձգեին . և արդարքն հարթնուին , և արտաքս քան զուռկանն ելանէին . որպէս և 'Իաւեիթ ասէ , թէ անվով անցից ընդ պարիսպ : Իւ և 'ի Իարելոնէ ձգեաց գործի սատանայ , զի արկանիցէ 'ի հաղթ զամենեսեան . և երեք որ ձգունքն ցամաքաթե վազեցին զգործեաւն . և զրէ թէ ընդ մարդարեին ասէին , թէ անկցին 'ի ցանցս նորա մեղաւորք : Իւ քանզի չար ուռկան արկ սատանայ յաշխարհի , որ ասէին , թէ յածեալ շրջեալ եմ 'ի ներքոյ երկնից , և աւասիկ կամ , եկն ՎՇՊ , և մանեաց նմա կարս . ձգեաց և ըմբռնելոցն 'ի նմանէն գործիս առաքելովքն , և արկ ընդ ուռկանաւ զաշխարհս ամենայն : Իւ զի՞նչ . սաեղձանեմք

ինս՝ ի մտաց . նմին իսկ առն լուր . նման է արքայուն
թին երկնից ուռկանի՝ որ արկանիցի ՚ի ծով, և յա-
մենայն կողմանց ժողովիցէ . ընդ այն ուռկանաւ լի-
ցի մեզ ամենեցուն անկանել , ՚ի նմին որս դտանել :
Եշ սքանչելիք այն են, զի որ այսօր իբրև ձուկն ան-
կաւ ընդ ուռկանաւ, վաղիւ իբրեւ ձկնորս զայլ
ձկունս որսայ : Խնդ ձկունք անկեալք ՚ի գործի՝ կե-
նաց ՚ի մահ երթան . և աստ անկեալք ընդ ուռկա-
նաւ՝ ՚ի մահուանէ՝ ՚ի կեանս ժողովին : Ո ասն այնու-
րիկ զՊեարոս՝ ասէ՝ կենարարն, թէ յաջակողմ արկ
զգործիդ . և ժողովեաց ձուկն բազում . ուսուցանէ-
թէ երեւելեօքն իմանալեացն յիմաստս պարտ է եր-
թալ . քանզի և առ սմին իսկ ասէ, մի երկնցիք Պեա-
րէ, յայսմ հետէ զմարդիկ որսայցես՝ ՚ի կեանս . այն
իսկ է, զի ՚ի յաւիտենից կեանսն գրաւիցես :

Եղիցի այսուհետեւ ամենեցուն մեզ ընդ ուռկա-
նաւ ուղիղ փառաւորութեն անկանել, ՚ի ոք ծոցն
հաւատոց ընակել, զհաւատս Երրորդութենյանձին
ունել զերից հայրապետացն . զի Երրորդութիւնն
երկնաւոր յերկինս է, և երեք հայրապետք յերկրի .
ոչ սորա բնութիւնն ստի, և ոչ նորա պատիւն յու-
րացութիւն ելանէ : Խ յս երրորդութիւն և ժամա-
նակաւ բաժաննի, և վայրօք մեկնի . և այն անժա-
մանակաւոր և յաւիտենական, միշտ թագաւորէ,
ցանդ փրկէ, հանապազ լուսաւորէ . որով լցից ամե-
նեցուն մեզ փրկել՝ ՚ի ԿՅ ՀՅ՝ ՚ի տէր մեր . որում
փառք յաւիտեանս յաւիտենից :

ՃԱՌԻ ՉՈՐՏՈՐԴԻ

‘Նորին Սեբերիանոսի եպիսկոպոսի, աստղեալ վասն Առաքելցն՝
՚ի կըօնս :

Երեսկ Ճառն վասն ական մարմնոյ՝ զարմացոյց
զմեղ. զգեղ բնուեն մեկներ, և ընդ իմաստութիւն
Ճարաարապետին զարմանայր. քանզի յորժամբնու-
թիւնն մեկնիցի, արարիչն փառաւորի. և յորժամ
դործն գովիցի, արուեստագիտին մեծարանս բերէ :
Այլ մինչդեռ այնու էաք, երեկոյին պաշտաման
կարգքն հասին 'ի վերայ. մինչդեռ ճրագ մարմնոյն
քարոզէր, երեկորին Ճրագն 'ի սպասաւորութիւն ե-
կեղեցւոյ մատեաւ յառաջ. և 'ի նոյն ճրագ՝ երրորդ
ճրագին յիշատակ, անձեղէն օրինացն յաւելցր :
Առաջին Ճրագս մարմնոյ՝ 'ի կենարարէն խոկ ունի
վկայութիւն, եթէ Ճրագ մարմնոյ ակնդ է . և որ
'ի հրոյն կազմի՝ փորձիւ և սովորութք յամենեցունց
խոկ Ճանաջի : Իւ երրորդ Ճրագ՝ 'ի ՚յաւելայ քարո-
զի, Ճրագ է, ասէ, բանք քո ոտից իմոց, և լոյս շաւ-
զաց իմոց : ՚յայց այսօր մեղ մեծարոյ հասարակաց
հօրս վարդապետութիւն միւս ևս զաւետարանական
Ճրագն եցոյց : **Ճ**րագ՝ որ ոչ ընդ հակառակս արևու
ելանիցէ, այլ արեգականն արդարութեն ունկնդիր
լեալ : ՚յայ ՚ի՞ն մլրտել . և ՚յովաննէս մլրտէ, ոչ
ամբարհաւաճուք հպարտացեալ, այլ անձեղէն հրա-
մանին ծառայէ : Օ ամենեցունց մլրտիւն և զտէրն,
այր մի՝ որ ինքն մլրտութեն կարօտ էր, մլրտէր . ոչ
ժապրհուք մատուցեալ, այլ հրամանին հնազանդեալ
՚յովաննէս Ճրագ, որ զհին կտակարանաց սրբն զօ-
րինակ յանձին բերէ . զոր օրինակ օրէնք հրէիցն
Ճրագ կուէին, նոյնպէս և որք ըստ օրինացն առաքի-
նեալք՝ Ճրագ անուանէին :

Ոիտ գիր աղաւեմ . ՚յովաննէս Ճրագ, քանզի
օրէնքն և մարդարէքն մինչև ց՚յովաննէս . ՚յաւիթ
Ճրագ, քանզի յորժամ 'ի ծերութեն խրոխտէր ընդ
Օ արբոն 'ի սպատերազմելանել արգելուին ծերք ժռ-

դովրդեանն , և չտային երթալ՚ի պատերազմն , ամեւնեցուն զբողոք բարձեալ թէ մի երթար ՚ի պատերազմն , զի մի շիջուցանիցես զճրագն Խորայէլի : ՚Իւաւիթ ճրագ . չուլաննէս ճրագ . իսկ յորմէ հետէ ծագեաց լոյն ճշմարիտ , և արեգակնն արդարութէ , և արձակեաց զմեծապայծառ և զյստակ ճառագայթմն յերկնից , որը յայնմ լուսոյ առաքինանան՝ անցանեն զանցանեն զճրագօքն : ՚Իոքա ճրազին անուանակիցք եղեն , քանզի ըստ օրինացն՝ որ ճրագն կոչէր , զինուորեալ էին . և սոքա աւետարանական լուսովն լուսաւորեալք , որ ըստ նմին կեան , և զնոյն ձեւ վարս ցուցանեն , անցեալ ըստ կարգս ճրագին՝ լոյս կոյին : Ուեկատէտ և ճրագն լոյս իցէ , այլ զի՞նչ համեմատութիւնդ բուն լուսոյն ունիցի . և զոր ինչ տայր կարգ բնութեն , չնորհեաց թագաւորին առատութիւն՝ աշակերտացն :

՚Եւ տես զմարդասիրութիւնն ՚Քոփ . զոր անուն անձին եղ , նմին և զաշակերտան արար հազորդակիցս . ես եմ , ասէ , լոյս աշխարհի . և ՚ի միւսում վայրի , թէ դուք եք լոյս աշխարհի : Ո՞նոր չնորհք և պարգեք , որ ըստ ամենայն բանս և ըստ միտս անցանեն : ՚Տես , զիանդք բնութեն կարգին յաղթէ մարդասիրութիւն : ՚Օրագէ զարեգակն . և զի՞նչ ասեմ , թէ զարեգակն ծագէ . այլ յորժամ զկարապեան՝ զարեելից զառաւոսն արձակիցէ , փախստական առնէ զամենայն գունդս աստեղաց , և թաքչին զօղեն ամենայն աստեղք . ոչ եթէ յապականութիւն զառնայցեն , այլ առաւելութք լուսոյն արեգականն ծածկին : ՚Իսկ արդարութէ արեգակնն ՚Նո , որ յետ առաջին զիշերին ծագեաց , ոչ միայն զայն մարդարէսն՝ որ անդէն ՚ի գալստեան նորա պայծառացան , լուսաւորեաց ՚ի նմանութիւն աստեղաց , այլ և այլ ես լուսաւորս գումարեաց իւրի ՚Օրագեցին ընդարեգականն արդարութ լուսաւորք , քարոզք ճշմարտուեն , ճակատայարդարք անձպաշտուեն . զորոց ասէ ՚Պաւզոս , յորոց միջի երեկիցիք լուսաւորք յաշխարհի . զբանն կենդանութ ունիցիք ՚ի պարձանս ինձ յաւուրն ՚Նոփ :

՚Տեսէր զճառագայթս արեգականն արդարութէ . տես և զաւետարանին , զիանդք գնէ անուանս՝ որ ՚ի

վեր են քան զամենայն հռետորական անուանսն , քան զամենայն տարապարտ փիլիսոփայութեն , քան զգրամարտիկոսացն և զարուեստականաց , և քան զամենայն իսկ պատիւս մեծարանաց անուանք որդւ ւոց : Օ ի՞նչ առ ասելն է . և մեծամեծ արդիւնս գործեն անուանք շինականք , և միտք երկնաւորք : Ի արդողումէոս և ի խաղէոս , անուանք օտարք 'ի յունարէն լեզուոյ , այլ զամենայն անխրատութիւնի բաց մերժեն , և զենաւ գիտութիւնն 'ի տեղով տնկեն : Օ ձկնորսա ընտրեաց կենարարն , ոչ առ զիմաստունս ինչ խոտելց , և ոչ առ 'ի զբանիբունս աղարտելց , այլ առ 'ի սկիզբն քարոզութեն առանց կարծեաց պահելց : Ի արոզի բանն ձկնորսօքն , զի յայտնի լինիցի արդիւնագործին զօրութիւն : Ու ընդ այն զարմանամք , զի ձկնորսան են , այլ զի ձկնորսօք՝ զօրութիւն որ 'ի վերոյ քան զաշխարհ է , պատմեցա :

Կարող էր ած գրդել ջատագով քարոզութեանն զարտարախօսա , զի իմաստութիւն զիտուեն այ յայտնեացի . այլ չկամեցաւ ընդունայն առնել զշշմարտութիւնացին . վասն որոյ և Պաւղոս ասեր , եթէ ես ոչ եկի առաւելութե բանից , զի մի ընդունայն լինիցի խանչի՞նի , այն իսկ է , թէ զի մի վայրապար ինչ կարծիցի , և բանիւք խոտիցի . այլ զօրութիւն խաչելցն անկեաց զեկեղեցի առաքելական գնդիւքն : Տնկեաց զբանն ձշմարտութեն անվարժ¹ լեզուօքն , որ յածեղէն օրէնսն միայն կրթէին . և իբրև նորօք տնկեաց , ոռոգանէ այնուշետե և իմաստովք : Եւ զայն ոչ վայրապար , զի մի , որ պատճառիցին զպատճառս մեղաց , ասիցեն , թէ զտգէտս պատրեաց , և զիմաստունս և զդորաւորս չկարաց ածել 'ի հաւան . այլ առ նորօք ձարտարեաց , որ մէտ 'ի պատրանսն էին մտօք , զձկնորսան , զտխմարս , զւգիտունս , և զշշմարթունս : Եւ յայն սակա թէպէտ և ոչ ընդ նոսա , այլ անդէն յառաքելոցն ժամանակս յարոյ ած քարոզս բանիբունս , ձարտարախօսս : Ոմն , ասէ , աղէկսանդրացի Ապաւղոս անուն , հրեայ յազգէ եկն եհաս յլրփեսոս , բանիբուն և զօրաւոր զբովք և

1 Յօրինակին . անշէժ :

մոտք, և բանիքուն մեկնութեամբ։ Օ օրաւոր, ասե՞՝
զբովք։ Եւ զի՞նչ արուեստ ունիցի։ Դաղում ինչ
նպաստ լինէր հաւատացելոցն։ 'Ի հրապարակս, ասե՞՝
յանդիմանսէր զշըեայսն։

Տեսանես զսուսերն Վի՞ճի, զիարդ ամենեքումք
սրի։ Օ ձկնորսս վարժէ, և զիմաստունս վառէ։ և
քանզի մոլորութեն սպասաւոր Ճարտարախօսութին
է, մերկանայ բազում անգամ զզէն չարեաց, և ըդ-
գեցուցանէ առաքինութեն։ զգածեալ է մոլորութին
քննական բանիւք, յափշտակէ զայն Ճշմարտութին,
և նոքիմք իսկ քննականօքն սպանանէ զմոլորու-
թին։ Որպէս և երանելին Դաւիթ՝ յորժամ զշը-
կայն Կողմադանանեաց, նախ իւրովք զինուքն խո-
ցեաց, և ապա նորին այլազգոյն սուսերաւն եհատ
զգլուխն։ 'Ի նմանէն առեալ՝ զնոյն գլխատեաց։
Դյնպէս զիտէ Ճշմարտութին զսուր մոլորութեն
հանել, և նովաւ զնոյն սպանանել։ Նին ՚ի մէջ հե-
թանոսաց իմաստունք, արձակեաց ախոյեանս նոյին
Վի՞ճ զնախանձայոյզս ՚ի հրէից։ Եր ՚ի ժողովրդեանն
հրէից սուսերն սողովատիկ՝ Վաւզոս, որ մոլորեան
էր հակառակ եկեղեցեաց, և կտրէր օձտէր զհաւատն
Վի՞ճի։ զնոյն սուսեր առ կենարարն, և ետ ՚ի ձեռս
եկեղեցեոյ, վանել զամենայն չարութիւն որ ՚ի վե-
րայ յառնիցէ։ Եւ այն իսկ է զոր երանելին Դաւիթ
ասէր, եթէ սուր հանին մեղաւորք, և լարեցին զա-
ղեղունս իւրեանց։ սուրք նոցա մացեն ՚ի սիրտս նո-
ցա, և աղեղունք նոցա խորտակեսցին։

Խյօսեցաւ ած իմաստնովք, խօսեցաւ և տգիտօք,
զի երկուքումք զիւր զօրութին ցուցանիցէ։ որտոր
դօքն, զի զտարապարտ բանիցն Ճարտարութի ան-
վարժ լեզուօքն խոտիցէ։ և իմաստնովք, զի խորա-
գիտութին զիսորամաննութին պարզեսցէ։ և պա-
րիսպ պատեալ զհաւատն՝ ամրացուսցէ զմարդն։
Եւ զոր ինչ ՚ի տգէտմն և ՚ի բանիքունսն դորձեաց,
զնոյն և ՚ի թագաւորս։ և թէ զիարդ իցէ, լուր։
Կարող էր կենարարն ՚ի սկզբան քարողութեն, և
յառաջնում նուազին ածել զթագաւորս ՚ի հնա-
զանդութի քարողութեն, և պատերազմակիցս յա-
րուցանել ածպաշտութեն, որպէս և այժմն են։ այլ

չարար, զի մի ընդ կարծիւք զՃշմարտութին արկանիցէ, թէ մարդկան պաշտպանութե, և ոչ այ զօրութիւն հաստատեցաւ եկեղեցի: Ո՞երկացոյց զնա 'ի մարդկեղեն օգնականութիւն, և զգեցոյց զերկնաւոր զօրութին: Ո՞ինչնել ցկարի ածապաշտ ցլուստանդիանոս՝ երեսուն և հինգ թագաւորք մի ըստ միոջէ կացին Հոռուոնց, և ընդհաւատոցն հնազանդութ չկամցան մտանել. զի ուսցիս, թէ չնորհքն ոչ մարդկեղեն ինչ զօրութիւն առնուն յանօթ, այլ զիւրն ունի բնակաւոր: Եւ քանզի զամենայն աշխարհ ետես 'ի մոլորութե, զի մի դարձեալ որ պատճառիցինն զպատճառս մեղաց, ասիցեն՝ թէ զտպէտս և զանկարծս կարծս կարաց խաթել, և զթագաւորս և զիշխանս ոչ եղեւ ձեռնհաս 'ի մատնեակ արկանել, վառէ զբանն, ածէ զթագաւորս ընդ լծով ածապաշտութին, և առաջնորդէ ամենայն ազգաց 'ի մի միաբանութիւն Ճշմարտութին: զի յայտնի լիցի, եթէ թագաւորն թագաւորաց և տէրն տերանց՝ դոյզն քարոզութ զաւաել մեծութիւն երկնաւոր իմաստութին եցոյց:

Ի՞նթերցան այսօր անուանք առաքելոցն, քարոզեցան ձկնորսքն, հռչակ հարաւ տիւմարացն բանք, որ զամենայն խրատս ընծայեցուցին աշխարհի: Եւ միտ դիր զօրութին: առաջին, ասէ, երկոտասանիցն՝ Ալիմն էր, որ անուանեցաւն Պիետրոս, վէմն եկեղեցւոյ, հիմն ածապաշտութիւն: Օ Ալիմն անուն՝ 'ի հօրէ և 'ի մօրէ ունէր, և Պիետրոս՝ 'ի կենարարէն անուանեցաւ. դու ես, ասէ, Պիետրոս, որ թարգմանի լիմ, և 'ի վերայ այդր վիմի շինեցից զեկեղեցի իմ: Վմենայն եկեղեցական քարոզութիւն 'ի վերայ վիմի հաստատեալ կայ, և ամենայն հերձուածական մոլորութիւն 'ի վերայ զաղփաղփուն կաւոյ. այլ է վէմն հաստատուն՝ որ զշնուածն 'ի վեր ունի, և այլ է հողն զաղփաղփուն՝ որ չհանգարտէ շինողացն. նաև ի ինքն խակ անձինն չհանդարտէ. զաղփաղփուն են բանքն, ցուրտ են խօսքն, ստգտանաց են կրօնքն. քանզի մարդկեղեն խորհուրդքն ևս խառնեցան 'ի հաւատոն այ. և ջանայ կաւն զվէմն խարիսարել, այլ չմատնի 'ի պարտութիւն վէմն. դրունք, ասէ, դժոխոց ոչ յաղթահարեցեն զնա:

‘Ղ, ման են աշակերտքն հերձուածողաց՝ կաւագործաց, որ զաղիւսն արկանիցեն. քանզի նոքա զկաւոյն ինստութին յարդիւ իմ ամսքեն, և այնպէս առնեն կարծրագոյն զլոյն, և երեխ հաստ՝ փուտմն։ Եշեկի հաստ, մինչև վնասակար ինչ՝ ի վերայ ցիցէ հասեալ ապա թէ անձրե կամ հեղճեղ, կամ հուր, կամ այլ ինչ՝ ի դիմի հարկանիցի, չկայ յակաստանի։ Ո ամս այնորիկ մարգարէն առ այնոսիկ՝ որ յերկրաւոր իրս ինչ վստահ լինիցին, և համարին թէ չլինիցի վստահար ինչ անտի՝ բարբառի, թէ այսպէս ասէ տէր, Էջ՝ ի կաւ, և կոխեալ ընդ յարդի, և կարծրացն քան զաղիւս, և հուր կերիցէ զքեղ։ Յանդիմանէ զայնոսիկ, որ ՚ի մարմնաւոր ինչ և յերկրաւոր իրս վստահ լիցէն, և առ անց պարտութիւն ինչ զօրութիւն համարեցին։ Եկեղեցւոյ հիմն՝ վէմն, և հերձուածողաց, Երուսաղէմն։ Կամեցաւ մարգարէն ցուցանել, մանաւանդ ած իսկ մարգարէիւն, եթէ որպիսի ինչ եկեղեցի է՝ որ ՚ի վերայ վիմի հաստատեալ է, և որ պիսի ինչ հրեական փարախեալս, որ չկայ ՚ի կայի և ՚ի հաստատուե, ասէ յԵղեկիէլ մարգարէ, առ գու ինձ աղիւս մի, և գրոշմեալ զԵրուսաղէմ, և պատեալ զնովաւ պատմէց։ Ո ամս էր աղիւս. զի ուսանիցիս զկերպարանս աղիւսոյն և զվիմի. Երուսաղէմ յաղիւսոյ վերայ կայր, և եկեղեցւոյ հիմն՝ վէմն է։ Ո անաւանդ թէ և զեկեղեցի՝ վէմ կոչեմք, շատեմք. և ոչ զվէմն յորոյ վերայ կայ՝ ուրանամ. վէմ է եկեղեցի, քանզի զհաստատուն վէմն ունի զՎԲՌ. և միւս վէմ, զՊետրոս՝ որ դաւանութքն առ զանուն. դու ես, ասէ, ՚Վան որդի այ կենդանւոյ։

Բայց զայն կամիմ ճշգրտել, եթէ ընդ էր Յոհաննէս աւետարանի՝ որ այնչափ առաւելութիւն լի էր, որ զաւետարանական անձրես յանձն ամփոփեաց՝ որդին որոտման, որ զամենայն միանգամայն զյորդութիւն նորհացն յինքն կորզեաց, ՚ի սկզբան աւետարանին չեկն ՚ի Պետրոսի բարբառն. չասաց, թէ ՚ի սկզբանէ էր որդի. և ոչ, եթէ ՚ի սկզբանէ էր միածինն. այլ զորդւոյ և զմիածնի թողեալ զյործործումն, ՚ի բանն եկն. ՚ի սկզբանէ էր բանն, և բանն էր առ ած, և ած էր բանն։ Պետրոս՝ ոչ զի բանն

կոչեաց, երանեցաւ, այլ զի որդի դաւանեաց. իսկ ընդէ՞ր արդեօք երանելին Հոհաննէս զերանութեն եթող, և 'ի բանն ընթացաւ: Վապեալքն զիտէին զինչ քարողէին. և որք 'ի նոցաննէն ընդունելոցն էին, Հանդարտէին առաւելութե բանիցն՝ Քամզի սկիզբն քարողութեն և բանն յարժանիս և յանարժան լսելիս հնմէր, զի մի մարդկեղէն մտօք զածեղէն վարդապետութեն աղտեղացուցանիցեն, որդի լուեալ, հայր և մայր 'ի մոտաց ստեղծանիցեն, և թանձրութի, և զայլ ևս մարմնոյ կարիս. վասն այնորիկ 'ի բանին յորջորջումն գայ, որ կարողն էր անդէն 'ի սկզբան բարբառոյն՝ զանկարեկանն մեկնել, իշտես որպիսի ինչ կարգ 'ի կիր արկանէ. սանդուխս հաստատեաց, և ընդ բազում որոշա հանէ զմեզ 'ի գլուխ որդւոյն յորջորջումն. ոչ թէ զայն ինչ ուրացաւ, այլ դիպող ժամանակի պահէ:

'Ի սկզբանէ էր, ասէ, բանն. զի զանկարեկանն ուսուցանիցիս և զծննդեանն աղատ սեպհականութեն. քանզի բանի հանապաղորդ միտքն են հայր: 'Ի սկզբանէ, ասէ, էր բանն. նա և կոչէր իսկ ոչ առանձինն, եթէ չէր ուրուք բանն՝ բան: Իշտիցէ բանն: Իշտ, ասէ, 'ի սկզբանէ առ ած, և ած էր բանն: Իշտ զանկարեկան ծննդեանն մեկնէ. և ապա զանձինն ունելոյ առ հայր ցուցանէ զանքակութիւնն՝, զբնութեանն միութիւն, զկամացն և զազդեցութեան: Իշտ ած էր բանն: Վայնու զպատիւն կրկնակի՝ ասէ: Իշտ առաջի այն կայ, թէ ոչ բանից կարդաց ինչ պէտք են, այլ արդեանց հաւաստեաց: 'Ի սկզբանէ էր բանն, զանկարեկան ծնունդն յայտ առնէ: Իշտ բանն էր ած, զանքակ միութիւնն: Իշտ ած էր բանն, զանեղծ պատիւն: 'Ի, ա էր 'ի սկզբանէ առ ած: Արկնէ, զի զնոյն միտս հաստատեսցէ: Իշտ քանզի բանն կոչեաց, և բանս որ առ մեզ ոչինչ այնչափ յայտ առնէ զօրինակ ճառելոցն, յայտնագոյն յարդարէ զբանն, և ցուցանէ զնա միանգամայն ած, և բան, և արարիչ. և ամենայն ինչ նովաւ եղեւ: Իշտ այնու բուժս իմն գտանեն հերձուածողքն:

‘Ղովաւ, ասեն, ասաց, և ոչ թէ առ ’ի նմանէ, կամ ’ի նմանէ, այլ նովաւ : Ի՞այց ես հաւաստեաւ կամէի ուսանել ’ի գայթակղելոցն, որք զիւրեանց բնութիւնն զգիտեն, և այնպիսի գայթակղանս գայթակղեն . և զայն բնութիւն՝ որ ’ի վեր քան զամենայն միտս անցանէ, ’ի խոյդ արկեալ քննեն : Օ ի՞նչ այլակերպութիւն կարծիցեն ’ի միջի՝ ընդ նովաւ, և ’ի նմանէ . քանզի ոչ վայրապար ինչ պարտ է վճիռտալ, այլ ’ի գրոց սրբոց հաստատութիւն ցուցանել :

Օ ի՞նչ նովաւն : Հայր, ասեն, նովաւ արար, Հայն իմն բարբառ ցանկ ապաւինին, և զնոյն ’ի կիր արկանեն իրբեւ ապաստան ինչ իւրեանց չարեացն, զնովաւն արար Հայր, ’ի մէջ բերեն : Խամաց զօրինակն, և մի խառն ’ի խուռն զբանն ևեթ ’ի մէջ բերիցես . բան թափուր ’ի մտաց՝ չկարեմ իմանալ, քանզի տգետ եմ : Օ նովաւն՝ որ ’ի մերում միջի իրք գործիցին, մարթէ է իմանալ զշանդամանսն, գործէ տէր ծառայիւ . մին հրաման տայ, և միւսն զշամանն կատարէ . գործէ տէր արուեստագիտաւ . մին զօրինակն դրոշմէ, և միւսն զգործն յօրինէ : Վարդ ասա զօրինակն, զիարդ գործիցէ որդւով . իրբեւ տէր ծառայի հրաման տայցէ, թէ իրբեւ տիսմար առ ձեռագետ երթայցէ, թէ իրբեւ արուեստագետ՝ ուրագաւ կամ սղոցով կամ այլ իւիք գործեաւ զգործն յարդարեսցէ . զի՞նչ և կամիս օրինակ, յայտնեալ զի՞նչ իմանասդ, զի ուսանիցիմ՝ զոր հաւատամն . իրբեւ տէր ծառայի հրամայեաց, թէ իրբեւ տիսմար՝ սրուեստագիտի ետ գործել, թէ իրբեւ արուեստագետ գործւով գործեաց : Ե՞ր, ասա զոր օրինակ կարծիցես :

Որպէս Հայր, ասե՛, որդւով : Ըե ես յայտ արար զոր կամիմ . քանզի ոչ եթէ զգեմն խնդրեմ զասօղին, կամ լսողին, այլ զկերպարանս հրամանատուին, և զօրինակ հրաման առօղին : Հայր ասեն հրամայէր, և որդի գործէր : Հյոյց զօրինակ որդւոյ զարարչութեն, և զօր հրամանատուութեն : Հայր, ասեն, հրաման տայր բանիւն, և որդի գործէր : Որպիսի ինչ օրինակաւ . ձեռն ’ի գործ արկեալ գոր-

ծէր, այն՝ աշխատութիւն մարմնաւոր կրելց նշանակէ, եթէ զաղդեցութիւն ինչ կատարէր: Ո՞ւ ասեն, այլ ինքն բանիւ արար: Տես զյաձախութիւնը շարութեն: Իսա զբարբառն՝ զոր խօսեցաւ հայր, յանդիման կացո զբանն՝ որով արար որդի: Այլ զի մի տաց քեզ ողն առնուլ, և ասել զոր ինչ կամփիսն, ածից զքեզ ակամայ կամօք յածեղէն վարդապետութին, և ցուցից քեզ զբարբառս արարչին:

Իսաց ած, թէ եղիցի լցու. ասաց ած, եղիցի հաստատութիւն: Ո՞վ իցէ որ ասացի: Եւ վաղվագակի ՚ի գիմի հարկանին, թէ հայր ասաց, և որդի զհրամանն կատարեաց: Եթէ հրամանատուին ինչ բանք էին, շասէր ած, թէ եղիցի լցու, այլ թէ արամ զլոյմն. և լսէր որդի, և առնէր: Իսայց աղէ ասա, ընդէր իսկ նոյն բարբառ յերկոսին գտանիցի, թէ ասաց ած, եղիցի լցու, և եղել լցու. և գարձեալ ասաց ած եղիցի հաստատութիւն, և եղել հաստատութիւն: Եթէ հայր զայն բարբառ արկ՚ի կիր, եթէ եղիցի լցու, և եղիցի հաստատութիւն, ընդէր իսկ ոչ նոյն բարբառ աղդեաց և գործեաց¹, այլ՝ այլում բարբառոյ կարօտ եղել: Ծանր է բանս: Դարեսջիր՝ եթէ հայր ասաց, որպէս հերձուածողքն ասեն, և որդի մօտ կայր, և լսէր զոր ածն ասէր, թէ եղիցի լցու, և որդւոյ առեալ զբարբառն՝ առնէր զլոյմն: Կայցէ ինչ այն չափ մոլեկան մտացն յանդգնութիւն, թէ մարմնաւոր աղդեցութիւն և աշխատութիւն կրեաց բանն այ: Եւ եթէ հակառակիցին ևս մարմնաւոր աղդեցութիւն ինչ ասել և ոչ ածեղէն զօրութիւն, Դաւիթ՚ի մէջ եկեալ յանդիմանէ զնոսա, եթէ բանիւ ոն երկինք հաստատեցան:

Խակ արդ եթէ ասաց հայր, եթէ եղիցի լցու, և ելեալ բարբառն չգործեաց ինչ գործս, այլ կաց մնաց որդւոյ, մի թէ կարօտ ինչ եր հայր, և որդւովն նոյր վկարօտութիւնն. ասաց՝ թէ եղիցի լցու, և ընթացաւ ընդ նմին բնութիւն. ասաց՝ եղիցի հաստատութիւն, և բանն գործ ինչ ոչ կատարեաց. այլ խօսէր հայր, և մնայր որդւոյ արարչութիւն: Տես զի

գործես . զուցէ մինչ զայդ ճարտարիցես , այլ ամ-
բարշտութիւն մուծանիցես . որպէս թէ հայր տկար
ինչ էր , և որդի զօրաւոր :

Եր ասա . ասա զօրինակն , զի՞նչ իցէ , 'ի ձեռն
որդւոյ : Որդւով , ասեն , արար զարարածս : Ո՞ զնա :
Հայր արար : Վաւեսցէ Վան զանհնարին մեղս . զի
զիս և ընդ բանս իսկ սարսուռն առնու , յորժամ
զպատմութիւն հայհոյութեն լսեմ : Եւ մի ինչ ընդ
այն զարմասցիս . զի զհայհոյութիւն հերձուածողացն
մուծանելց էր նա , ոչ յայտնի բանիւք եմոյծ , այլ
զգուշացաւ . և չասաց մերկ զհայհոյուին , այլ պատ-
րուակաւ . ուր և զի ցած իսկ ասաց , աղէ մերձեաց
'ի մարմինս նորա , եթէ ոչ յերեսս իսկ օրհնեսցէ
զքեզ . փոխանակ ասելոյ , թէ անիծեալ իցէ : Վսեն
հերձուածողաց աշակերտքն . իբրև 'ի նոցանէ լուիցի
այն , և մի իբրև 'ի մէնջ : Հայր , ասեն , զորդի միայն
արար , և զայլ արարածս ամենայն որդի : Վսա զօրի-
նակ լինելցին . եթէ կամօք եղեւ որդի , կամօք այ եղաք
և մեք , և այլ ևս արարածք , զի՞նչ 'ի միջի կայցէ ընդ
երկրպագուս , և ընդ այն որ զերկրպագուին առնու :
Եթէ ըստ իմում օրինակի եղեւ , վամն էր լինեն
երկրպագութի պահանջնցիէ : Եթէ նա յոշնչէ եղեւ
կամօքն այ , և աշխարհն յոշնչէ կամօքն այ . զի՞նչ
'ի միջի կայցէ զայն ոչ տեսանեմ : Եթէ զնա հայր
ած 'ի միջի , և զայլ արարածս որդի . եթէ կայցէ
ինչ անջրպետութի 'ի միջի , որով որդին եկն յա-
ռաջ , ասա . ապա թէ չկայցէ , և կամօքն միայն
յոշնչէ եղեւ որդի , և այլ ամենայն արարածք կա-
մօք յոշնչէ , զիարդ իցէ զի որ կամօքն այ յոշնչէ
եղեւ իբրև զմեզ , 'ի մէնջ երկրպագութի առնու :

Վայ , ասեն , առնու . քանզի չէ իբրև զայլ արա-
րածս , անցանէ ըստ ամենայն արարածս , անցանէ
ըստ ամենայն կարգս եղելոց : Վանիւք միայն ճար-
տարեն , և թշնամանեն զբնութին : Ոչ զի 'ի վեր
քան զարարածս է , պարտ է երկրպագութի առնու-
յարարածոց , եթէ չլցէ արարիւ և տէր արարա-
ծոցն , և յանիութենէն . քանզի արարած յարարա-
ծոյ չառնու երկրպագութի : Վսաւել են երկինք
քան զերկիր , այլ չպարտի երկրպագութի երկիր երկ-

նից : Առաւել են աստեղք քան զտունկս, այլ չպա-
դանեն երկիր տունկք աստեղաց : Առաւել է հրեշ-
տակ քան զմարդ, այլ չպագանէ երկիր մարդ հրեշ-
տակի : Եւ զմարդոյ բնաւ զի իսկ ասիցեմ. զի՞նչ
նման է մըջիւն Գաբրիէլի, կամ մժիխ Միքայէլի.
այլ քանզի նոքա արարածք են, և սոքա արարածք,
յերկրպագութեն համարի՝ և հրեշտակք ըստ սոսա
իջանեն, և անկածքս առ նոսա ելանեն, և շուրջ
զաթոռովն երկրպագութեն պսակին. առաւելութեն
զատեալ մեկնեալ են նոքա 'ի սոյցանէ, և արարա-
ծովն և երկրպագութեամբն՝ յար և միմեանց մերձա-
ւորք :

Եւ լուր երանելոյն Գաւթի. օրհնեցէք, ասէ, զտէր
յերկնից, օրհնեցէք զնա 'ի բարձանց. օրհնեցէք զնա
ամենայն հրեշտակք նորա, օրհնեցէք զնա ամենայն
զօրութիք նորա. արե և լուսին, ամենայն աստեղք
և լոյս, և երկնիք երկնից, և ջուրք որ 'ի վերոյ քան
զերկինս : Եւ իբրև 'ի գլուխ եհան զնոցա թիւն որ
'ի վեր են քան զաշխարհ, յարէ 'ի նոյն զօրհնեցէք
զտէր յերկրէ. նովին բարբառով զնոյն երկրպագու-
թի սահմանէ. ոչ այլ ազգ հրեշտակք երկիր պագա-
նեն, և այլ ազգ մարդիկ : (Օրհնեցէք, ասէ, զտէր
յերկնից, օրհնեցէք զտէր յերկրէ. օրհնեցէք զնա
ամենայն հրեշտակք նորա, վիշապք և ամենայն
խորք. զի՞նչ նման հրեշտակք վիշապաց իցեն : Հուր
և կարկուտ, ձիւն և սառն, հողմ և մըրիկ, դա-
զանք և ամենայն անասունք. արջք, առիւծ, ինձ,
յովազ, վարազ, և ամենայն զազանք. անասուն՝
ուղտ, եշ, եզն, ամենեքին սոքա ընդ նոսա երկիր պա-
զանեն. ոչ եթէ զառաւելութիւն կարգին չառնուն
'ի միտ, այլ զերկրպագութեն զհասարակաց պա-
տիւն ձանաչեն : Գազան, ասէ, և ամենայն անա-
սունք, սողուն և թուշուն, ագռաւեք ընդ հրեշտակս
օրհնեն. սողունք, ասէ, իժք, օձք և կարիճք, և
ամենայն ազգ սողնոց : Տեսանեն զի պատուոյն ա-
ռաւելութիւն չփոքրկացուցանէ զերկրպագութիւն
նուազագունացն. քանզի ոչ եթէ վասն զի նոքա ա-
ռաւել արարածք են, սոքա չունիցին մասն ինչ եր-
կրպագութեանն, այլ զի տէրունական պատիւն և

ածեղէն էուին յամենեցունց փառաւորեսցի : «Վան
զի ամենայն արարածք արարչին պարտին երկրապա-
դութի :

«Այս արդ ցոյց զայլակերպութին՝ որ 'ի միջի կայ-
ցէ . յորժամ զհօրէ ասես , թէ 'ի նմանէն է ամե-
նայն ինչ , կերպարանօք իսկ առանց բարբառոյ ցու-
ցանես զառաւուելութի . զի նախ քան զբանսն երե-
սօքն իսկ հայհոյեն հերձուածողքն . յորժամ վասն
հօր վիշիցին , սկսանին ասել , մի ած հայր , յորմէ ա-
մենայն . և մի է տէր ՞ որով ամենայն : Կախ
քան զլեզուգ՝ երեսքդ հայհոյեն , յառաջ քան ըզ-
բանսդ՝ գէմբդ փոքրկացուցանեն : Ո՛չ ապախտաւո-
րութին . մարդարէքն և զարարածս մեծացուցանեն ,
և հերձուածողքն զարարիչն փոքրկացուցանեն . Կա-
ւիթ յարդէ և մեծարէ զարարածս , թէ որպէս զի
մեծ են գործք քո տէր . ածապաշտքն և զգործս մե-
ծացուցանեն , ամբարիշտքն և՝ զարարիչն փոքրկա-
ցուցանեն :

Օ արարածս , ասեն , մեծացուցանեն . քանզի չու-
նին յանձնէ զմեծուին . բայց զորդի՝ չէ պարտ մեծա-
ցուցանել , աւելի քան որպէս ինչ իցէն , ընդ չափ
իմմ հանել զպատիւն . որպէս թէ ողորմել իշխանու-
թի ունիցին որդւոյ , մարդասիրութի ցուցանել ամ-
բարշտեն բանիւք . ամբարշտեն՝ զմիտմն բանիւքն
ֆիմանալով : Այս ես գիտեմ զ՞ մեծացեալ , ու
յաւելուածով ինչ բնութեն , այլ երկրսպազուաց ե-
րախտաւորութիք : Ու ուր երանելոյն Կաւիթի որ մե-
ծացուցանէ , օրհնեցից , ասէ , զանուն այ իմոյ օրհնու-
թիք , և մեծացուցից զնա գովութիք . ու եթէ 'ի փո-
քուէ մեծացուցանիցէ , այլ որ յանհաւատիցն փոքր
կարծէր , մեծացուցանէ զբարերարն . մեծ արարից
զնա գոհութիք : Պաւղոս մեծացուցանէ զկենարարն ,
եթէ կենօք և եթէ մահուամք՝ մեծասցի՝ Բ՛՛ ի մարմ-
նի իմում . ընդէր մեծացուցանէ , զի չգտանէ զւափն .
վասն էր մեծացուցանիցէ . քանզի չկարէ մարդկեղէն
լեզուաւ հասու լինել այնմ պատուայ . մեծացուցանէ՝
ու զբնութի փառաւորելոյն , այլ զօրհնութեցն ըզ-
բանսն . մեծացուցանէմ զ՞ որչափ ինչ կարող ի-
ցեմ , և ու եթէ լսու մեծուեն կարիցեմ բարբառել :

Որպէս մեծացուցանեն զած անձապաշտքն , նոյն պէս և բարձր առնեն , իւարձը առնեմ զքեղ անձ իմ և թագաւոր իմ . մի թէ 'ի խոնարհուէ 'ի բարձրութիւն ածիցեն : Խոկ արդ զի՞նչ իցէ բարձր արարից . փոխանակ ասելց , եթէ զբարձրութիւն քո քարոզեցից : Եշ քանզի չէ բաւական մարդկեղէն բընութիւն . հրաման տան անձեղէն զիրք , եթէ բարձր արարէք զտէր անձ մեր . քանզի ևս 'ի վեր քան զբարձրութիւն է , և չափի ձերով փառաւորութիւն բարձրութիւն : Ուստի և մտավարժք երեք մանկունքն , որք զշնոցն եկեղեցի գործեցին , և զսոցն 'ի ցող փռխեցին հաւատոցն զօրուք , զի ըստ կարին օրշնէին , և զաւելին քան զկարն թողուին . օրշնեցէք , ասեն , ամենայն գործք տն զտէր , օրշնեցէք և առաւելքարձր արարէք զնայաւիտեան : Վշամարեցան բաւական զբարձրն առնել , այլ յառաւելքարձրն առնել դիմեցին . քանզի տեսանէին զմարդկեղէն տկարութիւն յանդիմանեալ յառաւել մեծութիւն : Եշ աստ զգուշութիւն իմն զգուշացեալ երից մանկանցն՝ ածեն յերկրպագութիւն զամենայն արարածն . քանզի զշրեշտակաց յուշ արարին , և զշրեշտակապետաց , և զզօրութիւն , և զջրոց , և զարեգակնէ , և զլուսնոյ , զգետոց և զաղթիւրաց , զերկրէ և զպտղոց . զծովէ և զկայտուոց , զթունոց և զանամնոց , ըզգազնաց և զսողնոց , և զմարդկանէ . յայնմ ամենայնի ոչ զորդւոյ ինչ յիշատակ 'ի մէջ բերին , և ոչ զհոգւոյն սցյ . քանզի ոչ 'ի կարդի երկրպագուացյն է որդի , այլ յերկրպագութիւն առնլոյ :

Իսյոյ թերեւս ասիցէ ոք , թէ զիա՞րդ կարէին ածել զորդի յերկրպագութիւն երեք մանկունքն , որ գիտէին խոկ ոչ զնա՝ թէ է որդի : Վեին տեղեակ . քանզի մարդարէքն ոչ ինչ յայտ յանդիման խօսէին զորդւոյ պատուոյն : Վ. յլ հոգւոյն սըյ քարոզէր նոքօք անունն . թէպէտ որդւոյ անունն օտար ինչ թուեր նոցա , այլ հոգւոյն յայտ յանդիման կայր + որպէս և լասայի ասէ , թէ նոքա հեստեցին և զայրացուցին զհոգին որ . և երանելին Դաւիթ , թէ մի ընկենուր զիս տէր յերեսաց քոց , և զհոգի քո որ մի հաներ յինէն : Տես զշաստատութիւն . ոչ եթէ

յետոյ եղեն քան զերիս մանկունսն Պաւիթ և Երա-
սայի . զի մի ոք ասիցէ , թէ յայնմ ժամանակի չեր
ինչ յայտնի , և յետոյ յայտնեցաւ . իշտ երեք ման-
կունքն յետոյ են քան զՊաւիթ և զՀասայի , ապա
ուրեմն տեղեակ էին զրոց մարգարէիցն , և գիտեին
զհոգին որբ քարոզեալ . իսկ ընդէր զայլ ամենայն ա-
րարած ածեն յերկրպագութի , և զհոգին չիշե-
ցին . զԾրեշտակս , զԾրեշտակապետս , զզօրութիս , և
զայլն մի ըստ միոջէ , և զհոգին չիշեցին : Պան-
զի տեսանեին զնա՝ ոչ ընդ արարած լծեալ , այլ
յայ երեեալ . քանզի և նոքա հոգւովն սրվ լուսա-
ւորեալք էին , և զօրութի հոգւոյն սրյ ամրացեալք
կոխեին զհուրն , որպէս զերկաթի ստոմ , կամ որ
'ի պողովատիկ զտիցի և միսեցի , ևս կարծրագոյն և
հատու լինիցի . նոյնպէս և յորժամ հոգւովն սրվ
միսեցին հոգիքն արգարոց , յայնժամ զհուրն առ ոչ
ինչ համարին , և զջուր , և զերկինս , և զերկիցն , և
զամենայն որ 'ի միջն կայց :

Վ Ա Յ Լ զի յայտ ածից զբանս , և մի տարապարտ
ինչ կարծիս համարիցին աշակերտքն հերծուածողաց,
'ի Պաւղոս ածից զբանն , որ համարի զարարու-
թի փրկիցն , զոր հերձուածողքն կամակորեն . քան-
զի զայն , թէ 'ի նորա ձեռն եղեւ , վեր 'ի վայր իմն
յելյեղեն , առ 'ի ցուցանելց այնու զնուազութիւն
ինչ որդւոյ . Պաւղոս 'ի միւսում վայրի չասէ՝ թէ 'ի
ձեռն նորա , այլ թէ նովաւ իսկ : Կովաւ , ասէ , հա-
տատեցաւ ամենայն՝ որ ինչ յերկինս , և որ ինչ
յերկրի : Ոիս դիր հաստատութե , որ ինչ յեր-
կինս , և որ ինչ յերկրի , զի մի 'ի կարծիս ինչ ածի-
ցէ զմեզ և 'ի զուր գայթագղանս , համարի զարա-
րածս , զի անարատ պահեսցէ զանարար բնութիւնն .
Վ Ա Մ Ե Ն Ա Յ Ն ինչ , ասէ , 'ի ձեռն նորա եղեւ , եթէ աթոռք ,
եթէ տերութիք , եթէ իշխանութիք . և դարձեալ
թէ նովաւ հաստատեցաւ ամենայն : Ո՞ր ամենայն .
Վ Ա Թ Ո Ր Ք , իշխանութիք , տերութիք , պետութիւնք ,
ամենայն ինչ 'ի ձեռն նորա և 'ի նոյն հաստատեցաւ .
և ոչ միայն 'ի ձեռն նորա , և 'ի նոյն , այլ նովաւ և
'ի նոյն . և նա է յառաջ քան զամենայն . և ամենայն
նովաւ հաստատեցաւ :

Եշտ ընդէր եթող զայլ ևս արարածման, և չասաց՝
թէ արեգակն և լուսին, թէ երկինք, թէ երկիր, թէ
աստեղք, թէ այլ ամենայն : Վանդի երևելիքս
յայտնի իսկ են, թէ զարարածոցն կարգ ունեին,
վասն այնորիկ զայտնին թողու. և զի յաներեսոյթման
երկրպագուաց կարգք են . և անարար բնութին՝ որ
զերկրպագութիւնն առնու, հարկ համարի թուել
զամենայն որ 'ի վերոյ քան զերկինս իցեն . զի զեր-
ծուցանիցէ զշոգին որ 'ի հայհոյութէ, և չտայցէ ու-
րախ լինել հերձուածողացն : Վամենայն ինչ, ասէ, 'ի
ձեռն նորա եղեւ . եթէ աթոռք, եթէ պետութիք,
եթէ իշխանութիք, եթէ տէրութիք . և չասաց, թէ
հոգին ոք :

Եշտ արդ ասասցեն, թէ ուստի եկին յայն հեր-
ձուածողքն, քանդի չգանդաղեցան և զմերով տկա-
րութիւս հեղուլ հայհոյուհի, և լնուլ զամենայն քա-
զաքս, որպէս թէ եկեղեցի երիս ամենակալս քարո-
զիցէ : Շայց ես կամէի վերստին հաւանեցուցանել
զնոսա, մի մեզ մեղագիր լինել, այլ մարգարեիցն :
Եթէ վիմոց ինչ մտաց քանս 'ի մէջ բերէի, և նո-
րաձես ինչ ընդդէմ ճշմարտութեանն ձեւէի, ապա
յիրաւի բամբասէին . իսկ եթէ զմարգարեիցն զբանս
երկրորդեմք, զբարտութի ոչ զմեօք անկանի՝ որ
մեկնեմքս, այլ զնոքօք՝ որ զկրօնս կարգեցին : Վա-
ցաք, ոչ որպէս հայհոյեցինն, այլ որպէս հաւատամք :
Եկեղեցի ոչ երիս ամենակալս գիտէ, այլ մի զօրու-
թի՝ որ զամենայն ունի : Ճշմարտութիւս ամենակա-
լութի 'ի հայր և յորդի և 'ի հոգի ոք ճանապի : Որ
ասիցէ երիս ածո՞ ուրոյն 'ի միմեանց, նզովեալ լիցի .
և որ ոչ գաւանեսցէ մի ամենակալ զերրորդութին,
նզովեալ լիցի :

Շայց մի օտարոտի և նոր ինչ զբանն համարես-
ցիս, յորժամ տեսանիցես հայհոյուհի հեղեալ զճշ-
մարտութիւն, զմոնաւ ած զառաջին սրմն : Ոտեփան
նոս ետես զերկինս բացեալ և զփրկին ընդ աջմէ
այ . զոր ետեսն քարոզեաց, և հայհոյութէ կարծիս
առ՝ վասն քարոզութեն : Իբրև հնչեաց սրն և մե-
ծաբարբառ փողն, թէ տեսանեմ զերկինս բացեալ
և զորդի մարդոյ՝ զի կայր ընդ աջմէ այ, չկալան

Հրեայքն ժոյժ ճշմարտութեն + այլ խցին զականջա, որպէս թէ հայհոյութիւն պատմեսցի, և ոչ ճշմարտութի քարոզեսցի: Այւ արդ մի ինչ նոր և օտարութի համարեսցիս, եթէ ճշմարիտ բանն հայհոյութի կարծիցի: Քանզի սովոր է չարութին զիւրն զառաքինութին արկանել: Իշխէ մեք ինչ Ճոխացաք, դատելոց եմք ընդ Ճոխութեն. եթէ մեք նորաձե ինչ ձեացաք, համարս տալոց եմք ընդ նորաձե ձեանալոյն. եթէ մարգարեիցին բանք պատմին, մեր զինչ վնաս իցէ: Վայսպէս ասէ տէր ամենակալ, ահաւասիկ ես եկից և բնակեցայց 'ի միջն քո՞ ասէ տէր, և ապաւինեսցին 'ի քեզ ազգք բազումք, և ծանիջիք զի տէր ամենակալ առաքեաց զիս:

Օ՞ ի՞ խծրծես զմեր բանս, և լինծրծես զմարգարեիցն: Համարձակիմ ճշմարտութիւնը տալ վճիռ. ուր ճշմարտութի իցէ, անդ լիք ուրեք երկիւղ. ուր հաւատք իցեն, չհասանէ զանգիտել. ուր հաւատք են, անդ զօրութի է. և ուր անհաւատութի, զանգիտանք: Կենարարն ասաց ցաշակերտսն, թէ ընդէր վատասիրտք էք, և չունիք հաւատս: Ծեսանեն, ուր անհաւատութիւն է, վատասրտութիւն է. և ուր հաւատք, զօրութիւն: Ոտեփաննոս, ասէ, լի հաւատովք և զօրութիւնը առներ նշանս մեծամեծս 'ի մէջ ժողովրդեանն. և զՊ բրահամէ ասէ Պաւղոս, թէ չերկմոեաց անհաւատութիւն, այլ զօրացաւ հաւատովք: Համարձակիմ և ես ասել, թէ որ¹ անուն հօր է, նոյն և որդւոյ. օրհնեալ, ասէ, որ գալոցն է անուամբ տն. և կենարարն, թէ ես եկի անուամբ հօր իմոյ:

Կյնզրեսցուք, թէ զինչ անուն հօր իցէ: Վնուն հօր՝ զանձն և զտէր քարոզեն գիրք. այս է անուն իմ: Ոիս դիր հաստատութիւնը. ես եմ, ասէ, տէր անձ, այս է անուն իմ. եթէ տէրն և անձ անուն հօր իցէ, և գտանիցեմ զնոյն անուն և որդւոյ, ոչ ապաքէն յայտ է, թէ որդի տէր և անձ է: (Ծրհնեալ ասէ, որ գալոցն է յանուն տն. տէր անձ մեր երկեցաւ մեզ, օրհնեալ եկեալ յանուն տն: Ուստի և երանելոյն

Ուսումայի տեսեալ, թէ որ անուն հօր է, նոյն և որդւոյ, որ զփորձ իսկ յարութեն առ, մրծածայն աղաղակէ, թէ տէր իմ և ած իմ:

Տեսցնէք, թէ և այլ ինչ անուն ունիցի՞ ած, և չի ցէ՞ այնմ հաղորդակից որդի: Ծանիցեն ասէ, զի անուն քո տէր է: Վ. յլ յորժամ ասեմ հաղորդակից, ոչ եթէ ըստ շնորհաց ինչ ասիցեմ, այլ ըստ բնուեն հաղորդուե: Դաւիթ ասէ, ծանիցեն, զի անուն քո տէր է, և դու միայն բարձրեալ ես 'ի վերայ ամենայն երկրի. և առաքեալ, թէ մեր մի է տէր ՀՅԱ ՎՅԱ. և մին, և միայնոյն՝ նոյն զօրուի է: Հերձուածողն զած անուն հօր տայ, և զտէրն որդւոյ: Որովհետեւ զտէրն որդւոյ ետուր, և մարդարէն ասէ, ծանիցեն զի անուն քո տէր է. և դու միայն բարձրեալ ես 'ի վերայ ամենայն երկրի, իշխեցես ասել, թէ մի է տէր, և բարձրեալ միայն ՀՅԱ իցէ, և ոչ հայր: Ո՞մտ դիր, զիա՞րդ իշխեցես ասել թէ մի է տէր ՀՅԱ, յորժամ լոիցես 'ի մարդարէէն, թէ անուն քո տէր է, և դու միայն բարձրեալ. եթէ զհօրէ միայն իմանայցես զայն, կարիցեն ուրանալ՝ թէ ՀՅԱ չէ տէր. և եթէ զորդւոյ, դարձեալ միթէ կարիցեն իմանալ՝ թէ հայր չէ տէր: Վաւ և մի լիցի: Վ. յլ եղիցի միաբանեալ բանիցդ քոց այդրէն ընդ միտսդ, և մի բանիւք տէր կոչեցյես, և մոտօք ծառայ համարեցես:

Վսիցես տէր զհայր: Վ. յմ ասէ: Կոչեցյես տէր և զորդի: Վ. յմ ասէ: Եւ զիա՞րդ անդ միայն տէր և բարձրեալ ասես, և աստ մի տէր. հարկ է այնուշետեւ չառնել համար, այլ հաւատալ: Եւ թէ ասիցեմ ած զհայր, և ած զորդի, և ած զհոգին ոք, երեքածեան կոչես զիս: Եւ եթէ ասիցէ նա տէր զհայր, տէր զորդի, զիա՞րդ կոչեցուք զնա, մի թէ երկտիրեան արդեօք: Ո՞մտ դիր. երկուս տեարաժարիս ասել, թէպէտ և ոչ բանիւք, սակայն մտօք այնպէս: Համարիս. քանզի այլ տէրութի զհօրէ ասես, և այլ տէրութի զորդւոյ. մին արձակ իշխանութիւն, և միւմն հնազանդ տէրութեամբն հօր: Ծաէ այնպէս իցէ, չէ այնուշետեւ մի տէր, և ոչ մի պատիւ և մի բնութի է տէրութեն: Չմարթի մի տէր ասել զերկոսին, թէ այլ ազգ տէր հայր իցէ,

և այլ ազգ տէր որդի : Օ արմանամ, թէ զիա՞րդ կարիցէք ծառայել բաժանեալ տէրուեն . ուր տէր ինքնին իսկ ասէ, թէ ոչ կարէք ծառայել երկուց տէրանց : Իսայ որ ինչ յառաջիկայն է՝ երթիցուք : Տէր և ած է հայրը, տէր և ած է որդի . որպէս և ցուցաւ իսկ, թէ ծանիցէն զի անուն քո տէր է, և մի է տէր ՀՅ ՎՐ : Ծեսցուք, թէ և այլ ինչ անուն զըտանիցեմք այ 'ի գիրս :

Մոէ երանելին Ոովսէս, եթէ ասիցենցիս որդիքն խարայէլի, զի՞նչ անուն է այնորիկ՝ որ առաքեացն զքեզ, զի՞նչ ասացից : Ծես և աստ զօրհնեալն որ գալոցն է յանուն ոտն : Ոիտ դիր, զիա՞րդ տայ զձըշմարիտ նշանան . ասասջիր, եթէ Որ էն առաքեաց զիս : Ժնէ այնպէս իցէ՝ անուն հօր էն է : Ծեսցուք, թէ ցունիցի որդի և զնոյն անուն, ապա 'ի զուր է մեր ջատագովս լինել, Որ էն, ասէ, առաքեաց զիս : Օ ինչ խօսիս առաքեալդ, էն՝ զո՞ իմանայցեմ, զհայր, թէ զորդի : Իսաղում անմտութք լի ես 'ի հարցանելդ՝ զհայրդ թէ զոր դին . բաժանես զպատիւն, չճանաչես զհանգիտապատիւ զուգականութին : Օ ո՞ կամիցիս կոչել էն . Օ որ զիրքն ասացին, զոր են քարոզեցի : Ոովսէս զհօրէն ասէ զէն, և ես զորդւոյ ասեմ զէն . տրտմութին է ինձ և անպակաս ցաւք սրտի իմոյ վասն եզբարցն իմոց և ազգատոհմի իմոյ ըստ մարմայ, որ խարայէլացիքն են . որոց որդէգրութին և օրէնսդրութին, և պաշտօնն և կտակարանքն և աւետիքն . որոց հարքն, յորոց և ՎՐ ըստ մարմնոյ՝ որ է 'ի վերայ ամենայնի ած օրհնեալ յաւիտեան : Ծեսանես զանուն հօր և զանուն որդւոյ՝ բանիւք և արդեամբք միմեանց միաբան : Որ էն առաքեաց զիս : Որ էն 'ի վերայ ամենայնի ած օրհնեալ յաւիտեանս : Ո՞ի թէ բռնազրօսեալ ինչ իցէ բանն, և ոչ արդեամբք իսկ վկայեալ . ընդէ՞ր զըսպարտես զմեր լեզուս, և արհամարհէս զմարդարէիցն ըզփառուս :

Ծեսցուք և այլ ինչ անուն . բանզի ոչ վայրապար ասացեալ զօրհնեալն որ գալոցն է յանուն ոտն : Այլ ամենայն անուն որ հօր է, նոյն է և որդւոյ : Խըանելին Խսայի ասէ ցժողովուրդն, թէ թողեր զտէր

ած փրկիչ քո, և զտեր օգնական քո ու յիշեցեր .
վասն այնորիկ անկեսցես տունկ անհաւատ, և սերմ
անհաւատ . զի թողեր զած փրկիչ քո : Անուն այ
փրկիչ է, անուն այ օգնական է . և արդ տեսցուք
թէ ցիցէ և որդի փրկիչ : Ա մւր հրեշտակացն, որ
օրհնէին և տային աւետիս հովուացն . աւետիս
տամբ ձեզ, ասեն, զուրախուե մեծի, զի ծնաւ ձեզ
այսօր փրկիչ, որ է տեր օծեալ: Ձատղեր, ասէ, զած
փրկիչ քո, և զտեր օգնական քո ու յիշեցեր : Եշ
ուր գտանիցես զորդի օգնական կոչեցեալ: Եկն ա-
սէ այր մի, և ած առ նա զորդի իւր դիւահար . և
ասէ, վարդապետ բարերար, մատուցի զորդի իմ
առ աշակերտոն քո, և չկարացին բժշկել . և փրկին
ասէ, քանի ժամանակք են . ու զի ինքն ուսանիցի,
այլ զի որ մօտն կային՝ ուսանիցին, թէ զքանի ժա-
մանակաց ախտ 'ի բաց պարզէ, և օգտեսցին : 'ի
մանկութէ ասէ . բազում անգամ 'ի հուր արկանէ
զդա և 'ի ջուր . և ասացի ցաշակերտոն քո, և չկա-
րացին բժշկել . այլ թէ հնար ինչ է, օգնեա մեզ:
Ո՞մ դիր հաստատութք. զմատչելն ընկալաւ, բայց
զերկմիտ մոտօք մատչելն խոտեաց : Հած ոք ասիցէ,
թէ հնար ինչ է, ցյարի այն յած . այլ միւսն, թէ
յամենայնի հնար դոյ այ : Եշ քանզի մատեաւ առ
նա իբրև առ մարգարէ, կամ իբրև առաքեալ, որ
մասնաւոր ինչ զօրութի ունիցի, և իցէ ինչ զոր կա-
րիցէ առնել, և իցէ ինչ զոր չկարիցէ առնել, ապա
և փրկին ծաղը առնէ զանխրատութի նորա, մանա-
ւանդ թէ խրատէ խակ զտիմար միտս նորա, զի ա-
սաց թէ կարող ես . և լուռքն տանջէ զստահակու-
թին: Ամենայնի, ասէ, հնար դոյ այնմ որ հաւատայ:
Քանս՝ ինչ յայտ չառնէ, բայց որ մօտն կայր՝ իմա-
ցաւ յերեսացն զցասումն: Իբրև ետես՝ եթէ մե-
ղադիր լինի կենարարն, և երեսօքն յայտ առնէ
զցասումն, զինչ բողոք հարեալ աղաղակեաց՝ որ
յանցեաւն . հաւատամ, ասէ, տեր, օգնեա ան-
հաւատութես իմոյ . փոխանակ ասելցյն, թէ յան-
ցեայ, չէի հմուտ զօրութէդ, լցո զթերութիս, օգ-
նեա անհաւատութես . քանզի անհաւատութեան էր
ասելն, թէ կարող ես օգնեա: Այլ հայր դիւահա-

ըին զղջացաւ, և հերձուածողք մոլորեալք ոչ զղջանան, որք բազում անդամ յաղօթս կոչեն զորդի:

Ո՞չ անմառութեն: Գրեսաջիր թէ հանգիտապատիւ այ վիմանայցես զորդի, և ոչ զհոդի՝ որդւոյ, մարդարեիցն հանգիտապատիւ շառնիցես. վիցէ լուեալ զբանն Խղիայի մարդարեի, եթէ այր այ խցեմ, ասէ, իջցէ հուր, և կերիցէ զյիսնապետդ և զյիսունդ: Ո՞արդարէն Ճոխութք հրամայէ, և տէր մարդարեիցն աղօթս առնիցէ. Խղիա իշխանութք հրամայէ արարածոց՝ որոց չէր տէր, այլ վասն զի համարձակութի ածպաշտութեն ունիէր. և անդ էր տեսանել մարդ մսեղէն, զի փայլատականց հրոյ հրաման տայր, և հուր ՚ի վերայ հակառակորդացն իջուցանէր: Խւ այլ ուր նոյն երանելին Խղիա ասէ ցաշակերտն, խնդրեալ ինչ յինէն՝ մինչև համբարձեալ իցեմ: Ո՞արդարէքն Ճոխութք հրամայէն ըստ հաւատոցն զօրութեն, և զտէր մարդարեիցն ՚ի հնաղանդութիւն կոչես, և զքեզ հաղորդ աղօթիցն համարիս: Խւ ոչ Քեսու անուանակից ոն պատկառեցուցանէ զքեզ, որ առանց աղօթից կացոյց զարեգակն. միթէ ասաց ցտէր, կացն զարեգակն. այլ Ճոխութք, թէ կացցէ արեգակն: Ծառայն այնչափ կարող եղէ, մանաւանդ թէ անուն իսկ տէրունական. ոչ եթէ ՚ի նմանէ ինչ ակնածեաց, այլ յարքունական անուանէն. և բուն իսկ Ճշմարտութիւնն ըդործիցէ բարերարութի Ճոխութք, այլ բարեխօն մինիցի: Ի՞այց որ ինչ առաջի կայ՝ յայն երթիցուք:

Կնուն հօր՝ էն է, և անուն որդւոյ՝ էն. անուն հօր՝ օգնական է, և անուն որդւոյ՝ օգնական. անուն հօր ամենակալ է, և անուն որդւոյ՝ ամենակալ: Խթէ վՃիւ ինչ տալով ասեմ, մի ընդունիր. և եթէ յայտ առնելով, մի ստունդանէր: Տես զինչ կրեսցես, եթէ զոր ես ասեմ ստունդանիցես. զմարդարէն թշնամանես, յայ ուրանաս. եթէ զմարդարէն թշնամանես, և ես յառաջ մատուցեալ յամբարշտութի անկանիցիս. եթէ իմ ինչ զբանս համարեսցիս, զոր մարդարէքն խօսեցան, ոչ զիս որ

մեկնեմս՝ թշնամինես, այլ զմարգարէիցն բարբառս, և զայ ազգեցութին։ Չգիտիցես, եթէ իւր համարի ած զմարգարէիցն թշնամանս։ յորժամ արհամարհեցաւ Ամունէլ՝ ՚ի ժողովրդէնէն, զի՞նչ ասաց ած։ ոչ զքեզ արհամարհեցին, ասէ, այլ զիս։ ՚ըւ զի յայտ արասցէ, թէ որ վարդպետի և մարգարէի ոչ լսէ, այ լսէ, ասէ ցիզեկիէլ։ որդի մարգոյ, երթառ տուն դառնացողացն, և խօսեսցիս ընդ նոսա, և լսիցեն քեզ, քանզի ոչ կամին լսել ինձ։ եթէ քեզ լսեն, ապա և ինձ լսեն։ և եթէ ինձ, և քեզ։

՚ըւ զի ամենակալ կոյն որդի, ցուցաւ իսկ։ բայց և միւս ևս մարգարէ վկայէ։ որ շնսէ յերկինս զելս իւր, և զաւետիս իւր յերկրի հաստատէ, տէր ամենակալ անուն է նորա։ ՚ըւ ովլ իցէ որ շնեաց յերկինս զելսն, և հաստատեաց յերկրի զաւետիսն, և թէ ոչ ասաց ցաշակերտսն՝ ՚ի վերանալս, եթէ ընդ ձեզ եմ մինչև ՚ի վախճան աշխարհի։ ՚նդ ահաւասիկ եկից՝ ասէ տէր ամենակալ, և բնակեցայց ՚ի միջի ձերում։ Օ ի՞նչ իցէ բնակեցայցն։ ՚նետարանին մեկնէ, թէ բանն մարմին եղե, և բնակեաց ՚ի մեզ։ և ապաւինեսցին ազգ բազում ՚ի տէր, և ծանիթիք զի տէր ամենակալ առաքեաց զիս։ ՚նըր, ասեն, զրեալ է, թէ որդի ամենակալ է։ ՚նըր զրեալ իցէ, եթէ հայր ամենակալ է։ ՚նանս պահանջես, բանս պահանջեմ։ զօրութի ժողովես, զօրութի գումարեմ։ խօսեաց ՚ի մարգարէից, ընդալ ՚ի մարգարէից։ քննեցէր զգիրս, ասէ, փրկին։ ցիք ինչ որ զյայտնի ինչ քննէ, այլ զծածուկն։ քննեցէք, ասէ, զգիրս։

Տես, զիածդ կերպարանօք միոյ իշխանութե՛ ՚ըրըորդութին քարոզի։ ՚ ուր այ, որ ասէ, այսպէս ասէ տէր ՚ի վերայ մարգարէիցն՝ որ մոլորեցուցանեն զժողովուրդն։ ՚իտ դիր հաստատութե՛։ որ խաձատեն ատամամբք իւրեանց զբարոզմն, բերանօք իւրեանց խօսին զիսաղաղութիւն, և ոչ տուաւ խաղաղութիւն ՚ի բերանս նոցա։ զի ոչ ոք իցէ որ լսիցէ ՚ի սուտ մարգարէիցն։ բայց ես ասէ լցայց։

լցայց զօրութք հոգւով տն։ Օ այն կամ ընդամենաւատան, կամ ջնջեանի մոտաց. քանզի զգիրս կենդանիս ոչ կարես ջնջել։ Օ ի ոչ ոք իցէ, ասէ, ոք լսիցէ սուտ մարգարեից. բայց ես լցայց զօրութք հոգւով տն։ չկարէ ասել, թէ իմով հոգւովս, այլ թէ ես լցայց զօրութք հոգւով տն։ Ո՞ բարբառի զայս, մեկնեա ինձ զբանս, զի իմացայց զմիտս զօրութքն։ Եւ ՚ի միւսում վայրի՝ ասէ ած, թէ ոչ ևս յաւելից ողորմել տանն Խարայէլի, այլ յանդիման կացից նոցա հակառակութք։ բայց որդւոցն Յուդայով ողորմեցայց, և փրկեցից զնոսա տերամբ առվ իւրեանց։ Եւ քե ոչ փրկեսցես, այլ այլով առվ։ Չառնուն ՚ի միտ հերձուածողքն, թէ մարգարեիցն բանքն զեղձեալ են. զի թէ մերկ՝ քարոզէր, այն չեր մարգարեութի, այլ քարոզութի. չեր մարգարեութի, այլ աւետարան. որ ինչ յայտնի է, աւետարան է. և որ ինչ խարուրեալ, մարգարեութի։ Եւ դու ասէ ՚Իանիիշ՝ կնքեալ զբանս տեսլեանս այսորիկ. փոխանակ ասելց, թէ անյայտութք ծածկեալ. ոչ եթէ զգիրս ծածկեալ, որ մինչև ցայսօր ընթեռնուն, այլ զմիտս բանիցն։ Կնքեցան բանք մարգարեիցն, և մեկնին աւետարանաւ։

՚Իարձեալ ասէ ած ցժողովուրդն, թէ զինչ արարից ընդ ձեզ, զմրատ ոչ ընկալարուք. կոտորեցի զմարգարէս ձեր սրով բերանոյ իմոյ, սակայն և այն պէս ոչ լուարուք ինձ. կործանեցի զձեզ՝ որպէս կործանեաց ած զլոդոմ և զլոդոմ և զլոդոմ, Եւ ընդէլը չափեցս, թէ որպէս կործանեցի զլոդոմ և զլոդոմ, այլ թէ որպէս կործանեաց ած. դու արդեօք այլում նմանեցեր. կործանեցի զձեզ ասէ, որպէս կործանեաց ած զլոդոմ և զլոդոմ. սակայն և այնպէս ոչ հաւատացէք ինձ։ Տեսանես ծածկեալ զզօրութիւնն, մանաւանդ թէ յայտ յանդիման իսկ լուսաւորեաց. տեսանես զզօրութի ածպաշտուեն համարձակեալ։

Եւ արդ ընդէլը մեղադիր ասողին լինիցիս, որ մենակալ զհայր և զորդի և զորդին ասիցէ. զոր

օրինակ յորժամ ասիցեմ, ած և ած և ած, ոչ երիս ածս ասեմ, այլ մի. նոյնպէս յորժամ ասիցեմ, ամենակալ և ամենակալ և ամենակալ, ոչ երիս ամենակալս ասեմ, այլ մի: Պատկառեցուսցէ զբեզ բարբառ փրկչին, որ ասէր ցհրեայսն, յօրէնս ձեր զբեալ է, թէ յերկուց մարդոց վկայութիւն հաւատարիմ է. յորժամ մարդ է, մարդ ասէ, հաւատայք. և յորժամ ած, և ած ասէ, հաւատայք, Շայց սակայն թէ և ասէ, ես և հայր, ոչ երկուս ածս ուրոյն 'ի միմեանց ասէ, այլ մի ածութիւն իւր և հօր. և յայտ միւսովն առնէ, թէ ես և հայր իմ մի եմք. և քանզի մի վասն անքակունն ասէ. և զեմքն, զի մի որ անանձնաւոր՝ զերեմն համարեսցի:

Խնայեսցուք և զընդասցուք 'ի հոգիս մեր. թուք 'ի բաց զթոյնսդ, ջնջեա զժանդն, 'ի բաց քերեա զպղնձն, հնազանդ լեր այ, որում և դեք հնազանդ ելեն: Պատկառեցուսցէն զբեզ փոփոխմունք իւրացն. մի յեկեղեցովն հաւատացեալ, և արտաքս ելեալ՝ հերետիկոս լինիցիս. մի աստ ակնածող 'ի բանէն, և արտաքս ելեալ՝ յանասնութիւն զառածանիցիս լիգի թեթև՝ 'ի փոփոխմունս չկայ յակաստանի, չառնի հաստատուն. ոգի երկեղածին անցանէ ընդ փոփոխմունս, բայց ինքն ոչ փոփոխի. ածապաշն՝ և 'ի պատերազմի ածապաշտ է, և 'ի սովորահատակեալ, և 'ի լիուէ չյուլացեալ. ածապաշն՝ ամենայնի ժուժկալ և համբերող. չփոփոխի ըստ բնութեն փոփոխմանցն: լիգի արդարոյ ոչ 'ի խռովութեց պատերազմաց շարժի, և ոչ 'ի յդփութենէ դիւրութեց ծուլանայ. յորժամ ուղիղ փառաւորութ քարոզեսցի, փոյթ լսող գտանի. և առ կամակարսն՝ փոյթ կամակոր. ըբաժանի 'ի միաբանութենէ, չունի միտս երկմիտ:

Ո՞ի է տէր ած, եկայք երթիցուք զհետ նորա. աղա եթէ զմոլորութեն զհետ երթայցես, մոլորութեն հասանես: Օ որ օրինակ գինի աղնիւ չվնասի 'ի փոփոխմանց, թէպէտ և յամանոյ յաման փոխեսցես՝ նոյն համ է և նոյն սեռնութիւն. իսկ յոռին վաղվաղակի

յանդիմանի 'ի փոփոխմանցն : Կոյսպէս և ողի երկեզածին չափաբարտի 'ի փոփոխմանցն , այլ յաղթէ փոփոխմանն . իսկ ծանծաղագոյն վաղվաղակ յանդիմանի : Եւ չէ իմ բանս , այլ երանելոյն Երեմիայ մարդարէի , որ ընդ ազգին մովաբացւոց գոռայր . քանզի առ ժամանակ մի 'ի դիւրութեն էին , և կարծէին թէ ցանկ 'ի դիւրութեն վայելեսցէն , և ոտնհար լինէին զերուեն Երուսաղմէմի , նախատէ զնոսա մարդարէն , թէ մի պարձիք 'ի դիւրուեդ , և մի 'ի յաջողութիւն իրացդ հպարտանայք . քանզի չեւ ևս փոփոխեցայք . փոխեսցի և ձեր փոփոխումն : Ուեւ ևս գործ 'ի ձեռն արար , զի ընտրեսցին կամքն : Եւ զի՞նչ ասէ , հանգեաւ Ո՞վաբը 'ի մանկութէ իւրմէ , և փոփոխումն ընկալաւ դժպհութիւն իրաց . հանգեաւ Ո՞վաբ 'ի մանկութ իւրմէ , և պանձացաւ 'ի փառս իւր , չթափեաց երբէք աման յամանոյ . փոխանակ ասելոյ , չողաւ երբէք 'ի գերութիւն , վասն այնորիկ ճաշակ նորա 'ի նմա , և հոտ նորա 'ի նմին : Պարտէ եղբարը և զօրինակն 'ի մէջ քերել ածեղէն վարդապետութեն կնքեաւ զրոց սրբոց . զի՞նչ նման է ասել զածութիւն զինոյ . այլ զի մարգարէին վարդապետութիւն՝ անվլիւալ փրկութիւն է . հանգեաւ , ասէ , Ո՞վաբ 'ի մանկութ իւրմէ , և պանձացաւ 'ի փառս իւր , չթափեաց աման յամանոյ , չողաւ երբէք 'ի գերութիւն . վասն այնորիկ համ նորա 'ի նմա , և հոտ նորա 'ի նմին : Եկեղեցի փորձեցաւ չարութիւն , թափեցաւ յամանոյ աման . 'ի խաղաղութէ 'ի պատերազմ , և 'ի պատերազմէ 'ի խաղաղութիւն . և կաց մնաց 'ի նմա հոտ անուշից . հոտ անոյշ եմք , ասէ , 'ի Ք՞ն:

Օ այս ամենայն ճառեցի , և գիտեմ զի երկայնեցի զբանս . այլ պարտ էր ինձ որ զրպարտեցայս , զիրաւունս անձին ցուցանել . քանզի այսպիսի զրպարտութիւն յամենայն եկեղեցիս տարածեցաւ . թէ մի ոք յոռի խօսեցաւ , այլ ամենեքեան իսկ ընդ գրսովութիւն : Ի՞նդ իմ և ընդ ամենայն եկեղեցւոց արարի պատասխանի , թէ եկեղեցի՝ մի տէր ունի , և մի ած , մի արարիւ , և մի ամենակալ և մի թափառութամբ : Բայց յորժամ զմին լսես , զանքակ Երրորդու-

թին ած զմուաւ, զանվախճան և զանեղծ թագաւոռութին, զփառս և զչշմարտուի. և ոչ երբէք բաժանի, այլ կայ և մնայ մշտնջենաւոր և կենարար. յորում լիցի ամենեցուն մեզ վայելել չշմարտուք, և փառս տալ հօր և որդւոյ և հոգւոյն սեյ, այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից . ամէն.

ՃԱՌԻ ՀԻՆ ԳԵ ԲՈՐԴԻ

ԵՐԱՆԵԼԾՅԻ Սերերիանոսի խոռք վասն Զատկի, Կաթարոսաց՝
որ կոչվն Անարտոք. և վասն խոհակերպ:

ԵՐԲԵՄՆ յորժամ նախամեծարքն արարին
չնորհքն այլ զանձապաշտ նուագսն հնչեին, ընդ ձեզ
էաք և մեք ամենեքին, 'ի բանին ճշմարտութեան
միաբանեալք, զնոյնս ուսանէաք, ընդ նոյնս ուրախ
լմնէաք, և 'ի նոսին վայելեաք: Այլք ոք յայնցանէ՝
որ զլաւն իմանայցեն, եթէ յանձին ինչ ուրախու-
թիւն առնուցու, այլ զամենայն 'ի փառս այլ: Որ
միաբանէ ընդ ասողին, ընդ տուողին հաղորդէ. զի
գովելսվ զասողն, այնմ երկիրպագանէ՝ որ քարո-
զին: Եշ զայս մեզ հայր՝ որ, 'ի նախանձէ բարք ու-
սուցին, մմնաւանդ հօրս՝ որ գլուխ է ամենայն հարց,
և 'ի պատուական աթոռն 'ի վերոյ քան զամենե-
սեան նստի, և յստակ և որ միտս ունի 'ի խանտաւո-
րութէ: Որ ինքն իսկ նախ զհոգեոր արուեստական
բարբառն յօրինէ, և յականջս ամենեցուն նուա-
գեալ հնչէ, թէ ով առնոյր տայր զամենայն ժողո-
վուրդս այլ մարդարէս: այնպիսի ոզի՝ որ զիւր տէրն
փառաւորիցէ. որ զայլոց բանս և զլաւութիս՝ իւր
համարեսցի: Եշ թէ ոք զայլոց բանս աղարտիցէ, ոչ
սմա՝ որ առ զշնորհսն, այլ նմա՝ որ ետն, ընդդէմ
դառնայ: Եշ յերեսացն երեխն միտքն, և դու տես-
զհայրս հասարակաց, զիանդ զուարթ երեսօք և
քաղցրահայեաց աչօք նայի 'ի մեզ՝ որ ասեմքս, և
ձեզ որ լսէքդ: Հորժամ զերեսս ուրուք 'ի խոնարհ
արկեալ տեսանիցեն, 'ի միտ առ զմտացն նենգու-
թիւն. յորժամ գեմքն 'ի խոնարհ կախեսցին, զի-
տասջիր եթէ սիրան զնենգութի նիւթէ. որպէս և
դիրք ասեն, եթէ որ ակնարկէ ակամք, նիւթէ զնեն
դութիւն:

Վաս փառաւորի, աշխարհ լուսաւորի. և որոյ
շարիք 'ի մտի կան, սրտառուչ, լերդակեղ, 'ի խոր

խոցեալ նստի . և քանզի մեք հօր սբյ և յստակի նախանձուէ դիպեցաք , առանց նենգութեան ուսաք , և առանց նախանձու տացուք : Խւ արասցուք սկիզբն կարգին , զոր երէկն վարէաք՝ և թողաք վասն յահախութե ազգի ազգի մտացն , որ աստի անտի յորդին . և յօժարութի՝ ի մտի այն կայը , եթէ փոքր մի զսկիզբն աւետարանին մեկնեսցուք . և չգիտեմք զիարդ մերժեաց զմեղ անտի կռիւն՝ որ ընդ հերետիկոսն անկաւ՝ ի մէջ . ոչ յայլոց յայլ ճառս բանին ելանելով , այլ նմին , և նոյն մտաց ուշ առնելով . և Վ՞ա փառաւորի , և պատերազմն ընդ քսամարտսն յարդարի : Խոտեսցի ամենայն ախտն . ամաչեսցեն՝ որ այսօր զգայթագղանաց և զցնորական տօնն առնիցեն . անուն լոկ , յարդեանց ճշմարտութե թափուր :

Ի՞նդ հրեայն զատիկ առնեն , որոց զՎ՞ա զգեցեալ է . ընդ քսամարտսն հաղորդին քսազգեացքն : Վ՞ա զգեացս կոչեմ զնոսա վասն անուանն՝ զոր խոստանան , այլ զի՞նչ հաղորդութի՝ լուսոյ ընդ խաւարի կայցէ , կամ զի՞նչ միաբանուի հրէից ընդ Վ՞ոփի , կամ զի՞նչ հաւասարութի սեղանոյ Վ՞ոփի և խոհերական սեղանոյ հրէից . և որդիք ածապաշտութե ընդ շունս զատիկ առնեն . որոց պարտ եր ընդ հրեշտակս երգել զօրհնութիս , ընդ շունս ոռնան . ածապաշտուն ընդ հրեշտակս օրհնէ , խոստովան եղէց քեզ տէր բոլորով սրտիւ իմով , առաջի հրեշտակաց քոց սաղմոս ասացից քեզ . ածապաշտուն ընդ հրեշտակս փառաւորէ . և որ զկարգս եկեղեցւոյ եղծանէ , ընդ շունս առնէ զտօնն : Խւ զի չէ թշնամանաց բանս , այլ ճշմարտութե և յանդիմանելոյ , լուր Պաւղոսի՝ մեծի քարոզին , որ ասէ , զգոյշ լերուք ՚ի շանց , զգոյշ լերուք ՚ի չար մշակացն :

Որոց զերկնաւոր լապտերս առեալ ընդ հրեայս ճրագալոյց առնեն . որք զգառն այ ընկալան , և առնեն զատիկ , ընդ հրեայս ոչխարս զենուն : Վ՞ա անմտութեն : Խտուերն զՃշմարտութին կամի եղծանել . և որք զՃշմարտութին ընկալան՝ զհետ ստուերաց ընթանան : Ի՞նդէ՞ր լուցանիցես ճրագ ընդ հրեայս . ոչ ապաքէն զի շինանիցի անուն քո յաւե-

տարանէն : Որ ապստամբին ասպաննջական լինիցի , և ապստամբին թեկն ածիցէ , ընդ նմին զնոյն պատիժ կրեսցէ : Ի ուր Դաւթի . եթէ տեսանէիր ըզ գողս , ընթանայիր ընդ նոսա , և ընդ շունս դնէիր զբաժին քո : Դրանին թէ ընդ շունս , և մի ընդ քնա մարան . նութի և պունկութի՝ թէպէտ և աղտեղի և գարշելի անուանք և գործք են , և յաւիտենից տանջանացն վրիժապարտք , այլ 'ի մարդկանէ առմարդիկ են մեղքն , և 'ի ծառայից առ ծառայակիցս . բայց ընդ այ մեղանչել՝ անցանէ քան զամենայն մեղս . որպէս և այն յանցանք սաստիկ են , զոր ո՞ն ոք յանցանիցէ՝ քան թէ ծառայակիցին . նոյնպէս յորժամ ընդ այ ոք մարանչեցի , այն մեղք դաժան են քան զամենայն մեղս : Ընդէր լինիս զովող որդիդ ածպաշտութեան և այն յանցանք սաստիկ են , զոր ո՞ն ոք յանցանիցէ՝ քան թէ ծառայակիցին . նոյնպէս յորժամ ընդ ապատուհասիւ թագաւորի , և 'ի դիպահոց յարքունի երեսաց , մի թէ կամէիր ընդ նմա բարեկամութի խառնէլ . ոչ ապաքէն թէ և ունէիր իսկ բարեկամութի , և զայն ևս 'ի բաց քակէիր , զի 'ի պատժոցն ապրեսցիս :

Ծեսցուք , թէ յորժամ վայրի հրեայք կայցեն , և յորժամ պայմանի քրիստոնեայք : Ի ուր սբյ աւետարանին . որ հաւատայ , ասէ , յորդի , ընդունի ըզկեանսն յաւիտենականս . և որ անհնազանդ լինի որդւոյ , չտեսանէ զկեանս : Աենդանիք ընդ չկենդանիս տօն առնեն : Օ ինչ ինչ բարի իորհեցան հրեայք , զնը ածպաշտութե կարգ անեղծ պահեցին , զի 'ի նոցանէն կարեւոր հաստատութիւն յեկեղեցոյ գեղեցիկ կարգս յաւելուցուս . ըսես մարդարէին՝ որ ասէ , թէ դուք տունդ իսրայէլի զամենայն մանկութիս ձեր կամակորեցէք , և ստեցէք զճմարտութին . քանզի ուրացան զածպաշտութի , և վաճառեցին , քանզի չառին 'ի միտ : Իա՝ և զինին իսկ չպահեցին անարատ . ոչ առաջին իսկ ամբաստանութի այն է զնոցանէ յիսայեայ մարդարէէ . վաճառականք քո , ասէ , խառնեն ջուր ընդ դինի : Դրանին եթէ և այժմ հերձուածողքն ջուր ընդ զինի խառնէին , և ոչ զած ընդ արարածս . Ծես զըով իսկ ամբաստանութի մարդարէիցն զհրէիցն , զոր և

առաքեալքն յայտ յանդիման քարոզեն : | ուր մեծի
քարոզին՝ Պաւղոսի, որ գրէ առ թեսաղոնիկեցիսն.
ոչ կամիմ ասէ, եթէ անտեղեակ իցէք եղբարք, զի
և դուք զնոյն չարչարանս կրեցէք 'ի ձերոց ազգակա-
նաց, որպէս և եկեղեցին այ 'ի հրեից անտի . 'ի
հրեիցն՝ որք զտէր Յշ սպանին, և զիւրեանց մարդա-
րէսն և զմեղ հալածեցին, որ և այ յաշաց ելին, և
մարդկան հակառակ կացին : || Որք ընդ անշափ պա-
տուհասիւք են, նոցա հաղորդակից լինիս : | ու այն-
պիսիսն ասէ Խսայի, թէ այն է բաժին քո, և նոյն
վիճակ ժառանգութե քո :

Կամէի ուսանել 'ի նոցանին, թէ ընդէր իսկ բնաւ
զտօնն առնիցեն, վասն որոյ յուսոյ. որք զափաշխա-
րութիւն 'ի միջյ բառնան, զմէ պաշտիցեն զզուր և
զընդունայն և զանհանձարից պաշտօնն . անյոյս յա-
պաշխարութէ առնեն, որ քան զամենեսին կարօտ
են ապաշխարութե . կեզով վառեալք՝ և զբժիշկն
ուրանան : | նուն կաթարոսաց՝ առեալ շրջեցուցա-
նեն, որ է սրց . և ոչ մարմնով և ոչ մտօք ունին
սրբութի : Չիք ինչ որ այնպէս զայրացուցանէ զած,
և 'ի ցասումն ածէ, և պատժապարտ մեծաց տան-
ջանաց առնէ, որպէս յորժամ անձին ոք որ անուն
յորջորջիցէ . թէպէտ և յամենայն մեղաց որ իցէ,
պարտի զանձն 'ի մեղաւորաց կողմանէ հաշուել :
| ուր սընյն Յովլյաննու, որդեակք եթէ մեղանչեմք,
չեմք յայ . և դարձեալ, թէ որ զւարիս գործէ՛ չէ
յայ : Յորժամ ետ խրատ չմեղանչել ապա զՃշմա-
րիտն 'ի մէջ բերէ . որ ասացն, թէ որ մեղանչէ՛ չէ
յայ, խոնարհագոյն ևս իջեալ՝ ասէ նոյն . եթէ ա-
սեմք, եթէ ոչ մեղաք, ստեմք : | Եւ զգուշուե խրատ
ետ, և զընութին ոչ ուրացաւ . հայեցաւ 'ի վարդա-
պետութիւն Ճշմարտութեանն, ետես և զմուցն
զիւրամէտ ոտնառութիւնն : Խսկ այժմ թշնամիք
անձպատութեան տօնս առնեն, և հաւաստիս զոր-
ծոց պահանջեն . և յամենայն հաստատութենէ վրի-
պեալ են :

Կամէի և ես առ ձեզ՝ որ քնասէրքդ էք, յուզել

այնպիսի ինչ բանս, և ցուցանել թէ 'ի զուր է այն հակառակութի, ընդունայն կարծիք: Հորժամշեկեղեղւոյ կարգաց ոք 'ի բաց ելանէ, չկայ յակաստանի: այլ առ և գնաց առնէ զնա մոլորութիւնն, որպէս յորժամշորձանք գետոց՝ որ 'ի ծով մտանիցեն, Օ ինչ յայտ զատիկն և տօնն առնիցեն, զի՞նչ յաւուր տօնին կատարեսցի: ոչ ապաքէն Վահի չարչարանք և յարութի քարոզի: փրկութի աւետարանի աշխարհի, ամենայն հոգիք ածեղէն բանիւն լուսաւորին: Իշտ արդ զիարդ: 'ի միում աւուր 'ի տարւոջն միայն ունիմք զայն կնիք և զառհաւատչեայ ածպաշտութեն. և չիցէ յամենայն կիւրակէի զատիկ եկեղեցւոյ: մի թէ նոր ինչ պատարագ 'ի տօնին մատցիցի: մի թէ այն այլ զենումն իցէ, և այս այլ: մի թէ այլ վայելսութի խորհրդոց 'ի զատկի իցէ, և այլ 'ի կիւրակէի, և 'ի չորեքշարաթու, և յուրբաթու: Վանիցս անգամ և առնիցես զիիշատակս չարչարանայն Վահի, զատիկ առնես: Օ առաջին՝ միանգամ լինէր զենումն զառանց 'ի տարւոջն իսկ Վահի պատարագ հանապազ մատչի: Ա ամս որոց և կենարարին յայտ արարեալ, թէ խորհուրդն չծառայէ ժամանակաց և աւուրց, կամ ամսոց և տարեաց, ասէ ցաշակերտն: քանիցս անգամ և ուտիցէք զհացս զայս, և ըմպիցէք զքամակս զայս, զիմ մահ պատմեսջիք: Վարդ՝ ո առնիցէ զայն տօն: Որ զնոյն խորհուրդ կատարեսցէ, հանապազ զատիկ առնիցէ:

Իշտ եթէ հանապազ ասեն՝ խորհուրդն կատարին, զի՞նչ պէտք նոր տօնին իցէ: Վազում ինչ բազում անգամ տոււաւ յայ 'ի միսիթարութիւն մարդկեղէն բնութեն: և տկարութեն այսպիսի ինչ. հանապազ այլ խորհուրդն անշարժ և հաստատուն կայ, և սեղանն, և քահանայք, և պատարագք, և պաշտամունք, և ամենայն ինչ՝ որ յանուն նորա կատարի: Վայց քանզի ետես զմարդկան տկարութիւնս ած, և ընդ երկրաւոր իրս խառնեալ, և պէսպէս պղծութք խառնակեալ, կարգեաց այնմ հնարս սրբովը առաքելովքն՝ զտօնն զատկաց. զի որ զամենայն ժամանակս ընդ մեղս զգածեալ իցէն, և ընդ երկ-

բաւոր կարիս բեկուեալ, և զկամիցի նայել ընդ լոյս
ածպաշտութեն, գեթ անուամբ տօնին ակն ածիցէ,
և յիշատակաւ կենարար չարչարանացն պատրաս-
տեսցէ զանձն Ճաշակել 'ի սրբութեցն :

Տօնք վամն բազմաց 'ի մի վայր ժողովլելոյ են . այլ
սրց հանապազ տօնք են . Օ ի՞նչ իցէ տօնք սրց .
զած օրհնել . ապա ուրեմն որ հանապազ օրհնեսցէ՝
ցանկ տօնս առնէ . և լուր Դաւթի՛ որ ասէ , օրհնե-
ցից զտէր յամենայն ժամ , հանապազ օրհնութիւն
նորա 'ի բերան իմում : Որ ցանկ օրհնել՝ միշտ տօն
առնէ : Օ ատկացն , և կացրդիցն ¹ , և ամենաժո-
ղով տօնից անուն զբազմաց 'ի մի վայր ժումարելոյ
յայտ առնէ , առ զխաւարեալս լուսաւորելոյ , առ
զմնօրեեալս դարձուցանելոյ , առ զկամակոր զնացս
ուղղելոյ , առ 'ի զմեռեալս և զթաղեալս յարուցա-
նելոյ , և ամենեին ամենայնի շինած անդամոցն Քնի
լինելոյ : Այլ չեն ինչ զարմանք , որ յեկեղեցւոյն
ձեզքեցանն՝ զի և 'ի տօնին մեկնեսցին . զի թէ 'ի
մէնջ էին , ապա ընդ մեզ էին : Այլ ապականիչ տօնն
'ի հաւատացելոց յանդիմանեսցի . և մեր տօնն յիւ-
րում ժամանակի պայծառասցի . ոչ որպէս թէ ժա-
մանակաց չնորհքն ծառայեսցեն . զի ամենայն կարգք
և յօրինուածք յեկեղեցւոջ տնկեսցի : Եկեսցնկք այ-
սուհետեւ 'ի կարգ ճառին . բարբառեսցնկք և քարո-
զեսցնկք , ոչ իբրև անձանց ինչ զքարոզութին հա-
մարել այլ սրբ հօրս հարկանել զսպասաւորութիւն ,
և զդանդաղեալ զհայրենի բարբառոյն հասուսցուք
զպարտս : Օ այս ասեմ , զի մի ոք անտեղեակ իրացս ,
և մեզադիր լինիցի , եթէ զհայրենի վարդապետուեն
ժամանակս յանձինս ինչ կորզիցեմք . զի մեք որպէս
հրաման առնումք , զայն առնեմք , և ըստ հայրենի
կամաց զհետ երթամք 'ի հարկէ :

Երեկ մեզ եղսարք առաջի կայր սակաւ ինչ զսկըզ-
բան աւետարանին զածխօսութիւնն աւետարանել
և ճառել , և ցուցանել թէ զի՞նչ յայտ դիտաւո-
րութիւն մտաց բանիցն առնիցէ : Քոյնաննէս ասէ ,
թէ 'ի սկզբանէ էր բանն . և չասաց՝ թէ 'ի սկըզ-

¹ Յօրինակին իշտաբիչն :

բանէ էր որդի , կամ միաձին : Վմբացոյց զմիտս
լսօղաց , թէ գուցէ առ չկարութեան մոտաց ածա-
խօսութեն մարդկեղէն կարծեօքն ածեղէն ծնունդն
աղարտեսցի : Վանզի առ մեզ յորժամ ծննդեան
ձառք լինիցին , հօր և մօր կարծիք գան 'ի մէջ , և
մարմնոյ թանձրութի , և կարեաց պատճառք , թա-
քուցանէ նախ զորդւոյն անուն , և ընծայեցուցանէ
զբանին յորջորջումն , զի բանին յորջորջմամբ՝ զան
կարեկան ծնողին և ծննդեանն մ. նեսցէ : Եւ զի
դարձեալ վերստին կրկնեցից , բան կոչէ , զի ցուց-
ցէ՝ թէ չէ ընդ կարեօք ծնունդն :

Եւ առ ած էր , ասէ , զի զանբաժին պատուոյն
յայտ առնիցէ : Վաց , թէ առ ած էր , և ընծայե-
ցոյց՝ զի ած է . ապա և զարարութին 'ի մէջ բերէ ,
եթէ ամենայն ինչ նովաւ եղեւ . յանդիմանեսցի
զուր աշխատութի վիճողացն , որք 'ի ձեռն նորա և
նովաւ ասելոյն՝ նուազութի պատուոյ միաձնին կա-
մին կազմել :

Վ. Յ. թերեւս ասիցէ ոք . գրեսջիր թէ հերձուա-
ծողքն պահանջեցին , և չկարիցեն ասել , թէ զի՞նչ
'ի ձեռն նորայն իցէ , և զի՞նչ նովաւն . գու՝ որ եկեղե-
ցականդ ես , մեկնեա , զի՞նչ 'ի ձեռն նորայն իցէ , և զի՞նչ
նովաւ : Վ. Ծեղէն զիրք չարկանէն 'ի կիր զբանս ա-
րուեստականաց , և չճառայեն մարդկեղէն մոտաց
կազմածոյ . քանզի չեն արխատոտելական խրատք , և
ոչ պղատոնական խտիրք , այլ միամիտ հաւատք ան-
խարդախ և ամսխորամանկ , և լի բազում աղատու-
թեամբ : Չորժամ 'ի ձեռն նորա , և նովաւ , զայն
ասէ , թէ 'ի նմանէ , ամենայն ինչ 'ի ձեռն նորա .
զի՞նչ իցէ 'ի ձեռն նորա . այն իսկ է՝ թէ 'ի նմանէ :
Վագա եթէ կամեացին մեծ ինչ զառ 'ի նմանէն իմա-
նալ , և հօր միայն տալ զառ 'ի նմանէն իրքե զա-
ռաւել պատիւ ինչ , յանդիմանի զուր աշխատու-
թի . զի 'ի նմանէն՝ ոչ զարարիչն յայտ առնէ , այլ
զնիւթ և զատազձ ինչ յորմէ լինիցի . որպէս 'ի
ջրոյ ձուկն , և յերկրէ անասուն : Չորժամ ասէ , բըլ-
խեսցէն ջուրք , և հանցէ երկիր , մի թէ զջուրն և
զերկիր արարիչ կոչէ . և կամ յորժամ Պաւզոս ա-
սէ , թէ առաջին մարդն յերկրէ հողեղէն , մի թէ

արարիչ իցէ երկիր . և յորժամ ասէ , ոչ եղև այր
 'ի կնոջէ , այլ կին յառնէ , միթէ արարիչ կնոջ այրն
 իցէ : Տեսանես , զի 'ի նմանէն՝ ոչ ամենայն ուրեք
 արարչին է գիտող , այլ և նիւթոյ ինչ՝ որ 'ի մի-
 ջի կայցէ : Այւ յայտ է թէ նովաւ և 'ի ձեռն նորա-
 ասել զկենարարէն , ոչ իրբև զնիւթ ինչ 'ի գործ
 ածեալ ցուցանե , այլ զգոյն 'ի գոյ հաստատեաց , և
 զէն 'ի յէ կուցեալ : Ոչ որպէս ¹ նիւթն և ա-
 տաղձ արուեսս ուրացն իցէ , նոյնպէս և այ կամքն ,
 և ոչ եթէ էութի այ . քանզի ոչ եթէ յէութենէն
 այ ելանեն գործքն , այլ կամքն կացուցանեն զէն
 յէ , և զգոյն 'ի գոյ . կամի , և ամենայն ինչ լինի .
 ակնարկէ՝ և ամենայն ինչ ունկնդիր լինի :

Եւ արդ՝ յորժամ 'ի նմանէն ասիցէ , փոխանակ
 ասելցն , թէ 'ի կամացն հօր . և յորժամ 'ի ձեռն
 նորա և նովաւ , այն իսկ է՝ թէ 'ի զօրուէն որդւոյ :
 Եւ զի զայս պատճառս 'ի բաց մերժեսցէ յայնցանէ՝
 որ պատճառս մեզաց պատճառին , ասէ երանելին
 Պատղոս . ո գիտաց զմիտս տն , կամ ո եղև նմա խոր-
 հրդակից . կամ ո ետ նմա փոխ , և առնուցու զփո-
 խանորդն , զի ամենայն ինչ 'ի նմանէն և 'ի ձեռն
 նորա : Եթէ նուազութի ինչ , 'ի ձեռն նորայն , ցու-
 ցանիցէ , և առաւելուի պատույ , 'ի նմանէն , զիարդ-
 իցէ , զի աստ զերկոսին զմիոջէ ասիցէ . միթէ զան-
 խառնս ինչ խառնիցէ : (Օ ումշ համարիցին ասա-
 ցեալ զամենայն ինչ 'ի նմանէ և 'ի ձեռն նորա . զհօ-
 րէ , թէ զորդւոյ : Եթէ զհօրէ , ահաւանիկ և զհօրն՝
 'ի նովաւն , և 'ի ձեռն նորա իջուցին , եթէ սպասա-
 ւորութի է նովաւն . և 'ի ձեռն նորա գուշակեցին ,
 կարի թշնամանք իցեն ասել զհօրէ զինմանէն , և
 նովաւ , և 'ի ձեռն նորա . քանզի չմարթի միտուն-
 տէր լինել և սպասաւոր : Խակ զորդւոյ իցէ ասա-
 ցեալ . ահաւանիկ չկայ միայն 'ի ձեռն նորայն և նո-
 վաւ , այլ 'ի նմանէն . և չկարէ մին՝ սպասաւոր և
 ինքնագործ լինել : Այլ զի զմեր ցնորսն 'ի բաց պար-
 զեսցէ , 'ի միոյ գէմն գումարեաց զերկոսին . զի ու-
 սանիցիս , թէ բանք զոյ բնութիւն ըսաժանեն , այլ 'ի

¹ Յօրինակին . պակասէր որդէս :

Նմանեն, և նովաւն, և 'ի ձեռն նորա, և 'ի նոյն,
զմիոջէ ասէլին. եղբեմն զհօրէ, և երբեմն զորդւոյ:
Եշտ քանզի բազում անգամ զորովն, և 'ի ձեռն
նորա՝ յեղյեղուն, և այնու իմն սպասաւորութիւն և
նուաստութիւն և փաքըկութիւն համարին որդւոյ, հարկ
է ժողովել և դնել առաջի ձեր բանս մարգարէա-
կանս: Երանելին Ոովսէփ մինչդեռ 'ի բանդին էլ,
որ պարտեաց՝ ցածութեն զամենայն չարիս, ետես
անդ զներբինիս վարաւոնի արքայի տրտում երե-
սօք, որոց դէմքն զթախիծ սրտիցն յայտ առնելին.
Ընդէր էք այսօր, ասէ, տիսուր երեսօք: Երազ տեսաք,
ասեն, և զիք ոք որ մեզ մեկնիցէ: Եշտ առ այն զի՞նչ
երանելին Ոովսէփ. ասացէք, ասէ, զերազն. և չասաց՝
թէ յայ է մեկնութիւն նորա, այլ թէ 'ի ձեռն այ:
Ուշէ այնպէս իցէ, դու չոխանաս, և ան սպասաւոր
լինի. ոչ ապաքէն 'ի ձեռն նորա իցէ մեկնութիւնն.
որում պարտ էր ասել՝ թէ յայ. դու ինչ 'ի ձեռն
այ և աղջ խօսիցիս, թէ ան 'ի ձեռն քո և քեւ: Եշտ
արդ մի ծառայեսցես բանիցն տկարութե՛, այ չնոր-
հացն լուր և հին կտակարանայն: Ո՞յս են պատ-
գամք և պատուիրանք, զոր պատուիրեաց Ո՞ովսէս
ծառայ տն 'ի ձեռն հրամանի տն, եթէ հրամանքն 'ի
ձեռն Ո՞ովսէսի: Ո՞իտ գիր, այս են, ասէ, պատգամք
և պատուիրանք զոր պատուիրեաց Ո՞ովսէս. և չա-
սաց, թէ ան 'ի ձեռն Ո՞ովսէսի, այլ թէ Ո՞ովսէս 'ի
ձեռն այ:

Ո՞սաց բան, կուեաց և ան, անուանեաց և արա-
րիւ. և առ սակաւ սակաւ գայ հանգարտ և յորդ-
ւոյ միաձնի յորջորջումն: Ո՞մենայն ինչ, ասէ, նովաւ-
եղեւ. զարարչութիւնն քարոզէ. և առանց նորա եղեւ
ոչ ինչ յեղելոցն, և ոչ յանարար բնութէն: Ո՞ի-
շէք զառաջին զրանսն, զոր ասացաք, եթէ գիրք ըստ
իրաց ինչ որ առաջի կան՝ խօսին ինչ ակնարկելով.
զի հերձուածողաց աշակերտքն՝ որ ընդ հոգւոյն սքյ
տան պատերազմն, զամենայն ինչ նովաւ եղեւ՝ և 'ի
հոգւոյն սքյ առնուն հայհոյութիւն: Ո՞մենայն ինչ նո-
վաւ եղեւ, ամենայն որ ինչ եղեւ, և ոչ անարար բը-

նութին : Ո՞ի թէ յորժամ ասիցէ կենարարն , եթէ առենեքին որ յառաջ քան զիս եկին՝ դողք էին և աւազակը , զՈվակէս գողբամբասեսցես , և զՃասայի աւազակ . ոչ ապաքէն զնոսա կոչէ գողս և աւազակ , գորոց բանքն էին :

Վմենայն ինչ նովաւ եղեւ , և առանց նորա եղեւ և ոչ ինչ որ ինչ եղեւն . նովաւ կեանք էր : Վսաց , թէ բան է , և կուեաց ած , և թէ առ ած էր , և անուանեաց արարիչ . յորթործէ և կեանք , զի որ արարիչն է , ապաքէն և կենարար է . չմարթի թէ արարիչ իցէ , և կենդանական զօրութիւն արարածոց չտայցէ : Աեանք էր , քանզի զկենդանական և զլուսաւորիչ չնորհս ունի . զի որ ինչ հաստատեսցի , կենաց կարօտ է , և կենդանուել լուսոյ և ոչ 'ի լոյս վայելել առանց կենաց . վամն այնորիկ 'ի նոյն յարէ , թէ կեանք էր , և կեանքն էր լոյս մարդկան :

Լոյսոյ զար զբական զօրութին՝ զկենդանարարն և զլուսաւորիչ . ապաստէ , եղեւ այր մի առաքեալ յայ , անուն նորա Յօվաննէս . ուր այ ձառք իցեն՝ անդ՝ էր նա , և ուր մարդոյն՝ եղեւն : Աա եկն 'ի վկայութիւն վկայել վամն լուսոյն , զի ամենեքեան հաստատեսցին նովաւ : Բոյծս գտանէ հերձուածողն . տեսանես , ասէ , զի նովաւն սպասաւորութեան գուշակ է , քանզի մարդարէիւքն իսկ լինի հաւատարիմ ած : Բայց տես , թէպէտ և մարդկան բնութին ընդ օրինօք հնազանդեալ կայ , և ընդ տէրունի սպասուն , սակայն աստ որովհ՝ ոչ սպասաւորութիւն ինչ յայտ առնէ , այլ զազդումն և զքարոզութիւն մարդարէիցն . քանզի կամայ , և ոչ ակամայ լինէք վկայ լուսոյն : Վեկա եթէ 'ի կարի ինչ 'ի խժդան և յախորտի կայցեն , և զորովն և 'ի ձեռն նորա՝ սպասաւորուել նշանակ համարին , լուիցեն Պաւղոսի՝ որ ասէ , հաւատարիմ է ած՝ որով կոչեցարուք 'ի հնազանդութիւն որդւոյ նորա . և ոչ ևս որովն , և 'ի ձեռն նորա՝ յորդւոյ առ հայր , այլ 'ի հօրէ առ որդի :

Յաշխարհի աստ էր , ասէ , և եկն յաշխարհս . և քանզի ասաց թէ եկն յաշխարհ , զի մի ոք վայրական փոփոխումն զանմարմնոյն կարծեսցի , ասէ . էր

յաշխարհիս, և եկն յաշխարհ։ Օ խաղդ ասէն, եւ թէ զոր հայր սրբեաց, և առաքեաց յաշխարհ։ Վուաքելութին ոչ տեղական ինչ փոփոխումն, այլ զանտեսութեն յայտնութի ցուցանէ. և թէ զիաղդ իցէ՝ լուր. ուստի երեխ ցորեան, ուստի՝ գայ գինի, ուստի ձեթ. ոչ ապաքէն յերկրէ. իսկ ընդէր ասէր ած, եթէ ահաւասիկ առաքեմ ձեզ՝ ցորեան, և գինի, և ձեթ. Եթէ ցորեան առաքեալ ոչ յերկ- նից գայ, այլ յայտնութեամբ բուսոյն ցուցանէ զա- ռաքելութիւնն. իսկ դու զարարին անմարմին, զէն ՚ի ճշմարիտ էն, և զզոյ ՚ի ճշմարիտ դոյէ՝ վայրա- կան փոփոխմամբ կարծես առաքեալ, և ոչ տնտե- սական յայտնութիւն. Օ ի թէ որդի տեղաց ՚ի տե- ղիս առաքեցաւ, ապա և հայր անդ միայն ՚ի վեր մնաց, և որդի այսր ևեթ ՚ի խոնարհ եկն. ոչ յերկինս որդի էր, և ոչ յերկրի հայր. Ո՞թ դիր հաստա- տութք. եթէ բանին ծառայիցես, և այնպէս զորդ- ւոյ առաքելութի իմանայցես՝ որպէս թէ մեկնեալ ինչ յառաքելոյն իցէ, ամենելին իսկ հարկ լինիցի առաքելոյն յերկինից՝ յերկրի ևեթ լինել, և զա- տանել յերկնից, և առաքչին ըլինել յերկրի, այլ յերկինս սահմանեալ. Եւ ո՞ք այնպէս ամբարիշտ և անօրէն կայցէ, և ածամարտ լեզուս խարտիցէ, մինչ զհայր յերկինս ևեթ սահմանել, և զորդի յերկ- րի միայն փակել։

Կամին ճշմարիտ ածխօսութիւն ինչ ուսանել, ու վայրապար ասացեալ, այլ ՚ի զրոց վկայեալ. և զի առաքեցաւ որդի, և կաց մնաց ՚ի բարձունս. և վե- րացաւ յերկինս, և ընդ մեզ է. Ո՞ւ եթէ իմ ինչ բանք էն, այլ նորին կենարարին. Օ որ հայր, ասէ, սրբեաց և առաքեաց. և այնպէս իմն թուի թէ մեկ- նեցաւ յառաքէն. և զիաղդ որ առաքեցաւն՝ ասէ, թէ ես ՚ի հայր, և հայր յիս. և դարձեալ թէ որ ա- ռաքեացն զիս հայր, ընդ իս է. Եթէ ընդ քեզ իցէ, ապա չառաքեցար միայն, այլ ընդ նմին առաքեցար. Եթէ մարմական առաքելութք առաքեալ զնա ի- մանայցես, զիաղդ զառաքչէ զհօրէ ասիցէ, թէ ես մանայցես.

1 Յօրինակին ունեւ.

2 Յօրինակին պակասէր իմանայցէն:

՚ի հայր, և հայր յիս . և դարձեալ՝ թէ որ յզեայն զիս, ընդ իս իցէ : Օ ի մի յորժամ լուիցէ ոք, թէ որ առաքեացն զիս՝ ընդ իս է, զօրուի ինչ ազգական համարեացի, և ոչ զբուն իսկ զհայր, յայլում վայրի լուսաւորէ զբանն . հայր, ասէ, որ յիս բնակեալ է՝ դործէ զգործս . որ յիս բնակեալ է, և ոչ որ յիս ազգեցութիւն գործէ :

Եշն յերկնից, և մնաց անդէն յերկինս . վերացաւ յերկրէ, և չմեկնեցաւ յերկրէ . և զի չէ իմ բանս, լուր իսկ նմին տն . ելանեմ, ասէ, առ հայրն, և առաքեմ առ ձեզ զհոգին որ . ելանեմն անջրպետութիւն ցուցանէ, և առաքեմն չանջրպետութիւն : Օ ի մի ոք զբստ մարմնոյն վերանալն՝ ածութենին փոփոխումն համարեացի, պատուիրէ աշակերտացն . երթայք աշակերտեցէք զամենայն հեթանոսս, մկրտեցէք զնոսայանուն հօր և որդւոյ և հոգւոյն սբէյ . և ահաւասիկ ես ընդ ձեզ եմ զամենայն աւուրս մինչեւ ցվախճան աշխարհի : Օ ի՞նչ իցէ՝ ընդ ձեզ եմ : ՚Ի բարբառոյն իսկ հանաչեմք զբանն . ՚ի մարդարէսն որ յայնժամ խօսէր, և այժմ զօրութիւն գործէ : ՚Ճրթայք և աշակերտեցէք զամենայն հեթանոսս, և ահաւասիկ ես ընդ ձեզ եմ : ՚Վ իցէ՝ որ զայն ասաց . յայտ է, թէ այն՝ որ ՚ի ձեռն ՚նգէի մարդարէի խօսէր . այժմ զօրացիր դու . Օ որոբարէլ, ասէ որ, և զօրացին ձեռք ժողովրդեան իմյ, և գործեցէք ՚ի տան իմում, զի ես ընդ ձեզ եմ, և ոգին իմ կայ ՚ի միջի ձերում :

՚մենայն ուրեք ած, և ընդ ամենայն հաւատացեալս ած . ՚ի մէջ հաւատացելոց հայր, ՚ի մէջ հաւատացելոց որդի, ՚ի մէջ հաւատացելոց և հոգին սբ : ՚Ճւ թէ զիարդ ՚ի մէջ հաւատացելոց հայր, լուր մարդարէին՝ որ ասէ . ուրամի լեր և ցնծա գուստը ՚ի ուղիւ, ցնծա և բերկրեաց յամենայն սրտէ քում մէ, զի երարձ որ ՚ի քէն զրկանս քո, և փրկեաց ըզքեզ ՚ի ձեռաց թշնամեաց . թագաւորեսցէ ՚ի միջի քում . թագաւորեսցէ որ ՚ի միջի քում, և ոչ ևս տեսցես զըարիս : ՚Հաւասիկ ցուցաւ հայր թագաւորեալ ՚ի մէջ հաւատացելոց : ՚Ճւ որդի զի՞ն . ուրիշն երկու կամ երեք ժողովեալ յանուն իմ, անդ եմ և ես ՚ի մէջ նոցա : ՚Ի մէջ հայր, ՚ի մէջ որդի,

՚ի մէջ և հոգին որ . զի ես ընդ ձեզ եմ , ասէ տը ա-
մենակալ , և հոգին իմեկաց ՚ի միջի ձերում : Օ ի՞-
քաժանես զանբաժինսն . հիմ քակես զանքակմն :

Օ մարմնոյն ասեմ՝ որ միացոյց ընդ իւր . և չիշխէ ոք
ասել՝ թէ ՚ի զատ իցէ : Գիտեմզի երբեմն խօսեցայ
՚ի ոյն ճառ , այլ չէ պարտ ընդ առաջինս հայել , և
թողուլ՝ ՚ի դէպ ժամանակի զվարդապետութին . զի
ոչ վասն այնորիկ ինչ բանք են՝ ընդ նոյնս շանցանել ,
այլ ՚ի նոցունց չհեռանալ :

Դ ան հերձուածողացն աշակերտքն , թէ տես զիալըդ
ընդ մեզ ունի որդի զհանգիտապատիւ զուգականու-
թի : Խլանեմ ես առ հայր իմ և առ հայր ձեր , ած
իմ և ած ձեր . տես զիալըդ որդի՝ ած իւր կոչէ ըզ-
հայր : Խւ արդ նախ քան զամենայն պարտ է դի-
տել , զի միածին բանն , անչարչարելի էսւթիւնն ,
անեղծ և անփոփոխական զօրուի , առ զիւր ստեղ-
ծուածն , և ինքեան զմարմինն միացոյց . ոչ ինքն ՚ի
նուազութիւն իջեալ , այլ զնորանուազութիւնն յա-
ռաւելուի հանեալ : Խւ տես զիալըդ զերկնաւոր փո-
փոխմանս ընդ մարդկութէ գործէ . քանզի որ փո-
խանակիցէ ոք , տայ և առնու . առ մարմին ՚ի մէնջ ,
և ետ մեզ հոգի յիւրմէ Որպէս զու , որոյ ած և տը
գոյ , չիշխէիր զած հայր կոչէլ , եթէ չէիր զհոգին ՚ի
նմանէ առեալ , նոյնպէս և որդի ոչ զհայր՝ ած իւր
կոչէլ , եթէ չէր մարմին ՚ի քէն առեալ : Քանզի
զիտէր կենարան , եթէ ոչ նոյնգունակ հայր նորա
և հայր մեր , և ոչ ըստ նմին օրինակի ած նորա և
ած մեր , բաժանէ զանուանն . առ հայրն իմ , և առ
հայր ձեր . քանզի այլ ազգ իմ է , և այլ ազգ ձեր .
և առ ածն իմ , և առ ած ձեր . քանզի այլ ազգ ձեր
ած է , և այլ ազգ իմ : Ո ասն առ ՚ի մէնջ մարմնոյն՝
եղեւ իմ հայր ած . և վասն առ յինէն հոգւոյն՝ ած
և հայր աշխարհի եղեւ . ոչ ինձ որդւոյ կարէր հայր
ած կոչէլ , եթէ չէր իմ առեալ զմարմինն . և ոչ ձեր
հնար ինչ էր զած հայր կոչէլ , եթէ չէր առեալ ըզ-
հոգին : Խւ վկայէ Պաւղոս . զի եք , ասէ , որդիք , ա-
ռաքեաց ած զհոգի որդւոյ , որ աղաղակէ ՚ի սիրտս

ձեր, արբա, հայր: Խըլանեմ ես առ հայրն իմ ըստ
ընութեան, և առ հայր ձեր ըստ չնորհաց առ ած
ձեր ըստ քնութեանս, և ածն իմ ըստ մարմնոյս:

Հովհաննէս ասէ, թէ բանն մարմին եղեւ, և բնա-
կեաց 'ի մեզ. և տեսաք զփառս նորա, զփառս իբրե-
զմիածնի առ 'ի հօրէ: Ի՞նդէ՞ր, ասեն, զհոգւոյն ցի-
շեաց . զմէ զորդւոյն այ երեւեցաւ, և զհոգւոյն
լուեաց : Օ այն պարտ է իմանալ, եղարթք, եթէ այլ
կրօնք խորհրդականք են, և այլ քարոզութիւն հրա-
պարակի: առաքեալքն 'ի քարոզութեն քարոզեին
կրօնս, և զջամարտուին 'ի խորհուրդն աւանդեին.
քանզի չեր մարթ վստահ լինել 'ի համբ լսելիսն, և
մերկ զիշրորդութեանն ճառս 'ի մէջը բերել: || իտ
գիր զինչ ասէ Ք՞ո ցաւաքեալսն . տակաւին բա-
զում ինչ ունիմ խօսել ընդ ձեզ, զոր ոչ կարեք
այժմ հանդարտել: Ի՞սաքեալքն որ 'ի հրեից ծնեալ
էին ածապաշտք՝ յածապաշտ հաւատս, որ ընդ
Քոի ցըթէին, և զնշանսն աչօք իսկ տեսանեին, և
զբանն ած 'ի մարմին նկատէին, չհանդարտէին զա-
մենայն միանգամայն լսել. իսկ նորա զիարդ 'ի հե-
թանոսաց, որք 'ի մեհենիցն, և յարենէ, և 'ի կոոց,
և 'ի բազում աստուածոց այն ինչ զերծեալ էին, և
կեսք չեւ ևս զերծեալ, իսկ և իսկ զբան տնտեսու-
թեանն կարեին յայտնել:

Հոգէմարտն ասէ . ամենայն ուրեք գտանեմ զհօ-
րէ և զորդւոյ յիշեալ 'ի գրոց, և զհոգւոյն լուեալ. և
նախ կենարարն իսկ, եթէ ոչ ոք զիտէ զհայր, եթէ
ոչ որդի . և ոչ զորդի, եթէ ոչ հայր . մի թէ ասաց,
հոգին որք: || չ ոք զիտէ զորդի, եթէ ոչ հայր . և ոչ
զհայր, եթէ ոչ որդի . և ցարեաց զհոգին ընդ հօր
և ընդ որդւոյ . արդ զիարդ կարիցէ 'ի նմին ածու-
թենէն համարել, որ չեն բաւակ ճանաչել զհայր:
Եթէ աստ ճանաչելն որդւոյ սրեաց զքո լեզուդ 'ի
հայհոյութի հոգւոյն, եթէ այլ ուր տեսանիցես ա-
սացեալ, զի հոգին ճանաչէ զհայր և զորդւոյ ցիշէ,
զի գործես: || չ ոք ել յերկինս, և ոչ ոք ճանաչէ
զհայր, եթէ ոչ որդի, այս բարբառ կենարարին է. և
նոյն բարբառ 'ի Պաւղոսի խօսի . քանզի ասէ իսկ. ե-
թէ զփորձ ինչ կամիցէք առնուլ լը Քոի՝ որ ինես ընդ-

ձեզ խօսի : Եշ զի՞նչ ասիցէ բարբառն «Քո՞ի 'ի Պաւուզուէ» : Ոչ ոք գիտէ զմարդոյն, եթէ ոչ հոգի մարդոյն . նոյնպէս և ոչ զայ ոք գիտէ, եթէ ոչ հոգին այ : Եթէ անդ զհողին 'ի բաց մերժեսցես, ասլա և աստ զորդի մեկուսի քեցեսցես . ասլա եթէ աստ առանց բաժանելոյ է որդի, և անդ առանց մեկնելոյ է հոգին : Կա և այլազգ ես . երբեմն յիշէ զհօրէ միայն, և լուէ զորդւոյ և զհոգւոյ . և երբեմն յիշէ զորդւոյ միայն, և լուէ զհօրէ և զհոգւոյն . և երբեմն զհոգւոյն միայն, և լուէ զհօրէ և զորդւոյ : Դարձեալ անդրէն կրկնակի բազում անդամ յիշէ զհօրէ և զորդւոյ, և լուէ զհոգւոյն . յիշէ զորդւոյ և զհոգւոյ, և լուէ զհօրէ : Ուր յիշէ զհօրէ, լուիցէ՝ զորդւոյ :

Հարցանելին երբեմն առաքեալքն ցՔՇ. տէր ուսն մեզ յազօթս կալ : Ուսոյց զազօթմն, և ասէ . այսպէս կացէք յազօթս . հայր մեր որ յերկինս, որ եղիցի անուն քո . և զայլն ես մի ըստ միունք մինչև ցզլուխ աղօթիցն . և ոչ զանձին և ոչ զհոգւոյն յիշատակ բերէ անդ 'ի մէջ . ահաւասիկ հօր յիշատակ միայնոյ . և լուեալ զփառացն որդւոյ և զհոգւոյ . ոչ ուրանալով ինչ, այլ վասն օգտի և խորհրդական ինչ դիտաւորուել լուեալ առ անդամմի զհոգւոյ և զորդւոյ : Հայր մեր որ յերկինսադ ես . աստ յիշատակ հօր միայն 'ի մէջ մտանէ . և այլ ուր ինքն իսկ կենարարն՝ որ ուսոյց աշակերտացն առ հայր միայն կալ յազօթս, տես զի՞նչ ասէ . զամենայն ինչ զոր և խնդրեսջիք յինէն՝ արարից ձեզ . և ըսերէ 'ի մէջ զյիշատակ հօր . ոչ եթէ առ զհայր ինչ ուրանալոյ, այլ առ 'ի հանգիտապատիւ ճոխութէն ճառելոյ : Եշ այլ ուր զհոգւոյն միայն յիշէ, և լուէ զհօրէ և զորդւոյ . Ծովաննես մկրտեաց 'ի ծուր, բայց դուք մկրտեսջիք 'ի հոգին որ : 'Ի հոգին որ միայն : Եշ զի՞նչ յայտ աւանդութիւ խորհրդոյն առնէ, եթէ մկրտեցէք զնոսայանուն հօր և որդւոյ և հոգւոյն սըյ : Դարձեալ ասէ զհօրէ և զորդւոյ, և լուէ զհոգւոյն : Ոի է, ասէ, ած հայր՝ յոր մէ ամենայն ինչ . և մի է որ ՔՇ. ՊՇ. որով ամենայն ինչ : Բանզի ոչ եթէ վասն կրօնից ինչ խօսք էին յայն

ժամ՝ Պաւղոսի, այլ վասն բազում ածոցն՝ի միջոյ
բառնայոյ։ Ուսիր, և գտանիցես զլու ծումն։ որպէս
և կենարարն ասէ, թէ քննեցէք զգիրս, և ոչ եթէ
զխորհուրդս։ մի վատահ'ի ցնորս խորհրդոցն լինիցիս,
այլլուր գրոյն։ խորհուրդք, ասէ, մաշկանացուաց եր-
կեղածք են։ զաղփաղփուն միտք նոցա։ Եւ դար-
ձեալ ասէ փրկիչն, թէ ծանիցեն զքեզ միայն ճշմա-
րիտ ած, և զոր առաքեցեր զՀՅԱՐ. և լուէ զՀոգ-
ւոյն։ և այլ ուր զհօրէ և զՀոգւոյ, և լուէ զորդւոյ։
ըստ վերնոյ վկայութեն, թէ մտէք գործեցէք՝ի տան
իմում, ասէ տը ամենակալ, զի ես ընդ ձեզ եմ, և
հոգին իմ կայ ՚ի միջի ձերում։ և ուր իցէ որդի,
քանզի ես, ասէ, և հոգի իմ։ Եւ այլ ուր յիշէ Պաւ-
ղոս զորդւոյ և զՀոգւոյ, և լուէ զհօրէ։ Ոչ չունք, ա-
սէ, և ոչ պոռնիկք, ոչ գողք և ոչ արբեցողք և ոչ
բամբասողք՝ զարքայութիւնն այ ոչ ժառանգեն։ և
դուք այնպիսի ոմանք եիք. այլ լուացարուք, այլ
սրբեցարուք, այլ արդարացարուք յանուն նոն մերոյ
ՀՅԱԻ ՎՀՆԻ և ՚ի հոգին այ մերոյ. և ուր իցէ հայր։
ՎՀՆՆԵցէք, ասէ, զգիրս, և մի քննէք զխորհուրդս։

Վասացուք և իրս ինչ յայտնիս, որ զՏերձուածո-
ղաց օրինազանցութին յայտ առնէ։ Վագեալ ասէ.
շնաւոր մարդ ոչ ընդունի զՀոգւոյն, զի յիմարութի-
թուի նմա։ Հեթանոսն զայթակզի, քանզի յիմա-
րուի համարի զքարոզուին։ հրեայն զայթակզէ ՚ի
ՎՀՆԷ. և առ այն զի՞ն ասէ Պաւղոս. մեք, ասէ, քա-
րոզեսցուք զՎՀՆ՚ի խաչ ելեալ, հրեից զայթակզուի,
և հեթանոսաց յիմարութի։ Ինդէր յիմարութիւն
զքարոզութին համարի հեթանոսն։ Վաս ցնա, թէ
ած արար զՎՀՆ իբրև զմի յարարածոց, և վկուի,
այլ ասէ՝ կարօղ եր արարին. ասա՛, թէ ծնաւ, և
ծաղք առնէ, և մորոսութի զւամնն համարի. ած, ա-
սէ, ծնանիցի, որ առանց կարեաց բնութին է։ ՈՒթ
դիր ընդ որպիսիս ունին բաժին հերձուածողք. հե-
թանոսք աղարտեն զՃառս ծննդեանն իբրև զմորո-
սութի. և դու որոշես, և այլայլս զծնունդն, և փո-
խանակ ծննդեանն՝ արարած մուծանես. գտար ընդ-
հրեայս գայթակզեալ, և ընդ հեթանոսս զքարոզու-
թին մորոսուի համարեալ։ ՈՒք, եղարք, չեմք հեր-

ձուածողք , չառնիմք զանժոյժ¹ զխորհուրդն , այլ
հաւատովք լուսաւորիմք :

Ճեսանես զած 'ի գէմն հօր և որդւոյ և հոգւոյն
սբյ քարոզեալ . մարգարէքն նախ քան զխորհուրդն՝
զխորհուրդն փառաւորեցին . և դու այլայլես զխոր-
հուրդ մարգարէութեն : Խօսէր անձ մարգարէիւքն
իրըև 'ի միոջէ երեսաց , և ընդ նմին ընծայեցուցա-
նէր զգիտութի որդւոյ և զհոգւոյ : Եշ զի մի առ
յապայ չքարոզեցին առաքեալքն , առ 'ի զհաստա-
տութիւն իրացն ցուցանելց՝ այսպիսի ինչ ասէ անձ
'ի ձեռն ՀՅովելեայ մարգարէի . եղիցի յաւուրս յե-
տինս , ասէ անձ . միտ դիր , զի աստ հոգւոց հաստ-
նոց և մտաց ուշարարաց պէտք են՝ առ 'ի չմուանա-
լց զածեղէն քարոզութիւնն , և եղիցի յաւուրս յե-
տինս , ասէ անձ , հեղից յոգւոյ իմոյ 'ի վերայ ամե-
նայն մարմնոյ : Վու այժմ զանձնէ , և զհոգւոյ միայն
ասաց . բայց մեկնելոց է և զորդւոյ : Եշ զի՞նչ
զործիցէ . քանզի չէ ժամանակ քարոզութեան , և
ոչ յայտնի կրօնից , այլ ծածուկ խորհրդոց , մի-
ջին իմն երես իրեւ զառակ 'ի կցանի հարեալ՝ յա-
ռաջ մատուցանէ , և բազում բանս յեռու , և 'ի
կատարածին ընծայեցուցանէ զգիտութի որդւոյ . զի
մի , յայտնի զգիտութիւնն առնելով , պատճառք ինչ
մեղաց 'ի մէջ մտանիցեն , այնոցիկ՝ որ ոչ կարիցեն
զհանգամանս իրացն իմանալ՝ առ անդամ մի զանձնէ
և զհոգւոյն յիշեցուցանէ . հեղից յոգւոյ իմմէ 'ի վե-
րայ ամենայն մարմնոյ , և մարգարէասացին ուստերք
ձեր և գստերք , և երիտասարդք ձեր տեսիլս տես-
ցեն , և ձեզք ձեր երազս յերազեսցին : Եշ տես ,
զիարդ մինչդեռ զանձնէ և զհոգւոյն ասէ , մեղմով
և զորդւոյ գիտութի ընծայեցուցանէ . և տաց նշանս
'ի վեր յերկինս , և յերկիր 'ի խոնարհ , արիւն և
հուր և մըրիկ ծխոյ . արեգակն դարձցի 'ի խաւար ,
և լուսին յարիւն , մինչև եկեսցէ օր տն մեծն և երեւ-
լի : Եշ քո չիցէ օրն այն , այլ այլց տն . զի իրեւ
զայլմէ տնէ աւետիս իմն ասես . եթէ դու անձ իցես՝
որ խօսիսդ , և 'ի քումմէ ոգւոյդ հեղուցուս , զիարդ

1 Յօրինակին Դաժոյժ :

զայլմէ տնեւ աւետիս տաս : Ծակյայտ իսկ է , զի զորդի որ յիւրմէն է , որ կոչէ . մինչև եկեալ իցէ օր տն , որ մեծ է և երեւելի : Վանդի առաջին գալուստն հեղութք և հանդարտութեամբ եղեւ , չասէ զայն մանէ , այլ զմեծէն և զերեւելոյ , որ փառքն իսկ յայտնի են :

Եւ նորին յաջորդն զի՞նչ իցէ . և եղիցի , ասէ , ամենայն որ կարդասցէ զանուն տն , կեցցէ . և չասաց , թէ որ կարդասցէ զանուն իմ , կեցցէ : Եւ զի մի բռնազրուսեալ յաղթութի՞ շմարտութեն կարծեացի , զՊաւղոս 'ի միջի վկայ կացուցից : Օ՞ո՞ր անուն կարդասցուք , և կեցցուք : Վսէ Պաւղոս , լեզուն շմարտուե , մեկնին պատգամաց մարդարէիցն . մի թէ հրէից միայն իցէ ած , և հեթանոսաց ոչ . այս և չեթանոսաց . քանզի մի է ած՝ որ արդարացուցանէ զթլիատութի՞ն 'ի հաւատոց , և զանթլիատութիւն նովին հաւատովք : Եւ այլուր , թէ ինքն ած մեծացուցանէ զամենեսեան որ կարդան առ նա . և եղիցի ամենայն որ կարդասցէ զանուն տն՝ կեցցէ :

Եւ զիյայտ լիցի , թէ 'ի Վ՛ս հանէ զբանն . մարդարէութի՞ն ասէ , թէ ամենայն որ կարդասցէ զանուն տն՝ կեցցէ . և առաքեալ մեկնէ , թէ զիարդ կարդասցեն առ նա՝ որում ոնչ հաւատացին , և զիարդ հաւատացեն՝ որում ոչ լուան , և զիարդ լուիցեն՝ առանց ուրուք քարոզելոյ , և զիարդ քարոզեսն՝ եթէ ոչ առաքեսցին . որպէս և գրեալ է , թէ գեղեցիկ են ոտք աւետարանչացն զիսաղաղութի՞ , աւետարանչացն բարութեն : Եցոյց զանձն , Եցոյց և զհոգին նր , Եցոյց և զորդի . և որպէս 'ի սկզբան մարդարէութեն զանձնէ և զհոգւոյն գուշակեաց , նոյն պէս և 'ի կատարածին՝ որդւովն կնքէ զմիտս մարդարէուեն . զի 'ի Վիոն լեռնէ , ասէ , եկեացէ ապրեալն , և աւետարանեալքն , զորս կոչեաց առ իւր որ : Վեւետարանեալս , զաւետարանիչսն կոչէ , որք կոչեցան 'ի տնէն : Լուեաց , ասէ , Վ՛ս զերկոտասան առաքեալսն , և ետ նոցա իշխանութի՞ 'ի վերայ դիւաց և այսոց պղծոց : Եւ այլուր , զի զհոգւոյն սոյց զարքունական , և զածեղէն ճոխութիւն ցուցանիցէ , ասէ զՊաւղոսէ և զԱպոնաբայ հոգին , թէ մեկնեցիք ինձ

զՊաւղոս և զԲառնաբաս 'ի գործ մի՝ յոր ես կուցելոց եմ զնոսա: Եշտ այս մինչեւ ցայս վայր:

Եղիցի և հաւատացելոցն լուսաւորել, և հակառակորդացն պատկառել և դառնալ. չեն ինչ պէտք աշխատութե՞ն, պատկառեա 'ի բանեն, ընկած զիւրեկութե՞ն: Ոպառնացաւ ած երբեմն 'ի ձեռն մարդարեին՝ երուսաղէմացւոց, և ասէ . ահաւասիկ սատակեցից զնոսա, և արարից յոցինչ. և եղելիքը ետես ածը եթէ զղացան սիրտք նոցա, ասէ ածը ցայրն այ, տեսանես զիարդ պատկառեցին. և ոչ ես ապականեցից զնոսա: Եղիցի յաղօթս սրց հարցս և նոցագառնալ, և մեզ հաստատել և եկեղեցւոյ փառաւորել'ի ՎՇԱՀՅԱ'ի ածը մեր. որում փառք յաւիտեանս յաւիտենից. ամէն :

ՃԱՌ ՎԵՑԵ ՇԵՐՈՐԴ

‘Եղի՞ն երանելցյն Սեբերիանոտի Եմեսու եպիսկոպոսի ասացեալ
՚ի բանն , թէ դպրութենք բայցան :

ՈՉԻԱՐՔ իմ , ասէ կենարարն , ձայնի իմումլսեն ,
և զչետ իմ գան , և ես զկեանս յաւիտենականս
տամ նոցա : Օի՞նչ այլում կենաց քան կենացն
սպասել կայցէ : զի՞նչ այլ ինչ յոյս առնուլ ’ի լուսոյ
իցէ՝ քան զշառագայթմն լուսոյ . կամ զի՞նչ ակն
ունել այլ յաղբիւրէն բարերարութեց՝ քան զըա
րերարութի չնորհացն կայցէ . վամն այնորիկ և ՚իա-
ւիթ ասէ , թէ ՚ի քէն է աղբիւր կենաց , և լուսով
երեսաց քոց տեսանեմք զլոյս : Ոյն այն պարզ և
սփիւռ է բնութեամբ , բազում և ազգի ազգի ճա-
ռագայթս բարերարութե արձակէ . քանզի և բժշկէ
զպէսպէս ախտս ոգւոց , և առողջացուցանէ զազգի
ազգի ցաւս մարմնոց , զի մարմնոց և ոգւոց արարիչ
է . որպէս զի ստեղծուածն չնորհեաց նոցա , նոյն-
պէս և մի բժշկութ պարզեկ : ՚յւ է ուսանել յայսը
աւզւը ընթերցուածոյն , թէ զիարդ աղբջւր բարու-
թեցն յանձնէ ունի զբարերարութին :

՚յին գարձեալ ՞յո՞ն ՚ի լիանա գալիլեացւոց , ուր
արար զօռուրն ՚ի գինի : ՞յիշեա զերեկի բանսն , թէ
զոր ինչ մարմնապէսն է ասացեալ չէ պարտ մարմնա-
պէս իմանալ : ՚յին ՞յո՞ն ոչ ըստ անութեն զօրութե-
փոփոխելց , այլ ըստ մարմնոյն տեղաց ՚ի տեղիս փո-
փոխելց . զի թէ անսահմանական բնութի ըստ անծու-
թեանն , ապա ամենայն ուրեք է . երեկի մարմնով
երբեմն աստ , է երբեմն անդ . ոչ եթէ բնութեամբ
անծութեանն սահմանելով , այլ տեսութեամբ զկարդ
տեսչութեանն կատարելով : ՚յին ՞յո՞ն , և աշխատու-
թի կրեաց . աշխատեցաւ ոչ ըստ անծութեան բնու-
թեն , այլ ըստ մարդկուե : ՚յին , ասէ , ՞յո՞ն , և աշ-
խատեալ էր ՚ի ճանապարհորդութէն . աշխատեցաւ
աշխատելեաւն , և ոչ անծութեն՝ որ չկրէ երբեք աշ-
խատութի : ՚յւ վկայէ մարդարէն . ած , ասէ , յաւի-

տենական, որ կազմեաց զծագս երկրի, ոչ քաղցեցի
և ոչ աշխատեացի. և աստ ասէ, թէ աշխատեցաւ,
քաղցեաւ: Պահեաց, ասէ, զքառասուն տիւ և զքա-
ռասուն զիշեր, և յետոյ քաղցեաւ. և յայտ է թէ
յորժամ կամեցաւ, քաղցեաւ: Տեսանես, զի ածե-
զէն բնութին առանց կարեաց է, և ըստ տեսչութե-
մարմնով վաստակի և քաղցնու:

Եշ զարմանալիք այն են. աշխատի, զի զաշխա-
տեալս հանգուցանէ. եկայք առ իս աշխատեալքդ,
և հանգուցից զձեզ: Տեսանես արդ, ըստ ածութեն
հանգուցանէ զաշխատեալ բնութիւնն, և ըստ տես-
չութեն ձանաչէ զկարիս մարդկութես: Ո՞ի թէ չէ
կարօղ զոք մարմինն՝ զոր՝ ի մէնջ վասն մերոյ փրկու-
թեան զգեցաւ, 'ի վերայ օդոց շրջեցուցանել, զի մի
կրեսցէ աշխատուի. և ոչ այնպէս ինչ, որպէս զիմ-
բակումայ զմարմինն՝ ի պաղեստինացւոց աշխարհէն
'ի Շաբելսն՝ ի միում վայրկենի տարաւ. զայր մի մար-
գարէ հրեշտակական շնորհօք յայլմէ աշխարհէ յայլ
աշխարհ փոխեաց. և ոչ աշխատութի կրեաց, և ոչ
զվաստակն իմացաւ. և որչափ ձեռն հրեշտակին կա-
րող եղեւ, զայն՝ զօրութի բանին այ չկարէր իւրում
մարմնոյն պարզեւէ: Ի յլ անդ հարկին պէտք զա-
րագութին պահանջեին. քանզի՝ ի Շաբելսն չեր ոք
ածապաշտ՝ որ զնա կերակրէր. ետես զմարգարէն,
եթէ վասն ածապաշտութեն վկայ լինելոյ կայ՝ ի տագ-
նապի՝ ի մէջ առիւծուցն, ձեռն հրեշտակի զմիւս ևս
մարգարէ յափշտակէ, և անդը առ այն մարդարէ տա-
նի: Եշ տես զզարմանալիսն. չասէ՝ թէ տարաւ զնա
հրեշտակն, այլ թէ առ, և անդ եդ: Տես զզօրու-
թի հրեշտակին. զի զարմանաս ընդ արարիչ հրեշտա-
կացն: Շառնայ տանի զմարգարէն, ոչ ոտիցն նե-
ցուկ մտեալ, և 'ի վեր ամբարձեալ, այլ զչերացն
բոււհ, հարեալ յափշտակեաց: Եշ գիտեմք, եզրարք,
որչափ ինչ վշտանայ մարմին՝ յորժամ քարշեայի ըզ-
հերացն. իսկ մարգարէն այնչափ վայրս, այնքան ձա-
նապարհս եշատ անց զչերացն ձկեալ, և ոչ ինչ
կրեաց. և 'ի միում վայրկենի առ եդ անդ. քանզի
զօրութի հրեշտակի էր, որ ոչ միայն եբարձ, այլ և
թեթևութի շնորհէրաց մարմնոյն: Ո՞արմին էր՝ որ

բարձաւն, այլ ողի էր՝ որ երարձն և տարաւ։ Որ ա-
րար զհրեշտակս իւր, ասէ, հոգիս :

Իւ մի զարմանայցես, եթէ թեթև բնութիւնն
զմարմինն ծանը երարձ։ նախ աստեն իսկ յայսմ ա-
րարածս որ մեզս երեխն է ինչ որ բնութք ծանը է,
և է ինչ որ յախտարակաց թեթև է. և չէ ինչ ըստ
ծանրութեն, և ոչ ըստ մեծութեն, այլ ըստ իրաց բնու-
թեն արարածոց, որպէս զիարդ և իցէ։ Խնդէր ամե-
նայն մայրք՝ մեծամեծք, և թէ ամենայն իսկ ան-
դառք կոտորեսցին, և 'ի ջուր անկանիցին, ընկղմեա-
ցին, և զասեղն մի փոքրիկ, կամ սակաւ ինչ քծուար
յերկաթոյ՝ չկարէ ծով մեծ 'ի վեր ունել. և այսպէս
ոչ ըստ մեծութեն ինչ է, և ոչ ըստ ծանրութեան,
այլ յարարվն արուեստէ։ Ի այց սակայն երկաթոյ
ուրոյն առանձին չէ հնար 'ի վերայ ջուրց կալ, այլ
թեթև իւիք կայ 'ի վերայ ջրոց, և կրի տեղեաց 'ի
տեղիս։ Խնուն զնաւս մեծամեծս երկաթով, և տա-
նին յո և կամին. և քանզի թեթև է փայտի բնու-
թիւն, բառնայ թեթևն զծանրն։ Խոս միւս ևս այլ
օրինակ. մարդ չկարէ բազում ժաման 'ի վերայ ջուրց
դօղալ, թէպէտ և զարուեստն զիտիցէ, այլ բանզի
չկարէ կարի 'ի տոկ ձգել առանց հանգչելոյ, աշխա-
տին բազուկքն, և հարկ լինի ընկղմելոյ։

Որպէս և 'ի խորշակէ՝ զի նախ արմատն վնասի,
և ապա ընդ նմին և ոստքն գօսանան. նայնպէս և
յածպաշտութեն եթէ նախ սիրտն կուրանայ, ապա
պտուղ բերանոյն ցամաքի. որչափ և բամբասիցէ լե-
զու հերձուածողին, ևս քան զես անպտուղ լինի. որ-
պէս և մարդարէն ասէ, եթէ ախտացաւ գլուխն լրի-
բեմայ, և արմատն գօսացաւ, և ոչ բերէ պտուղ։
Խոյ տեսանել բազում անգամ և 'ի թշնամիս
ածպաշտութեն կերպարանս ածպաշտութեն։ որպէս
բազմութին յեկեղեցւոջ, և բազմութի առ հերձուա-
ծողմն. մեղան աստ, մեղան անուանեալ և անդ.
քահանայք չշմարիտք աստ, քահանայք սուտք և
անդ. աստ աւետարան հաւատացեալ, և անդ աւե-
տարան անաբ գեալ. աստ միածին որդին այ փառա-

ւորեալ, և անդ միաձին որդին այ թշնամնեալ •
աստ հոգին ոք բերկրեալ ընդ հաւատու, և անդ հո-
գին ոք տրտմեալ ընդ անհաւատութին. քանզի յոր-
ժամ տեսանիցէ հոգին ոք ամբարլշտութի, տրտմի.
վասն այսորիկ և Պաւղոս ասէ, թէ մի տրտմեցուցա-
նեք զհոգին ոք՝ որով կնքեցարուք յաւուր փրկութե-
ճերոյ :

Եւ արդ յորժամ տեսանիցես զհերձուածողն կեր-
պարանս կրօնից նման եկեղեցւոյ, մի տեսլեամբն
պատրիցիս, այլ զշմարտութիւնն քննեաւ. Եւ կա-
խարդքն եղիստացւոց նմանեցուցանեին գործոցն
Ոովլէսի, այլ կերպարանք էին, և ոչ շշմարտուի:
Ծնկեաց Ոովլէս զգաւազանն ի գետին, և եղեւ վե-
շապ. ընկեցին և կախարդքն զգաւազանս, և եղեւ
վիշապ. կերպարանք հասարակեցին, բայց շշմար-
տութին ընտրութի եցոյց ի միջի. քանզի գաւազանն
Ոովլէսի եկուլ զգաւազանս նոյա. զի ցուցցէ, եթէ
ստութին կլանի ի շշմարտութին: Եւ զի գիտաս-
ցես, ելլայր, թէ ամենայն հերձուածողական հակա-
ռակութի, որ ընդդէմ առաքելոցն բանից ի պատե-
րազմ հակատիցի, յայնց կախարդաց համար է, լուր
Պաւղոսի. որ կամին ածպաշտուք կեալ ի Վա Յո,
հալածեացին. բայց մարդք չարք և կախարդք յա-
ռաջ եկեսցեն ի չարխ, մոլորեալք, և մոլորեցու-
ցանիցեն. որպէս Յանեսն և Յամրէսն հակառակ
կացին Ոովլէսի, նոյնակէս և նոքա հակառակ կան
շշմարտուեն, մարդք ապականեալք մտօք, անփորձք
ի հաւատու:

Ոիտ դիր հաստատութիք. մարդս չարս և կա-
խարդս զհակառակորդս բանին շշմարտութեն կուէ:
Ծնդէր կախարդք¹. քանզի պատրեն զտիմար լսե-
լիս. զի բանք խաբեբայից՝ կախարդութի են պատ-
րելոցն: Օ որ օրինակ, եղբարք, որ զականջս վասն
մարմաջելոցն քորիցեն, դիւր թուի քորելն. և իբրև
կարի յաճախիցեն, վերս առնեն և ինսուն լսելիքն
ի յաճախութին, նոյնակէս և բանք հերձուածողայն
զառաջին ողոքանք թուին լսելեայն, և յետոյ ինսուն

1 Յօրինակին կուտէ:

զգայունան . վասն որոյ և առաքեալ ասէ , եթէ 'ի ժամանակս յետինս քակեսցին ոմանք 'ի հաւատոց , ըստ մարմաջելոյ լսելեացն իւրեանց : Օ ի՞նչ իցէ մարմաջել լսելեացն . պատրել իւրել յառասպելեաց : Ամենայն ինչ հերձուածողացն առասպելք են . վասն որոյ և Պիաւղոս ասէ , եթէ դարձուացեն զլսելիս 'ի Ճշմարտութենէն , և յառասպելս կործանեսցին : Հո՞ր առասպելս : 'Ի յլիսիսին , 'ի Վակեդմին , 'ի Վնտանոսին , 'ի մանինեցւոցն , և յայլոց նոյնպիսեաց . քանզի ամենեքին յառասպելս հատեալ են , և Ճշմարտութեանն հակառակ կան : Աշխատաց միայն զհակառակն կալ , այլ և զքակումն : Ինայց ոչ եկեսցեն յառաջ , քանզի անմտութին նոցայատնի լիցի ամենեցուն . որպէս և նոցայն եղեւ : Օ գուշալի առհաւատչեայս ունիմք զբարբառ առաքելոցն : Արաշխաւոր մոտանէ ընդիմ՝ փարատել զցաւս բժիշկն ոգւոց :

Վի այսուհետեւ պատրեսցեն զձեզ կերպարանք հերձուածողացն , որ ճաղեն զանգաշտութին . քանզի և 'ի մէջ հրեիցն բազումք զկերպարանս անպաշտութեն ունին , այլ չգոյր 'ի նոսանախանձ Ճշմարտութե . զօրս Խասյի անջրդոյ պարտիզի նմանեցուցանէ և տերեալից ծառոյ՝ յորում ոչ գուցէ պըտուղ : Աղիցին , ասէ , իբրեւ զբեկնիթ թօթափեալ 'ի տերեայ , և իբրեւ զպարտէզ անջրդի : Պարտէզ անջրդի է հերձուածողացն ժողովուրդ . չոռոգանի 'ի ջրոյն կենդանութե , զորմէ ասէ կենարան , թէ որ հաւատայյիս , որպէս ասեն գիրք , գետք յորովայսնէ նորա բղիսեսցեն ջրոց կենդանութե . զայս ասէլ ՀՅ վասն հոգւոյն սըյ , զոր ընդունելոց եին հաւատացեալք :

Տես զիամրդ ես պարտէզ անջրդի . չասաց՝ թէ իբրեւ զպարտէզ , որ ոչ Ճանացիցէ զջուրը , այլ թէ իբրեւ զանջրդի : Ասեն , թէ է հոգի որ , այլ չունին . քարոզեն , այլ չվայելեն 'ի պարզես հոգւոյն . քանզի ընակէ հոգին որ յանձինս ապախտաւորս : Ոինչ անձպաշտութի իցէ 'ի մարդն , հոգին որ բնակէ . և յորժամանձպաշտութին հեռանայ , և հոգին որ հեռանայ : Աշխարհէ վՃիռ իսկ տալ , եթէ ամենայն ողիք

մարդկան՝ կամ հոգի ոք առնուն յետ չսորհացն ,
կամ այս պիղծ , իշտ չասեմ , թէ հոգին ոք մարդա-
րէութիս կամ առաքելութիս գործէ 'ի մարդն . այլ
թէ չունիցի ոք հաւատու , քանզի պարզեք հոգւոյն
հաւատքն են , չունի զհոգին ոք : Ուկապէտ և դոյզն ոք
աշխարհական իցէ , և կարի խոկ 'ի կրսերաց , և
միայն զհաւատն ՎԻ՞ՆԻ ունիցի , հոգի ոք գոյ 'ի նմա .
ոչ ոք կարէ ասել որ զՀՅԾ , եթէ ոչ հոգւովն սրվլ . և
հարկ է կամ 'ի հոգւոյն սոյլ լուսաւորէլ ոգւոյ , կամ
այսոց պղծոց մտանել ընդ իշխանութեամբ : Իշտ ո՞
իցէ՝ որ զայս ասիցէ : Հորժամ Աաւուղ արքայ ան-
օրինեցաւ , և համարձակեցաւ յանմատոյց խոր-
հուրդն մտաքերէլ , որ չէր օրէն նմա մատուցանել .
որ երբեմն կոտորէր զվուկս և զգէտս , ապա և
ինքն 'ի գէտս ապաստան եղեւ . և զի՞նչ ասեն զիրք-
հոգի ո՞ն վերացաւ 'ի Աաւուղէ , և նեղէր զնա այս
պղծ :

Պարտէղ անջրդի են հերձուածողք , և ո՞րչափ
տնկեսցեն տունկս , չեն յուսալի : Ո՞ր զ՞ոյ բարբա-
ռոյն զՀետ ոչ երթիցէ , այլ զիւրոց մտաց , թէպէտ և
տնկիցէ տունկ , անհաւատութէ տունկ է . և վկայէ
Խասյի , թէ ամենայն որ զբանն այ չունիցի , թէ-
ովէտ և տնկիցէ ինչ , չէ յուսալի և հաւատարիմ :
Օ որ օրինակ է տունկ հաւատոց , նոյնպէս գոյ և
տունկ անհաւատութէ . ամենայն տունկ հերձուա-
ծողացն՝ անհաւատութեան տունկ են , քանզի խոր-
հուրդքն ծնանին . և ամենայն աւետարանական և
առաքելական ուղիղ փառաւորութի՞ն տունկ է հաւա-
տոց , և սերմ յուսալի : Ա ասն այնորիկ և կենարան
ասէր զՀրէիցն , թէ թոյլ տուք զնոսա . ամենայն
տունկ՝ որ ոչ 'ի հօրէ իմմէ տնկեալ իցէ , խլեսցի :
Իշտ զիա՞րդ տնկեաց հայրն երկնաւոր . մարդարէիւք ,
առաքելօք . և ո՞րպէս տնկեաց սատանայ . հերձուա-
ծողօք , ամբարշտօք : Խլեսցի տունկ ամբարշտութէ ,
և մի գտցի վայր և տեղի սատանայի . ամենայն ինչ
որ ընդդիմանայ ՎԻ՞ՆԻ զօրութեանն՝ և յառնիցէ ,
քակտի . խաւար , որ ընդ լուսոյ հակաւակի , 'ի լու-
սոյն հալածական լինի : Ի այս եկեսցուք յայն՝ որ ա-
ռաջի կայ :

Ա ենարարն նախատեաց զքաղաքմն . վայ քեզ Վո-
րապին , վայ քեզ Շադասայիդայ , զի թէ 'ի Տիւրոս և
'ի Աիդոն եղեալ էին զօրութիքն՝ որ 'ի քեզ գործե-
ցան , վաղուց իսկ ասպաշարեալ էին 'ի խորդ և 'ի
մոխիր : Ասացէ և այժմ աւետարանն . վայ քեզ Վ-
րիս , վայ քեզ Ա'ակեդոն , վայ քեզ Լ'ւնոմիոս . զի
թէ 'ի Աոդում քարոզեալ էր քարոզութին՝ որ 'ի ձեզ
քարովեցաւ , թերես զարմանային ընդ փրկիչն , և
փառաւորէին զբարերարն , ճանաչին զարարին :
Վրդարե իսկ , եղբարք , ոչ ցամսուլ , այլ սուդ առ-
նուլ պարտ է 'ի վերայ հերձուածողացն . և լուր գրոյն
որ ասէ , թէ սուդ մեռելոյ զեւթն օր , և մորոսի և
ամբարշտի զամենայն աւուրս : Խւ ո՛լիցէ մորոսն և
անմիտն , ասասցէ Դաւիթ . ասաց անզգամն 'ի սրտի
իւրում , թէ չիք ած : Ա'չ միայն հեթանոսն ասէ , թէ
չիք ած , այլ նոքա . զի կերպարանօք ասեն , թէ է
ած , և արդեամբք չասեն , թէ գոյ ած : Հորժամ ա-
սէ հերետիկոսն , թէ ած է Վ՛ս , և բնութեամբ չհա-
մարի ած , քանիւք և եթ ասէ , և արդեամբք ուրա-
ցեալ է . քանզի ասեն , թէ ած է Վ՛ս , այլ ոչ բնութե-
իրեւ զհայր . քանզի այլ բնութիւն նորա է և այլ
բնութիւն սորա : Հորժամ սրտիւ և մորգք ուրանայցէ
զպատիւ ածութէ որդւոյն , թէպէտ և ասասցէ ած ,
չհամարի ած , քանզի զհշմարիտն նկարագիր ածու-
թեն եղծանէ ապականիւ կրօնիւքն :

Խւ արդ՝ զի՞նչ իցէ առ այն ասել : Դարուն էր ,
որպէս և կանխաւն իսկ ասացի , մարդարէութինն , և
հունձք աւետարանն : Դայց մի ինչ օտար ձեզ քանզն
թուեցին , զոր երէկն ասացի , թէ մարդարէիցն ժա-
մանակն գարնայնոյ և սերման ժամանակն էր , և ա-
ւետարանին՝ ամարայնոյ և հնձոց . քանզի գոն և
այլ հունձք : Աերմանեցին մարդարէքն , և հնձեցին
առաքեալքն յետ գալստեանն Վ՛սի . գարձեալ՝ սեր-
մանէ ած , և հնձեն հրեշտակք : Ա'արդարէիցն սեր-
մանցն առաքեալքն եղեն հնձողք . և կենարարին
քարոզութեցն հրեշտակք լինին հնձողք : Աերմանե-
ցին մարդարէքն զհանդերձելոցն զիտութիւ . սերմա-
նեցին և զգալուստն Վ՛սի՝ յաւաջագոյն կարապե-
տեալ . հնձեցին առաքեալքն Վ՛սի : Աերմանեաց

ՔՇ յառաջագոյն զյոյս յարութեն . սերմանեցին մարդարեցն և զհանդերձեալ գալուստն կենարարին . սերմանեաց և ՔՇ զհանդերձեալ մեռելոցն յարութե , և զերկը որդ գալուստն իւր : Եւ զի առաջին սերմանյն՝ առաքեալքն եղեն հնձողք , և յերկը որդումն լինին հրեշտակք , նորին իսկ է բարբառն . ահաւասիկ ել սերմանահան սերմանել սերմ բարի . բուսաւ ընդ նմին և որոմն . և զի 'ի կարծոյ հատից . 'ի ժամանակի հնձոցն ասացից ցհնձողմն , ժողովեցիք զրոյն ուրոյն , և զցորեանն ուրոյն : Իբրև հարցին աշակերտքն՝ թե զի՞նչ իցէ առակն , ագարակն , ասէ , աշխարհս է . և որ սերմանեայն՝ որդի մարդոյ . և սերմն բարի՝ որդիք արքայութեն . և որոմն՝ որդիք չարին . և հունձք՝ վախճան աշխարհի :

Եւ ոչ վայրապար ինչ ցուցանէ Օ աքարիաս զպատիժս գերանդւոյն , զոր յօյնն մանգաղ ասէ : Տեսի , ասէ , գերանդի թռուցեալ . և ասեմ ցհրեշտակն՝ որ խօսէր ցիս . տէր , զի՞նչ իցէ այս . և ասէ . այս են անէք՝ որ ելանեն ընդ երեսս ամենայն երկրի , և ծախեն զուտն և զտուն նորա , և զամենայն զի՞նչ և իցէ նորա : Բնդէր ոչ սուր և ոչ գեղարդն կամ նետ , այլ մանգաղ , Քանզի մանգաղն պահի 'ի հունձս . և հնձողքն հրեշտակք առաքին և ժողովեն զօրայն . և անդ է տեսանել զամենայն տիեզերս միանգամայն հնձեալ : Եւ ուստի հնձեսցեն : 'Ի գերեզմանայն արտաքս կորզեսցեն . ոչ կոտորեսցեն , այլ զկոտորեալսն 'ի միւմանս յօդեսցեն : Ա Ժժմ մարմինք իբրև սերմանիս սերմանեալ են յանդս . որպէս և Պաւղոս ասէ , թէ այնպէս է յարութիւն մեռելոց . սերմանի ասլականութեամբ , և յառնէ առանց ապականութեն . և քանզի 'ի գերեզմանս սերմանեցան , 'ի գերեզմանայն հնձեսցին : Ա աքեսցէ , ասէ , որդի մարդոյ զհրեշտակս իւր , և ժողովեսցեն զընտրեալս նորա 'ի չորից հողմոց , 'ի ծագաց երկնից մինչեւ 'ի ծագս երկրի : Դ'անացիցէս զբանս զայս 'ի Կաւթի , ժողովեցիք առնա զնբս նորա . զամենեսեան ժողովեսցեն , և 'ի մի վայր գումարեսցեն :

Յառնեն ամենեքեան , բայց կեպն իբրև զպատժալարտս առաջի ահեղ ատենին կարգեսցին , և

կեսընիբը զորս առաջի տն յափշտակեսցին : Օ որ օրինակ 'ի մտանել թագաւորի պատժապարտն չիշխէ յակն անկանել թագաւորին , և պատուականքն և մեծարոյքն ընդ առաջ ելանեն . նոյնպէս և որդին այ յորժամ գայցէ յերկնից և երևի , սքըն յափշտակին 'ի բարձունս . և այնպէս թուեսցի թէ ընդ նմա իսկ գայցէն : Որպէս որք թագաւորի ընդ առաջ ելանիցեն , և ընդ նմին գառնայցէն , թուի թէ ընդ նմին իսկ էին . նոյնպէս և ոքքն յորժամ ընդ առաջ կենարարին յափշտակեսցին , թուեսցի թէ յերկնից իսկ ընդ նմին իջանիցեն : Եւ ո՞ իցէ այսմ վկայ : Պաւղոս . զի ինքն տըն հրամանաւ 'ի բարբառ հրեշտակապէտին և փողովայ իջանիցէ յերկնից . և մեռեալք յարիցեն յառաջագոյն , ապա և մեք կենդանիքս յափշտակեսցուք ամազօք ընդ առաջ տն յօդս , և այնպէս հանապազ ընդ տն իցեմք : Տես , զի ընդ առաջ ելանեն , և ընդ նմին գան :

Եւ միտ գիր զարմանալեացն . յաշխարհիս որ ընդ առաջ թագաւորաց երթայցէն , իւրեանց կառօք և իւրեանց երիշարօք երթայցէն . իսկ կենարարն ինքն առաքէ գեսպանս երկնաւորս . ոչ կառս և երիշարս , այլ կառս ամպեղէնս՝ զիւրմն իսկ : Եւ ընդ այն զի զարմանաս , թէ Եղիա հրեղէն կառօք վերացաւ , և առաքեալքն , և այլք մի ըստ միոջէ ամպեղէն կառօք , և մի զհրեղէնն սպատուականագոյն քան զամպեղէնն համարեսցիս : Իսպեցան մարգարէին յայնժամ գեսպանք կառք հրեղէնք , և երիւարք հրեղէնք , և յերկրաւորաց յերկինս վերանայըր . և իւրեղանիւ 'ի ներքոյ 'ի վեր 'ի բարձունս հոլովվէր . այլ յայնժամ յիրաւի հրեղէն կառօք , և ապա ոչ հրեղէն , այլ ամպեղէն : Ինդէր . քանզի յայնժամ երկրաւոր ամանն ունէր ինչ կարիս երկրաւորս , զի հրեղէն կառօքն նորոգեսցի , և ընկենուցու զերկրաւոր ծանրութի , և առնուցու զհրեշտակական թեթևութին . քանզի այնուհեակ ընդ հրեշտակս իսկ ընակելոց էր : Ինդ գեսպան հրեղէն , և աստ գեսպան ամպեղէն . քանզի առանց ապականութէ յառնեն մարմինք , վասն այնորիկ և յամզն թէթև ելանեն : Եւ զի մի թուեսցին , թէ զայն թշնամանիցեմք

ինչ , և զայս յարգիցեմք , զայն ասացի , թէ մարդարէն հրեղէն կառօք պատուեցաւ , և որք Վ՞ոփի ընդ առաջ յափշտակին՝ ամսոք վերանամն . քանզի՝ ամսոք կառօք են սըյն այ . և լուր Վաւթի . որ հաստատեաց , ասէ , 'ի վերայ ջուրց զվերնայարկս իւր , և եդյամսոք զգնացս իւր . իւրովք կառօք մեծարէ զորս . լուր Եսայեայ , աշաւասիկ տը նստեալ 'ի վերայ թեթև ամ պոյ , և եկեսցէ յլքիպտոս : Տեսանես , զի իւրովք կառօքն հրամայէ պատուել զսքս , և ելանել ընդ առաջ կենարարին :

Եւ զիարդ ելանիցեն : Խնդն իսկ դիւրէ . քանզի մխօսի երբէք Պաւղոս յանձնէ , որպէս և ասէ , թէ զփորձ ինչ խնդրէք զ Բ՞ափի , որ ինես ընդ ձեղխօսի . և զինչ ասիցէ . յափշտակիմք ամսոք ընդ առաջ տն յօդս : Եւ այնպէս կէսքն յափշտակին , և կէսք առաջի աշէդ ատենին կարգեսցին . որպէս և կենարարն իսկ ասէ . ամէն ասեմ ձեզ , յորժամ եկեսցէ որդի մարդոյ , յայնժամ թէ իցեն երկու 'ի մի մաշիճն , մին առցի , և միւսն թողցի . և եթէ աղայցեն երկու 'ի մի երկանս , մին համբարձցի , և միւսն թողցի . և սեն ցնա առաքեալքն . յո՞ , տը . և ասէ ո՞ր , ուր մարմն իցէ՝ անդը և արծուիք ժողովեսցին : Ա ամն ե՞ր արծուիք . քանզի 'ի բարձունս յափշտակելոց են : Օ ի՞նչ իցէ , երկուք 'ի մի մաշիճն և մին առնուցու՝ և միւսն թողուցու . և երկու աղայցեն 'ի մի երկանս , և մին ամբառնայցէ , և միւսն մնացէ : Զիք աստ այլ ընդ այլց ասել ինչ առակաւ , այլ յայտնի իսկ մէկնութիէ . մաշիճն զիըք զչանզիստ աշխարհիս կուեն , և երկանս՝ զկարի տառապանս աշխատելոց , որ իբրև յերկանի ցնորեալ կայցեն ընդ պէս-պէս վիշտս , 'ի հառաջանաց 'ի հառաջանս , 'ի յաղքատութի՝ յաղքատութի : Եւ զի զիարի տառապանս երկանք կուեն զիըք , Վովսէս վկայեսցէ . ասէ . ել հրեշտակին , և եշար զանդքանիկսն եզիպտացւոց , յանդքանկանէն քարաւոնի՝ որ նստեր յաթոռ թագաւորութեան , մինչեւ յանդքանիկ գերւոյն՝ որ կայր յերկանս : Ա ամն այնորիկ և Եսայի ցիշխանն բարե-

լացւոց ասէր նախատանօք . դու , ասէ , ասացեր , թէ ես եմ , և կացից մինչեւ յաւիտեան . փոխանակ ասելցն , թէ թագաւորեցից յաւիտեան . վասն այնորիկ եկեսցէ հասցէ քեզ անզաւակութի . առ երկան , և աղաւ ալիւր : Քանզի ասաց , թէ յաւիտեան կալայց զիշխանութիս և զթագաւորութի , և ոչ տեսից զայրութիւն . և իջուցանէ զնա յաթոռոց թագաւորութեն , և կապէ յերկանս . առ , ասէ , երկանս , աղաւ ալիւր . անց ընդ գետ . փոխանակ ասելց , թէ տառապեալ գայթագղեալ շրջեսցիս : Եշ քանզի մահիճքն հանգիստ են , և երկանն՝ աշխատութի , յայտ առնէ կենարաբն , թէ և յաշխատելոցն , և յայնցանէ որք՚ի դիւրութե իցեն՝ լինիցին ոմանք արդարք , և ու մանք մեղաւորք : Երկու իցեն՝ ի մի մահիճք . մին՝ որ արժանի հաւատոցն իցէ , ամբարձի , և միւսն՝ դահճաց մատնեսցի . մինն՝ հրեշտակաց , և միւսն՝ դիւաց : Եշ աղայցեն , ասէ , երկու՝ ի մի երկանս , մին վերասցի , և միւսն մնացի : Օնոյն միտս հարցին աշակերտքն , և ասեն . տէր , յո՞ւ ամբառնայցեն . ասէ ցնոսա , ուր իմ մարմինն իցէ . փոխանակ ասելց , թէ ուր իմ գալուստն իցէ :

Եշ բարիոք ասաց , թէ մարմինն . քանզի մարմնովն յայտնելց է . թէպէտ և ծածկեցաւ մարմինն ածութքն , և ներկաւ անմահ արմատովն , և է ամենեիմ անմահութիւն . չկորոյս զնկարագիրն , այլ կայ մնայ նկարագիր մարմնոյն , ներկեալ և ընկղմեալ՝ ի կենացն : Եշ օրինակ ինչ նմին՝ ի մէջ բերցուք , թէպէտ և մթին և ընդ աղօտ իցէ , սակայն և ՚ի փոքուն առնու ոք գոնէ սակաւ ինչ զնշմարանս մեծին : Վա երկաթ , և միւսեամբ՝ ի բովս հրոյ , և տես որպիսի ինչ եր՝ մինչեւ՝ ի հուր միւսեալ էր . մթար երեսօք , ցուրտ առ ՚ի շօշափել . և յետ՝ ՚ի հուրն մուրանելց , լուսաւոր տեսլեամբ , ջերմն զննելով . և չկորոյս զլինելն երկաթ , այլ զի առաւելութի քան զիւր բնութիւնն ընկալաւ . թէպէտ և պայծառացաւ , չլրիպեաց յիւրոց կերպարանացն . զինչ կերպարանք և ՚ի ներքս միսեցես , նոյն և երեկի . եթէ բոլորակ , եթէ երեք կուսի , եթէ չորեքկուսի , և եթէ զիարդ և իցէ՝ զկերպարանս չփոխէ . բայց գոյնն զհրոյն գոյն առնու ,

նոյնպէս և որ արժանի երկրպագութե՛ տէրունա-
կան մարմինն, ներկաւ անմահ արմատով ածպաշ-
տութե՛ն, և ընկղմեցաւ 'ի կենացն, և զգեցեալ ունի
զածութե՛ն, ոչ վայրապար արտաքոյ, այլ իբրև զեր-
կաթ' ներքոյ և արտաքոյ . բայց կայ և մնայ յանեղծ
նկարագիրն, 'ի փառս հաւատացելոց, և յամօթ ար-
համարչողացն :

Եւ չի տեսեալ, զիարդ որք 'ի տար աշխարհէ
յետ բազում ժամանակաց գայցեն, և ընտանիքն
նշան խնդրեն, ոչ զիառաւորութե՛ ինչ, թէպէտ և
փառաւոր գայցեն, այլ զառաջն կենացն, թէ ար-
դարե սա նա իցէ . և ոչ այնչափ ինչ ճշգրիտ 'ի հան-
դերձմն հային, որպէս յօնացն կերպարանս, և ձե-
ռացն նշանանս, և 'ի հերմն՝ թէ ձաղկաչեր, կամ
գանգրահէր իցէ . և մարմնոյն թերութիւնք քարող
անձանութիւն լինին, || ասն այնորիկ չկամի որցն երևել
ածութե՛ն, այլ մարմնոյն կերպարանօք, զի հայեսցին
և տեսցեն, թէ արդարե այն է՝ որ 'ի Կայիափային
չհաւատացաւ, և 'ի Պիղատոսէ դատեցաւ, և 'ի խաչ
ել. զի վկայեսցէ տեսին ածամարտ կռուոյն, և
փառքն յայտնեսցեն զՃշմարտութե՛ն : Օ մոռաւ ած,
զիարդ յայնժամ արդարքն վազս առեալ ցնծասցեն :
Օ մոռաւ ած, զիարդ Պետրոս խայտասցէ, և առա-
քելոցն պար առեալ ձեւեսցեն, և ասասցեն ցմի-
մեանս . սա է ածն մեր, սա է որ խաչեցաւն երբեմն
առ մեւք, սա է որ երբեմն արհամարհեցաւ վասն
մեր . տես զկերպարանս, միտ դիր աշացն :

Եւ ոյր յառաջագոյն ասացեալ իցէ զայն: Խսայայ:
Եղիցի, ասէ, յաւուրս յետինս ասասցեն, ահաւա-
սիկ ած մեր՝ յոր յուսացաքն, և ցնծասցեն, և աչք
զալս իսկ տեսանիցեն, յորժամ ողորմեսցի որ Սիո-
նի . փոխանակ ասելոյն, թէ յայտ յանդիման իսկ ա-
ռաջի աչաց երևեսցի: Հնան արդարք, և հանա-
չեն զտրն իւրեանց . սուգ առնուն ամբարիշտք, յոր-
ժամ հանացիցեն՝ զոր արհամարհեցինն: Օ ի թէ
աստէն յաշխարհիս ուրուք ումեք յանցուցեալ ինչ
իցէ, և ինքն 'ի պատուոյ անկեալ, և որում յան-
ցեաւն՝ զնա յիշխանութիւն տեսանիցէ, կասկածէ և
դողայ, թէ գուցէ և յիշեսցէ զիրսն, գուցէ զմոտւ

ածիցէ զթշնամանսն . և ազգի ազգի հնար հնարեսցի , թէ զիարդ զցասումն ցածուցէ . անձամբ կարիցէ ածել 'ի հաւան , թէ բարեկամօք : Խակ դու զիարդ կարիցէս ածել զքո նորն 'ի հաւան . մարտիրոսօք՝ զորս բամբասեցերն , թէ առաքելովք , զորս անարդեցերն . զորոց անուանս աղարտեցեր , զի՞ ատթէի և զի՞ արթուղիմէսի , թէ զի՞ կայ նոցա և Պղատոնի , զի՞ նչ համեմատութի են Ծքիստոտելեայ . այժմ արհամարհէս զանուանս նոցա , և յայնժամ ընթանաս զօղել ընդ բարեխօսութք նոցա որով աչօք , որով համարձակութեամբ . ԾՈՒՀկարես ածել 'ի հաւան : 'Ի փախստի ուշ առնիցէս . և ըսիցէս Դաւթի , թէ յո՞ երթայց յոդոյ քումնէ , կամ յերեսաց քոյ յո՞ փախեայց : Եւ եթէ չգուցէ ուրեք փախուստ , ո՛չէգդ և թշուառականդ , ուսի՞ր առ նա անցանել փախստական . որպէս որք իմանայցեն՝ եթէ չեն ապրելոց 'ի տանջանաց դատաւորաց ըստ արժանի օրինաց պահանջելոյ , մի միայն ապաստան փախստի կայ նոցա , առ թագաւորն դիմել , և արքունի չնորհօքն փարատել զպատիժ տանջանայն : Ո ասն այնորիկ և Դաւթիթ իմացեալ զիսեզճ՝ մեղացն՝ որ տանջեր զնա , թէ ըստ օրինաց հրամանացն պատժապարտ էր , փախչի յամենեցունց , և 'ի նոր միայն ապաւինի , թէ դու նոր , յոյս իմ ես և ապաւին :

Օ որ օրինակ արդարքն ցնծասցեն , յորժամ զի՞ տեսանիցէն , նոյնպէս և որք յանցաւորքն իցէն՝ սրտաբեկ լինին . և յառաջ քան զպատիժն 'ի տեսլինէ որ երեսացն լուծանին և անկանին , յորժամ տեսանեն զնշան խաչելոյն , զոր և կենարարն իսկ ասաց , թէ յայնժամ երեեսցի նշան որդոյ մարդոյ յերկինս : Խախ քան զի՞ երեելն՝ խաչն գայ յառաջապոյն մեծապայծառ լուսով , սաստիկ ճառագայթիւք , որ զարեգակն ընկղմէ , և զլուսին ծածկէ , և զաստեղս շիջուցանի : Խախ նշանն երեի , և ապաթագաւորն . որպէս և աստ , զի նախ նշանքն երեին , և ապաթագաւորն գայ . նոյնպէս և անդ՝ նախ խաչն լուսաւորեալ երեի , և ապաթագայտնի . զի յորժամ տեսանիցէն զիսաչն , ամաչեսցեն , թէ որ յայնժամ թշնամանացն թուեր , այժմ 'ի բարձանց պատուով

գայ, իշտ նշանակիրք ոչ առաքեալքն իցեն, և ոչ մարդարէք, այլ հրեշտակապետք և հրեշտակաց գունդք . յառաջ քան զիսալն, և ընդ խաչին գայցեն :

Իշտ յետ ասելոյ, թէ յայնժամ երևեսցի նշան որդւոյ մարդոյ յերկինս, զի՞նչ ասիցէ . յայնժամ կոծեսցին ամենայն աղդք երկրի : Կոծ սաստիկ անհաւատիցն հասանիցէ, որպէս ուրախութիւն մեծ հաւատացելոցն . և զայս ոչ եթէ կենարարն միայն ասաց, այլ նախ մարդարէն Օ աքարիա . յայնժամ մոցէ արեգակն 'ի վերայ մարդարէիցն, և լուսին խաւարեսցի . յայնժամ տեսցեն զոր խոցեցինն . փոխանակ ասելոյ, թէ զոր բեկոօք ընդ խաչին բեկուեցին . յայնժամ կոծեսցին աղդքն առանձինն . աղդք տանն 'Իաւթի առանձինն, և կանայք նոցա առանձինն . աղդք տանն 'Իաթանայ առանձինն, և կանայք նոցա առանձինն . ամենայն աղդք առանձինն, և կանայք նոցա առանձինն : Ինդէր զամենայն աղդաց ասիցէ, և կամ վասն էր զի՞աւիթ և զի՞աթան յիշէ : 'Իաթան չէ 'ի նահապետացն, այլ յաղդէն 'Իաւթայ էր : Երկու որդիք հուժկուք՝ էին 'Իաւթի . թէպէտ և բազումք էին, երկուքն պատուականք էին՝ Առղոմնն և 'Իաթան . 'ի 'Իաթանայ իջանէ աղդն Յովսիփայ, և 'ի Առղոմնշնէ աղդն Ո'արիամայ : Ո'արիամթագաւորազն էր, և Յովսէփ թէպէտ և թագաւորազն էր, այլ ոչ 'ի Առղոմնշնէ՝ որ առ զաթոռն 'Իաւթի, այլ 'ի 'Իաթանայ յեղորէ թագաւորին : Եւ քանզի ամենեցուն հասանելոց էին թշնամանք անձամարտութեանն, և առաւել աղքականացն, որ զիւրեանց փրկին ոչ ծանեան, կոծեսցին, ասէ, աղդն 'Իաւթի առանձինն . և զի՞ Ք՞ո 'ի 'Իաւթէ էր ըստ մարմնոյ, սուգ առնուն աղդականքն՝ եթէ զորպիսի առհաւատչեայ փրկութէ կորուսին :

Իշտ արդ զի մի սուգ առնուցումք, այլ ուրախակից լինիցիմք, և ընդունիցիմք զիսաչեալն փառօք . լուիցեն զայս հրեայք՝ որ զմարմին որդւոյն ոյ 'ի խաչ հանին, և հերձուածոլք՝ որ զանձութին արհամարհեցին : Ո'արդարէիցն գպրութիք և առաքե-

Ըստն առաջի ատենին ՎՇի բանալոց¹ են : Համարիս եթէ մարդարեքն չգայցեն յատեանն, և հրեայք ոչկայցեն կորայցեալ առաջի բեմին ՎՇի, և հերձուածողք սրտառուչ սրտաբեկ յահեղ դատաստանին : Հարցացնին հրեայք, թէ ընդէ՞ր ուրացայք . հարցցին հերձուածողք, եթէ ընդէ՞ր հայհոյեցէք . և զի՞նչ կարասցեն տալ պատասխանի : Ի Յ թէ հերձուածուացէ հրեայն, եթէ լուայ 'ի մարդարեիցն, ես եմ ած, և բայց յինէն ցիք այլ ած, ես առաջին՝ և ես առ յապայ . 'ի յ լասայայ մարդարեէ զայս ուսաք, և մեք տառապեալք զի՞նչ ձեռնհաս էաք առնել : Ի շու ցհերձուածողն ասասցէ, և դուք ընդէ՞ր հայհոյեցիք զորդի . վասն է՞ր թշնամանեցիք զիառս միածնին : Ծիերես ասասցեն և նոքա, թէ Պետրոս այնպէս ուսոյց մեզ, և Պաւղոս այնպէս վարդապետեաց մեզ, եթէ ՎՇ է խաղաղութիւն մեր, որ արար զերկոսին մի, և հաշտեցոյց ընդ հօր՝ իբրև զմիջնորդ ընդ ած և ընդ մարդիկ . միջնորդ քարոզեաց զնա, և ոչ ած, և խաբեցաք :

Հայնժամ բարկասցեն գունդք մարդարեիցն, և զայրասցեն դասք առաքելոցն . բերցեն զգիրս 'ի մէջ : Ի սայի բացեալ զգիրս իւր՝ ասասցէ : Տես տըր, զիարդեղե ջատագով քում ածութեղեդ . ընթերցցին պատգամին՝ զորս վասն քո խօսեցայ . լուիցեն հրեայք, ասասցեն քրիստոնեայք, եթէ աւելի ինչ քան զիս քարոզեցին առաքեալքն . մի թէ չգիտէ՞ր զմիածնն որդիդ ած . մի թէ չքարոզեցի յառաջազոյն, թէ մանուկ ծնաւ մեզ՝ որդի տուաւ մեզ . և կոչի անուն նորա մեծի խորհրդոյ հրեշտակ, սքանչելի, խորհրդական, ած, հզօր, ձոխ, իշխան խաղաղութեն, հայր հանդերձեալ աշխարհին : Ոչ յեռի ընդ միմեանս զածիսութին, և զտնտեսութին . մերթ՝ ած, հզօր, ձոխ, իշխան խաղաղութեն . մերթ՝ եթէ ահաւասիկ կոյս յղասցի և ծնցի որդի, և կոչեսցեն զանուն նորա Խմիմանուել, որ թարդմանեալ կոչի՝ ընդ մեզ ած : Չքարոզեցի և զարչարանացն, թէ իբրև զուխար 'ի սպանդ վարեցաւ, և վու մեղաց ժողովրդեանն

1 Յօրինակին բանակելու :

'ի մահ մատնեցաւ . չքարողեցի՞ և զդալստենէն . մի
թէ ասացի՞ , մարդարե գալոց է , և ոչ անդ : Որպէս և
Օ աքարիա մարդարէ , թէ ասացէք դստեր Ախովնի ,
էթէ աշաւասիկ թագաւոր քո դայ հեծեալ՚ի յովա-
նակի . նոյնպէս և ես՝ եթէ աշաւասիկ տը դայ դօ-
րութք : Աչ ոք յառաքելոյն եղե քեզքարող իբրե-
զիս . նոքա մարմնովդ հանդերձ քարողեցին զքեզ ,
և ետուն պատճառու հայհոյութեն առ անդիտութե .
և ես ամենեիմ զածութիւնդ քո քարողեցի , մեծի
խորհրդոյ հրեշտակ , անդ , հզօր , Ճոխ , իշխան խաղա-
ղութեն , հայր հանդերձեալ աշխարհին . զայս ոչ ոք
յառաքելոց քոց ասաց . ես նախ եղե քեզքարող
քան զառաքեալն . մի ոք զրպարտեացէ զիմ գիրսն :
Օ այս ասէ Խասյի ջերմեռանդն մտօք . քանզի համ
արձակ և անաշառ է . որպէս և Վռաքեալ ասէ ,
եթէ Խասյի համարձակի և ասէ :

Հառաջ մատի և Առովնես , որ հրեիցն սիրելի և
պատուական էր քան զած . 'ի մէջ անցեալ և նա լի-
նի ջատագով . սկսանի ասել , թէ հեզք և թշուառա-
կանք . քանզի այլ բարբ Առովնեսի են , հանդարտու-
թք յանդիմանէ : Վայն , ասէ , Առովնես հեզ էր քան
զամենայն որդիս մարդկան : Չգուշակեցի՞ իսկ յա-
ռաջագոյն զանպտղութէ անհաւատութեան ձերոյ .
քանզի ոչ կարելք մեծամեծս ընդունել , ասեմ . մար-
դարէ յարուսցէ ձեզ տը ան յազդէ ձերմէ , նման
լուիջիք . և եղիցի ամենայն անձն՝ որ ոչ լուիցէ մար-
դարէին այնմիկ , սատակելով սատակեացի : Եշ թէ
զայս փոքր ինչ համարէիք , ոչ անդէն 'ի սկզբան ա-
րարածոց պատմութեն զլարրորդութին քարողեցի .
մերթ' եթէ ասաց անդ , եղիցի լոյս . և մերթ' եթէ
արասցուք մարդ ըստ նմանութեն պատկերի կերպա-
րանաց մերոց . և մերթ' եթէ եկայք իջցուք և բա-
ժանեսցուք զլեզումն . ոչ ես իմովք իսկ ձեռօք զըե-
ցի , եթէ տեղեաց տը 'ի տանէ հուր և ծծումք 'ի վե-
րայ սոդոմացւոց և գոմարացւոց : Անի թէ չորտմիցիմ
ընդ կորուստդ ձեր . այլ լաւ համարիմ անտես առ-
նել զձեզ , և մի տանդ զիմադարձ լինել : Եշ ո՞ իցէ
վկայ բանիս այսմիկ . տըն իսկ , որ ասէր ցհրեայն .
համարիք եթէ ես ամբաստան ինչ լինիցիմ զձէնջ

առաջի հօր . Է որ ամբաստան լինի զձէնջ , Վոլսէս՝
յոր գուշն պանծացեալ էք . զի թէ հաւատայիք
Վոլսէսի , ապա և ինձ հաւատայիք . քանզի նա վասն
իմ զըեաց : Եւ զի բանալոց են զիրք , վկայէ՛ Դա-
նիէլ . տեսանէի՝ զի հինաւուրցն նստէր , և աթոռ
նորա իբրև զյուր . տեսանէի՝ զի աթոռք անկան , և
դպրութիւնք բացան : Օ այս ամենայն ցհրեայսն ա-
սասցեն :

Աղջեսցին 'ի մէջ հերձուածողքն : Հառաջ կայ-
ցէ Պաւղոս ամբաստան զնոցանէ , որ զրպարտեցաւն
յանածախօս լեզուաց նոցա . պահանջեսցին և նո-
քա , թէ ուր ընթերցարուք զորդի խոնարհագոյն
ասելքան զհայր : Խսեն և նոքա , եթէ դու և Պիե-
տրոս ուսուցիք . նա ասէր , եթէ աջովն այ բարձ-
րացեալ , և զաւետիս հոգւոյն ընկալեալ՝ եհեղ 'ի
մեզ . և դարձեալ , չ'ս 'ի Կազարեթէ՝ զոր եօծն
ած հոգւովն սրբով . զայն չ'ս և որ և օծեալ արար
ած : Եւ դու ասէիր , եթէ այ հօր , որ յարոյց զնա
'ի մեռելոց . և դարձեալ թէ զոհանամ զայ 'ի ձեռն
չ'սի Վ'սի . և չասացեր , եթէ զնմանէ , այլ թէ 'ի
ձեռն նորա զայ զոհանամ : Հայուժամբանայցէ Պաւ-
ղոս զբերան իւր , որ ոչ երբէք փակեցաւ . որ ասէր ,
եթէ բերանք մեր բացեալ են առ ձեզ , կորնթացիք .
և պատուհասակոծ առնիցէ . որդի անօրէնութեան ,
սերմ ժանտ , տունկ անհաւատութե , չքարոզեցի
զնծութի միաձնին . չասացի , թէ Վ'ս ըստ մարմնոյ ,
որ է 'ի վերայ ամենայնի ած օրհնեալ յաւիտեանս .
չասացի , թէ ոչ ինչ յափշտակութի համարեցաւ լի-
նել հաւասար այ , այլ զանձն ունայնացոյց , զկեր-
պարանս ծառայի առեալ . չասացի , թէ ոչ խուժ և
ոչ դուժ և ոչ սկիւթացի , այլ ամենայն և յամե-
նայնի Վ'ս է . չասացի , թէ որ էն ծագումն փառաց ,
և նկարագիր էութե , և պատկեր աներեսութին այ ,
որ կը զամենայն զօրութիւրով : Եւ նոքա ասեն .
չքարոզեցեր իբրև զմարդ , չքարոզեցեր Վ'ս ըստ
մարմնոյ : Խյլ որ , քարոզեցի զՎ'ս ըստ մարմնոյ , այլ
և յայլում վայրի ասացի . թէպէտ և զիտէաք զՎ'ս

ըստ մարմնոյ , այսուշետե ոչ նոյնպես գիտեմք : Մատուցեալ յառաջ ասացի և Պիտրոս . զիջանելնիմ ըստ հեթանոսաց և ըստ հրեից՝ ընթերցար , և զմեծ դաւանութիւնն՝ զոր դաւանեցի զ՞ն , ընթերցար : Ա ասն որո՞յ դաւանուե առի զփականսն . զի նազով բեցի կուեցի զ՞ն : Աչ . այլ զի ասացի , եթէ դու ես զ՞նն որդի այ կենդանւոյ . յորժամ ասէի՝ թէ որ և օծեալ արար զնա , եթէ յորժամ ծնունդն 'ի հօրէ ծնեալ :

Եւ արդ՝ զգոյշ լերուք , քանզի բանալոց են զիրք և դպրութիք . և նստցի թագաւորն . և ջատագովք հմարտութեն յառաջ մատցիցին , և դատախաղքն ամաչեսցեն : Կանխեսցմեք յառաջ քան զատեանն . յառաջ քան զնստել թագաւորին 'ի դատել՝ դոյ հնար ածել 'ի հաւան զդատաւորն . յառաջ քան զատեանն մարթի աղաչել . առաջի աչեղ բեմին չե հնար պաղատել : Կ, զիցի ամենեցուն մեզ անարատս յանդիման լինել բեմին ք՞նի . զի նորա են փառք և զօրութի յաւիտեանս . ամէն :

ՃԱՌԻ ԵՒԹԻՆ ԵՐՈՐԴ

Նորին պրեյն Սէբէրիանոսի ասացեալ 'ի նոյն կրօնա :

ՊԱՐՄԱՑԱՑ ԾՆԴ ՃԵՂ ՌՎԱՌԱՄԵՐՔ, ՊԻՆՈՐ ՀՆՈՐ ՀՔ
աւետարանիս՝ հին կտակարանօք քարողեցան . լու-
սաւորեցայ ԾՆԴ ՃԵՂ մոօք, քանզի տեսայ զառաքե-
լական նկարագիրս մարգարէական բարբառօքն պայ-
ծառացեալ, կյոստովանիմ զշնորհսն, զի առնուցում
զվարձն : Տեսի նոր խորհուրդս հնովն քարողեալ,
յորժամ լքրահամ երդումն ծառային յերանսն իւր
տայր . յերանսն ձեռն տայր արկանել, և զած երկ-
նից և երկրի բանիցն վկայ կոչէր, Դիմի, ասէ, զձեռն
քո ԾՆԴ երանօք իմովք, և երդմնեցուցից զքեղ 'ի
նոր ած արարիչ երկնից և երկրի : Կյոնդիր մեծ կայ
'ի բանիս . զի եղաւ վասն զաւակին՝ որ յերանաց
հակոբու ելանելոց էր . ըստ այսմ, թէ մի պակա-
սեացէ իշխան 'ի Հուդայ, և մի պետ յերանաց նո-
րա . զիարդ 'ի կենարարն երդուեալ գտանիցի . քան-
զի Աահակ վաղուց ծնեալ էր, և զաւակն յառա-
ջագոյն բղխեալ . և յորժամ զերդումն ետ՝ վկայը
ինչ յոյս այլում զաւակի յերանացն ելանելոց : Հայտ
է եթէ լքրահամ ունէր յանձին զսերմն կենարար .
զորմէ ասէր Պաւղոս, եթէ լքրահամու տուան աւե-
տիքն, և զաւակի նորա . և հանդէս արարեալ մեկնէ
զիրսն 'ի գաղատացւոց թղթին . չասացաւ, ասէ, թէ
քեղ և զաւակաց քոց՝ որսկէս զբազմաց, այլ քեղ և
զաւակի քում, որ է՝ Բ.Ռ. : Հուցաւ այսուհետեւ, թէ
զաւակի լքրահամու է Վ.Ռ. ըստ մարմնոյ . և յիրաւի
տայր երդումն 'ի զաւակն : Որ իննդիր այսմ է, թէ
զիարդ տայր երդումն յերանսն, զի կենարար ծա-
զիկն յառաջագոյն ծաղկեալ էր 'ի նմանէն : Վ.Ռ. անզի
մի անգամ անդամն գործի սրբութեան եղլ, և բնա-
կեաց երբեմն անդ ածեղէն զաւակն, վասն այնորիկ

1 Աւայր ճառի գտանի յոյն մատենիցն Ոսկեբերանի . հտ.
բնագիրն տպագրեալ 'ի կարգս Զ. երես 569:

'ի տաճարն տայ երդումն . և որ երդնու , ասէ , 'ի տաճարն , երդնու յայն՝ որ բնակեալն է՝ 'ի նմա : Որպէս և կենարարն ասաց ցփարիսեցիսն . վայ ձեզ , փարիսեցիք կոյրք , զի ասէք , թէ որ երդնու 'ի տաճարն՝ չէ ինչ , բայց որ երդնու յոսկի տաճարին՝ արժան է . յիմարք և կոյրք , զի՞նչ մեծ է , ոսկին եթէ տաճարն , որ սրբէ զոսկին . վասն այնորիկ ասեմ ձեզ , որ երդուաւ 'ի տաճարն՝ երդնու յայն որ բնակեալն է՝ 'ի նմա :

Օ որ օրինակ տուն արքունի , որ մի անգամ և երկից վանք թագաւորի լինիցին , թէպէտ և փոխեսցի անտի թագաւորն , որ մի անգամ յարքունիսն նուիրեցաւ՝ արքունի կողի . նոյնպէս և անգամ նահապէտին՝ որ միանգամ եղեւ գործի հանդերձեալ տնտեսութեն , տաճար էր խոստացելց բարութեն . և չէր 'ի զուր երդումն , այլ ձշմարիտ վկայութիւն : Վարդ երդումն տայ 'ի զաւակն , և մեկնէ , թէ ուշից զաւակն : 'Ի իր , ասէ , զձեռն քո ընդ երամսօք իմովք , և տաց քեզ երդումն 'ի տը ան արարիչ երկնի և երկրի : Եթէ այնպէս իցէ , 'Ք' քրկիչ մեր՝ տը և ան երկնից և երկրի է : 'Մին իրի և Օ աքարիայ մարգարէի , յորժամ պէսպէս յայտնուիք երևեցան սբյն , եղեւ այնպիսի ինչ մասնաւոր յայտնութի : Վարձի ձի , ասէ , զաւս իմ և տեսի , և ահաւասիկ աշտանակ մի ձոյլ ոսկի , և եւթն ձրագարանք 'ի վերայ աշտանակին , և եւթն ըերամնք ձրագարանացն , և եւթն դունդ վառեալ , և ընդ աջմէ և ընդ աչեկէ երկուստք ձիթենեաց : Եւ ասեմ ցհրեշտակն՝ որ խօսէր ցիս . տէր , զի՞նչ է այս : 'Ք' անզի աչացն այլազդ երեխ , և մեկնութին այլազդ գալոց էր . որ երեխն ոչ անձանց նշաննակիչք էին , այլ այլոց իրաց իմն գուշակիչք . հարցանէ մարգարէն . որ , ասէ , զի՞նչ իցէ այս : Եթէ զյայտնոյն հարցանէր , ապա չհարցանէր բարւոք . եթէ այնչափ չգիտէր , թէ զի՞նչ աշտանակն իցէ , և զի՞նչ ձիթենիքն . այլ խնդրէ մարգարէն 'ի վերայ հասանել՝ ոչ յայտնեացն , այլ նոցին մեկնութենցն . քանզի ասէ իսկ , թէ զի՞նչ իցէ այս . և հրեշտակն ասէ ցնա . չգիտես թէ զի՞նչ իցէ այս . և նա ասէ . ոչ , որ : Հնաղանդ մտօք խոստանայ զտիսմա-

ըութին, և ուսանի 'ի ճշմարտութեն։ Խղբայր էր
և սա նեղքինսց՝ որ լուաւ 'ի Փիլիպպոսէ, եթէ գի-
տիցես արդեւք զինչ ընթեռնուցուսդ։ և նա հնա-
զանդ մնօք, զիարդ զիստացից, ասէ, եթէ ոչ ոք ա-
ռաջնորդեսցէ ինձ։ որպէս և աստ ասէ, թէ զգիտես
զինչ իցէ այս. և նա ասէ. ոչ, որ զինչ իցէն երկու
ոստք ձիթենեացն՝ որ ընդ աջմէ և ընդ աչեկէ աշտա-
նակին իցէն։ Խւ նա մեկնեաց զոստս ձիթենեացն,
ընդ նմին և զաշտանակն թէ զինչ իցէ։

Ո՞իտ դիր հաստատութե։ Աշտանակն կայր 'ի մի-
ջի, և ոստքն աստի և անտի աշտանակին։ Խակ հրեշ-
տակն զոստսն մեկնէ, եթէ ոչ զաշտանակաւն կային,
այլ առաջի այ։ որպէս թէ աշտանակն իցէ օրինակ
այ, մանաւանդ թէ կենարարին մերոյ, և մարմնա-
ւոր տեսչութենորա։ Զգիտես, ասէ, զինչ իցէ այս. և
նա ասէ. ոչ, որ Այս երկու ոստք են երկու որդիք
պարարտութե, որ կան առաջի մն այ ամենայն եր-
կրի. ոչ աշտանակիդ՝ որ երեխ, այլ մն այ ամենայն
երկրի։ Պարտ է և այնմ հաստատութե միտ զնել։
Եւթնձրագեան ասէ զաշտանակն՝ վասն մարմնաւոր
տեսչութեանն մն։ արդարեւ աշտանակն իսկ որունի
մարմինն էր, և զհոգւոյն սեյ չնորհաց եւթնպատիկ
ընկալաւ, վասն մերոյ օրինակի, և ոչ վասն իւրոյ ինչ
կարօտութե։ Որպէս և Խսայի ասէ, եթէ ելցէ զա-
ւազան յարմատոյն Հեսսեայ, և ծաղկեսցէ ծաղիկ
'ի նմանէ, և հանգիցէ 'ի վերայ նորա հոգի այ։ Ո՞ր։
Շազմամասն ըստ արդիւնսն գործելոյ, և պարգե-
առանց մասանց ըստ ընութե։ Խւ հանգիցէ 'ի վե-
րայ նորա հոգի այ։ Օ առաջինս զէութէ հոգւոյն
սեյ ասէ, քանզի և հոգի այ կոչէ. և յաջորդօքն զար-
դիւնս՝ որ գործէ յայլ, հոգի անուանէ։ Հոգի, ա-
սէ, իմաստութե և հանձարոյ, հոգի խորհրդոյ և զօ-
րութե, հոգի գիտութե և անձպաշտութե։ զեւթ-
նեակ չ չնորհս հոգւոյն սեյ, որ հանգեաւ 'ի վերայ
որունական մարմնոյն, ասէ։ Խիարէ զայս և աշտա-
նակն վեցոստեան. ցուցանի աշտանակ, զի յայտնի
արասցէ զլուսաւորութի արդեանց հոգւոյն սեյ. զի

ևս հաստատագոյնս յայտ արացի, իջեալփոքը մի
'ի խոնարհ, սոքա են աչք տես որ հային ընդ ամենայն
երկիր :

Տեսանեն, զի վասն ամենայն երկրի լուսաւորու-
թի հանգեաւ եւթն չնորհքն օրինակաւ 'ի վերայ
տերունական մարմոյն : Աշ զի ևս լուսաւորագոյն
լիցի, վկայէ աւետարանիչն . հոգի ոք եկեսցէ 'ի քեզ,
և զօրութի բարձրելցն հովանի լիցի 'ի վերայ քո :
Աւր հոգին ոք էր, և զօրութի բարձրելցն անդստին
'ի սկզբանէ ածեղէն յղուեն, զի՞նչ պիտոյ էին յետոյ
եւթն ազդեցութիք հոգւոյն . որպէս և հերձուածո-
ղաց աշակերտքն բամբասեն, եթէ յետ մկրտութեն
ասաւ արժանի եղեւ ընդունել զաղդեցութիւնս հոգ-
ւոյն սիյ : Աշ մեք ոչ եթէ ուրանամք, եթէ չեկն
յայնժամ հոգին, այլ որպէս աւետարանիչն իսկ
ասէ, եթէ յորոյ վերայ տեսանիցես զհոգին՝ զի ի-
ջանիցէ, և հանգիցէ 'ի վերայ նորա, նա է . և ես տե-
սի, ասէ, և վկայեմ, եթէ սա է որդին այ : Տեսանեն,
զի վասն վկայութեն եկն, և ոչ առ 'ի զկարօտութի
ինչ ընլց : Ո՞ւս գիր, զիսարդ անձամք զանձն մեկնէ
Ճշմարտութին, և չէ կարօտ մարդկեղէն խորհրդոց .
ոք էն, ասէ, որ կան առաջի տես ամենայն երկրի : Օ ա-
քարիս տը ամենայն երկրի զկենարարն կոչէ ըստ
մարմնաւոր տնտեսուեն : Պետքոս խօսէր ընդ կոռ-
նիկէլի, գլուխ ամենայն առաքելոցն . մեք, ասէ, գի-
տեմք զբանն, որ եղեւ յամենայն հրեաստանի . որոյ
յառաջագոյն ասացեալ էր, եթէ ՀՅ'ի Կազարեթէ,
զոր էօծն ած հոգւովն սրվ : Ի՞նդ ասէ . զբանն զոր
առաքեաց ած աւետարանել զիսաղաղութի որդւոցն
Կարայէլի . նա է ամենեցուն տը, երկնաւորաց և եր-
կրաւորաց և սանդարամետականաց, երևելեաց և
աներեւութից նա է տը : Կմին միաբան բարբառի
և Հովաննէս, եթէ որ 'ի վերուստն եկն, 'ի վեր քան
զամենեսին է :

Ծայց կարեռը համարիմ և զմիւս հակառակու-
թի հերձուածողացն լուծանել, որ ամբարիշտ մտօք
լսեն զբան առաքելոցն, որպէս թէ վարձս ինչ ընդ
խախն առ զ'ի վեր քան զամենեսին լինել . իրեւ թէ
վասն չարչարանացն համբերութեն բարձրացոյց զնա

ած։ Օ այն անտի ախտացան, զի ոչ զբանս առաքելոյն ընթերցան ուղիղ, և ոչ զգօրութիւն բանիցն՝ ի միտ առին։ Խոնարհեցոյց, ասէ, զանձն մահուչափ, և մահու խաչի, և վասն այնորիկ և ած զնա բարձրացոյց, և չնորհեաց նմա անուն՝ որ՚ի վեր է քան զամենայն անուն։ զի յանունքսի քանի կրկնեացի ամենայն ծունդ։ Տեսանես, ասեն, զի յետ խաչին բարձրացաւ։ Հայիս, զի ընդ շարչարանայն առ վարձս զբարձրութիւն։ Օ ի թէ յետ խաչին բարձրացաւ, Վկրտիչն Քովաննես ընդէր բովոքիցէ, եթէ որ՚ի վերուստն եկն՝ ի վեր քան զամենեսին է։ չասաց, թէ լիցի քան զամենեսին ի վեր, այլ թէ է։ և ոչ թէ լիցի։ Կա և ինքն խսկ կենարաբն մինչդեռ ընդ հրեայմն խօսեր, ամէն ամէն ասեմ ձեզ, յառաջ քան զի քրահամու լինելն եմ ես։ Վանզի է մշտնջենաւոր, և էր, և եղիցի։ որ՚ի քէն շդաւանի, և ի մէնջ արժանաւոր պարտս զաւանութեն հատուցանին։ Վարոզեսի այսուհետեւ փառքն Վանի, և բարձրութիւնոյն։ քարոզեսի և հօր զօրութիւն։ Շարձրացի և միածինն, փառաւորեսցի հայր, դովեսցի հոգին որ։ Եւ մի որ համարեսցի, եթէ զկարգն ինչ եղծանիցմք, յորժամ նախ զորդւոյ ճառիցեմք, և ապա զհորէ, և կամ թէ նախ զորդւոյ և զհորէ, և ապա զհորդւոյ։ քանզի չիք կարգ անմահ ընութեն։ չիք ասեմ կարգք, ոչ եթէ անկարգութիւնիցիցէ, այլ թէ այսպիսի ինչ կարգք չիցեն՝ որ զմիմեամբք ելանիցեն։ Օ որ օրինակ յորժամ առանց կերպարանաց ասիցի ած, ոչ եթէ զտպեղութիւն ինչ նշանակէ, այլ թէ չունի մարմնաւոր կերպարանս։ և յորժամ անպատկեր ասասցի, ոչ եթէ որպէս չունիցի պատկերի գեղեցկութիւն, այլ զի անմարմին է, կոչի անպատկեր։ նոյնպէս և յորժամ ասիցեմ, եթէ առանց կարգի է ածեղէն բնութիւն, ոչ եթէ զանկարգութէ ինչ յայտ առնիցեմ, այլ թէ չիք անդր կարգք՝ որ զմիմեամբք սոսիսիցեն։

Վասցի նախ ի հայր, ոչ կարգաւ ինչ առաջին, այլ մտօք նկարեալ։ քանզի նա է ծնիչ միածնին, և

արմատ սրբոյ պտղոյն : Եշւ զի լցոս մշտնջենաւոր է ,
մշտնջենաւորի լուսոյն՝ է մշտնջենաւոր լցոս ծնունդն ։
Եթէ ժպրհէկը ոք այժմ աստ յորթոյտօքսաց ժողու¹
վրդեանս , ուր բովանդակ ամենայն գիտութեն ուղիղ
դաւանութի է , նախամեծար զորդի քան զհայր կո-
չել , ոչ ապաքէն աստէն յորթօքսացս բամբասէր :
Եշւ արդ՝ չխխիցէ ասել յեկեղեցւոն , եթէ Վ՛ս օրհ-
նեսցէ զձեզ և հայր նորա , ոչ ապաքէն անկար-
գութեն կարծիս տայցէ . զի ոչ նախ զարմատն մե-
ծարեաց , և ապա զպտուղ : Եթէ ասէր ոք , եթէ
որդի կեցուսցէ զձեզ և հայր , ոչ ապաքէն շփո-
թութի իմն կարծէր , և բարկանայիք՝ եթէ զկարգն
եղծանիցէ : Վ. Այնապիսի կարծիք չեն իրաւացեաց ,
յորժամ 'ի շշմարտութին ոք նայեցեալ՝ տայցէ ի-
րաւունս , և յառաքելական վճիռն յաղթութիւն
բարձեալ բերէ , անխտիր նախ զորդւոյ յիշել , և ա-
պա զհօրէ , և ապա զհոգւոյն որյէ : Եշւ լուր Պաւղո-
սի մեծի քարոզին . գրէ առ թեսաղոնիկեցիսն . ինքն ,
ասէ , առ մեր Վ՛ս Վ՛ս , և առ հայր մեր սրբեսցէ ըզ-
ձեզ . և ոչ եթէ նախ որդի սրբեսցէ , և ապա հայր .
այլ յատակն և լուսաւոր ոդի Պաւղոսի կամեցաւ ցու-
ցանել , թէ չիք ինչ այնապիսի կարգք 'ի սրբութեն .
այլ որ ասասցի յառաջ , նորին պատուակից է և
երկրորդն , և չնուազի և չանարգի ինչ երրորդն .
վասն որոյ և զանուաննն յառաջ բերէ , քանզի զի-
տէ զանբաժին բնութին , և զանքակ թագաւորու-
թիւնն :

Հարցցուք զերն Պաւղոս , թէ ուստի առեր պատ-
ճառս այդպիս անծախօսել . նախ զորդի քան զհայր
կարգել , ոչ կարգաւ և ոչ զօրութիք , այլ բանիւք .
և արդ ասիցեմք , եթէ ընդէ՞ր նախ զորդի յիշեցել ,
և ապա զհայր . Վ. Խասցէ պատասխանի Պաւղոս՝ լեալ
անձին ջատագով , և եկեղեցւոյ վարդապետ . չասեմ
ինչ յանձնէ , Վ՛ս ինե զայսապիսի կրօնս յօրինէ . քան-
զի և ասէ իսկ . եթէ զփորձ ինչ առնուլ կամիք զՎ՛սի՝
որ ինևս ընդ ձեզ խօսի : Եթէ Վ՛ս ինե խօսի , մի
զբաննն առերունականս բամբասէր , և մի զկրօնսն

խծրծեր : Վայլ զկարիցեն իմանալ և հաւատալ՝ եթե
Վայնեւ խօսի . նմին իսկ՝ յորժամ մերկ անձամբ խօ-
սի՝ լուր . զի եթէ ընդ կարգաւ ինչ հնազամնդութե-
անուանք սբէ յշրորդութեն կային , ոմն առաջին էր
կարգաւ և զօրուք , և ոմն երկրորդ , և ոմն երրորդ ,
ապա և ոչ կենարարն զանձն ճշմարտութիւն կոչեր .
ես եմ , ասէ , ճշմարտութիւն . և շփոթէր զկարգ ճշ-
մարտութեն : յշր լուր դարձեալ կենարարին , նախ
զանձնէ ձառէ , և ապա զհօրէ . եթէ զպատուիրանս
իմ պահցէք , ասէ , ես և հայր իմ եկեսցուք :

յշր քանզի վերին իմն կարգ զհօրն համարին հեր-
ձուածողքն , և զորդի իբրև զհազարապետ թագա-
ւորի համարին հօր , և արդ հարցցին . իշխիցէ այր
հազարապետ ասել , յորժամ արքունի քանձն իցեն ,
եթէ ես և արքայ տացուք հրամանս : Վանզի՞ի մե-
րոցս պարտ է իմանալ զայն որ 'ի վեր քան զմեղ են .
մի թէ արարած բնութիւն իշխնէր զանձն քան զանարար
բնութիւն կարգել , և 'ի համար ածել զինքն ընդ ան-
համեմատին , ընդ որում չեր զուգական , ըստ առա-
ւելութեն համարոյն , և ասէր , թէ ես և հայր եկես-
ցուք , և օթեւանս առ նմա արասցուք . զի եսն և
հայր ասել՝ զիստրութիւն՝ անուանցն յայտ արար , և
եկեսցուք և օթեւանս արասցուք՝ զհասարակ պատիւ-
ղարդեանցն քարոզեաց : Ոյնպէս և 'ի միւսում վայ-
րի՝ յորժամ ասաց առաքեալն Փիլիպպոս . տէր , ցոյց
մեղ զհայր քո , և շատ է մեղ , պատասխանի ետ կե-
նարարն , այսչափ ժամանակ ընդ ձեղ եմ , և ոչ ծա-
նեար զիս , Փիլիպպէ . հակառակ հարցուածոյն տայ
զպատասխանին : Ոի՞ թէ վասն քո՞ իսկ հարցի , մի թէ
վասն քո՞ կամիմ ուսանել . ցոյց ասեմ զհայր քո , և
ոչ թէ զքեզ : յշր նա առ այն զի՞նչ . այսչափ ժամա-
նակն ընդ ձեղ եմ , և ոչ ծանեար զիս : յշր ան-
նման իցէ որդի , աննմանեաւն աննմանն զիարդ ճա-
նացիցի , և կամ 'ի փոքուն մեծն որպէս տեսանիցի ,
կամ նուազագունաւն առաւել պատիւն , կամ ար-
բանեկաւն արարին : Վայսափ ժամանակս , ասէ , ընդ
ձեղ եմ . և չասաց թէ հայր իմ ընդ ձեղ է , այլ թէ

1 Յօրինակին առնելութեալ . եղաք ըստ յունին :

ես . իմովս ընդ ձեզ լինելով՝ հայր ընդ ձեզ է : Վայ-
չափ ժամանակս ընդ ձեզ եմ , և ոչ ծանեար զիս :
Իւրիոք ասաց զՃանեալն զիս . նա ասէ , թէ ցոյց .
և փրկին , թէ ոչ ծանեար զիս . կամեցաւ ցուցա-
նել , թէ ած ոչ տեսանի , այլ ճանաչի : Իւ զնովիմբ
ածէ . եթէ ոչ հաւատաս , զի ես 'ի հայր , և հայր
յիս է . և դու զիամրդ ասիցես , թէ ցոյց մեզ զհայրն
քո . փոխանակ ասելոյ , թէ զիամրդ զայլ ոմն ակն
ունիս տեսանելց . զի թէ ես 'ի հայր՝ և հայր յիս ի-
ցէ , և ճանաչցի որդի հարը , և հայր որդւովլ դու
զիամրդ ասիցես , թէ ցոյց մեզ զհայրն քո . որպէս
զայլ ոմն , թող զիս , կամիս տեսանել : Իս 'ի հայր ,
և հայր յիս . ոչ որպէս թէ շփոթական ինչ իցէ
բնութին , և կամ թէ իբրև զբաժակ 'ի մէջ բա-
ժակի կայցէ . ոչ զմարմնոյ ինչ յօդուածոց յայտ
առնէ , այլ զմոտաց բանիցն նկատութիւն :

Իս , ասէ , 'ի հայր , և հայր յիս : Ոչ հայր առանց
որդւոյ ճանաչի , և ոչ որդի առանց հօր երեխ . որ-
պէս միտք բանիւն ճանաչին , և բանն մոտք երեխ :
Ուստի կարիցեմ իմանալ զմիտոս քո . եթէ ոչ 'ի բա-
նիցն զոր խօսեսցիս . յայտնեն բանք զմիտոդ , և ծնա-
նին միտքդ զբանսոդ . և ոչ զբանս առանց մոտացն
մարթի իմանալ , և ոչ մոտացն առանց բանիցն որ 'ի
մոտացն ծնանին : Կոյնպէս և հայր որդւովլ ճանա-
չի , և որդի հարը յայտնի . նմին իրի իսկ և աւետա-
բանին ասէ , եթէ 'ի սկզբանէ էր բանն . զի զա-
ռանց կարեաց՝ ծնունդն ցուցանիցէ , և զմիութիւն
էութեանն մեկնեսցէ . և որ ինչ բանն առ միտոն է ,
նոյն և միածին բանն ած առ հօր : Իւ այն իսկ զար-
մանալիք են , կրկնեցից միւսանգամ վերստին զասա-
ցեալս . նախ վամն այնորիկ իսկ բանք էին մեր , զի
'ի մերոցս զվերինս ² քան զմեզ ուսանիցիս : Ոինչ
գեռ բանս 'ի միտոն իցէ , աներեսոյթ է յաներեւու-
թին , և իմանալի յիմանալւո՞ն , անմարմինն ընդ ան-
մարմինն : Իւ յորժամ կամեսցի արտաքս ելանել
բանն , նախ 'ի բերանն խաղայ յառաջ , և անտի ան-

¹ Յօրինակին պառանց խթձեաց . ² Յօրինակին վերաբէն :

ձամբ անձին զգեցուցանէ բարբառ , ոչ որպէս թէ յայլմէ ընութէ զբարբառն առնուցու , այլ անդատին 'ի բանեն խօսքն յօդին . և որ աներեղյթն է ընութք հօրն , զգենու բարբառ , և ելանէ լինի ամենեցունյայտնի , որ յառաջադոյն անյայտն էր . և իրքենադայ յառաջ , զամենեսեան լնու , և 'ի ծնողէն չմեկնի :

Ո՞ք 'ի մարդկանէ խօսեսցի զբանն , և զայլս ուսուցանիցէ , զանձն թափուր առնիցէ 'ի բանեն . և կարծիցէ , թէ զուցէ մինչ ընդ այլոյ լսելիս արկանիցեմ , զիմ միտս մերկ և կողոպուտ առնիցեմ . մի թէ չէլ բանն արտաքս , և մնաց անդէն 'ի ներքս . ոչ զբազում լսելիս լի արար , և 'ի ծնողէն ոչ մեկնեցաւ . իշտ արդ եթէ մարդկեղէն բան յօրժամ խաղացեալ արտաքս 'ի մոտացն ելանիցէ , չզատանի 'ի ծնողէն . իսկ ածն բան՝ որ վասն մեր երեեցաւ աշխարհի , զծոցն հայրենի թափուր թողոյր . օն անդր , փարզամտ¹ , քաւ լիցի : Օ ի բիւրք բիւրուց լսեն զբանն , և ընդ անչափ լսելիս մտանէ՝ չբաժանի , այլ բնաւ ընդ իւրաքանչիւր ումեք է , և ամենայն ընդ ամենեսին , և ամենեիմ 'ի միտսն . և եթէ մարդկեղէն բանն ամենեին 'ի միտսն է , և բնաւ իւրաքանչիւր ընդ ումեք , և ամենայն ընդ ամենեսին , զիարդ ասիցեն զհօրէ , զի թէ ծնաւ , ապա ծորումն և հատումն գործեցաւ , և բաժանեցաւ անբաժինն : Ասացէ առ նոսա կենարարն , եթէ քննեցէք զգիրս . քննեցէք , և մի վայրապար ընթեռնուք , այլ վասրս մտացն 'ի խոյզ և 'ի քնին արկեալ հետազոտեցէք : Քանզի ած զգիրսն եղ առաջի , և զմիտս պատգամացն զեղեաց . զգիրս ետ , և զզօղեալ մեկնութեցն չմերկացոյց , այլ եթող 'ի հրահանգս ասպարիսաց քոյոց արշաւանացդ , զի զքո մտավարժութին կըրթեցէ . զի տեսանիցէ՝ ծառայիցես զքոց , եթէ բըռնազրոսեցես զգիրս : Օ որ օրինակ զբնութին եղ առաջի ած , և զարուեսան թագոյց . ամենայն նիւթք և ատազք եղան առաջի յայ , և արուեսան 'ի մոտաց մարդկան ծնաւ . նոյնպէս և 'ի զիրս :

1 Յօրինակին դարձ ասք :

Եշտ զի ևս յայտնագոյն զբանս արարից, եղ առաջի ամս զքարանց բնութիւն, և ոչ զշինուածն պատրաստականն : Եշտ ցորեան, և ոչ եթէ հաց գործեաց, և եղ առաջի : Եշտ խաղող, և ոչ եթէ գինի ինքնին արար զիսաղոլն : Եշտ ասր, և ոչ եթէ զշամնդերձն ինքնին գործեաց : Եշտ զոսկին խառն ընդ հողոյ, այլ ոչ եթէ ինքն ընտրեաց 'ի հողոյն : Բնդէր քանի զի ըստ պատկերին այ արարաւ մարդն, բաժանէ զարարչութիւն . ինքն առնէ, և նմա արուեստիւն տայ կազմել զգործն : Օսր օրինակ զմարդն՝ որ ըստ պատկերին այ արարաւ, խառնէր 'ի բաժին եղելոցն անուանս դնելոյն . ինքն իբրև զարարիչ 'ի չփոյէ 'ի գոյ ածէր, և պատկերին զանուանս հրամայէր դնել, նոյն պէս և զնիւթմն ինքն եցոյց, և զկազմած գործոյն յարուեստն ապաստան արար : Ո՞նախ կազմեաց արօր՝ փայտիւ և երկաթով զերկիր պատառել, և ակօս բանալ, և լուծ կազմել, և ձիգ և եղինս սամետիւք 'ի գործ լծէր : Կը փայտն և երկաթն, այլ արուեստն չէր ուրեք 'ի միջի : Ո՞ եցոյց քեզ, այր դու, եթէ այդպէս արօր կազմեցի, կամ խիստ բնութիւն երկաթոյ հրով կակլասցի . ո՞ եցոյց քեզ հանգամանս յայնչափ թանձրութենէ նստել տուայտել և ասելն մի փոքրիկ գործել . ո՞ արդ քեզ 'ի միտս՝ դրաց ախս և փականս գործել, և կամ ծողունս և յարկս տանց յարդարել : Այրի, ասէ, ախմարաբարս իմն հարցանես, զանձ հնարացոյց 'ի միջի ունիմ, և հարցանես, թէ ուստի ուսար :

Եշտ այսպէս, եղբարք, ամենայն ուրեք մարդկեղենն բնութիւն իւրում տն նմանեալ, զարդարէ արուեստիւ զբնութիւն . և եթէ 'ի չափու կացցէ, բարւոք է պատկերն . ապա թէ ըստ չափն անցանիցէ, թշնամանի անչափութիւն : Այսպիսի ինչ . իմացաւ մլել զեզն, վարժել զձի, հնազանդել զուղտ, և զայլ ևս անասունս որ 'ի սպասաւորութիւն մեզ տուան : Բայց առ ագահութիւն իմացաւ և այլ ինչ խառնս արտաքոյ քան զբնութիւն, զէշ ձիոյ արձակել, որ չէր ըստ կամացն այ . քանզի 'ի սկզբանէ ասաց անձ, եթէ հան-

ցէ երկիր չորբոտանիս , և զեռունս ըստ ազգի իւր-
եանց . հնարեցաւ ագահութին և այլ իմն խառնս ար-
տաքոյ քան զբնութին խառնեալ . Ա ասն որոյ և անձ՝ զի
զանչափութին պատժէ , անծնունդ արար զմարդկե-
ղէն ագահութիս . վասն այնորիկ չծնանի ջորի . զի
չէ յայնցանէ , որք իերեւ եղեն՝ լուան , եթէ աճեցէք
և բազմացարմէք և լցէք զերկիր . Ա ակայն թոյլ տայ
պատկերին գործել զինչ և կամի , զի զօրութիւն նո-
րա ցուցանիցէ , և զանչափութին պատժիցէ , և ըգ-
հպարտութին ցածուցանիցէ :

Դարձեալ անչափ ցանկութի մտաբերեաց գոր-
ծել պատկեր մարդկակերպ . թող նմանեցից , ասէ ,
այ , որ արար զպատկեր մարդոյ , և արարից պատկեր
մարմնոյ . և բռնադատէ արուեստիւ զբնութին : Այ-
քանզի լուաւ , եթէ անձ յերկրէ առ հող , և արար
զմարդն , 'ի վարանս մտեալ արուեստն , քանզի չկա-
րէ շշմարտութք նմանել տն իւրում , այնուհետեւ
'ի հնարս և 'ի հայթայթանս ապաստան լինի . ժողովէ
արմատս և ծաղիկս վասն զգոյնս յարմարելոյ , նմա-
նեցուցանէ զաս աչաց , այլ չտեսանեն . չափէ ա-
կանջս , այլ չսեն . յղկէ զունչ , և չյոտոտին . կոշ-
րաէ զբերանն , այլ չիք բարբառ ՚ի շրթունն . զձե-
ռտիցն և բարձիցն յօրինէ , այլ չիք զնացք և քայլք
ոտիցն : Օ ՚ի այնու յայտ առնէ , թէ թոյլ ետ պատ-
կերին զինչ և կամիցի գործել , և չելանել ըստ չափ .
զի մի 'ի հպարտութի գայցէ , և չձանափիցէ զբնու-
թին , և ոչ զանձին զազատութիւն և զիրկութիւն :
Ռայց սակայն զի ուսան՝ եթէ յերկրէ ստեղծ անձ ըլ-
մարդն , և միւսով արուեստիւ կամին նմանել տն և ա-
րարչի , բժշկաց արուեստիւն : Հորժամ տեսանիցէ 'ի
մարմինն փուտ , երկաթ 'ի գործ արկանէ , և զիուտն
'ի զատ հատանէ . և յորժամ զլէր փորել կամեա-
ցի , շինել հասուցանել , և անձել 'ի չափ զիկերեալ մար-
մինն , արարիչ ոչ է , թէ վերստին ստեղծանէ . և արդ-
զինչ արուեստ պատկերին գործիցէ նմանել տն իւ-
րում . ընթանայ նա 'ի հողն , ուստի մարմինն ստեղ-
ծաւ , և կազմէ անտի դեղս և սպեղանիս . միովն քա-
կէ զիուտն , և միւսովն շինէ , և այնպէս լնու զթե-
րութի մարմնոյն :

Եշտես զարմանալիսն . զիակրդ նատի առ և իբրև
ընդ որդիս նայի : Եշտ զի՞նչ յայտ նայելն առնիցէ :
Ու զի ուսանիցի , այլ զի կրթեսցէ . և այնպիս աղ-
քիւրն ամենայն բարութեց խրատէ զիւր պատկերն :
Որպէս զառաջինն՝ ած կացոյց առ Դգամայ զամե-
նայն գազանս և զանասունս և զթուչունս , տեսանել
զի՞նչ կոչեսցէ զնոսա . ու զի ուսանիցի ամենագէտն ,
այլ զի զպատկերն կրթեսցէ : Հանկ իսկ ՚ի միտ դնե-
լոյ ցուցան հանգամանք օգտիցն շնողութեց , և հիւս
նութեց , նաւագործութեց , և դարբնութեց , և ոստայն-
անկութեց : ՚ի առ աստեղս նայելոյ՝ չէ դատար-
կութեց գործ . այլ նշմարել զկարգս աստեղացն նա-
որդացն օգուտ է . և անսալ աստեղացն արևելեան,
և ժամանակ ՚ի դիւր իմն նաւարկութեց ճանաչել . ու
ծնունդս ինչ ստեղծանել , և ու զիմարմինեին զբաշ-
իս և զբախտի առասպելս ՚ի մէջ բերել , այլ զհետ
բարբառոյ տն երթալ , եթէ եղիցին լուսաւորք յեր-
կինս , և ծագեսցեն յերկիր , և եղիցին ՚ի նշանս և
յաւուրս և ՚ի ժամանակս :

Օ ի մի համարեսցիս , եթէ պատկերն անձամբ ինչ
դժանիցէն զշնարս ամենայնի , միով բանիւ յայտ առ-
նէ երանելին լաղոմնն : ՚ի ատ ինձ , ասէ , ճանաչել
որ ինչ և իցեն , անվրէպ գիտել զհաստատութիւ աշ-
խարհի և զյօրինուածս արարածոց , զսկիզբն և զկա-
տարած և զմէջս ժամանակաց . զշրջանս տարերց
և զկարգս աստեղաց . զբարս անամնոց և զզայրումն
գազանաց . և զտունկս ազգի ազգի և զզօրութիւնս
արմատոց . որ ինչ ՚ի ծածուկ իցէ՝ և որ ինչ յայտնի ,
որ երեի՝ և որ աներեսոյթ , ծանեայ , ասէ , ես մարդ .
փոխանակ ասելոյ՝ թէ պատկերս : Եշտ զիակրդ : ՚ի սէ .
իմաստութիւն ճարտարապետն ամենեցուն՝ ուսոյց զիս :
Դայլ ուսոյց զքեզ զչափոյնս , և ու զանչափն : ՚ի սէ ,
յորչափ անչափութիւն տարածեցաւ և ել արուեստն .
հայեցաւ ՚ի մարդկեղէն բնութիւն , և պատկերն այ
ած զմտաւ , թէ զիակրդ գործի բարբառոյ բերանցն
կազմեալիցէ . նկատեաց զբնութիւնն , նմանեցուցանէ
արուեստիւն բնութեն , և հնարի իմն հնարս ՚ի բա-
զում փողոցս ընդ միեւանս յարելոցս յիրեարս խառ-
նելոցս : Եշտ տես զի՞նչ զործէ արուեստն՝ նմանել

գործոյ ճարտարապետին . տիկս իմն կազմէ, որ ոչ
յանձնէ ունիցին զփուքն, այլ ընդ՝ տալ և ընդ
առնուլ և ընդ բանալն և ընդ խփել՝ առնուցուն
փոխ օտար օդ, և ապա յերկուց փքոցն 'ի ցնցուղմն
հողմաբերս, և անտի յանենայն փողմն տալ զփուքն .
և իմանայ՝ թէպէտ և փուքն խաղայցէ՝ նուագ ինչ
չարկանի . և այսմ ևս հնարս հնարի՝ մատամբք
յօրինել, և գեղգեղէ զնուագմն : Իշտ ուստի իցէ
քեզ այն, ով մարդ, ուստի իմացար զփուքմն օդըն-
կալս կազմել և զմաղեալօդն մատամբք 'ի նուագսյօ-
րինել : Կարի իմն, ասէ, տիմարաբար հարցանես . ոչ
կանխազդյն խիկ ասացի, թէ պատկեր եմայ, և աս-
տէն յիմ բնութիս հայեցայ, և նմանեցուցի . քան-
դի յիս տեսանեմ օտար շունչ եկամուտ, և պատ-
եանքս ստէպ բանալով և խփանելով ընդունին զօդն
հասարակախառուն : Ճեսանեմ, զի երկու փողակք
տան և առնուն զօդն, իբրև ցնցով իւիք ստորդով
'ի բերանս . տեսանեմ, զի և օդն մտանէ, և խօսք
չլինին, թէ ոչ լեզուն 'ի մէջ անցեալ զնուագմն
յարդարիցէ : Հայեցայ յիս, և նմանեցուցի յիմ
բնութենէս, և անձամբ յանձնէ հասու եղէ տն ա-
րուեստի . որպէս և 'Իաւիթ ասէ, թէ սքանչելի եղե
գիտուի քո յիս . աստէն յիս նայեցայ, և զարուես-
տագէտն փառաւորեցի . նմանեցայ իմնւմ տն, և
արուեստիւն զենութիս յայտ յանդիման նկարեցի :

Չէ ինչ չար տաւիդն, այլ զի աղտեղի երգոցն եղե
զործի . որպէս թէ զածեղէն օրհնութիսն երգեր
իբրև զառաջինն, չեր պիղծ . թէպէտ և անչափ ցան-
կութեն պատճառք են 'ի խրախութիս, սակայն թէ
այ նուիրեալ եր իբրև զառաջինն, չեր չար և պիղծ .
որպէս և 'Իաւիթ ասէ, օրհնեցէք զար սաղմոսարա-
նաւ, և շնարաւ, և աղեաւ, և տաւուղաւ, ծըն-
ծղայիւք, քաղցր ձայնիւք, օրհնութիւք, թմբկաւ, և
պարուք : Վրդ եթէ այնպիսի չեր 'ի խրախութիւն
անառակութեն, դարձեալ և ու 'ի կոոցն երկրպա-
գութիւք, այլ որով զարուեստն իմացաւ՝ նովին և պր-
տուղ տայր այ, չեր բամբասանաց իմաստ արուես-

տին , եթէ զտրն ճանաւէր . լէր բամբասանաց քնարն ,
եթէ քնարաւն ոյ երգս ոք մատուցանէր : Ա ամս այ
նորիկ երանելին 'Դաւիթ , որ քնարաւն ոչ զաղտեղի
երգսն երգէր , այլ զնուիրական օրհնութիւնսն մա-
տուցանէր ոյ , և զգեստ փախստական առնէր . յոր-
ժամ զլաւուղ այսն չար լիկէր , ասեն դիրք , եթէ
'Դաւիթ քնար հարկանէր , և դիւրանայր լաւուղի :
Տեսանես , զի ամենայն արուեստ յայ հաճութիւն
կազմեալ է . չգոյր ինչ յուութիւն , եթէ ամենայն
ինչ ըստ ոյ կամացն լինէր :

Օ ի՞նչ արդեօք կամեցայ ցուցանել , զի յածխօ-
սութիւն յայսպիսի բանս եկի՝ յարուեստն , և նմա-
նել պատկերին իւրում արարշին : Օ ի ցուցից , ե-
թէ զտրունական բարբառն յեղյեղեմ , և զշեր
ձուածողացն տարապարտ կարծիս յանդիմանեմ :
Օ տրունի . զո՞ր : Ա զծաւորք , ասէ , զերեսս երկնից
դիտեք փորձել , արուեստս դիտեք , իմաստս իմա-
ցայք , և զամենեցուն արուեստագետն թշնամանե-
ցէք . դու նմանեցէր արուեստիւն քում տն , և զինչ
կամեցար արարեր . քանզի ըստ պատկերի և ըստ
նմանութեան արարշին հաստատեցար . և զարարին
աննման 'ի ծնողիւն քարոզես : Ես զձեզ հնազան-
դեալս մեղացն ազատեցի , և զիս որ տրս եմ ամենե-
ցուն 'ի հնազանդութիւն կոչէք : Ա յո՞ , ասեն . քան-
զի զրեալ է , եթէ որդի հնազանդեցի : Ա սացաք
յառաջազոյն ըստ մերում կարի 'ի սոյն , մանաւանդ-
եթէ ոյ զօրութիւն . քանզի չեն մեր բանքս , այլ ոյ .
և յիշեցէք . բայց սակայն և այժմ սակաւ մի ձգես-
ցուք 'ի նոսսա զյանդիմանուհս : Ի ննեսցուք զբանն .
'ի հանդերձեալ աշխարհին և 'ի յարութիւն , ուր ա-
սեմ եթէ որդի հնազանդելոց է , ոչ ապաքին դու
արեգակն և հրեշտակ լինելոց ես . 'ի յարուե մեռե-
լոց , ասէ , ոչ արք կանայս առնեն , և ոչ կանայք ա-
րանց լինին , այլ իբրև զշեշտակս իցեն . դու յայն-
ժամ 'ի քումմէ աստիճանէդ 'ի վեր մատցիցիս , և
որդի 'ի տրութիւն 'ի խոնարհ իջանիցէ : Ա լուար 'ի
Պաւղոսէ . ունայնութիւն , ասէ , հնազանդեցան արա-
րածք , և ինքեանք իսկ արարածք հեծեն և երկնեն
մինչեւ ցայժմ : Եթէ արարածքն , այսինքն երկինք և

Երկիր և այլն ամենայն՝ մարդկան ունայնութեն հնագանդեցան . քանզի ունայնութիւն կոչէ զնա վասն զպատկերն եղանելոյ , 'ի նմանութիւն անասնոց իշանելոյ + որպէս և այլ ուր ասէ , եթէ սնոտիք մնուտեաց , ամենայն ինչ մնոտի է . և 'Ղաւկիթ ասէ , թէ ամենեիմ ամենայն մարդ կենդանի մնոտի է . արդ հնագանդեցան արարածք մարդոյ՝ որ եղծ զպատկերն լյա զիարդ հնագանդեցան Վանզի ծագէ արեգակն անարժանից , տեղան անձրեք , բղխեն աղբիւրք ապաշնորհացն , բերէ Երկիր պտուղ ապախտաւորացն . և այսպէս հնագանդեցան արարածք ունայնութեան , և ոչ կամնք . զի թէ ըստ կամաց ինչ եր՝ չհնագանդէին անարժանիցն . այլ վասն այնորիկ՝ որ հնագանդեցոյց զնոսայուսով . զի և ինքեանք , ասէ , արարածքն ազատեսցին 'ի ծառայութէ ապականութեն յաղատութիւն փառաց որդոցն ոյ : Խոկ եթէ աղատանայցեն արարածք յայնժամ , որդին 'ի ծառայութիւն գայցէ :

Վննեցէք զգիրս , և մի զրաբարտէք . քննեցէք , և մի վայրապար խուզէք . քննեցէք , հաւատացէք և մի հակառակիք : Ուստի ուսար ասել , էր որդի և ծնաւ , թէ չէր . ուստի ուսար եթէ ծնանել և առնել նոյն է , Պիտրոս ուսոյց քեզ զայդ , եթէ Պաւղոս Ճառեաց , եթէ կենարարն աւանդեաց . ընթերցիք զգիրս : Լա և զօր ասեսդ՝ յայն կաս . զի յորժամ հարցանիցես իսկ , եթէ էր և ծնաւ , թէ չէր , յայնժամ իսկ ստես . զի ոչ զոր խոստովանիսն՝ զայն հարցանես : Լախ խոստովանեաց , եթէ ծնաւ որդի , և ապա հարցանիցես զէն և զէ . դու աւագիկ վիրսն ուրանաս , և զբանսն գանալից առնես . որում ըզծնանելն ըտաս , զքննութիւն անտի ընդէլ պահնջիցես : Լոր , ասէ , որդի և ծնաւ , թէ չէր : Լախ տուր ցիս զծնաւն . կնքեանախ մուրհակ , թէ ծնաւ . և ապա խնդրեսջիր զորպէսն . դու աւագիկ զբնութին ուրանաս , և զբանսն 'ի խոյզ և 'ի խնդիր արկանես : Վոնելն և ծնանելն՝ նոյն է ասես : Լա և առ իս ոչ նոյն , եթէ ոչ նախ կարգ Երկոցունց յայտնի լինիցին , և ապա միտքն միաբանեսցին . զի եթէ զշայելն և զտեսանելն՝ զնոյն ամիցեմ , ասասցի մի ինչ . ապա

Եթէ լսելն և տեսանելն նոյն ասեմ, յայնժամ թուիմ; Թէ որ աշայն անկ էր՝ զայն լսելեացն ետու: Եւ դու ուստի գիտացեր, եթէ առնելն և ծնանելն այ նոյն է: զի եթէ ծնեալ և արարեալ դաւանեիր, ասա բարիոք ասեիր՝ թէ նոյն է: Իսկ եթէ չխոստովանիս երբեք զծնեալն, ուստի զծնանելն և զառնելն ոյն համարեցիս: և գտանիցիս ոչ միայն ընդունայնական բանս մուծանել, այլ և ամենեին իսկ թափուր 'ի ճշմարտութէն:

Եւ արդ հարկ է ուսանել, եթէ ընդէ՞ր զառնելն և զծնանելն ճարտարիցէ հերետիկոսն՝ թէ նոյն է: քանզի ած, ասէ, պարզ և սփիւռ էութիւն է: և ոչ որպէս մեքս: զի այլով անդամօք ծնանիմք, և այլով գործեմք. զի ծննդականիօքն ծնանիմք, և ձեռօք գործեմք. ոչ այնպէս և ած: այլ պարզ և սփիւռ, և առանց կերպարանաց է: որով օրինակաւ ծնանի, նովին և առնէ: Եւ արդ որովհետև զաներեւութիցն խոստանաս զհանդամանս ցուցանել, ուսուցեալդ յանձահ ճարտարութենէ, յերեւելեացս ցուցանեմ քեղ, եթէ նովին օրինակաւ որով գործքն գործին: առ ՚ի մէջ զերեւելի զձեռս, զի երեւելեօքս և աներեւութիցն ընծայութիւն ՚ի մէջ գայցէ: զի ձեռն իսկ մի և նոյն զործ կոչի, և ոչ զի և զնոյն հանդէս ցուցանէ: Վայսպիսի ինչ: միով և սովին ձեռամք շինեմմ, և տապալեմ: որովհետև միով ձեռամքս շինեցի և քակեցի, երկոքեան նոյն իցեն: Վանզի և ասեն, թէ մեք այլ ազգ ծնանիմք, և այլ ազգ գործեմք: ասեմ և ես՝ ըստ նմին օրինակի, եթէ շինեմք և քակեմք նովին ձեռամք: և հարկանեմք և ողորկեմք նովին ձեռամք: և մղեմք և ընկենումք և յարուցանեմք զգլորեալսն նովին ձեռամք: և համարիմք և քակեմք զհամարն նովին ձեռամք: Եւ արդ՝ շինելն և քակելն նոյն իցէ: և կամ հարկանելն և ողորկելն, և այլքն մի ըստ միոջէ: Եւ լիցեն մօրոսաց բանք և անձահ առասպելք: և չէծեն ընդ այն Պաւղոսի միտքն: և չզայրամայցէ Պիետրոս ընդ այնպիսի բանս խառնել՝ ՚ի վարդապետութիւն: Եւ բացար ՚ի Վատէ, և զայլոց ուսանիս: լիցէ լուեալ ան՝ որ ասէր, եթէ որ

ամօթ համարեցի զիս և զբանս իմ, ուրացայց և ես
զնա • քանզի բազումք բազում անգամ զ՞՛ս խոստո-
վանին, և զբանս նորա ամօթ համարին • որպէս և
դու իսկ կրիցես փաշաման, յորժամ յածախօսութե՛
ձառան գայցես, և լսիցես զանուն հօրն և զորդւոյ,
և ամօթ համարիցիս զբանսն, և ասես այսպիսի բանս
ինչ, եթէ ծնաւ արդեօք անկարեկանն • ընաւ և ծնա-
նիցի • իսկ եթէ այնպէս իցէ, ըստ ծորելոյ և ըստ
հատուածոյ : Ծեսանեն զի ամօթ զբանսն համարիս •
առ այնպիսիսն ասէ զբանն, եթէ որ ամօթ համարես
ցի զբանսիմ, և ես ուրացայց զնա : Ո՞չ անմտուեն,
բանից միայն եղեն որսորդք, և ոչ արդեանց ձշմա-
րիտ քննիչք • զամենայն ինչ եղծ ապականեաց տա-
րապարա ունայնութիւնն :

Օ որ բազում անգամ ասէի, ասացից և այժմ •
եթէ քո հերձուածոցդ զլիսաւորք և առաջնորդք
յայտնի են, և որ եկեղեցի հերձուածական վարդա-
պետուի ընկալաւ երբեք : Յիշեսցես՝ երբեք՝ եթէ
այս անուն առաջնորդ եղեւ եկեղեցական կրօնիցն •
պարտիս 'ի մէջ բերել : Յ. Յ. կիտեմ, եթէ չկարես
յայտ առնել, որ զայս աղանդ եհան • զոր դու աղանդ-
կոչես, և չէ աղանդ, այլ ձշմարտութի • զոր 'ի սկզբա-
նէ առաքեալքն իսկ քարոզէին, և յետ նոցա նիկեա-
կան սիւնչոդոսն զնոյն հաստատեաց, զի յայտի լի-
նիցի՝ եթէ համաշխարհական և տիեզերական հա-
ւատք էին • իսկ յայնչափ բազմութէ եպիսկոպոսաց
'ի մի վայր ժողովելոց՝ եւթն միայն եպիսկոպոսք չմիա-
բանեցին, և իբրև զտարագիրս և զիստանս 'ի բաց
ընկեցան . և ամենայն տիեզերք միաբանեցին, զի
յառաքելական ամոքելի զանկուածոյն էին :

Եւ տես զգարմանալիսն . նմանեցաւ նոր համօթէն
աշխարհ՝ հնոյ կտակարանացն • որպէս զի անդ ա-
ռաւել հաւատացեալն Յ. բրահամ վառեաց ընդ իւր
ծառայս ընդոծինս երեք հարիւր և ութուամն, և
չինդ թագաւորս ասորեստանեաց՝ որ եկեալ էին 'ի
վերայ երկրին պաղեստինացւոց, վանեաց • ըստ նմին
օրինակի և համարոյ՝ և ի՞նք գումարեաց առ իւր, տալ
պատերազմ ընդ հերձուածողմն, երեքհարիւր և

1 Յօրինակին ժամանեաւ:

ութուտան եպիսկոպոս : Երեքարիւր և ութուտան ծառայս ընդուծինս առ Վբրահամ, և չողաւ 'ի վերայ այլազգեացն . թէպէտ և էին բազում և այլ ծառայք արծաթազինք, այլ զմտերմութի ընդոծին ծառայիցն եցոյ . նոյնպէս և ԲՇ՛ ոչ գումարեաց իշան 'ի խուռն զամենեսեան, այլ զընդոծինս հաւատոցն . և քարոզեցին զշմարիտն 'ի ձշմարտէն, զկենդանին 'ի կենդանւոյն, զլոյն 'ի լուսոյն :

Օ ի՞նչ անջրպետութիւն ընդ լուսոյն, և ընդ լոյս համարիցիք . զ՞ո՞ր այլայլութիւն՝ ընդ կեաննն, և ընդ կեանս . զ՞ո՞ր այլակերպութիւնս ընդ ձշմարտութիւն, և ընդ ձշմարտութիւն : Եւ որ զարմանալին ևս է . զի հայր լոյս կոչի : Հոհաննէս ասէ, ած լոյս է . և որդի յաւելուածովն հանդերձ, և թէ էր լոյսն ձշմարիտ : Հայր լոյս միայն արձակ կոչի, վասն կարծրութիւն . և քանզի ընդդէմ ածութեան որդւոյ գումարին 'ի մարտ հերձուածողքն յանդգնեալք . թէպէտ և որ առաջնո՞ն ոք յանդգնեացի 'ի հայր ձգէ զթնամանս, բայց սակայն զյայտնին մեկին բանիւք յայտնեն գիրք, և զերկբայլութիւն ձշմարտութիւն ամրացուցանեն : Լոյս կոչի հայր, և ոչ յաւելուածովն հանդերձ . քանզի քարոզութիւն միայն բաւական է ծանօթ առնել . լոյս անուանի և որդի . զի մի համարեսցիս, թէ նա լոյս իմանալի և բուն է, և սա լոյսինչ էրեւելի և պիտակ, յաւելուածովն ամրացուցանէ քրանն, էր, ասէ, լոյսն ձշմարիտ Եւ դարձեալ զի մի ոք ասիցէ, թէ որպէս լոյս է արեգակն, և լոյս լուսին, այլ մին մեծ լոյս, և մին փոքր . նոյնպէս և հայր՝ մեծ լոյս ինչ իցէ, և որդի փոքր, յառաջազոյն կարապետէ Եսայիա, և յարդարէ . էրկիր, ասէ, Օ աբուղմնի, և էրկիր՝ Եփթաղիմայ, Հանսապարհ ծովույայնկոյս : Երդանանգետոյ, ժողովուրդ որ նստէր 'ի խաւարի՝ ետես զլոյս մեծ : Եթէ հայր լոյս մեծ կոչի, ահա և որդի լոյս մեծ անուանի : Ո՞եծն է ծնօղն, մեծ է և ծնունդն . մեծի արմատոցն՝ մեծ է պտուղն . մեծ է լոյսն, մեծ է և ծագումն լուսոյն . չճանաչեմ անդ մեծ և փոքր, այլ միայն զմեծն . մի ած զլորոդութիւն զիտեմ : Ո՞եծ

է հայր, որպէս Խրեմիա մարգարէ ասէ, եթէ ածդ
մեծ և յաւիտենական. ասէ և զօրդւց Պաւղոս,
եթէ ակն ունիմք երանելի յուսոյն և յայտնութեան
մեծին այ և փրկին Հափ Վափի. և Դաւիթ ասէ.
մեծ է առ, և մեծ է զօրութինորա. մի թէ այլ ոք
նա իցէ, և այլ ոք զօրութինորա. և զի որդի է զօ-
րութինորա, վկայէ առաքեալ Քո՛ս, ասէ, այ զօրու-
թիւն: Դարձեալ ասէ մարգարէն, մեծ է առ մեր.
որպէս զի թէ ասիցէ, թէ մեծ հայր, և մեծ է զօրու-
թիւն նորա՝ հոգին սբ. որպէս ասաց կենարարն ցա-
ռաքեալմն, կացէք մնացէք Խրուսաղէմ, մինչեւ առ-
նուցուք զօրութինի բարձանց:

ԱՅԼ տես, զիարդ Ճարտարեն հակառակորդքն.
այս, ասեն, զօրութին է՝ որ զմենդութ աւետեացն բաշ-
խեցէ, և չիք ուրեք գրեալ եթէ հոգին ած իցէ,
այլ առհաւատչեայ ժառանգութեն: Խւ գու միտ
դիր • առհաւատչեայն մասն ինչ է ՚ի պարզեցն, և
ոչ ամենայն պարզեն, այլ մասն ինչ ՚ի բնաւէն:
Գրեալ է ասեն յԱռաքեալ, եթէ կնքեցայք հոգ-
ւովս սրվ աւետեաց, որ է առհաւատչեայ ժառան-
գութեն մերոյ: Ծեսանես, ասեն, զի պարզե է, և ոչ
ած: Խւ արդ եթէ գտանիցես և զհայր մասն և ժա-
ռանգութի կոչեցեալ, և անդ զբանիցն զհւտ եր-
թայցես, և ոչ զմտացն. զի և ժառանգութին, և
մասն պարզեք են տուողին, և ոչ ինքն որ զժառան-
գութին տայցէ: Խւ եթէ հոգւոյն սբը կոչել առհա-
ւատչեայ դայթակղեցուցանէ զքեզ, ապա և զհօրէ
յորժամ լիցես, եթէ բաժին ժառանգութե է, և
՚ի նամ ձգես զհայհոյութին: Ո՞իտ դիր հաստատու-
թիք • չասաց թէ ժառանգութի, այլ թէ մասն ժա-
ռանգութե. և վկայէ Դաւիթ. առ, ասէ, բաժին
ժառանգութեան իմոյ. ապա ուրեմն որպէս բաժին
ժառանգութե է, նոյնպէս և հոգին առհաւատչեայ
ժառանգութեան. եթէ զհայր փոքր առնիցէ ասեն
բաժին ժառանգութե, ապա և զհոգին առհաւատ-
չեայ ժառանգութեն: Խւ յայլում վայրի ասէ Դա-
ւիթ, եթէ առ բաժին իմյերկիր կենդանեաց. և բա-
ժինն յիմեքէ մասն ինչ է, և ոչ եթէ ամենայն բա-
ւանդակ: Արդ եթէ բանից որսորդ իցես, և ոչ մը-

տաց քննիչ, զիցէ այսուհետեւ ինչ արդելքեղ զած հայհօյել զոր համարիսն թէ փառաւորեսցես . որ, ասէ, բաժին ժառանգութե իմոյ . և բաժին իմ որ յերկիր կենդանեաց : Եթէ վասն էր բաւանդակ զօրութին բաժին և ժառանգ կոչեսցի, հարկ է ասել . քանզի զած անձնիշանութեամբ պաշտեմք, և ոմն ընդ մորոսութիւն հաջեալէ, և ոմն ընդ ած, լինի բաժին հաւատացելոց՝ որ զնա ընտրեն : Վայպիսի ինչ . զետացւոցն, ասէ, մի լիցի բաժին յերկրի . զի որ է բաժին նոցա, զոր ընտրեցին . և մարդարէն յայտ առնէ, եթէ իւրով կամօք ընտրեաց զած, և ոչ ի հարկէ . որ, ասէ, բաժին իմ է : Եթէ ած յոր ժամ բաժին կոչեսցի՝ ընուազի ինչ յածութե իւրմէ, նոյնպէս և հոգին նք յորժամ առ հաւատչեայ կոչեսցի, ընուազի ինչ յիւրմէ ածութեն :

'Ի բաց յապաւեսցուք այսուհետեւ զամ խառնակ շփոթութի, և ընկալցնեք զառաքելական հաւատմն : ||ինչեւ ցերք կշռասեդեալ՝ կշռեսցես զած ային բանս . ունիս զիսորհուրդս իբրև զկշուս 'ի միտսդ, կշռեալ զպարդես փրկիմն : 'Ի միտ առ, ո՞ր մարմնոյն իցեն, և ո՞ր ածութեն . ո՞ր պատուին, և ո՞ր անտեսութեն . զի մի ասասցի և վասն քո, եթէ . Վանանու կշռաք են 'ի ձեռին, կշռաք անիրաւութե . և 'ի դեպ ելանիցէ քեզ միւս բանն, եթէ ընդունայն են որդիք մարդկան, 'ի կշռուն մեղանչեն : ||միս զլծակ կշռոցն, և թիւրես զարդար կշռոն : Օ զոյշ լեր կշռորդաց կենարարին, միտ գիր, քաջհայեաց . ես, ասէ, և հայր իմ մի եմք, և արդ ուր իցէ անզոյգն : Տես զկշռորդս ածեղէն բանին . ||ը ետես զիս ասէ, ետես զհայր իմ . և ուր իցէ որ 'ի վայր միտիցէ, կամ որ 'ի վեր ձգիցէ : Տես զհայր ազատիչ, և զորդի ազատիչ, և զհոգի ազատիչ . եթէ ոչ, ասէ, որդին ազատեսցէ զձեզ, ծառայք էք . և Պաւզոս, օրէնք, ասէ, հոգւոցն կենաց 'ի ՎՀՇ ՔՇազատեցին զմեզ . եթէ հայր ազատէ, և որդի ազատէ, և հոգի ազատէ : Վ. Յ. Եղիցի մեզ ամենեցուն ազատիլ 'ի լծոյ մեղաց, և զերծանել 'ի լծոյն Կերձուածողացն, և ուղղել զհաստատուն հաւատմն, և փառս տալ սբյ Երրորդութեն յաւիտեան :

ՃԱՌԻ ՈՒԹԵՐՈՌԴ

Նորին ասացեալ 'ի ոք վկայն յԱվակ մարտիրոս : Ուր և ած
զՅուաէփ յօրինակ Ք.:

Օ ՈՒԱՐԱԽԱՆԱՅ Երկինք յորժամաստեղք 'ի մէջ
աստեղաց ծագեն, և նաւահանգիստք՝ յորժամ մանր
նաւքն 'ի մէջ մեծամեծ նաւացն շողայցեն, և յոր-
ժամ ամպք զամպօք ելեւել խաղայցեն, և զցողս
քաղցրութե սրսկեալ ցանիցեն : **Օ** ուարձանայ և
եկեղեցի, յորժամ ժողովուրդք զժողովուրդս ճե-
պիցեն, և տօնք զտօնս ստիպիցեն 'ի ոք տեղին . և
ոչըստ տեղեացն զկարդս փոխեն, այլըստ տեղեացն
փոփոխմանց զգութմն նորոգեն . յօրհնութեց յօրհ-
նութիւնս, յեկեղեցւոյ յեկեղեցի . մանաւանդ թէ
առաքելաբար պարտ իցէ ասել, թէ 'ի հաւատոց 'ի
հաւատս, և 'ի փառաց 'ի փառս . և կատարի բան
մարգարէական, եթէ երթիցեն 'ի զօրութենէ 'ի զօ-
րութիւն : Երէկ պայծառացոյց զմեզ արքունական
թագն առաքելոցն, և այսօր լուսաւորէ զմեզ պսակն
մարտիրոսաց . և աւանու 'ի զլուխ եկեղեցի զթագն
և զպսակն, և կատարի 'ի սմա բան մարգարէին,
եթէ եկեղեցի պսակ վայելչութեան 'ի ձեռին ո՞ն, և
թագ արքայութեան 'ի ձեռին այ : **Ա** լ զոգիս մեր
պսակեցին վկայից վաստակք, և զորմա տաձարիս՝
կանթեղաց լուսաւորութիւնք, և պարիսպ, և պա-
տուար : **Պ**ատուար պատեցաւ զմեզք կըկին յԵրրոր-
դութիւն . քանզի չիք ինչ յերկնաւորաց և յերկրաւո-
րաց՝ եթէ առանց ս՞յ յԵրրորդութիւն լուսաւորեսցի :
Եմանօղլինի նորայքս օրինակի արարչին . զի զոր ած
'ի ծածուկ առնէ, զնոյն և կանթեղքս յայտնի . քան-
զի պատեաց՝ զմեզ իբրև պատուարաւ լուսաւորու-
թիս . և քանզի ած խոստանայ՝ եթէ եղէց պարիսպ
հրեղէն շուրջ զժողովրդեամբ իմաւլ :

Մարեւ լցաւ երկիր զիտութե առ իբրև զջուրս

բազումն, զի ծածկեն զգովս . և այժմ իսկ որ ժողովոք կատարի ծածուկ բան մարդարեին, եթէ տն է երկիր լրիւ իւրով , Քարողեին զայս մարդարեիքն , և ոչ առ այժմու հաստատութիւնս ճառեին զրանս . ո՞ոք ոչ զիտիցէ եթէ տն է երկիր լրիւ իւրով . և կամ ո՞լ երկմտիցէ եթէ այլոյ տն բաժին կայ յարարածս . քանզի ամենայն հաւատացեալը և անհաւատք յանդիման կանխակալ սովորութք զիտեմք, եթէ այ է ամենայն ինչ . այլ մարդարեիքն ոչ եթէ առ այժմու հաստատութիւն բարբառեին զայս , այլ առ՝ առաջին մոլորուին՝ յորժամկռապաշտուին ճարակեր զերկիր , յորժամ առ պատկերսն ջերանեին մարդիկ , յորժամ անձն չճանաչէր , և չաստուածքն երկրպագութիւնուին :

Դորժամ , որպէս Վռաքեալ ասէ՝ եթէ պաշտեցին զարարածս և ոչ զարարին , տեսանեին որ մարդարեիքն զերկիր իւրուե՞ի բռնաւորէ ումեքէ վտարանզի վարեալ , բողոքեին մոլորելցոն , եթէ տն է երկիր լրիւ իւրով , ընդէ՞ր մոլորեալ շրջլիք . զմէ պէս պէս անձոց համարիցիք զծագս երկրի . քանզի ըստ դիւայն անուանց՝ նոյնպէս և տեղիքն կոչէին : Իշլ զորօրինակ ասպատամք մտեալ բռնութք զայլոյ թագաւորութիւն իւր վտարիցէ , նոյնպէս և գեք մտեալ յաշնարչ զիւրաքանչիւր կողմն տիեզերաց յանձինս կորզէին . ոմանք լիկիացիք դիք կոչէին , և ոմանք ատտիկեցւոց , և այլք ագուացւոց , և այլ աքայեցւոց . և իւրաքանչիւր յանցնիւր կողմանս բաժանեալ էին , և ըստ յորջորջման դիցն ընծայելոյ տեղիքն կոչէին : Վայիսի ինչ . աթենացիք յանուն այնը դիցն որում երկիր պագանեին . և Վրեգ քաղաքի՝ ըստ իւրեանց դիցն , և իւրաքանչիւր ոք ըստ իւրաքանչիւր դիցն . և զի մի տողեալ երկայնեցից զպատմութիւն , ըստ անուան դիցն և տեղիքն անուանեին :

Իշլ զի մի ինչ առաջին պատմութիւնն պատրեսցէ զքեզ , միտ դիր զրոց՝ որ նմին միաբանին . այնպէս համարեին առաջինքն , եթէ իւրաքանչիւր ումեք ՚ի դիցն մի մի կողմէ եհաս երկրի , և անձ զշրեաստանի

կողմն ունիցի . քանզի և ասէր իսկ ասորեստանեայն , յորժամ եկին 'ի վերայ երկրին պաղիստինացւոց , մի թէ ապրեցուցին ածքն իւրեանց զիւրաքանչիւր աշխարհ , զի գքեզ ապրեցուցանիցէ ածն Խրայէլի : Համարեին առաջնքն , թէ մի ոք 'ի կարծելոցն իցէ ամենեցունց ամբն . և որպէս իւրաքանչիւրոք 'ի սուտ անուանելոցն ածոց զիւր աշխարհ ընկալաւ , նոյն պէս և ած սեպհական ինչ զպաղիստինացւոց աշխարհն ունի . որպէս և միւս խուժդումն ասէր , եթէ ած Խրայէլի՝ ած Երանց . փոխանակ ասելոյ՝ եթէ պաղիստինացւոց Երանցն միայն ունի իշխանութիւն : Եւ արդ առ մոլորեալսն որ բաժանէին զերկիր 'ի միոջէ տէրութենէն , և ընդ բազում տէրութեամբ համարեին զկողմանս որ 'ի ներքոյ երկնից են , աղաղակէին՝ եթէ ան է երկիր լրիւ իւրով : Վաղա իրը պահանջել իմն յայտ առնել եթէ ուստի իցէ ան ամենայն երկիր , բերէ յառաջ զձանոթարարչութենն , զի հաստատեսցէ զսահմանս տէրութեն . նա ինքն , ասէ , 'ի վերայ ծովու հիմունս արկնմա , և 'ի վերայ գետոց պատրաստեաց զնա :

Լցաւ այսուհետև փառօքն Շնի ամենայն երկիր , և լի եղել զիտուք ան ամենայն երկիր . որպէս մարդարէն Խսայի ասէ , թէ իրը զջուրս բազումս որ ծածկեն զծովս : Որ բնութեամբ ընդունի զսահման , զայն հաւատոցն օրէնք հաստատեն : Կիտէք , եղրարք , զի բազում գետք յամենայն կողմանց որ 'ի ներքոյ երկնից են՝ թափին 'ի ծովս , և չծածկեցին , այլ մասաւանդ ինքեանք ծածկեցան , և ոչ ծածկեցին : Կայց նոր քարոզութենն նոր իմն զօրութեն խոստանայ : Կիտութին այ , ասէ , ելից զերկիր իրը զջուրս բազումս որ ծածկեն զծովս . որում բնութեամբն չէ մարթ լինել , զայն ըստ զիտութեն հաստատէ : Օ որ օրինակ չէ մարթ ծովու 'ի ջուրց օտարաց ծածկիլ , նոյնպէս չէ մարթ գիտութեն լնուլ երկրի ըստ իրացն հանդիսի . բայց սա աւադիկ տարածեցաւ բանն , և զամենայն ծագս երկրի լի արար , և ծածկեաց զծովս աւետարանսական վարդապէտութեն : Օ որ ծով : Յորում իրը յանդունդս 'ի տատանի կային մարդիկ : Եւ բանն այ , և զամենայն ծագս 'ի ներքոյ

Երկնից ելից . և կատարեցաւ զոր ՚Կանիէն ասաց ,
եթէ վէմն որ հատաւ ՚ի լեռնէն առանց ձեռին՝ եղեւ
լեառն մեծ , և լցաւ ՚ի նմանէ ամենայն երկիր :
Ո՞ւրդ նմանեցուցանէ ջրոց , որ ծածկէն զներքոյս
երկնից . քանզի խաղաց գնացիւք վարդապետութին
ընու բանն զծագս երկրի . և մերժ լերին՝ վասն բարձ
ըութե վարդապետութեանն , վասն յերկին կցելց
ածախօսութեն : ՚Նկատ ասէ , յաւուրս յետինս յայտնի
լեառն տն . և տուն այ ՚ի վերայ գլխոց լերանց : Ո՞ւ
տուն : ՚Նկեղեցի . քանզի ոչ եթէ ՚ի վերայ լերանց
շինեալ է , այլ ընդ բարձրութե ածախօսութեն հաս
տատեալ կայ : Տուն այ է եկեղեցի , զոր Պաւղոս գրէ
առ Տիմոթէոս . զի գիտացես , ասէ , որպէս պարտ
իցէ քեզ ըրծել ՚ի տան այ , որ է եկեղեցի : ՚Նւ վասն
էր ՚ի վերայ լերանց : ՚Նենարարն ասէ , եթէ ոչ կա
րէ քաղաք թաքչել որ ՚ի վերայ լերին կայցէ :

՚Նկե վէմն , որ հատաւ առանց ձեռին , լեառն մեծ .
այն իսկ է , զի ծնաւ ՚ԲՇ առանց առն . հատաւ վէմն
առանց ձեռին , քանզի ծնաւ ՚ԲՇ առանց ամուսնու
թեան հաղորդութե . և եղեւ վէմն ՚ի լեառն մեծ ,
և ելից զներքոյս երկնից : ՚Նայց զի մի ոք բռնազրօ-
սեալ ինչ բանս համարեցի , և ասացէ՝ եթէ զի՞նչ
հուսկ իցէ վէմն հաստատել ՚ի մարմին ծնեալ , հարկ
է յայտ առնել , եթէ և վիմահատք ևս կոյնն ծնունդք
մարդկան . և անտի հաստատուն լինիցի , եթէ հա-
տանելն ծնանել է : ՚Նսէ մարդարէն ՚Նսայի ցժողո-
վուրդմն . հայեցարուք ՚ի վէմն հաստատուն յորմէ հա-
տարուք . և զի մեկնեցի զվէմն , ածէ զնովիմք , եթէ
հայեցարուք ՚Նբրահամ հայը ձեր , և ՚ի ՚Վառայ՝ որ
ծնաւն զձեզ : ՚Նեսանես , զի վիմահատս կոչէ զծնունդս
մարդկան :

՚Նւ ընդէր ՚ի վիմէ ասիցէ զծնունդս ժողովր-
դեամն . քանզի ամուլ էր ՚Վառայ . և վէմն ամուլ է ,
և ըսերէ ինչ պտուզ . կոչէ վէմ զամուլն բնութե , և
զծնդականն չնորհօք . հայեցարուք , ասէ , ՚ի վէմն ,
յորմէ հատարուք . որպէս և անդ քարահատք ըզ-
ծնունդ ժողովրդեամն յայտ առնեն , նոյնպէս և աստ
վէմն առանց ձեռին հատեալ՝ զ՚ԲՇի մարմնաւոր
ծնունդն ասէ : ՚Նւ տես զիարդ զդուշանայ . քանզի

բազում անդամ վէմք պատառին և անկանին 'ի լեռանց առանց ձեռին, չասաց՝ եթէ պատառեցաւ կամ հերձաւ, այլ թէ հատաւ. քանզի ծնանելոց էր գտես չական ծնունդն, ասէ՝ թէ հատաւ վէմն առանց ձեռին: Օ ի ոչ ըստ բնութե՛ օրինաց ծնաւ, այլ նոր իմն երկամք, և անփորձ յամուսնութենէ 'ի կուսական արգանդէ ծաղկեաց ծաղիկն, և եղել 'ի լեառն մեծ, և ելից զերկիր: Եթէ չմիաբանեցին արդիւնքն բանիցն, ապա 'ի զուր է ջատագովութիս, և բռնադատել ջանամք ստութք զՃմարտուին: իսկ եթէ յառաջ քան զբանս արդիւնքն ծագեալ աղաղակեն, և լի եղել գիտութքն Վ՞սի ամենայն երկիր, եթէ ապա ախտաւորք առ երախտիս արդեանցն լինիցիմք, լսից եմք և մեք 'ի տնէ. թէպէտ և դուք լուիցէք՝ քարինքդ աղաղակեսցեն: Հատաւ վէմառանց ձեռին, և եղել լեառն մեծ. և յայս լեառն դիմեն ամենայն ժողովուրդք, և ասեն. Եկայք եցուք 'ի լեառն տն, և 'ի տուն այ Հակովըայ:

Եւ միտ գիր հաստատութք, զիարդ նախ զհեթանոսաց գարճն ընծայեցուցանէ, և ապա զհրէից կուտմն. զի նախ 'ի հեթանոսաց հաւատացին 'ի Վ՞ո, և յետ նոցա ապա և 'ի հրէիցն: Երթիցեն զհետ աղդ բաղում, և ասասցեն. եկայք եցուք 'ի լեառն տն, և պատմեսցէ մեզ զՃանապարհս իւր, և գնասցուք ընդ նա: Եւ զնովիմք զի՞նը ածիցէ. զի 'ի Աիսնէ, ասէ, եցեն օրէնք: Տես զիարդ զերկլորդ կոտակարանաց ընծայեցուցանէ զօրէնսն. զի առաջին օրէնքն ոչ 'ի Աիսվէ, այլ 'ի Աինայ լեռնէ: 'ի Աիսնէ, ասէ, եցեն օրէնք, և բան տն յիշրուսաղեմէ, և դատեսցի 'ի մէջ ազգաց. և զայլ ևս յաջորդան մի ըստ միոնէ: Հորժամ զհեթանոսաց դարճն գուշակեաց, ապա բողոքէ հրէիցն մարգարեական հոգին, և ասէ. և այժմ, տունդ Հակոբայ, եկայք երթիցուք 'ի լոյս տն: Տեսանես, նախ հեթանոսք հաւատան, և ապա կոյի ժողովուրդն հրէից:

Ունիս օրինակ 'ի Հովսիփայ. եդ, ասէ, Հովսէփի իւր վկայութի: (Օրինակք կենարարին յառաջազոյն կատարէին. նախ թագաւորեաց Հովսէփի յիշրիպտոս, և ապա եղբարցն ապախտաւորացն. նախ թա-

գաւորեաց եղիսպտացւոյն այլազգեաց , և ապա եղը բարցն համացեղիցն : Եթ տես զարմանալիսն , եթէ ոչ ամենեին ողջ կատարեացի 'ի ՚ՎՇՇ զոր ՚Դաւիթիմն ասաց . վկայութիւն եղ զնա , ասէ , 'ի Հովսէփ . փոխանակ ասելոյ , եթէ մարդարէութիւն որ վկայեացէ՝ եղ 'ի Հովսէփայ : Եթէ առ հօրն իւրում Հակովը բայ կացեալ մնացեալ էր , Եգիպտոսո զդարմանիշն ընդունէր : Ո՞ւտ գիր հաստատուք . Հովսէփ եթէ անդէն առ հօրն գգուեալ էր , Եգիպտոսո զինամակալն և զնարազիւտ սովոյն ոչ ընդունէր . նոյնապէս և միածինն եթէ անդէն առ հօրն կացեալ մնացեալ էր 'ի ծածուկ և յանձնառ փառմն , տիեզերք ամենայն 'ի զարդուէ տնտեսութեն մերկանային : Վուա քեցաւ Հովսէփ շրջել զեղբարբքն , և զիսաշամքքն . առաքեցաւ միածինն յաշխարհ խնդրել զովսարս կորուսեալս տանն Խարայէլի : Օ Յովսէփ զարդարեցին երազքն , և զԲՇՇ փառաւորեցին սքանչելիքն : Տեսի զի ես և եղբարքն հնձէաք , և նոցա որայքն պազանէին երկիր իմում որային . քանզի վասն վրտանգի սովոյն լինելոց էր երկրպագութիւն , յառաջագոյն եցոյց ած յորայնոյ կերակրոցն զելս գիպուածոյն հանդերձելոց : ՚Ախս երկիր պազանէին նմա որայքն , քանզի նախ եղբարքն երկիր պազանելոց էին նմայլ Եգիպտոս . և յետ այնորիկ ետես , զի արեգակն և լուսին և մետասան աստեղք երկիր պազանէին նմա : ՚Ախս պատճառք սովոյն իջուցին զնոսայլ Եգիպտոսոս , և յերկրորդ նուազին ծանեան զեղբայրն . զառաջնն իբրև իշխանի առաջի կային գողութք , և յերկրորդ նուազին ծանեան , և պատուեցան . ծանեան , և փառաւորեցան իբրև զեղբարս Հովսէփայ փառաւորելոյ :

Վուեցին եղբարքն զՀովսէփ վասն երազոյն , և զիտէին՝ թէ ոչ զնա ատեն , այլ զերազացոյցն . մի թէ յիւրո՞ց ինչ կամաց զերազն տեսանէր . ապա ուրեմն որ կռուէր ընդ երազատեսին , ընդ այ մարտըն էր : ՚Կայց տես զւարութիւն՝ զիարդ կուրացուցանէ : ընդէր կռուիցիս ընդ երազատեսիդ : Ոտո՞գ

լինիցին արդիւնք երազքդ, եթէ ստիցին: Աթէ ստոյդ լինիցին, որովք մեքենայիւք կարասցես որոշել զհշմարտութին. և եթէ ստեսցի, ընդէլ նախանձեսցիս ընդ ցայգացնորիդ՝ բանդագուշելոյ: Դողաւ Յովսէկփ շրջել զեղարքքն իւրովք, գործ սիրոյ ցուցանել. և զերախտաւորութին ապախտաւորութեամբն թշնամանէին: Կա բանս խաղաղութեան խօսէր ընդ նոսա, և նոքա'ի կաիւ գումարեալ մարտընչէին ընդ նմա. զի կատարեսցի բան կենարարին, եթէ ատեցին զիս 'ի նանիր: Տես զսքանչելիսն. երազատեան, ասեն, գայ. զարհուրեցոյց զնոսատեսիլ երազոյն, մանաւանդ եթէ ոչ տեսին, այլ կասկած իրացն 'ի գլուխ ելանելոյ. մահ խորհնին սրբոյն, և ած զարութին նոցա գործ տեսչութեան կազմեաց. քանզի գործ այ՝ ոչ միայն յիւրմէ զպարգես չնորհէ, այլ և զմեր չարութին 'ի բարւոք պէտս դարձուցանէ: Ամէին սպանանել զեղբայրն. խրատբարւոք 'ի մէջբերէր Ոսորէն. մի սպանցուք, զի եղբայր մերէ և մարմին, այլ արկցուք զդա 'ի մի ուրեք 'ի գբոց. և 'ի մոխ այն կայր, եթէ զիամրդ կարասցէ ապրեցուցանել զնա. բայց այ իսկ գործ տեսչութեն կատարէր. չսպանանի Յովսէկփ, այլ կենդանի իջանէ 'ի գուբն. զի օրինակ էր կենդանոյն՝ որ կենդանւոյն էջ 'ի գժոխս: Եջ Յովսէկփ 'ի գուբն, և էր ունայն գուբն 'ի ջրոյ. նմանութիւն զերեզմանի կենարարին, որ ունայն էր 'ի մեռելոց:

Արկաւ Յովսէկփ 'ի գուբն. Յուղայ գթացեալ յեղբայրն՝ խորհուրդ գեղեցիկ յառաջ բերեալ, չսպանանել զնա 'ի գբին. զի՞նչ օգուտ իցէ՝ եթէ սպանանիցեմք. եկայք վաճառեսցուք զնա: Յուղախնամով խնայեաց յեղբայրն, բայց ամէնիմացն ած գործ տեսչութեան կատարէր: Պարտ էր յայնժամ վաճառել զՅովսէկփ 'ի ձեռն Յուղայի. քանզի և վաճառելն կենարարին 'ի ձեռն Յուղայի մատնչի եղեւ: Առին իսմայէլացիքն, և տարան Արքիպատոս: Իւշ: Ուղտով: Եր զի՞նչ ունէին ուղտքն: Ուկտին, և տաշն, և խունկս. պարտ էր իսկ անոյշիւղոյ ցածու-

թեն ընդ խունկս առաքել։ Վարթի 'ի միտ առնուլ անդստին 'ի պատմութեն, զլարդ ակամայ չարութին դովի զվաճառակուրն, զի առաւել 'ի գինս առնուց ցուն։ Հարցանէին իսմայէլացիքն, բարիոք է պատանեակդ։ 'ի հնազանդութի գային 'ի հարկէ, քանզի զարծաթն տեսին 'ի ձեռին ազատ է, ասեն, ազնուական։ դողմանաւ զգիտէ, սուտ երդնուլ չմարթէ։ Վակամայ կամօք չարութին զանձնն 'ի սուտ հանէր։

Լջ զովսէփի լիցիպտոս, քանզի և կենարարն եթ թալոց էր յիշգիպտոս։ վաճառեցաւ զուսեփ այլազգեաց։ մատնեցաւ ԿՌԱ հեթանոսաց։ ահաւասիկ եւ լանեմք յիշրուսաղէմ, և որդի մարդոյ մատնեսցի 'ի ձեռս հեթանոսաց։ զովսէփ 'ի ձեռս իսմայէլացւոյն։ և ՀԱ 'ի ձեռս հեթանոսաց։ Լջ զիւսէփ լիցգիպտոս, և նեղէր զառաջինն ։ քանզի և ՀԱ զառաջինն ընկալաւ 'ի հեթանոսաց, և յետոյ երկիր պագին այնմ զոր հալածէին և թշնամանէին։ Լյոնկարէր Շմարտութի օրինակն, 'ի վշտանան զուսեփայ 'ի պունկութէ ձմերայնոյ բուռն եհար կինն զհանդերձիցն զուսեփայ, որպէս և մահ զմարմոյ կենարարին։ մերկացաւ զովսէփ զհանդերձն, և ընկէց առ շոյց լեան, որպէս և կենարարն իբրև յարեաւ՝ ձգեաց զհանդերձն 'ի գերեզմանն։ Վատանէ զուսէփ 'ի բանդ, քանզի և ՎԱ մոանելոց էր 'ի գերեզման։ Լյորիշան կալանաւորացն զովսէփ։ քանզի և ՎԱ թագաւոր է կենդանեաց և մեռելոց։

Լյուտես զազնուականութի ոգւոյն։ կերպարանօք էր 'ի բանդին և 'ի կապանս, 'ի ծառայութեան էր ազատն։ 'ի բանդի 'որ 'ի թագաւորութեն պատուելոց էր։ Ըերկմտեաց երբեք իբրև զթերահաւատ։ չասաց թէ ուր են երազքն, թէ ուր են սուտ ցնորքն։ չասաց թէ ուր են կանխացոյց պատգամքն այ. թագաւորութի խոստացար ինձ, և ծառայութի հարկանեմ։ իշխանութի 'ի պարզեի տալ, և ոչ 'ի հասարակաց ազատութիս վայելեմ։ 'ի ծառայութիւն յազատութենէ իջի. 'ի բանդ 'ի դիւրութէ մտի. չէած այսպիսի ինչ զմտաւ, այլ տեկը և անսայր իրացն 'ի գլուխ եւանելոց։ Լյուովլ վկայեսցէ, եթէ իրացն 'ի գլուխն եւանելոց ակնունէր, և չերկմտեաց։

լին, ասէ՛, 'ի բանդին երկու ծառայք Փարաւոնի, երազ տեսին, և տխուր էին . ասէ ցնոսա ՀՅովսէփ, ընդէ՞ք տխուր էք . և նոքա ասեն . երազ տեսաք, և շիք ոք որ մեկնեսցէ : Չասաց, թէ մի ոք նայեսցի ընդ երազս, իմ երազքն լիցին օրինակ այլոց երազոց . զի յայտ արասցէ եթէ իւրում երազոցն ուշ ուներ 'ի գլուխ ելանելոյ . ասացէք և ես պատմեմ ձեզ : Վ.ո երազքն վճարեցին ինչ, զի զայլոց մեկնիցես . մեկնէ զերազն, և ունի ակն իւրոյ երազոցն կատարելոյ :

Ո՞նտ դիր հաստատութք, փոխեաց յօրինակէն 'ի զշմարտութին : Եթէ կամիցիս զՀՅովսէփայ զշանդամանս առնուլ, մի ուսանիր յեղուարցն . քանզի նախանձ թագուցանէ զշմարտութին, և 'ի ծառայութի արկանէ զազատն . և մի յիսմայէլացւոցն, քանզի և նոքա իբրև զծառայ գնեցին զազատն . և մի 'ի տիկնողէն, քանզի զրպարտէր վասն անզգամութեն . այլ եթէ կամիցիս խելամուտ լինել որպիսի ինչ ոք էր ՀՅովսէփ, հարց զշայրն իւր, և ասէ . եթէ որդի, և սիրելի որդի : Մատիր առ Վ.ո . եթէ կամիցիս խելամուտ լինել, որպիսի ինչ ոք Վ.ո է, մի ուսանիր 'ի հրէիցն . քանզի նախանձ պատրուակէ զշմարտութի . և մի 'ի կուապաշտիցն, քանզի ատեն զկործանիչ պատկերացն . և մի 'ի հերձուածողաց, զի որպէս ոչ գիտէին խսմայէլացիքն՝ եթէ զազատն գնեցին, նոյնպէս և հերձուածողք ոչ ձանաշէն, և վասն այնորիկ զազատն ծառայ առնեն . և մի 'ի հրէիցն, զի թշնամիք են խացին, և մի 'ի կուապաշտիցն, զի ատեան զյանդիմանիչ կոոցն, և մի 'ի հերետիկոսաց, զի օրինակ են խսմայէլի, որ չեր յազատէն, այլ յաղախնոյն : Խսմայէլացիք օրինակ են հերձուածողաց, և որդիք ազատին՝ հաւատացելոց : ՀՅորժամ օրհնէր նահապէտն զՀՅովսէփի, ասէ . 'ի ցողոյ երկնից օրհնութի քո, և 'ի պարարտութենէ երկրի : Ո՞նտ դիր, այն այ պարզեք են, որ յերկնից և յերկրէ պարզեին . չտուան պարզեքն խսմայէլի, զի չուներ զայսն . սրով, ասէ, կեցցես : Վիք այլ ինչ գործ խսմայէլացւոց՝ որովշահս ինչ շահեսցին, բայց միայն սուր : Ոլոց նման են հերձուածողք, որ ոչ

երկնից պատգամացն հաւատան , և ոչ մարդարեիցն ,
այլ զսուրն ընդդեմ բերեն . և յիրաւի իսկ . քան-
զի իսմայէլացիք են . զի ոչ բանին այ կեան , այլ
որով անմառութե-

Ո՞վ այսուհետեւ , մի 'ի հրէից , և մի 'ի կռապաշտից ,
և մի 'ի հերձուածողաց ուսանիցիս զի՞ւնէ թէ որ-
պիսի ոք իցէ . այլ եթէ կամեսցիս խելամուտ լինել ,
ժիւրմէ արմատնին առ զհանգամանս : Տես զի՞նչ
վկայէ զնմանէ ծնօղն . դա է որդի իմ սիրելի , դման
լուարուք : Հայր որդի կոչէ , և դու արարած ա-
նուանես : Դա է , ասէ , որդի իմ սիրելի . և դարձեալ
եթէ այնպէս սիրեաց ած զաշխարհ , զի զմիածին որ-
դին իւր ետ : Այս յաւանեցուցանիցէ զքեզ հայր .
չակնածեցուցանեն պատգամք մարդարեիցն . չպատ-
կառեցուցանեն գունդք առաքելցն . յամօթ արառ
ցեն զքեզ դեք : Դանզի ոչ հօր անսան՝ որ ասէ , թէ
դա է որդի իմ սիրելի . և ոչ Պաւղոսի՝ որ ասէ , ծա-
զումն փառաց և նկարագիր ետութե . և ոչ Պիետրոսի՝
որ քարոզէ , թէ դու ես որդի այ կենդանւոյ . և ոչ
Խանայեայ՝ որ ած հզօր կոչէ . ուրացար զգիրս , գո-
նեալ 'ի դիւաց պատկառեա : Մատթէոս ասէ . ելա-
նէին դեք 'ի բազմաց , և աղաղակէին , եթէ դու ես
որդի այ . նոյնպէս և Մարկոս ասէ , եթէ հաւանե-
ցան բանիւ և ասեն . զիտեմք զքեզ ով ես , որդիդ այ .
նոյնպէս և Ո ուկաս բողոքէ , թէ իբրև տեսանեին
զնա դեքն , անկանեին առաջի նորա , աղաղակէին և
ասէին , զիտեմք զքեզ ով ես , որդիդ այ . եկիրյա-
ռաջ քան զժամանակն դատել զմեզ : Դեք որդի այ
խոստովանին , և դու արարած կոչես : Դմէծի տագ-
նապի կաս , զի արդարացուցանես զդես քան զքեզ .
զի յաճախութիւ չարեաց արդարացուցանէ զսակաւ-
չարիս : Ո ամս այնորիկ և յիշըուսաղէմ վասն յաճա-
խութե չարեացն ասէր , եթէ արդարացաւ Ոոդոմ
քան զքեզ . փոխանակ ասելոյ , թէ առ քո մեղօքդ՝
արդար երեւեցաւ սոդոմայէցւոց քաղաքն :

Ունիս օրինակ , երկիր պագ ճշմարտութեն . զի
թէ չեր չուլսեփայ երթեալ յիշիպտոս , սուլամահ
լինէր երկիրն եգիպտացւոց . և եթէ չեր կենարարն
յաշխարհ եկեալ , սուլամահ յածեղէն քանին լինէին

տիեզերք . և զի ածեղին բանն կերակուր է , լուր .
ահաւասիկ առաքեցից ձեզ ոչ սովհացի , և ոչ ծա-
րաւ ջրոյ , այլ սովլսելց զբանն տն : Ովկանչելիք .
զիարդ՝ ի մարգարէսն յառաջադոյննկարէր օրինակն
Տեսեր ի Յովսէկի զօրինակն . տես և . ի Դանիիէլ զյա-
ռութե օրինակն . արկին զԴանիիէլ՝ ի գուրք՝ ոչ կամօք
Դարեհի , և լիւրոսի ¹ . ելանէ . ի խաչ . Յու , ակամայ
կամօք Պիղատոսի . զԴարեհ արքայ բռնադատեաց
միաբանութեն իշխանացն , և զՊիղատոս՝ միաբանու-
թեն հրէիցն : Լանիսեաց Դարեհ տեսանել զգուրն և
զԴանիիէլ , թէ ողջ կայցէ . կանիսեցին առաքեալքն
և կանայքն ՚ի գերեզմանն տեսանել , թէ կենդանի
իցէ կենդանին :

Դարձարուք , հերետիկոսք , յանհաւանութենէ . ի
հաւատս . մի լինիք վատթարագոյն քան զջուր :
Գուրն ետես զէ Յու , և գինի եղեւ . և դու ասես որդի ,
և ծառայ անուանես : Առաջին նշան ՚ի Լանա գա-
լիւացւոց արար . զի կատարեսցի բանն՝ որ ասէ ,
Դալիլեա հեթանոսաց , ժողովուրդ՝ որ նստէր ՚ի խա-
ւարի՝ լոյս մեծ ետես : Առաջին նշան ՚ի հարսանիսն
եղեւ , քանզի է առաջին աճուրմն մարդկան ազգաց
յամուսնութենէ , և արմատ մարդկեղին բուսոյ հար-
սանիք . օրհնէ զարմատն , զի օրհնեացէ զշառաւեղմն
լու ես ընդ այն զարմանամ , ոչ զի կոչեցաւն միայն՝
և յանձն առ երթալ , այլ զի ոչ ՚ի տուն ինչ նշա-
նաւոր , ուր հարսանիք էին , չողաւ , բայց ՚ի տուն
առն միոջ աղքատի հարսանիս . աղքատ էր այրն ,
ուր հարսանիքն էին . և այնչափ աղքատ , մինչ զի և
զինեակն ես հատաւ . աղքատ էր ընդիւք , այլ մե-
ծացաւ գանձիւք Ճշմարտութեն :

Երևեցաւ արն , և փոխեաց զջուրն ՚ի գինի . յուշ
առնէ մայրն . զինի , ասէ , չունին . որ մայր էր ըստ
մարմայ , և աղախին ըստ ածութեն . աղախին էր
ըստ ածական բնութեանն , և եղեւ մայր ըստ տնտե-
սականութեան . և էր նորա ած , և որդի . ած՝ ըստ
տէրութեն , և որդի՝ ըստ տնտեսութեն ² : Պինի ոչ

1 Յօրինակին կամայ :

2 Յօրինակին ած ըստ գեղեսութեն , և որդի ըստ գեղեսութեն :

ունին : Օ ի՞ կայ իմեւ քո, կին դու, չե ևս եկեալ է
ժամ իմ : Հայսմ վայրի ոմանք իմացան, եթէ այլ
ազգ իմն խոստանայ . բայց մեղադիր լինի մօրն, զի
տակաւին իբրև ընդ մարդ նայեր ընդ տըն մարդկան .
եպերէր զնա, ոչ զի յիշեցոյցն, այլ զի իբրև մարդոյ
յիշեցոյց : Ի ազումք կարծեցին զչե եկեալ ժամ իմ,
փոխանակ ասելոյ՝ թէ չե ևս եկեալ է ժամանակ նշա-
նայն . և եթէ ցիցէ եկեալ, զիարդ առնիցէս զնշանդ :

Այլ մեղադիր լինի մօրն իբրև վայրապար և տարա-
ժամ յիշեցուցանելոյ . և զի ած չէ կարօտ յիշեցու-
ցանելոյ : Ըե ևս եկեալ է ժամանակ յայտնութեան
իմոյ . քանզի չե ևս ոք ճանաչէ զիս՝ թէ ուլիցեմ :

Եւ զի ուսանիցիս, եթէ զբանն զայն ոչ յուրաստ
ինչ կալ՝ ի նշանէն ասաց, այլ վասն զզօրութիւնն
յուշ առնելոյ . իսկ մօրն իմացեալ զպատիւն՝ ասէ .
զոր ինչ ասասցէ ձեզ՝ արասնիք :

Դայց, և փոխեաց զջուրն՝ ի գինի, որ դարձուցանէ
զջուրն յեւդ . քանզի ձիթենեաւ զցօղն յեւդ դարձու-
ցանէ, և որայնովն՝ զցորեանն, և այլովք բանջարովք
՚ի դեղախունկս, և ծառովլք ՚ի միրգս . և յամենայ-
նի զամենայն բոյս յիւրաքանչիւր ճաշակս . մի
անձրեւ, և ազգի ազգի ճաշակք գործին : Ո՞ի ընդ
այնորիկ զարմանայցես, զի զջուրն՝ ի գինի փոխեաց,
այլ ընդ այն յոյժ զարմացիր, զի յամենայն արա-
քածս՝ զմի անձրեւ յազգի ազգի գոյնս և ՚ի ճաշակս
դարձուցանէ . զարիւն՝ ի կամն, և զայն ևս ամե-
նայն յիւրաքանչիւր գոյնս և ՚ի ճաշակս : Օ մեծա-
մեծ գործս նորա հանապազորդ սովորութեն արհա-
մարդէին, և նոր ինչ յանկարծադէակ տնօրէնութեն
զարմանալիք թուին . ապա թէ ոչ՝ ընդէր ոչ զարմա-
նայցես, թէ զիարդ զարիւնն՝ ի ստինս կանաց ՚ի
սպիտակ բնութիւն կաթին դարձուցանէ . վասն է՛ր
չխիրանայցես, զի զթուխ մազ՝ ի սպիտակ փոխէ .
զոր ամենեին նարօտաներկաց ճարտարուի չէ ձեռն
հաս ներկանել . ՚ի սպիտակէ սեաւ ներկել կարո-
ղութիւն է . բայց ՚ի սեւէ սպիտակ առնել՝ կարի ան-

1 Զայս օրինակ խօսեցաւ՝ ՚ի դովոյն Երկեսոսի պայծառ ևս
նմին դարու և Ասկերերան . որ քարոզեն վարդապետք զպատիւ-
թոււի իմն խիստ . այլ յետ ժու . Տերամօրն :

Հնարին է . ոչ զարիւնն ներկել մարթի , և ոչ զմիան դամ դկարմիր ներկեալ 'ի սպիտակ դարձուցանել . բայց նա զարիւն թուխ 'ի սպիտակ արիւն դարձուցանէ , և զմազ սեաւ 'ի սպիտակ մազ շրջէ . զի ուսանիցիս , թէ ոչ բնուին ինչ զայն բերէ , այլ նա բնութեն եդ սահման այնպէս լինել :

Վարդ յորժամ տեսանիցես զնա 'ի հարսանիս երթեալ , և զջուրն 'ի գինի արարեալ , զարմացիր . այլ զիտացիր եթէ այն ճաշակք ինչ են 'ի մեծամեծ գործոց նորա : Ո՞եծ է , բայց ոչ ըստ զարմանագործին , այլ ըստ սիրոյ այնմ վայելեմք : Խւ արդ պարտ և պատշաճ է իմանալ , եթէ սքանչելիք կենարարին՝ ըստ նմա կարի մանունք էին , և որ վայելէինն նոցայոց մեծամեծք : Խւ զի այսպէս է , վկայէ Ո՞ովակս , յորժամ պատմէր նոցա զսքանչելինն որ յերկրին եղիպտացւոց գործեցան : Չիշեալ զիարդ եշան զքեզ յերկրէն եղիպտացւոց առ առ քո մեծամեծ նշանօք և ահագին արուեստիւք : Տես զիարդ զարմանայր ընդ սքանչելինն . տես և զնշանագործն , զիարդ փոքունս համարի զգործն . զայս ամենայն արարի եղիպտացւոցն , զի պատմեսնիք յորդիս որդոց ձեռոց , որչափ խաղ խաղացի ընդ եղիպտացինն : Տեսանես , որ ինչ մեզս սքանչելիք թուխն , այ այն խաղ է : Ի՞մլայս մինչեւ ցայս վայր :

Օքագեսցի մեզ լցուն ԿՌՇի , և եղիցի ածեղէն բանին լուսաւորել զոգիս մեր , առ ՚ի մերկանալ ըզգործս խաւարինս , և զգենուլ զգործս լուսոյ . բանիւք պայծառացուցանել զքարողութիւնն , և արդեամբք զարդարել զխոստումն զոր խոստացաք . զի բանիւք , և արդեամբք , և հաւատովք , և հաճութք . այ այն խաղ բորդութեն յաւիտեանս . ամէն :

Ճ Ա Ռ Ի Ն Ն Ե Բ Ո Բ Դ

Դ բանն առետարանին՝ որ առէ . Հայր , Եթէ հնար ինչ իցէ , անցցէ
յինքն բաժակս այս . բայց ոչ որպէս ես կամիս , այլ որպէս դու :

ՅՈՐԺԱՄ մեղ , եղբարք , վասն ողորմութե՛ քարո-
զէին օրէնք , յորժամշամ վասն աղքատսիրութե՛ և հիւր-
ընկալութե՛ ՚ի հանդիսի անցանէր բանն , տեսի զիա-
փաք ամենեցուն ձեր , և զովեցի զնախանձն , և ե-
րանի ետու յօժարութե՛ն . քանդի հայեի ՚ի ձեղ իբրև
յերկիր ծարաւեալ յափշտակել զերկնաւոր բանն :
Եւ զայս հաստատեալ զիտէք , զի որ ինչ անձրե-
կրկրի է , նոյնպէս և ոգւոց՝ բանն այ . և զոր օրի-
նակ անձրեն շարժէ զնա ՚ի բոյս , նոյնպէս և բանն
այ յորդորէ զոգիս պտղաբերս լինել ածամուխ զգաս-
տութե՛ն . Ուստի և համարիմ իսկ զերանելին Վով-
սէս՝ լինել վկայ զուարձալից և ծննդական զօրութ-
ածեղէն վարդապետութե՛ն . որ ՚ի որ և ՚ի մեծի և ՚ի
մեծարանաց օրհնութե՛ն բարբառի , եթէ սպասեա-
ցեն որպէս անձրեի բարբառոյ իմայ , և իջցեն իբրե-
զցող իրօպ իմ . և զի մի ոք կարծիցէ անձին ինչ զՃա-
խութիւն այնպիսի ածխօսութե՛ն համարել ածէ յարէ
՚ի նոյն , զի զանուն տն կարդացից :

Վովեմ զձեզ , եղբարք , զի ոչ ՚ի բանս և եթ լսել
հարեալ էք , այլ զի զգեղեցկութիւն մտաց բանիցն
համբարէք ՚ի ձեզ . իբրև զիմաստուն մեղու՝ մտեալ
՚ի յանմահ և ՚ի հոգեոր ՚ի զրոց սքց մարդս , և ՚ի
ծաղկոցս վառեալ ծաղկօք ածպաշտութե՛ն , իւրա-
քանչիւր ոք ՚ի ծածուկ ոգւոցն մեղուաբայնս գործի-
ցէ զմեղը ածեղէն պատգամացն : Օ որ օրինակ մե-
զուն և մեղուոց բնութիւն զօրութիւն ՚ի ծաղկանց
է , և պէտք և վայելք ՚ի մեղուոցն վաստակոց . նոյն
պէս և ածպաշտութե՛ն ծաղիկ և զօրութիւն յածեղէն
զրոց է , և վայելք ածպաշտութե՛ն՝ յառաքինեացն աշ-
խատուէ , զայսպիսի մեղրախօսիսից զածեղէն պատ-
գամացն մազս գործեաց յանձինս : Եւ երանելին
Կաւիթ առեալ զՃաշակս , թէ որչափ բարութիւն

ածաղաշտութիւնն է, հնչեր գուշեր ՚ի նոռազս սաղմասացն, թէ քաղցր են ՚ի քիմն իմ բանք քո քան ըդմեղը բերանոյ իմոյ :

Այլ ոչ այնչափ գովլեմ զձեր յօժարութիդ, որ չափ զարմանամ ընդ հօրս չնախանձաւորութի . որ ածեղէն սիրով ծաղկեալ է, և երկնաւոր չնորհօքն պայծառացեալ . որ այնչափ և այնպէս ոռոգանե զեղեցի, և ուրախ առնէ զայսպիսի քաղաք այ : ՚ի դէպ ժամանակի է ասել զբանս Պաղմոսին, և թէ գնացք գետոց ուրախ առնեն զքաղաքս այ . որ զայն պիսի նր և զյատակ վտակս բղինէ, և ՚ի սակաւ ինչ շմբոց բանից մերոց չգարշի . այսպիսի ամպ երկնաւոր անձրեօք մօրտացեալ, և չսարանայ սակաւ շառաւուկ մերոյ լեզուոյս ընդունել, այլ գովլէ ընդձեզ . որ յառաջքան զձեզ տայ բարեխօսութիւրոց սրց աղօթից՝ ասօղացս ասել և լսողաց զլակլցն զյօժարութի . և գովլէ զիւրն իբրև զայլոյ, նմանող լինել տն իւրում ՚ի՞սի . որ առնոյր զմարդարէիցն, և գովլէր զքարոզութի մարդարէին : ՚ինքնին բարբառեցաւ ՚ի բերան ՚իսայայ մարդարէին, և ինքնին հնչեաց զհոգւոյն սրց զաղգեցութին . և իւր ընկաւեալ իբրև ՚ի մարդարէին, ասէ ցհրեայսն . կեղծաւորք, բարիոք ասաց վասն ձեր ՚իսայի . ոչ թէ ՚իսայի բարիոք ասաց, այլ դու ՚իսայեաւ բարիոք խօսեցար . և ամենայն մարդարէքն . և վկայէ Օ աքարիաս, որպէս խօսեցաւ ՚ի բերան սրց իւրոց մարդարէիցն : ՚Աէին մարդարէիցն բերանքն, այլ հոգւոյն սրց աղգեցութիւնն . որպէս եղէգն՝ ոչ զոր կամի զըէ, այլ զոր ձեռն հրամայէ . նոյնպէս և մարդարէիցն լեզուն՝ ոչ զոր կամէր բարբառէր, այլ զոր հոգւոյն սրց Ճոխութիւն տայր հրաման . վասն այնորիկ և զեղեցիկ իսկ համարին զ՚իաւթի աղաղակեն, թէ լեզու իմ իբրև զեղէգն զըֆ արագազրի : ՚իւ արդ զարմանալի հայրս ինքնին նր աղօթիւքն չնորհեցէ մեզ զբանին առատութի . զոր աղօթքն տայ, զնոյն լսէ և գովլէ . և արդ որովհետեւ այսպիսի հայր ունիք, և սկիզբն ևս է տօնի, օն առեալ սր աղօթիւք սորա, թռուցեալք ՚ի բարձրութիւն փառաց միաձնին համբարձցուք զմիտս . ոչ զի մեծարանաց պատուոյն

հասու ինչ լինիցիմք, այլ սիրով փութասցուք հասանել առ նա . քանզի չիք ինչ, որ հասու պատուոյ միածնին լինիցի, ոչ բանից լայնութիք, և ոչ մոտաց խորութիք . քանզի անցանէ զանցանէ ըստ ամենայն միտս, և ըստ բնաւ խորհուրդս : Եշ զայս երանելին Դաւիթ ասելը առակաւ, եթէ մատիցէ մարդի սիրտ խորին, և բարձրացի անձ . որչափ խորհեցի ոք ինչ բանս զնի, նոյնչափ բարձրագոյն 'ի վեր գտանէ զարշ մարտութեն գիտութի :

Եշ արդ ձառեցուք զբարերարութէ միածնին յայժմու ընթերցուածոյս : (Առակս 'ի կիր արկանէ աղջիւրն իմաստութէ, որ ՚ի բերան Դաւիթի ասելը, եթէ բացից առակօք զբերան իմ . և ձառէ օրինակ ինչ և առակ լի զօրութիք . որ ըստ բանիցն թուի թէ ցիցէ ինչ նման նորա բարերարութեանն : Ո՞վ իցէ 'ի ձէնջ, որոյ իցէ բարեկամ, և երթիցէ առ նա 'ի հասարակ գիշերի, և ասասցէ, բարեկամ, տուր ինձ երիս նկանակս հաց . քանզի բարեկամ իմ եկն 'ի ձանապարհէ, և չիք ինչ որ առաջի գիցեմ . և նա պատասխանի տացէ և ասասցէ, թէ դուրքդ փակեալ են, և մանկունքս ընդ ինեւ կան յանկողնի, մի աշխատ առներ զիս, ոչ կարեմ յառնել և տալ : Եշ զի՞նչ յետ այնորիկ . ամէն ասեմ ձեզ, եթէ և վասն բարեկամուեն ոչ տայցէ, սակայն վասն ժտութէն նորա յարուցեալ տացէ նման աւելի քան որչափ կամէրն . և ձեզ ասեմ, իննդրեցէք, և առնուցուք : Եշ զոր նմանութիք բերէ առակն նորա բարերարութեն . զի՞նա անկուն է բնութիք, և սա յանկողնի կայ դանդաշեալ¹ . նա ըսմբռնի 'ի դանդաղանաց, և սա դանդաղանաց և քնոյ ծառայէ : Եշ արդ զի՞նչ այն հանգոյն նմանութիւն առակին կամի ցուցանել . և յարէ 'ի նոյն, եթէ և դուք իննդրեցէք, որպէս և նա ժտեցաւ իննդրել 'ի քնէածէն : Ո՞ի թէ և դու ննջիցէս . ոչ ապաքէն անկուն բնութիւն ունիս . ոչ զքէն աղաղակէին մարդարեքն, եթէ ոչ նիրհէ, և ոչ ննջիցէ պահապանն իսրայէլի . և արդ զի՞նչ յայտ այնմ հանգոյն նմանութիք առակին քո կամիցի յայտ առնել :

1 Յօրինակին բանելուալու:

Առվոր իսկ են բանք կենարարին 'ի նմանեացն զնմանիմն ընծայեցուցանել, և 'ի հակառակացն զնոցին հակառական ցուցանել. զայս և 'ի միւսում առակին յայտ առնել, յորժամ երբեմն կամեցաւ 'ի հակառակէն զիւր յորդաբուխ բարերարութիւնն, զառատ և զեղուն չնորհսն, և զանձախ երախտաւորութիւնն յանդիման կացուցանել, այսպիսի օրինակ 'ի մէջ բերէր, որպէս այժման լուաք: Ա յ Ն ա խ այս քննեսցի, եթէ զի՞նչ կամի ցուցանել, յայտ լիցի. թէպէտ և օրինակն չիցէ նման, այլ փրկինն զայն կամի ասել, եթէ զքնոյն ծառայ և զգանդաղանօքն պաշարեալ, և ընդ դրօքն փակելքը զվհատեալն յորդորեաց տեսել և բաւել յամելեացն, և ժուժկալութին յաղթեաց թախանձանացն. զանդանդաղական բնութին՝ զայ ասեմ, որ ոչ թախանձութիք զգածէ, և ոչ քնոյ ծառայէ, չյորդորիցէ տեսել բաւել յամելեացն, որ ճշմարտութիք այնմսկիցեն: Իշտ ովկիցէ որ ընդ այնպիսի միտսն մարտեղեալ կուռեսցի: Իշտ զի հաստատութիք ուսանիցիս, եթէ 'ի հակառակէն՝ զնորին հակառակն ուսոյց սակաւիկ մի 'ի խոնարհ իջեալ՝ զնոյն օրինակ 'ի կիրարկանէ, զի 'ի հակառակէն զնորին հակառակն ցուցանիցէ: Ովկիցէ 'ի ձէնջ, ցոր խնդրիցէ որդի իւր հաց, մի թէ քար տացէ նմա. և եթէ ձուկն, մի թէ ընդ ձկանն օճ տացէ նմա. և եթէ ձու, մի թէ ընդ ձուոյ կարիճ տացէ նմա: Իսկ իրեւ 'ի մարդկեղէն համեմատութենէ զլաւագոյնսն ճառեաց, ապա ասէ, զի եթէ դուք՝ որ չարքդ էք, գիտեք պարզես բարիս տալորդւոց ձերոց, որպափ ևս առաւել հայրն ձեր երկնաւոր տացէ բարութիս այնոցիկ որ ինդրեն զնա: Տեսանես, զիարդ՝ 'ի համեմատութենէ հակառակին զնորին հակառակն եցոյց :

Ա յ ա պ ի ս ի ի ն չ ա ռ ա կ և ա յ լ ու ր ՝ 'ի կիր արկանէ. որպէս և յառաջագոյն իսկ ասացի. և եթէ զի՞նչ իւցէ, և որպիսի զօրութիք ունիցի, կարեոր համարիմ ասել: Կատաւոր մի եր, ասէ, 'ի քաղաքի միտսմ, ոչ յայ երկնչեր՝ և ոչ 'ի մարդկանէ ամաւէր, և այրի

մի հանապազ յամեալ թախանձէր զնա, և չլքա-
րէր ինչ երեկք. քանզի վու խստութեն և զած չձա-
նալը՝ չգայր յաղերս պաղատանացն։ Ի՞այց յաղ-
թեաց յամեն անագործն՝ խստութեանն. ասէ ընդ
միտս դատաւորն անիրաւութեն, եթէ յայց չերկնչիմ,
և ոչ ՚ի մարդկանէ ամաչեմ, գոնէ վասն աշխատ առ-
նելոյ զիս՝ եղեց նմա վրէժիմդիր. զայս առակն ասէ։
Խոկ կենարարն ՚ի հակառակէն զնորին հակառակն
կամեցաւ ցուցանել, ածէ վաղվաղակի զնովիմք։ Ճե-
սէք, ասէ, զինչ ասաց դատաւորն անիրաւութեն. իսկ
ած ոչ առնէ վրէժիմդրութիւն այնոցիկ՝ ոյք կարդայ-
ցեն առ նա. եթէ զանիրաւն և զանագործնն ած ՚ի
հաւան՝ տեսել բաւել և յամել այրւոյն, զքաղցրն
և զյանախագութ հայրն և զմարդասէր տըն՝ տեսել
բաւել յամելեացն չխոնարհեցուցանէ յաղերս և
յողորմ։ Օ այս այսու առակաւ եցոյց ։ զայն և այժ-
մուս ճառէ։ Խռ ձեզ ասեմ. խնդրեցէք և առնու-
ցուք, բախեցէք և բացցի ձեզ. ըստ օրինակի բարե-
կամին՝ որ բախեաց զդուրմն, և ասէ. բարեկամ, բաց
ինձ. բախեցէք և դուք և բացցի ։ հայցեցէք և
դտանէք։

Ի ՅԼ յորժամ խնդրեսցես յայ՝ զմտաւ ած, եթէ
զինչ պարտ է խնդրել, և յորպիսի ումեքէ. քանզի
բազումք ազգի ինչ կարծիք կարծեն զայ յա-
զօթս. յորժամ վասն իւրեանց մեղաց աղայիցեն,
քաղցր և մարդասէր կամին զած. և յորժամ վրէժ-
խնդրութիւն ՚ի զրկչացն կոչցեն, խիստ և սաստիկ
և արդար դատաւոր։ Հորժամ վասն իւր ոք յա-
զօթս կայցէ, աղաչանաց և աղերսից բարբառս ա-
ռաջի դնէ, որք կարեն զած ՚ի հաւան ածել. աղա-
չեմ, ասէ, տը, ողորմեաց անարժանիս. քաղցր ես և
բարերար, և մարդասէր, որ Հայիսդ ՚ի մեզս, և ան-
տես առնես զյանցանս. եթէ զանօրէնութիւն խտրի-
ցես, ո՞ կարէ ժուժկալ լինել առաջի քո. արա լնդ
իս ըստ ողորմութեան քում։ Օ այս ամենայն ա-
սեն, յորժամ ՚ի վերայ անձանց աղօթս մատուցանի-
ցեն։ Խոկ յորժամ տրտմեալ ՚ի թշնամոյն՝ գայցէ
կալ յաղօթս, զայսպիսի բանս մոռանայ, և յայլ

1 Յօրինակին անգործ։

միտս շրջէ զպազատանս . տէր , ասէ , արդար դատաւոր ես , և չեն քեզ հանցյ շարիք . արա՞ վիէժինդըութին ի թշնամեաց իմոց , զի դատաւոր արդարութեն ես . մի լինիր երկայնամիտ նեղացն , այլ իբրև զարդար դատաւոր խնդրեալ զարդարութին :

Յորժամ զքեզ դատիցիմ , քաղցը և բարերար կամիս զիս . և յորժամ զքո թշնամին , արդար և անաշառ : Վոռացած զառաջին աղօթման . ոչ իբրև առքաղցը կարդայիր , ոչ որպէս զմարդաւէր ածէիր 'ի հաւան , ոչ իբրև զերկայնամիտ աղաւէիր : Խսկ զիարդ . մի թէ ըստ ձերոց կամաց պարտիցիմ զանձն ինչ բաժանել , և ընդ ձերոց հանցյից վաճառել զարդարութի . այլ չէ մարթ՝ քեզ 'ի բարերարութենէն զբարիս և եթ գտանել , և քոց թշնամեացն յարդար դատաւորութենէս զարդարութեան միայն վճիռս . զի բարերարն՝ առ ամենէսեան բարերար է . և արդար դատաւորն առ ամենէսեան պարտի պահէլ զարդարութի : Կուցէ մինչ հակառակ թշնամեացն կայցես յաղօթս , ընդ քեզ զայրացուցանէս զդատաւորն : Օ խարդ : Վրդար դատաւորն զքոյն և զայլցն հասարակ քնննէ . որպէս թէ իբրև զարդար հակառակ թշնամեացն կոչեսցես , հարկ է զի և ընդ քեզ զըրգուեսցես զդատաւորն . խսկ եթէ իբրև զբարերար աղաւեսցես վամն քո , ապա առ ամենէսեան բարերար լինիցի , թէպէտ և դու չկամիցիս : Խւ արդ պարտ է այնմիկ՝ որ յաղօթս կայցէ , խնդրել զայն ինչ որ այ հանցյ իցէ . պատշաճ է աղաւելեացն , յորում իմիք ած հանդիցի՝ զայն աղաւել . զի թէ կենարարն յորժամ ասաց . հայր , եթէ հնար ինչ իցէ , անցցէ յինէն բաժակս , յարեաց 'ի նոյն վաղվաղակի . բայց ոչ որպէս ես կամիմ , այլ որպէս դու . և դու այր մի վայրենեալ զանձինդ կամն ընտրես , և ոչ 'ի նորա կամն ապաստան առնես :

Վարդ յայսմիկ ածցուք զբանն . քանզի գիտեմ , եթէ զսոյն խսկ պահանջէիք . և տեսանեմ զձեզ խռնեալս , և նեղեալս , և փափաքեալս բանին ունկնդրութե . այլ միիթարեցարուք , զի եկեալ հասեալ լրացի՝ տացէ քաջալերս , եթէ ընդելարուք ընդ նեղութիսդ , անձկացեալքդ 'ի լսել . Վարիոք

ասաց նա , բարիոք լուարուք և դուք առենեքին , նեղեալք , ընդարձակեալք դիւրացեալք հոգւով . զի աստի նեղութիդ՝ 'ի բազում նեղութեց լինիցի ձեզ դիւրութե : Որ վասն այ քրտունս կրեսցեն յանձինս , զամենայն զցաւս մեղացն փարատեն . զի եթե որ 'ի մարմնոյ քիրտն ծնանիցի՝ փարատէ զցաւս , իսկ այն պիտի քրտունք , զոր վասն այ և վասն պատգամաց նորա , յաղըիւրէ փափաքամնաց՝ զոր մատուցեալ էք լսէլ , վիժիցեն , ո՞ւ ապաքէն միանգամայն զամենայն մեղոն իսկ լուանայցեն :

Եւյլ որ ինչ առաջի կայ՝ յայն երթիցուք . քան զի գիտեմ զի զնշխարս բանին պահանջէք : Ի ազումք իւրեւ զբարեկամն փափաքեալ ինդրեն , և բազումք պատճառս որսան , և խոտել մտաքերեն . քանզի ոչ եթէ անց զմեւք բազմացն աղարտութիւն , որ զմեզ խոտել կամին , եթէ առ անկատարութե ինչ առանց քննութեամն թողաք զբանն : Ի այց ես ընդ այնպիսեացն զարմանամ , ոչ ընդ բամբասանսն , այլ ընդ տարաժամութիւն , Ուղադիր լինիս , որպէս թէ փոխ ետուր և չառեր զփոխորդին . մի թէ յորժամ պահանջէիր զբանն՝ յուրահստ ինչ 'ի լուծմանէն կայի . մի թէ այլ ոք արկ զինդիրն առաջի , և ես 'ի բաց մերժեցի . ես ինձէն խոստացայ , և ես ինքն մոռացայ . եթէ այդպէս իցէ՝ մեղադիր լեր կարեաց բնութենս , և մի եպերեր զբանին պատմութի . զի թէ և անցանէր զմեւք պատմութին , նա և այնպէս ոչ տկարութի բանին եղանէր զզօրութիւն խնդրոյն . քանզի ոչ եթէ յիմմէ անկարութենէ վտարանդի լինին իրաւունք հշմարտութեն , զի և յայտնի իսկ են պատճառք իրացն , որ կան առաջի . բայց յաճախութի բանիցս ասացելոցս այսը անդը մազեցին զմիտս՝ հեռանալ 'ի ինդրոյն որ առաջի կայր : Երւ արդ զոր յայնժամ թողի ակամայ , այժմ՝ հատուցից կամաւ զնորին պարտոն :

Եւ և յորժամ հատուցանիցեմ , դարձեալ կասկածեմ , զի նոր ինչ և չքնաղ տեսանեմ 'ի ձեզ արբեցութի . արբեցութի՝ որ ոչ զմիտս յապուշ կրթիցէ , այլ ևս քան զես զյիշատակն յորդորիցէ . և զի գործ արբեցութե զուշն յապուշ առնէ՝ ամենեքին

գիտեք . իսկ դուք աւագիկ , եղբարք , որչափ և արքենայք ածային բանիւն , ևս քան զես զուշն ապուշ 'ի բաց մերժեք , և զածեղէն յիշատակն 'ի տեղւոջ տնկեք : Եւ այն իսկ են զարմանալիք , զի մատուռակս արբեալ առաւելութեք սպասաւորութեն ծանրանան , և դուք որ այդապի զարկարանս ածեղէն բանիւն քամեցէք , և յետ արբեցութեն ծարաւի էք , և պահանջեք զնշաբանն բազում հաւաստեօք : Արդարեւ զհոգեւոր արբելցց բանս հասանէլսել : Շաժակն ո՞ր է , ասեն . բաժակն մնաց , զբաժակն ընեկնեաց , զբաժակին բանի չհատոյց զվարուս : Աիրեմ զբեզ' որ Վ՞ո՞ի բաժակին փափաքեալ ես . սիրեմ զբեզ' որ խնդրես զնշաբան . սիրեմ զբեզ' որ վամն գեղեցիկ արբեցութեանն չկամիս կորուսանել զմի բաժակն : Եւ կարի իսկ յիրաւի . քանզի 'ի մարմնաւոր խրախութեանս զմի բաժակ որ անցուցանիցէ վամն համեստութեան , զարմանալի է . իսկ յածեղէն ուրախութեանն և յերկնաւոր սեղանն որ չթողուցու ինչ յայնցանէ՝ որք 'ի փրկութեարբեցութի ձգիցեն , այլ միանգամայն որ զողոքիցի և քաղցնուցու , և արբենայցէ , և ծարաւիցէ , նաէ որ արդարեւ յաւիտենից փրկութեն յագեսցի : Եւ արդ երանի տամ ասողաց և լսողաց . լսողացդ՝ քանզի ծարաւի են լսելց . որպէս և փրկին ասէ , եթէ երանի որ քաղցեալ և ծարաւի իցեն արդարութե , զի նոքա յագեսցին . և ասողաց՝ զի զածեղէն վարդապետութին 'ի կենդանի ականջս հնչեն . երանի որք խօսեսցեն յականջս լսողաց : Եւ արդ եկեսցուք 'ի բանն :

Հայր , ասէ , եթէ հնար ինչ իցէ , անցցէ յինէն բաժակս : Շազումինդրօք լի է բանս , և բազում սաստիկ ախտս բերէ հերձուածողայն . ոչ առ 'ի չարաչար ինչ ասելոյ , այլ 'ի չարաչար իմանալոյ՝ զայն , եթէ հնար իցէ : Ոմանք անվրէպ իմն առանց անցանելոյ հրամանս կարծեցին 'ի համբաւել իմարմինէն : որ է բախտ , և բաշխ , և յառասպելանուն ծննդեանն հարկէ , եթէ այնպէս իւրաքանչիւր ումեք բաշխեալ ինչ իցէ 'ի ծննդենէ : Եւ ոմանք այլ ազգ թշնամանեն զպատիւ միածնին . ծառայաբար

Հնազանդութի իմն կցկցեն որդւոյն հօր , քանզի ընդ իշխանութիւն , ասեն , հօր էր , վասն այնորիկ արկանէ զայնպիսի պաղատանս : || Ո՞ր բան պատշաճ է մեղ զինդիրս լուծանելց , ո՞ր միտք բաւական իցեն ըգբաղմահունչ հերձուածողաց առասպելս առեղծանել . չմարթի այլ ուստեք , եթէ ոչ անդստին 'ի ձշմարտութէն ուսանել : ()ն առ , յածեղէն բարձունս ընթասցուք , անդ 'ի վերին կենարարին տնտեսութի , որ զամենայն առնէ , և զբնաւ բարբառի , ոչ միայն ըստ պատուոյն՝ որ նմա վայելէ , այլ և զտնտեսութէն որ մեղ պատշաճէ : | Հւ զի կարծառուսու կտրեցից , քանզի միշտ համառոսու սիրեմհատանել , և զբազումն սակաւուք առնուլ , յառաջադոյն գիտէր կենարարն , եթէ կարի կարեռը են չարչարանքն , յառաջադոյն ձանաչէր՝ եթէ 'ի փրկութի աշխարհի հաստատի խան . մահ կշտամթի , և յարութի մատակարարի . և այնպէս գիտէր , մինչեւ յառաջադոյն ասէր ցաշակերտոն , ահաւասիկ ելանեմք յիշրուսաղէմ , և որդի մարդոյ մատնեսցի 'ի ձեռս մեղաւորաց , և ձաղեսցեն զնա , և խաչեսցեն , և յերիր աւուր յարիցէ :

| Եյս բարբառ այ է , որ յառաջադոյն գիտէ ըզհանդերձեալմն . այ՝ որ կանխէ քան զփորձ իրացն . դիտութիւն այ՝ որ զմարդկեղէն իրս մատակարարիցէ : | Կնդրէն ձայնատու լինի նմս առ այս Պիետրոս՝ զբն դացեալ խնայեալ 'ի մարմնն , քաւ լիցի , ասէ , ոոր , մի լիցի քեզ այդ , | Հւ առ այն զի՞նչ կենարարն . զայրանայր ընդ տարաժամ գութն . եպէրէր զանժամ խնամնն . յետս երթ յինէն , սատանայ , զի ոչ խորհիս դու զայ , այլ զմարդկան : | Աարւոք պատահէ բանին . և դու քննեալ և գէտակն 'ի վերայ գիցես . զի թէ լոկ բանիցն ծառայեսցես՝ զբազում ինչ խախտես զկենարարին . ու միայն տկարութիւն , այլ ևս աստանդութիւն խորհրդոց բամբասէս :

| Վ' տրդ բարերար , յորժամՊիետրոս ըղձանայր , թէ քաւ լիցի , զի մի 'ի խաչ ելանիցես , դու նախատէիր . և արդ դու զնոյն աղաչեա՞ որում մեղադիրն լինէիր . որ ոչ այ միայն ըլացելէր , այլ և ոչ մարդոյ հաստատնոյ : || Վ' զովէ զզօրաւար , որ յառաջ քան զպատե-

բազմ բազում ինչ խոստանայ , և մեծաւ համար ձակուք ընդդեմ թշնամնոյն գոռայցէ , և 'ի խառնորդս Հակատուցն 'ի փախուստ դառնայցէ , և վատութբ զզօրութիւնն աղարտիցէ : || ինչու եկեալ 'Քափ 'ի չարչարանս , զայն որ քաւերն զնա 'ի չարչարանացն , ասէր . Երթյինէն , սատանայ , զի ոչ խորհիս գու զայ , այլ զմարդկան : Եւ որ անարժան այս պիսի խորհուրդս՝ ոյ համարէր , ինքն իւր արդեօք զնոյն ընդանեցացնէր , և ազօթս վասն այնորիկ առնէր : || հ' անմտութեն , մանաւանդ եթէ ամբարհաւածութեն այնոցիկ՝ որ լոկ բանիցն ծառայեսցեն , և զամենայն յախուռն յանդգնեսցին , և զանձականնն այլ ընդ այլոց ժպրհիցեն մեկնել . և զայն չկամլիցին գիտել , եթէ լոկ զրանս ընդունելով՝ ոչ միայն քան զհայր խոնարհագոյն ցուցանեն զնա , որպէս փութանն , այլ և քան զրազում իմաստունս և արդարս նուազագոյնս , և թէ բնաւ իսկ չունի զհաստատութի մարդկան :

|| ոք իմաստուն կամ արդար , կամ այլ ոք ամենեւին 'ի մարդկանէ 'ի քաջութիւնս վկայեալ ու բանայցէ զանձին առաքինութիւն , և թշնամնիցէ զխոստացեալ և զառաջագոյն խրոխտացեալ զօրութիւնն : || այնպէս վատթար և ապաժաման կայցէ , մինչեւ զայլ խիղախել և յանձն ունել , և զայլ խորհել , և 'ի փորձոյ իրացն զանդիտել . || որ մահ սպառնայր մահու , և զյարութե աւետիսն տայր , ինքն զիարդէր՝ զի զանդիտէր 'ի խաչէն : Օ այս ամենայն ասացի առ 'ի յանդիմանութի այնոցիկ՝ որը բանիցն ծառայիցեն , և զտըն թշնամնիցեն , և զշմարտութին վաճառիցեն : Եւ արդ՝ զի՞նչ յայտ ընդդեմ հակառակութե բանիցն կամլիցի առնել , յորժամշմարտութին անձին միաբան գտանիցի հանապազ . և զի՞նչ բնաւ միաբանութի ճշմարտութեն առ կռիւ բանիցն իմասցի : Շանք արդարե կռուին իսկ ընդմիմեանս , բայց միաբանութի անձեղէն պատգամացն կայ մնայ հաստատուն . և արդ զլուծումն ինդրոցս որ առաջի կայ , ինձ աշխատասէր բարուք՝ պարտ է ասել , և ձեզ ուսումնասէր մտօք լսել :

Հորժամ տըն՝ ՚ի խալելութէ մերձեցաւ՝ ՚ի կատարումն ամենայն տնտեսութեն, յառաջադոյն գիտէր երանելին և միայն հզօրն, թագաւորն թագաւորաց և տըն տերանց, եթէ բազում հերձուածողք ընդդէմ ճշմարտութեն յառնելոց են, և որոշեսցեն զանձեղէն չարչարանսն, և օտար զգործս ստաբանիցեն. և մանաւանդ անուանակիցք մոլորութեանն, զմանինեցւոց աշակերտացն ասեմ, որ և յանդգնեցան ասել, եթէ ստուեր իմն և առ աչօք ցնորք էին ՚ի՞նի չարչարանքն. որպէս թէ և ոչ մարմին իսկ առ, և խան կերպարանօք էր, և մարմինն ստուեր ինչ էր և նմանուի, և ամենայն իսկ մատակարարեալքն կերպարանօք և հովանի և ցնորք և առ աչօք էին. վասն այնպիսի հերձուածողական մոլորութեանն, զմանիքեցւոց աշակերտացն ասեմ, զի յառաջադոյն կարկեսցէ զբերանս հերձուածողաց, և յայտ արացէ, եթէ զայս մարմին, որ ընդ բազում կարեօք մուանէ՝ զգեցաւ. որ զանդիտէս ՚ի չարչարանաց, որ դողայս ՚ի բռնութէ մահու, որ խռովիս և դողայս ընդ վախճան կենաց¹. այժմ, ասէ, անձն իմ խռովիալէ. և դարձեալ՝ եթէ անձն իմ տրտում է մինչեւ ՚ի մահ. և դարձեալ՝ եթէ հնար ինչ իցէ, հայր, անցցէ յինէն բաժակս: յաջէ ստուեր և առ աչօք և ցնորք էին, ընդէր խռովիը. եթէ կերպարանք ինչ իրքն էին որ գործէին, վասն ի՞ր զանդիտէր. քանզի ՚ի ստուերէ ոք չերկնցի, և ոչ ՚ի լոկ կերպարանաց խռովի:

Կամիս, զի և ՚ի պատմութենէ իմեքէ ցուցից հաստագոյն զՃշմարտութին, Ո՞ախն հրեշտակը ՚ի Ո՞ոդոմ. մարդիկ երեւէին երեսօք, և հրեշտակը էին բռնութէ. յանդգնեցան սողոմայեցիքն բռնադատել զնոսա իբրև զարս յաղտեղութի, և յանարժանաց խարդաւանութի. յակ արդ՝ զի՞նչ դործէին հրեշտակքն. քանզի զիտէին՝ եթէ չունէին մարմին, որ ընդ բռնութէ մտանիցէ, չխռովիեցան. այլ կաց մնաց բռնութի հրեշտակացն առանց խռովութե, և չկըեաց

1 Յովհան իմաստասէր ՚ի հառն ընդդէմ երեւութականաց. ՚ի համարն 40:

ինչ աղմուկ՝ ի բքոյ կարեաց մարմնոյ : Բայց կ ովտ, քանզի արս արդարս համարէր զնոսա, խռովեցաւ, եթէ գուցէ բռնուեի ինչ կրեսցեն . աղաշէր զկատա զեալսն . խնդրեմ, ասէ , 'իձէնջ, մի ինչ մեղանչէք արանցդ, որովհետեւ եկին մոխն ընդ յարկօք իմովք . տաց ձեզ զիմ զարմն, առեք զդստերս իմ, և արարէք զինչ և կամփք : Ու սերտ հիւրասիրութին . զիւրսն փոխանակ այլցո ունէր յանձնն՝ տալ պարտբաշխի : Կ ովտ իբրև զմարդ խռովեցաւ . այլ հրեշտակաց ընութին չիրեաց ինչ խռովութի . քանզի բազում ձոխութք ելին արտաքս, և զնա՝ որում բռնութին մարթէր կրել կորզեցին հանին 'ի բաց . և որք զայն չափ և զմոլեկան կատաղութին կատաղէին, մանաւանդ եթէ զառանց այ խայտառակութին, հարին կուրութք . և շրջէին զցայգն ամենայն՝ խնդրէին ըգդուրսն, և ոչ դտանէին . զի որք չարաչարն տեսանէին, բարիոք և յիրաւի կուրացան : Եշ զայս ամենայն առ որ եղեւ ասել, զի վիք ինչ հաղորդութի առաջի ձառին ընդ այժմուս . այլ զի ցուցից, եթէ ուր կերպարանք են, անդ երկիւղ չիք . և ուր ստոյդ մարմին, անդ երկիւղ և տրտմութիւն : Բայց ընաւիսկ զի ամենևին յայտ առնիցէ կենարարն, եթէ յոր սակս ասաց զբանն, և կտրեաց զմիտս հերձուածողացն, և տնկեաց զկրօնս ձշմարտութեանն, ասէ ցառաքեալսն . հոդիս յօժար է, բայց մարմինս տկար է . նա զտկարութի մարմնոյն իւր համարի, և դու զանձութքն նորա ընկենուս զկարիմն : Այլ եթէ ոչ փութասցես դտանէլ զմիտս բանին, դտանիս իսկ թշնամանեալ զտրն . զի ոչ միայն զոր կարծեսն կազմես, եթէ աղօթս մատոյց հօրն, և աղօթակիրն քան զայն՝ զոր աղաշէսցէ՝ խռնարհագոյն է . այլ ևս յայտնագոյն ինչ ասեմ . եթէ լոկ բանիցն ծառայես, ոչ միայն քան զշայր խռնարհագոյն առնես զնա, այլ և քան զիւր առաքեալսն նոււազագոյն : Օ որ օրինակ չարաչար առնուն զայն՝ որ ասէ, եթէ ես յանձնէ ինչ խօսիմ, այլ հայր իմ ետ ինձ պատուէր՝ զինչ ասացից, և զինչ խօսեցայց . նոյնպէս և զայս :

Իսա իսկ առաքելական իշխանութին յառաջ եկեալ կարկեսցէ զբերանս մոլեկանայն : Պաւղոս ա-

սէ, Եթէ վասն կուսանաց հրաման ինչ՝ ի տնէ ես ոչ
ունիմ, այլ խրատ տամ. և յայտ է Եթէ կարի խել
վատթար են կրօնք հերձուածողացն. Եթէ Պաւղոսի
իշխանութիւն իցէ առանց հրամանի ոյ Ճոխանալ, և
Վճի ցոցէ իշխանութիւն առանց հայրենի պատուիրա-
նացն խօսել: «Ի՞նչպէս և աստ՝ ի համեմատութենէ
առաքելական արութեն է ցուցանել զհերձուածողա-
կան մոլորութիւն, Եկեալ զբուամք՝ Եթէ կարի խո-
նարհագոյն է քան զառաքելական պատիւն տէրունի
բարբառն: Այլ որպէս յառաջադոյն իսկ բազում
անդամ ասացի, Եթէ բանիցն և Եթ ծառայեսցես,
զործի ինչ աւելի. իսկ Եթէ զմիտն ընդունիցիմք,
անարատ մնայ Ճշմարտութիւն. մանաւանդ Եթէ մեք
իսկ անարատ մնայցեմք. քանզի Ճշմարտութիւն ոչ
Երբեք արատի: Այս արդ Եթէ մեկնութեն միտ չդի-
ցես, այլ բանից և Եթ ծառայեսցես, դժանիցես զի՞ս
վատասրտեալ, և յոյժ նուազագոյն բարբառեալ ոչ
միայն քան զիւր պատիւ, նա և քան զառաքելոցն
արութիւն: Օ ի՞նչ ասէ. այժմ ողի իմ խռովեալ
է. և Պաւղոսիրկ չոգաւ ՚ի կողմանս պաղիսախնա-
ցւոց, եկն անդ մարգարէ մի Իգաբոս անուն, և ասէ.
այսպէս ասէ հոգին սը, զայրն զայն՝ որոյ գօտիս այս
իցէ, այսպէս կապեսցեն հրեայք յլրուսաղէմ.. և
իրկ արդելուին եղբարքն ամեներեան զՊաւղոս, և
աղաւէին չերթալ յլրուսաղէմ, պատասխանի տայր
արութեն բարբառով, մանաւանդ Եթէ արութեան
և առաքելութեն ոգւով ասէր ցկասեցուցիւն, զի՞նչ
զործէք, զի՞ւայք և Ճմշեցուցանէք զսիրտս՝ ի՞ներքս,
զի ես ոչ միայն կապանաց, այլ և մեռանել պատրաստ
եմ վասն անուանն Վճի: Պաւղոս այնչափ վստահու-
թք, այսպիսի խրոխտանօք, այնչափ համարձակու-
թք ձայնատու լինի մահու, և առ ոտն հարկանէ և
արհամարհէ և իշտրէ զարհաւիրս մահու. և Պաւ-
ղոսի տրն ասէր, Եթէ այժմ ողի իմ խռովեալ է:
Պաւղոսի սիրտն Ճմշէր, իսկ Վճ ոգւով չափ խռովեալ
էր արդեօք: Պաւղոս և պարծէր՝ ի՞նեղութիւնն. ոչ
այսչափ միայն, այլ և պարծիմք ևս ՚ի նեղութիւնն.
քանզի զիտեմք, Եթէ նեղութիւն զհամբերութիւն
գործեն. և Վճ տրն Պաւղոսի ասէր, տրտում է ոգի

իմմինքե՛մահ։ Օ ի՞նչ նմանութի պարծանաց իցէ։ Պաւղոս պարծանա համարելը զարքարանն և որ զնայն զօրացուցանէր՝ վահ, տրամութիւն ինչ արդեօք զտնտեսութիւն հաշուելը,

Վիթ գիր և այլուր մտացն Պաւղոսի, զիամբագ ամենևին արութե՛ն են, մնացեալ երեւմն ՚ի փիլիաեցւոց քաղաքին ՚ի մակեդոնացւոց աշխարհին, բազում ամբոխ ՚ի վերայ յառներ, և ազգի ազգի կտտանս ՚ի մարմինն կրեր, բազում հարուածս ՚ի վերայ եղեալ՝ արկին զնա ՚ի բանդ, և պնդեցին զոտսն ՚ի կոճեղ. այլ առաքինի նահատակն ածպաշտութե՛ն, և որ ընդ նմա եր Ծիղաս, յաղթէին զգաստութե՛ք վշտացն, պարտէին առաքինութե՛ք զբարչաննն ։ Եշ զայս բարիոք իմն նշանակեալ որ զպատմութիւն գրեաց, ասէ. ՚ի հասարակ գիշերի Պաւղոս և Ծիղաս օրհնէին զանձ. վշտանան, և գոհանան . գանըմ պէին, և օրհնէին։ Եշ տես զստուգութիւն այնորիկ՝ որ զպատմութիւն գրեաց . չասաց՝ թէ զհասարակ գիշերաւ Պաւղոս և Ծիղաս աղօթս մատուցանէին այլ, այլ թէ օրհնէին. զի աղօթք թերեւս առ նեղութիւն սրտին լինին, և օրհնութիւն՝ առ խնդութիւն սրտից։ ՚ա աւանիկ տեսանեմ, զի ուրախութիւն նշանակէին առաքեալքն . զհասարակ գիշերաւ, ասէ, Պաւղոս և Ծիղաս օրհնէին զանձ։ (Օրհնութ ոգւոց բերկըեւոց նշանակ է. որքն՝ որք կամէին զոգւոցն ցնծութիւն յայտ առնել, ոչ աղօթս մատուցանէին իբրև զնեղեալս, այլ օրհնէին իբրև ընդարձակեալք, Պաւղոս և Ծիղաս՝ որ բնութե՛ք մարդիկ էին, առաքինի ոգիս ՚ի չարչարանն ցուցանէին, և ՎՀՆ՝ որ թագաւոր է սրց, անկածութե՛ք բանս պատշաճես . որ վասն տես չութե՛ք ասացեալ՝ ՚ի քակտումն պատույ նորա առնուս . օն անդը, ՚ի բաց լեր յայնպիսի մտաց . Վիթ ոք թշնամանեսցէ զսրբութիւն, մի ոք զրպարտեսցէ զանձեղէն բանս, մի ոք ամբարշտութիւն ջանացէ ՚ի բանից կենարարին կազմել, և անկածութիւն զտնտեսութիւն համարել։

Վ. Ա պահանջէ ՚ի մէնջ լսօղն զկարգն . բարիոք, ասէ, ուսուցեր . արդարեւ տնտեսութեան իսկ բանք էին . այլ և զզօրութիւն իսկ տնտեսութեն մեկնեաւ .

ընդէլը բնաւ իսկ արկ ՚ի կիր զայնպիսի բանս . վասն
էլը ասաց , եթէ հնար ինչ իցէ , անցցէ յինէն բա-
ժակս այս : Եթէ հնար ինչ իցէ , եղբարք , ոչ զհրա-
մանաց ինչ հարկ մուծանէ , և ոչ զառասպէլ անուն
զծնդեան , և ոչ վատասրտութեան ինչ բանք են ,
և ոչ զանգիտել ինչ ասօղին բամբասի այնու , այլ
մարդկեղէն տնտեսութեն կերպարանք , և խնայելոյ
յայնոսիկ՝ որ գայթագղելոցն էին . քանզի գիտէր՝
եթէ չարչարանքն զրազումն կարեն գայթակղութի ,
տու և գիշտ 'ի խաչ ելեալ , հրէից գայթակղութի ,
և չեթանոսաց յիմարութի : Վարդ առեալ զդէմն
մարդկան , որ զամենայն ինչ իմաստութի մատակա-
րարէ , ասէր . եթէ հնար ինչ իցէ այլով օրինակաւ
կատարել զանտեսուին , և առանց մահու վճարել .
զի մի այնպիսի չարչարանօք գայթագղեսցին բա-
զումք . եթէ հնար ինչ իցէ , անցցէ յինէն բաժակս :

Վարդ բոնազբօսես , ասեն , զբանն . աղէ՝ ցոյց ըգ-
վկայութի ինչ , որ վկայեսցէ ձշմարտութեն , եթէ
վասն մարդկան տկարութեն և զընդալոյ ասաց զայն :
Եթէ այնպէս իցէ , լուր + զիարդ անդէն իսկ յա-
տի կարեացս ասէր ցառաքեալսն . յաղօթս կացէք ,
արթուն կացէք . և իրեւ նիրհեցին , նախատեաց
զնոսա , և ասէ . այդպէս ոչ կարացիք մի ժամ սկել
ընդիս . յաղօթս կացէք , զի մի մաանիցէք 'ի փոր-
ձութի : Չասաց , թէ զի մի մտից . քանզի ոչ եթէ
նմա վնաս չարչարանք գործէին , այլ զայլս գայթա-
կղեցուցանէին . յաղօթս կացէք , զի մի մտանիցէք
'ի փորձութի . չասաց եթէ զի մի մտանիցէմք , այլ
զի մի մտանիցէք . 'ի ձեզ յինայեմ , և ոչ եթէ զանձն
ինչ կամիմ 'ի չարչարանացն ապրեցուցանէլ . զի-
տեմ զհանդերձեալսն , չեմ անտեղեակ տնտեսու-
թեն , որ կատարելոց է . չեմ երախայ բարերարու-
թեն որ ծաղկելոցն է մաենայն մարդկան . այլ զի յա-
ռաջ քան զդէսս իրացդ՝ որ երևինդ՝ գայթակղե-
ցուցանէն զձեզ , ասեմ ձեր բանիւ , եթէ հնար ինչ
իցէ անցանել չարչարանացն , անցցեն :

Պարտ է կրկնարօր և երեքրկնարօր առնել զբանն ,

զի հնարն ինչ է, ոչ եթէ բնութես ինչ անվրէպ և
առանց անցանելոյ, և սահման անհրաժեշտ յայտ
առնել, որպէս ոմանք կարծեցին, լըւ կամիս հաս-
տատութք ունել, եթէ չկայր ինչ հարկ և սահման 'ի
վերուստ 'ի վերայ կենարարին, այլ իւր իսկ ամէնի
մաց տնտեսութի է, և իւրովք կամք զամենայն կա-
տարէ, լուր հաստատութք, զիարդ ինքնին տրն յա-
ռաջագոյն ելոյծ զկարծիս հարկին, և յայտ արար
զիւրոց կամացն զջոխութին . ոչ ոք առնու, ասէ, զո-
գի իմ յինէն, իշխանութի ունիմ ես զնել զոգի իմ,
և իշխանութի ունիմ միւս անդամառնուլ զնա . և
գարձեալ՝ եթէ քակեցէք զտաճարդ, և ես յերիք
առուր յարուցից զգա : լըւ եթէ իշխանութի ու-
նիս, ընդէ՞ր արկանես զայդափիսի բան . եթէ հնար
ինչ է, ասես, անցցէ յինէն բաժակս այս : Ո ամն ձեզ
ասեմ տկարաց, և ոչ վասն իմ, որ հզօրս և ամենա-
զօրս եմ, և յամենայն տկարութէ 'ի վեր և բարձր :

Ի այց ընդէ՞ր իսկ անուանեաց զարչարանսն բա-
ժակ : Վունու ընծայի աստի միւս ևս այլ ինդիք, ե-
թէ զչարչարանսն բաժակ ընդէ՞ր կուեաց : Վայո, ասէ,
սովորութի է միշտ գրոց, զիւրատ որ յայ գայցէ 'ի
վերայ յանցաւորաց՝ բաժակ կուել : Ո իտ դիր հաս-
տատութք, և լե՞ր իմաստուն լսող . մի յառաջագոյն
յափշտակել զբանս, այլ անսալ և մնալ մտացն .
քանզի մարթի այնմ որ չարչարն լսիցէ՝ չարչար
մեկնել զասացեալսն : Ի այց սակայն որ յեկեղեց-
ւոջ խօսի, մի ինչ օտարութի համարեսցի, եթէ զըր-
պարտութի կրեսցէ 'ի զուր յանդզնելոցն 'ի բամբա-
սանս . քանզի առաքեալքն զրպարտեցան, որպէս թէ
անալիստան ինչ խօսեցան . և լուր Պաւոսի, որքան
կը եաց զրպարտութի 'ի քարոզութին . մի թէ որպէս
հայհոյիմքն, և որպէս համբաւեն զմէնջ ոմանք՝ ա-
սել, եթէ արասցուք զարիս, զի եկեսցեն բարիք .
որոց դատաստանն յիրաւի . զի որ ոչ լուան, իբրև
զլուեալ բամբասեն . զի զոր ոչ լուան 'ի վարդապե-
տաց, զրպարտութի վարդապետացն յառաջ բերեն :
Վայլ զոր ինչ առաջիս կայ 'յայն եկեսցուք : Վունձին
բարք են միշտ գրոց, զիւրատս կամ զպատիժս որ 'ի
վերայ մեղաւորաց գայցէն՝ բաժակ անուանել : Վայ-

մի վաղվաղակի խճքձեսցէ զբանս թշնամի ոք և լըրտես, և ասասցէ, մի թէ և ԿՇ՛ մեղան, զի զպատիժս մեղաւորաց կրեսցէ: ԿՇաւ լիցի զայն ասել. նա ոչ պարտէր ինչ պատիժս, ծն անդր, փարզաւատ: այլ մեք ընդ պատժով էաք: և վասն մեր դատապարտելոց ընդ մեղօք, և պատժապարտաց ընդ տանջանօք՝ յանձին կալաւ զմահ: որպէս և Խսայի յառաջագոյն ձայնէր և գումէր, եթէ վասն մեր մեղաւորաց եկն 'ի մահ: Խւ զի վասն մեղաւորաց պատժոց ընկալաւ անձամբ յանձն զմահ, վկայեսցէ Աըն քատուն, եթէ ահաւասիկ գառն այ՝ որ բառնայ զմեզս աշխարհի: և մարգարէն, եթէ նա զմեղս մեք բառնայ, և վասն մեր վշտանայ, և վասն մեղաց ժողովրդեան եկն 'ի մահ:

Կոչին չարչարանք նորա բաժակ, ըստ բանին որ յառաջագոյն ասացաւ: Նմին իրի խկ և երանելւոյն Դաւթայ զվրէժմն՝ որ 'ի վերայ մեղաւորաց գայցեն՝ դրոշմեալ ասէ: բաժակ 'ի ձեռին տն, անապակ գինը ոոլ լի խառնեալ, արբցեն ամենայն մեղաւորք երկրի: Խւ դարձեալ՝ յորժամ ան խկ սպառնայը պատիժս հեթանոսաց, ասէր ցԽրեմիա: առ բաժակ խառնեալ, և տուր ըմպել ամենայն աղքաց, և Խրուսաղէմի: և ասասցես ցնոսա, արբէք, և արբեցարուք և թմբրեցարուք: Օ Տ'ն իցէ թմբրեցարուքն: ՚Վ թմբրութիւն ածէ զբազումն այն խրատ, բազում անգամ և 'ի հիացութի խկ: մանաւանդ յորժամ տեսանիցեն զարդարս ընդ մեղաւորս ըմբըռնեալ: որպէս և այժմ խկ եպերեն յամենայն երկրի, եթէ ընդէր կոտորեցան քահանայքն 'ի սեղանս, վասն էր ոոր կուսանքն 'ի Ականս մատնեցան, յոր սակս այնչափ և այնքան չարիք գործեցան, ընդէր ոչ պաշտպանեաց ան իւրոցն: Խւ քանզի այն պիսի վիշտք 'ի թմբրութի ածեն, և 'ի մոտաց հիացութի, յիրաւի ասէ, եթէ արբէք և յիմարեցարուք և զեխեցարուք: ՚Վարձեալ և կենարարն յորժամ յառաջագոյն ձառեաց զարչարանացն իւրոց առ Հակովը և Հոհաննու, կարէք, ասէ, ըմպել զբաժակն, զոր ես ըմպելոց եմ: փոխանակ ասելոյ, կարէք զւարչարանս կրել զոր ես կրելոց եմ: և նոքա ասեն: այն

Րայց երանելին Դաւիթ՝ ՚ի միւսումվայրի յայտնի իսկ եցոյց, եթէ մահ որ վասն ածպաշտութեան գայցէ ՚ի վերայ, բաժակ կովի. զի՞նչ տաց տրիտուր տն ընդ ամենայնի՝ զոր ետ ինձ: Եւ իբրև զկարի չնորհակալ ծառայ՝ ետես բղխեալ շուրջանակի զերախտիմն այ, ինդքէ և ինքն սակաւիկ ինչ տրիտուր տալ մտադիւրութեամբ ընդ անբաւ երախտեացն: Որպէս և աղքատ ոք զմեծատուն ՚ի վանս տանիցի, ՚ի վարանս մտանէ, եթէ զի՞նչ կաղմած կարացէ յուրախտութիւն մեծատանն առնել. զի՞նչ ինչ արժանի ըստ աւագութեն ՚ի սեղանն բերիցէ. տարակուսեալ կայցէ, և ընդ անձինն խօսեսցի. զի՞նչ ինչ արժանի կարացէմ սմա գտանել. զի՞նչ արարից, զի՞նչ բերից առաջի, զիսիրդ պատուեցից, որպիսի ճաշ ինչ կարացից կազմել: ՚ոյնպէս և ՚Դաւիթ հայեցեալ՝ ՚ի մարդկեղէն աղքատութիս, և յածեղէն բարերարուե մեծութիս, և տեսաներ՝ եթէ չիք ինչ արժանի ՚ի մարդկանէ՝ որ այ մատչցից, ՚ի վարանս մտաներ, տարակուսանայր, բարբառ ՚ի կիր արկաներ, եթէ զի՞նչ տաց տրիտուր տն, չգտանեմինչ արժանի ըստ երախտեացն. զի՞նչ տաց տրիտուր տն, որպիսի ոք ինչ եղէց, զոր պատարագս տաց, որպիսի դահամամբք մտից ընդ միտ բարերարին: ՚իբրև յամենայնէ չքաւորեցաւ, մի ինչ միայն եգիտ. և այն ոչ եթէ ըստ այ բարերարութեն, այլ ըստ նորա յօժարութեն արժանի է. բաժակ՝ փրկութե ընկալայց:

Օ ի՞նչ յայտ բաժակն իցէ: Եթէ կարացից ասէ՝ վասն ածպաշտութե չարչարանս կրել եթէ ձեռն հաս եղեց վասն այ մեռանել: Ռաժակ փրկութեան ընկալայց, և զանուն տն կարդացից: Եւ քանզի չեր բանն յայտնի, այլ զօղեալ և զեղլեալ, յաջորդօքն մեկնէ: Ռաժակ փրկութե ընկալայց, և զանուն տն կարդացից. ածէ զնովիմը, եթէ պատուական է առաջի տն մահ սբց իւրոց:

Եւ արդ՝ զի՞նչ իցէ ասելն. հայր, եթէ հնար ինչ իցէ, անցցէ բաժակս: Ո՞չ ապաքէն յայտ է՝ զի զարչարանացն ասեր. այլ ունիս յառաջագոյն տըւ-

Եալ զլուծումն ինդրպյդ . զի ասելով՝ եթէ հնար ինչ
իցէ , զմարդկեղէն զտնտեսութե զկերպարանս կա-
տարէ . զի որ զայս ասաց ըստ մարդկութեան , նոյն
յառաջադրյն ասաց ըստ ամենիշխան ածութեանն ,
եթէ իշխանութիւն ունիմ դնել զոգի իմ , և իշխա-
նութիւն ունիմ միւս անդամ առնուլ զնա . և յայտ
առնէ , եթէ ոչ ածութին հրաժարէր 'ի չարչարա-
նացն , այլ մարմնոյն իւրոյ տկարութիւն : Եւ դար-
ձեալ ասէ , եթէ հոգիս յօժար է , բայց մարմնս տկալ
է . և ոչ զի նմա ինչ վնաս առնէին չարչարանքն , այլ
զայլս գայթակղեցուցանէին : Եւ զայն եցոյց աշակեր-
տացն . յաղթմս կացէք , ասէ , զի մի մասնիցէք 'ի փոր-
ձութին : Եւ այլ ազգ եւս նա և կանոնս իսկ աղօթիցն
աւանդէ մեզ մի ամեննեին պահանջել յայ զաղօթիցն
պէտս զոր ինդրիցեմք , այլ 'ի նա ապաստան առնել ,
որ զամենայն իմաստութե մատակարարէ . զի և ասէ
իսկ , եթէ ոչ որպէս ես կամիմ , այլ որպէս դու : Որ
նմա ինչ ոչ վայել էր , և քեզ կարի 'ի գէալ է . զի
յորժամ յաղօթս կայցես՝ մի զայն ինչ ինդրեսցես
զոր դու կամիցիս , այլ յայ կամն ապաստան առնի-
ցես : Իսասնիր և դու , յորժամ յաղօթս կայցես ,
ըստ նմանութեան Կ'նի 'որ վասն քո խոնարհեցոյց
զանձն . ոչ որպէս ես կամիմ , այլ որպէս դու , որ .
յայ կամն ապաստան արասցես . մի դու նմա թե-
լագիր լինիցիս , և մի առ խրատտուս զանձն ունի-
ցիս : Որ սիրէն , ասէ , զանձ , ամենայն ինչ յաջողի , և
դործակից լիցի նոցա 'ի բարիս . որ ինչ ըստ նորա
կամացն իցէ՝ այն կատարի . և որ արտաքոյ քան զնո-
րա կամն , չելանէ 'ի գլուխ :

Դայ բաժակ խրատոց այ մեղաւորաց 'ի պա-
տիմս . բայց Կ'նի ոչ թէ պատիմ ինչ չարչարանքն
էին , այլ տեսչութի . քանզի զմեղաւորաց մահ կը եաց
առանց մեղաց . զի փրկեսցէ զաշխարհ ամենայն , որ
ընդ մեղօք դատապարտեալ էր : Ծնդէր , ասեն , ընաւ
զմահն բաժակ կոչիցէ : Օ ի բաժակ պատիմքն և մահ
անուանին , զայն գրոյն իսկ վկայութիւնք յայտ
յանդիման ցուցին . բայց թէ ընդէր իսկ բաժակ
չարչարանքն կոչեցան , քանզի չէ ինչ նման բաժակ
մահու : Օ ի խրատքն որ 'ի վերայ գայցեն՝ խիստ իմն

և անհնարին և դժուարին լինին, նմանագոյնս ածեցէն գիրք վլիշտն բաժակ անուանեն. զիյայտ լիցի, թէ ած ոչ իրը կիստ դատաւոր տանջէ, և ոչ յանինայ կոտորէ, այլ իրը կ զբժիշկ՝ զցաւս բժշկէ, և իրը կ զանդեղեայ սաստիկ մաղձոյ՝ տայ ՚ի ներքս զիրատոն: Այս արդ փրկութե՛ բաժակ խրատուցն՝ առ ճաշակել դառն է, և առ բժշկել օգտակար է. յանդիման կացուցանէ բանն զբարերարն ած, բաժակաւն խրատիւ, և բարերար իրը կ զհայր, և տանջիւ և պատժիւ իրը կ զմագաւոր. ոչ իրը կ զթշնամի հարկանէ, այլ իրը կ զբժիշկ կոկծեցուցանէ:

Օոր օրինակ յորժամ բժիշկն զերկաթն ՚ի գործ արկանէ, և խարանս ՚ի մարմինն զննէ, ոչ այնու ընդմարդոյն կռուի, այլ ընդ ցաւսն մարտնչի. նոյնպէս և ած, յորժամ զիրատոն ածէ, ոչ զիւր ստեղծուածն պատժէ, այլ զմեղն սրբէ: Վիթէ տեսե՞ր երեկք զբժիշկ առ ցասման ձեռն ՚ի գործ արկեալ, կամ առ զայրացուս ինչ ՚ի խարանս մատուցեալ, կամ այլ ինչ նոյնպիսի. թէպէտ և հիւանդին երեսքն բժըշկին ահազին թուեսցին, այլ բժշկին օգուտ գործեալ կայ ՚ի միտս. և ոչ վասն զի ցաւածին ահազին բժըշկութին թուիցի, և ճարտարութե՛ն խոստումն ահազին ինչ իցէ:

Վապա ուրեմն բարիոք և սքանչելապէս երանելցն Պաւղոսի եղեալ սահման խրատուն՝ ասէ, եթէ ամենայն խրատ առ ժամանակ մի ոչ թուի ուրախուե, այլ տրտմութե՛: Ա իրածն յորժամ տեսանիցէ ըզբժիշկն՝ զի կտրել զիւրն կամիցի, ահազին համարի, և իրը ՚ի թշնամնոյ խուսափէ. իսկ յորժամ բժըշկեսցի, զոր երբեմն տեսանէր՝ և զերեսս դարձուցանէր, յետոյ մօտ հայի, և երկիր պագանէ: Եթէ չզիտիցեմք իսկ, զի առ զայրացուս ցաւոցն՝ թշնամանս դնեն հիւանդքն բժշկացն, և բժիշկն ներէ զայրացելոցն. քանզի գիտէ՝ եթէ ոչ ՚ի կամացն են թշնամանքն, այլ առ ցաւսն: Իսկ յորժամ ապաքինին յախտէն, և վարձ ևս տան նոցա, զորս անագորնս համարէին. տան վարձ՝ ոչ իրը պահանջեալք, այլ ինքնակամ յօժարութք: Կոյնպէս և մեք այժմ դժկամակ լինիմք ընդ նեղութիս. և յորժամ հա-

սանիցէ սրտուղ նեղութեանցն , ապա դովեմք զբա-
րերարն , և զարմացեալ ասեմք ընդ Դաւթայ , եթէ
անցաք մեք ընդ հուր և ընդ ջուր , և հաներ զմեղ'ն
հանդիսաւ :

Եշ արդ կոչէ զնեղութիւնս բաժակ . և ոչ վայ-
րապար քաժակ , այլ 'ի ձեռին նոն անապակ գինով
լի խառնեալ : Դարձեալ ըստ բանիցն ընդդէմ իմն
հակառակութիւն թուի . զի խառնեալն և անապակ
ամենեին իսկ չեն միմեանց նման . և արդ ընդէ՞ր
իցէ անապակ և խառնեալ բաժակն : Քանզի այ դա-
տաստանն և խրատն որ 'ի վերայ գայցէ՝ անապակ
է , և խառնեալ անապակ : Օ ի՞նչ է խառն . ընդ
արդարութեն իրաւութիւն . և ոչ անօրէնութի՞ , և
ոչ ապիրատութի՞ , և ոչ երկեան ինչ խառն ընդ ար-
դարութեան . այլ արդարեւ սեռն և անապակ է ,
որ և յատակ ակն դատաստանին , արդարակորով և
լուսաւոր , քաջատես , համառօտախնդիր , ուղղա-
գործ , կշռարար , անաշառ : Ա ան այնորիկ բաժակ
'ի ձեռին նոն անապակ գինով . քանզի չէ խառն ընդ
արդարութե անիրաւութի՞ . և չիք անդ 'ի հակառա-
կորդաց՝ որ կարող իցէ երկեան 'ի ճշմարտութիւն
դատաւորին մուծանել . քանզի բաժակ է 'ի ձեռին
նոն անապակ գինւոյ : Եշ եթէ անապակ գինով ,
զիա՞րդ իցէ լի և խառնեալ : Չթուիցին քեզ հակա-
ռակ միմեանց բանքն , այլ միաբան է ճշմարտուին :
Անապակ է բաժակն , որպէս և բազում անդամ իսկ
ասացի , եթէ չէ խառն անիրաւութի՞ ընդ արդարու-
թե . և խառնեալ , քանզի խառն է ընդ արդարու-
թե և մարդասիրութիւնն : Որպէս զի ասիցէ , թէ
սեռն յարդարութիւնն է , և խառնեալ 'ի մար-
դասիրութի՞ . քանզի 'ի խրատելն ողօրմի , և յողօր-
մելն խրատէ :

Եշ տե՛ս այլիմն նոր սահման ճշմարտութեն . նշա-
նակ իննամակալութե և մարդասիրութեն այ , յոր-
ժամ խրատէ զմեղաւորս . նշանակ բարկութեան և
ցասման , յորժամ չխրատիցէ զյանցուցեալն . յայն-
ժամ երկիր յայ , որպէս թէ ատիցէ , և զերեսս
դարձուցանէ , յորժամ յանցանիցէս՝ և ոչ խրատի-
ցէ . զոր սիրէ , ասէ , որ , տանջէ . գանալից առնէ զա-

մենայն որդի՝ զոր յակն առնոււ. յորմէ վասն յահա-
խութե մեղաց զերեսս իւր դարձուցանէ, և առանց
խրատու և պատժոց թողու : Այւ ովլիցէ՝ որ զայն
յայտ առնիցէ . ինքն իսկ ած մարդարէիւն . փոխա-
նակ, ասէ, զի անցէք զօրինօք իմովք, ու արարից այց
դստերաց ձերոց՝ յորժամ պոռնկեսցին, և ու հար-
սանց ձերոց՝ յորժամ չնայցեն . որպէս զի ասիցէ,
թէ մատնեցից զձեզ մեղացն, չտանջեցից զանիրա-
ւութին, չարդելից զապականութին, չբժկեցից ըզ-
վէրս յանցանացն, այլ թոյլ տաց ձեզ մեռանել ան-
դէն 'ի չարիմն ձեր : Տես վիարդ յորժամ ցասնուցու,
սպառնայ չխրատել . և յորժամ ստոյգ սիրեսցէ,
չըրաժարէ 'ի խրատելոյ :

Ու արդ ցուցաւ, եղբարք, ըստ կարի մերում,
եթէ զի՞նչ օրինակ աղօթիցն էր, և զի՞նչ կամի ցու-
ցանել ասելովն՝ հայր, եթէ հնար ինչ իցէ, անցցէ
յինէն բաժակս . զի ոչ ածեղէն Ճոխութին են այն
պիսի բանք, այլ մարդկեղէն անտեսութին իւրոյ :
Այւ յայտնագոյն նորն իսկ արար, եթէ մարմնոյ տկա-
րութե համարին խոնարհագոյն բանքն, երկեղին և
խռովութին և տրտմանութին . զի ստուգեսցի, թէ ար-
դարե մարմին չարչարելի առ . ոզիս, ասէ, յօժար է,
բայց մարմինս տկար է : Հիշեցուցանեմբազում ան-
դամ զամնն, զի հաստատեցից զմիտս Ճմարտու-
թին : Վայ եթէ ժարհեսցի ոք որոշել զուծումն
խնդրոյն որ 'ի մէնջ ասացաւ, յառաջ մատիցէ, իւր
դէմն կացուսցէ, մարտիցէ ընդ մեր բանս . եթէ բա-
ւական իցէ տալ պատերազմ ընդ ածեղէն բանին .
մի իբրև զթնամի փասխեսցէ, այլ իբրև զնահա-
տակ մի՝ որ 'ի վերայ Ճմարտութեանն մարտնչիցէ,
յայտ յանդիման կռուեսցի :

Ի՞այց այս ցայս վայր բաւական լիցի . զի զոր ինչ
յառաջին կայր՝ յայն եկաք, և 'ի նոյն հանգուսցուք
զբանն : Ուսուի ինձ թէ կատարեալ և բաւանդակ
ցուցաւ տնտեսութին օրինակ, և բանիս մեկնութի .
քանզի ոչ, եթէ յետ այսչափ վկայութեան ոք հա-
կառակեսցի, այնու ինչ Ճմարտութին աղարտեսցի .
որպէս և Պաւոս ասէ, եթէ ոք կամեսցի հակա-
ռակող լինել, մեք չունիմք այնպիսի ինչ սովորութի,

և ոչ եկեղեցի այ . քանզի մեք 'ի գրոց ուսաք հաւանել , և ոչ խոռղական որոճան որոճել . և ես աղօթս առնեմ ընդ գրոց սխալել , և ոչ ընդ Պղատոնի ձարտարել :

Որ ասացաւ՝ շատ և բաւական լիցի մեզ , և միայն զաղքատս յիշեսցուք . վասն որոյ և Պաւղոս այսօր բարիոք յիշեցոյց մեզ : Պետրոս և Հակոբոս և Հոհաննէս ձեռն ետուն հաւանութեն ինձ և Բառնաբայ , զի մեք 'ի հեթանոսս , և նոքա ՚ի թլփատութեան . և 'ի նոյն յարեաց վաղվաղակի , եթէ բայց միայն զաղքատս յիշեսցուք : Հիշեսցուք և մեք զաղքատս . զաղքատս՝ զի զանձինս յիշեսցուք . եթէ այլում ողորմեսցիս , քեզ ողորմիս . անձինդ բարի առնես , եթէ աղքատին բարի առնիցես , անձինդ սերմանես , քեզ հնձես . աստ սերմանի ողորմածութի , և յերկինս հնձի բարերարութին : Եւ մի ասիցես , եթէ զի՞նչ արարից , զի կարօտութք կապեալ եմ . կամիմ ողորմել , այլ չեմ ձեռնհաս . ախորժեմ բարի առնել , այլ չառնէ զբան իրացն անձկութի : Ուշափ կարող ես՝ արա . որչափ ձեռնհաս իցես գործել ըզ բարիս՝ գործեա :

Ուսարուք մի միայն լսել անձկալ , այլ և ողորմել անձկեալքդ : Եւ լուր լսայեայ , եթէ տացես հաց քաղցելոց սրտի մտօք : Օ ի՞նչ է սրտի մտօքն : Փրիսանակ ասելոց , թէ ուստի ուտելոց իցես , եթէ առնուցուս և տացես և հաղորդ առնիցես կերակրոյն քում զաղքատն , անձինդ ողորմեցար , որով զնա կերակրեցեր : Հիշեցէք արդեօք . զիտեմ զի յիշէք և զաւածինն որ վասն ողորմութեն ասացան : Ողորմածութի այ բարեկամութեն առիթ լինի . ողորմածութի մեղաց թողութի գործէ . ողորմածութի 'ի մահուանէ փրկէ : Երանելին Տարիթա , որ որինօք բնութեն մատնեցաւ մահու , և գոհութեամբ այրեացն դարձաւ միւս անգամ 'ի մահուանէ 'ի կեանս . քանզի աղքատացն արտասուք զմահու դրունս քակեցին : Ո՞իտ դիր . որչափ ինչ կարող են վճարել աղօթք անամպին . յորժամ մեռաւ Տարիթայն՝ որ բարիոք գործօք լի էր , ամենայն այրիքն եկեալ շնորջ կային զՊետրոսիւ , և արտասուէին . և արտասուք

աղքատացն ցածուցին զսուզն, մանաւանդ եթէ բռնութեան իսկ մահու յաղթեցին. զի որ մեռաւն ըստ օրինաց բնութե, դարձաւ անդրէն բանիւ չնորհացն: Ի էր ողորմութք և գործովք բարեաց. արտասուեցին այրիքն, և ածին յաղերս զանձ. մեռանելն ըստ բնութեն է, և յարուցանելն՝ արտաքոյ և ի վեր քան զբնութիւնս. զի եթէ զարտաքոյ քան զբնութիւն կարացին վճարել արտասուք տնանկացն, զըստ բնութե կարասցեն վճարել: Օ մտաւ ած, որ չափ բաւական են քուք այրոյ, յորժամ զհարստէ քուքայցէ. եթէ քուքայցէ աղքատ զմեծէ, որ հարստահարիցէ, եթէ քուքայցէ որք զզրկողաց, որպիսի վրէժո գործեցին: Ո՞ի քուքասցէ զքէն աղքատն, և մի հառաջեցի տնանկին, և մի կողկողեցի և բողոք բարձցէ զքէն որբն. այլ սերմանեալ յորբս ողորմածութիւն, զի քոյ որդւոյն գանձեցես մարդասիրութիւն:

Կ, մանող լեր Աբրահամու, որ յամենայն կարօտեալս սփուեաց զգութ մարդասիրութե, և ծննդոց իւրոց եթող զգբաւական փրկութե: Եւ տես զզարմանալիսն, զի վասն հիւրասիրութե մեծարանաց և զհրեշտակս այ արժանի եղե ընդունել. ընկալաւ հիւրասիրութքն զհրեշտակս, զոր մարդիկ կարծէր. և յետոյ իմացաւ, եթէ հրեշտակք եին. և ընդ նոսա ետես զանձ: Եւ քանզի սիրեաց զհիւրասիրութին, սեղան անզրաւ ետ ընդ այնը նմա ած. քանզի զքառասուն ամ՝ մինչ գեռ օտար էր յանապատին ժողովուրդն որ 'ի նմանէ էր, ած կերակրեաց զնոսա առատութք. քանզի պատրաստեաց նոցա սեղան յանապատին. ինքնազործ խորտիկս ետ որդւոց նորա զքառասուն ամ յանապատին, և կերակրէր զքողովուրդն որ յԱբրահամէ էր՝ վասն սեղանոյ օտարասիրութեն Աբրահամու: Եւ քանզի հովանի ծառոցն զբազում աղքատս զովացուցանէր, ամպ հովանոց զովացուցանէր զժողովուրդն, և պահէր բարիոք զոստան յանձապաշտ արմատոյն: Եւ տես զպանչելիսն, որպիսի տրիտուր հատուցանէր: Օ հաց հրեշտակաց կերան մարդիկի. յիրաւի իսկ էին նմանագոյնս: Ա ամս զի և Աբրահամ զհրեշտակս ընկալաւ.

քանզի զմարդկան հաց հրեշտակը կերան , վասն այնորիկ և զհրեշտակաց կերան մարդիկ : Օ ի այնպէս իսկ մատիֆ յառաջ օտարասիրութիւնն : ընկալեալ զմարդիկ՝ ժամանէ և զհրեշտակս ընդունել , և 'ի հրեշտակաց ասպաննականութէն՝ ժամանէ և այ ասպաննական լինել . քանզի ած է որ զհրեշտակսն ընդիւր սպասաւորս ունէր : Ուստի և առ մեր ՀՅ միածին որդին այ՝ յորժամ զպտղոյ մարդասիրաց սեղանոյն ճառեաց , ասէ . որ զձեզ ընդունի՝ զիս ընդունի : Ըստա ընկալաւ ուրեմն օտարասիրութքն և երանելին Ծբրահամ զած :

Եւ տես զզարմանալիսն . երիս տեսանէր , և միւնքն միայն երկիր սպագանէր . զի չասաց , եթէ տեարք , այլ թէ տէր . երիս տեսանէր , և զմինն օրհնէր : Իւայց այժմ չէ ժամ զայն Ճշգիւ քննելոյ , այլ զօտարսիրութեանն քանն 'ի հանդիսի անցուցանելոյ , քանզի ընկալաւ և հանգոյց : Տես զնոր խորհուրդս այ մարդասիրութէն , եթէ որպիսի սպարտս հատուսցէ մարդասէրն . ես եմ , ասէ , ած հարցն՝ որ իջի յերկնից . ոռու կերակրեցեր զերկնաւորս , և ես զերկնաւոր կերակուրն տաց քոց ծննդոց : Ծբաաքոյ քան զբնութիւն հրեշտակաց՝ կերան հրեշտակք զմարդկան կերակուր , և արտաքոյ քան զբնութիւն մարդկան՝ վայելէն մարդիկ յերկնաւոր հացէն . ոչ այս կերակուր ընդանի է հրեշտակաց բնութիւն , և ոչ այն ինչ յանդէր 'ի մարդկան բնութիւն . այլ այժմ չէ ժամանակ Ճշգիւ և դտակաւ 'ի հանդիսի անցուցանելոյ : Իւայց գու փափաքեա օտարասիրութէն վարուց , և Ճշնեաց զբարիոք Ճշնութիւն վասն աղքատաց , զի անձին գանձ համբարեսցես : Ունիս զմանս արօրոյն , սերմանեայ յանդս տնանկաց . բաշխեաց , ասէ , և ետ օրկաց , արդարութիւնորա մնայ յաւիտեան : Ծյս այսչափ բաւական լիցի . զի յիշեցուցանել միւս անդամ զաղքատաց ոչ յուսումն ինչ եղեւ , այլ 'ի հատատութիւն . քանզի առաջնքն իսկ որ ասացան՝ բաւական էին յորդորել զմտավարժն :

Վպասեսցուք այսուհետեւ հօրս հոգեորի , որ Ճըշ մարիտ վարդապետս է եկեղեցւոյ . ասասցուք և մեք 'ի դէպ ժամանակի ցսա , եթէ զարթիք , փառք իմ ,

զարթիք, սաղմոսարանդ և քնարդ, զի կարօտ եմք
քո վարդ ապէտութեղ, և հայրենի բարբառովդ՝ ՚ի
հաստատ ութի՛ մերոց բանիցս : Ուսէտ և բազում
իցէ ալիւքն, այլ և սակաւ միխմորոյ պէտք են . թէ
պէտ և բազում բանս խօսեցաք, այլ կարօտ եմք
հայրենի օգնականութեղ, յարգել և ՚ի հաստատել
զմեր բա նս ՚ի փառս «Վահ այ մերոյ, որում փառք
յաւիտե անս յաւիտենից . ամէն :

ՃԱՌԻ ՏԱԽՆԵ ԲՈՐԴ

Կողին սրբոյն Աերերիանոսի 'ի հրաւիրեալ 'ի մկրտութեն :

Ո չի իմաստուն էր Առղոմնն, ըստ իրս աշխարհիս կենաց զժամանակս յայտնի արար • իւրաքանչիւր որ լինելոցն էր զդէպմն ժամանակսն մեկնեաց • ասաց, ամենայնի ժամանակը են, և ժամ է ամենայն իրաց • ժամ է ծնանելոյ, և ժամ է մեռանելոյ : Ծայց ես զլիմաստոյն զպատասխանին փոխեցից և ասացից և քարոզեցից ձեզ զփրկութեանն քարոզութեն, եթէ ժամ է մեռանելոյ, և ժամ է ծնանելոյ : Իսկ զի՞նչ է բան յեղափոխելոյս ընդ միմեանս, վասն զի՞ որ մարմնոյս ծնունդք ապականութեան խօսի զմարմնոյ սրբութէ, զծնունդն կանխաւ առնել է քան զմահ. քանզի ոչ է հնար զփորձ մահու առնուլ, եթէ ոչ յառաջ նախ ծնեալ. այլ ես զհոգւոյն վերստին ծննդենէ Ճառեմ, վասն այսորիկ զմահ կանխաւ կարգայի քան զկեանս . վասն զի՞ ի մեռանել մարմնոյս՝ հաստատի՞ ի մեզ ծնանել ոգւոց • որպէս ասաց ինքն տրն . ես սպանանեմ, և ես կեցուցանեմ: Ո՞եռուս ցուք զմարմնոս մեր, զի ընդ նմա կենդանի եղիցուք • սպանցնեք զխորհուրդս մարմնոյս, որ ոչ կարէ հնա զանդել օրինացն այ, զի խորհուրդք հոգւոյ հզօր եղիցին 'ի մեզ • յոյր ձեռն կեանքն և խաղաղութիւն հաստատուն լինին 'ի մեզ: Ուաղեալք եղիցուք ընդ կի՞ որ վասն մեր մեռաւ, զի ընդ նմա յարիցուք • որ մեզ յարութեն առաջնորդ եղե :

Ծայց ժամն այլոց այլ ինչ զփառդ իցէ • իւր ժամ քնոյ է, իւր ժամ հսկելոյ է • իւր ժամ պատերազմի է, իւր ժամ խաղաղութեն • իսկ մլրտութեն ամենայն ժամ է 'ի կեանս մարդկան: Ո՞չ մարմնոյ կեանք են առանց շնչոյ, և ոչ հոգւոյ հանգիստ՝ առանց Ճանա-

¹ Առջս Ճառ կայ և 'ի կարդս մատենիցն սըն Բարսղե. հա. Բ. Էրես 115:

շելոյ զարարին իւր . վասն զի մահ է հոգւոյ՝ որք
զանձ ոչ ճանաչեն : Իսկ որ ոչ է մկրտեալ, նորա ըդ-
լոյս ոչ է առեալ . և առանց լուսոյ ոչ ակն զիւր մասն
տեսանէ, և ոչ ոզի զայ տեսիլ ընդունել կարէ : Ի՞-
մենայն ժամանակ գէպ 'ի մկրտութե փրկութիւն .
թէ ասես գիշերի, թէ 'ի տուընթեան, թէ 'ի ժամու,
թէ 'ի կէս ժամու, կարի յոյժ բարիոք, և արժանի
և 'ի ներքին ընդանէբար քան զօրն զատկի : Օ ի՞նչ
այլ ազնիւ է 'ի մանկութիւն, վասն զի է և յիշատակ
յարութե նորա . իսկ մկրտութիւն զօրութիւն է յա-
րութեն . իսկ արդ 'ի կանգնութե նորա յաւուր՝ զյա-
րութե ընորհս ընկալցուք : || ասն այսորիկ 'ի հեռաս-
տանէ եկեղեցին զննուցեալս իւր 'ի բարձր քարոզու-
թի կոչէ . զի զոր կանխաւն երկնեաց, զի յայնժամ
ծնցի և մնուսցէ, և մեկնեսցէ 'ի կաթանէ զնոսա 'ի
բանս ուսմանն, զի 'ի կարգս հաստատուն կերակրոյն
հասցեն :

Հովաննէս քարոզէր զմկրտութիւն ապաշխարուե,
և ելաննէին երթային առ նա ամենայն հրէաստան :
Տը քարոզէ զմկրտութիւն որդէզքութե, և ով իցէ
յայսցանէ՝ որ 'ի նա յուսացեալ իցէ, և ոչ հնազան-
դի . զի այն մկրտութիւն առաջնորդէ էր, իսկ այս կա-
տարեալ է . նորայն որոշումն էր 'ի մեղաց, իսկ այս
մկրտութիւն ընդանի է լինել այ : Վիշ առն էր Հո-
վաննու քարոզութիւն, և զամեննէսին ձգէր յապաշ-
խարութիւն . իսկ դու 'ի մարդարէից ունիս, զի ասէ .
լուացարուք սրբեցարուք . 'ի սաղմոսաց խրատիս .
մատիք առ տոր և առ էք զլցոս . յառաքելոց աւետա-
րանիս ապաշխարեցէք և մկրտեցարուք իւրաքանչիւր
յանուն տն մերոյ Հիսի Վհսի 'ի թողութիւն մեղաց, և
առ էք զպարգևս հոգւոյն սըյ : 'ի նմին 'ի տնի ընդու-
նելի ես, զի ինքն ասէ . եկայք առ իս ամեննէքեան՝
ոյք վաստակեալ էք, և ունիք զըեռինս ծանունս,
և ես հանդուցանեմ զձեզ :

Ի յս ամենայն այսօր 'ի մի ժողով պատգամաց պա-
տահեցին, և գանդաղիս և խորհիս և հեղան . և
'ի տղայութէ զբանն ուսանիս, և չե միաբանեցեր
ընդ ստուգութե . յամ ժամ ուսանիս, և երբէք ոչ
եկիր 'ի զիտութիւն . փորձիւ ես, կենաց լրտես մինչ

'ի ծերութիւն . Երբ ծանիցուք իբրև զմեր : Հերու-
այսմ ամի սպասեիր , այս ամ 'ի միւս ամ առնես :
Հեսչիր մի գուցէ գտանիցիս հեռացեալ 'ի կենաց .
հանապազ զխոստումն առնես , և գիտես ոչ զինչ
բերէ քեզ վաղիւն . մի խոստանար որ ոչ քո են : 'Ի
կեանս կարդամք զքեզ , ով մարդ . զի՞ փախչիս 'ի կո-
ռոյ . 'ի բարութե բնութի կուեմք զքեզ , զի՞ զանցու-
ցանես զքեզ զպարգես . արքայութիւնն երկնից բա-
ցեալ է . և որ կոչէն՝ չէ սուտ . և հանապարհ դիւրին
է . ոչ ժամանակք բազում , ոչ ծախք , ոչ վաճառոյ
ինչ պէտք : Օ՞ի՞ հեղաս , զի՞ անպահակիս , ընդեմ
երկնից 'ի լծոյ իբրև ընջուղ տրմուղ . քաղցր է ,
թեւթև է . ոչ հարկանէ զմիլս , այլ փառաւորէ . ոչ
պնդեն սամետէք զպարանոց . անձնիշխան է , խնդրէ
զայն որ ընդմունէ , և ձգէ : Ծեսանես , զի չարախօ-
սէս զլափրեմայ իբրև զաւանգող՝ երբնջի ստահակու-
թի մոլորէ . այս է , զի զօրինացն ըրծն անարդեաց :
Վըա՞ի ներքոյ լծոյ զտրմուղ վիլս , և լեմ անդրուար
մինչ . զի՞ մի 'ի բացեայ գտանիցիս 'ի սամեաց , և մի
յազատութի կենաց աշխարհիս , և դիւրին լինիցիս
կերակուր գաղանաց :

Դ'աշակեցէք և տեսեմք , զի քաղցր է ոոր . զքաղց-
րութիւն մեղուի զիարդ պատմեցից ձեզ . որ տգետք
էք՝ հաշակեցէք . հանձար բանի ամենայնի հզօր է
առ փորձ : Հրեայն զթլիատութի ոչ զանցուցանէ՝
վասն սպասաւորութեան օրինացն . և այն զի ասա-
ցաւն , ամենայն անձն որ ոչ թլիատեացի յաւուր ու-
թերորդի , սատակեսցի 'ի ժողովրդենէ աստի յայս-
մանէ . և դու զառանց ձեռաց առնելոյ թլիատու-
թի յապաղես , 'ի մերկանալ զմարմնոյ՝ մլրտութք
կատարեալ լինել . լուար՝ 'ի նմին տնէ . արդարեւ ա-
սեմ ձեզ , եթէ ոչ միւսանգամ վերստին ծնջիք 'ի
ջրոյ և 'ի հոգւոյ , մի մաշիք յարքայութին երկնից :
Հայնմ թլիատութե ցաւք են և կեղք . իսկ յայսմ
յօղ , և սրտի վիրաց բժշկութի : Լըրկիք պագ այնմ .
որ վասն քո մեռաւ . այսու հետեւ առանձնեալ թա-
ղեւ մկրտութք . եթէ ոչ տնկակից լինիս նմանութե

մահու նորա , զիանդ հաւասարորդ լինիցիսյարութեն նորա :

Խարայէլ՚ի Ո՞վվակսէ մկրտեցաւ յաման և 'ի ծովն .
քեզ օրինակ ետ , և նշանակեաց զկնի ժամանակաց
ցուցանելքեզ զՃմարտութեն . բայց գու խուսու-
սես 'ի մկրտութենէ . ոչ 'ի ծով օրինակեալ , այլ 'ի
Ճմարտութեն կատարեալ . ոչ յամակ , այլ 'ի հոգի .
ոչ 'ի Ո՞վվակս ծառայակից , այլ յարարին : Խարայէ-
լի եթէ ոչ անցեալ էր ընդ ծովն , ոչ մեկնեալ էր 'ի
ֆարաւոնէ . և գու եթէ ոչ անցցես ընդ ջուր աւա-
զանին , ոչ մեկնեսցիս 'ի դառնութեն բանութեն սա-
տանայի : Ո՞չ էր արբեալ նորա 'ի հոգեօր վիմէ ան-
տի , եթէ ոչ օրինակաւ մկրտեալ էր . և ոչ քեզ ոք
տայ զՃմարիտն ըմպելի , եթէ ոչ Ճմարտութեամբ
մկրտիս : Եշէր նա զհաց հրեշտակաց յետ մկրտու-
թեն . և գու ոչ կարես ուտել զկենդանին հաց , ե-
թէ ոչ ընկալցիս զմկրտութեն : Եշմուտ նա յերկիրն
պարդեաց յաղագս մկրտութեանն . և գու զիանդ
դարձցիս 'ի դրախտն , եթէ ոչ դրոշմեսցիս աւա-
զանաւն . ոչ զիտես՝ եթէ հրեղէն արանց հրաման
տուեալ է պահէլ զՃանապարհս ծառոյն կենաց :
Ծաերահաւատիցն աշեղ բոց է . իսկ հաւատացելոց
հմուտ է , և ընդանէրար լցոս տայ : Ծըթէլ հրա-
մայեաց նմա նոր . յորժամտեսանէ զհաւատացեալն ,
թիկունս շրջէ . յորժամտեսանէ զոքյանդրոշմաց ,
համարձակապէս յառաջ պատաշէ :

Եղիա ընդ կառաց հրեղինաց և 'ի ձիոց հրեղինաց
ոչ զարհութեցաւ , այլ յիզձս Ճանապարհին վերնոյ՝
յահաւորմն համարձակեցաւ , և ել՚ի բոցեղէն կառան .
ոչ մարմնով կենդանեաց այսօր : Իսկ գու ոչ եթէ 'ի
հրեղէն կառս հանդերձեալ ես ելանել , այլ ջրով և
հոգւով ելանես յերկինս , և ոչ ընթանաս 'ի կոչն :
Եշոյց Եղիա զմկրտութեն զօրութեն 'ի վերայ ողջա-
կիզացն . ոչ 'ի ձեռն հրոյ , այլ 'ի ձեռն ջրոյ զպատա-
րագս ողջակիզեաց : Եւ յայլ ժամբնակս հրոյ բնու-
թեն ընդ ջուր մարտնչի . քանզի խորհրդով զջուրն
երիցս յայնժամ 'ի վերայ սեղանայն հեղաւ . եղե կա-
րապետ հրոյ , և վառեաց զջուր իբրև զձեթ . առեք
ինձ , ասէ , սափորս , և հեղէք 'ի վերայ ողջակիզացն

և շերտիցն . և ասէ . կրկնեցէք , և կրկնեցին : Հուշանէ զրամս , եթէ մլրտութքն՝ այ ընդանի լինի , որ մերձենայ . և լոյս մաքուր երկնաւոր փայլէ յանձննս այսց՝ որ մերձենան հաւատովվք Երրորդութեն :

Եթէ զոսկին եկեղեցւոյ բաշխէի , ոչ ասէիր ինձ՝ եթէ վաղիւ եկից , և վաղիւ տացես ինձ , այլ արգէն իսկ ստիպէիր և պահանջէիր զսլարգեսն , և գժուարէիր՝ եթէ վաղիւ ոք առնէր . արդ ոչ եթէ երկրաւոր ինչ վայելուչ , այլ հոգւոյ մաքրութիւն կարկառու քեզ մեծապարգեն . պատճառու ստեղծուս , և բարո՞ւս թուես . զի արժան է ընդ առաջ ընթանալ պարգեացն : Ո սքանչելիք . որ առանց ձուլելոյ և պարզելոյ նորոգիս . առանց փշրելոյ նոր ստեղծուածուածիս . բժշկիս առանց դեղոց ¹ , և ոչ համարիս չնորհս : Եթէ ծառայէիր մարդկան , և կանխաւ գնեալ էր ծառայից զազատութի , և ոչ փութայիր հասանել 'ի հաստատութիւն , և ոչ վարձէիր քեզ բարեխօսս , և գատաւորս աղաւէիր , և ամենայն հնարիւք ջանայիր զերծանել 'ի յազատութի : Ծերեւս ապտակս ես , և որ 'ի կատարած ծառայից վերջին գան է , փոխանակ այնը զի յետ այնորիկ 'ի սանգաստականաց 'ի բաց լինելոյ , առանձնէիր զապտակն վերջին : Առդ քանզի ծառայ ես դու , ոչ եթէ մարդկան՝ այլ մեղաց , և քարոզն կոչէ զքեզյապաշխարութի , զի արձակեսցէ զքեզ 'ի զերութենէ , և արասցէ քաղաքակից հրեշտակաց , և որդի ցուցցէ զքեզ այ՝ զի լեալ ես չնորհօք , և ժառանգ բարութեան Վահ . և ասես , չէ ժամ ընդունել , որ տանն քեզ . Ո չարեաց խափանութեան , ով զազիր և վատթար անպարապութե : Ո ինչւ յերբ ցանկութիք : Հազում ժամանակս կեցաք յաշխարհիս , կեցցուք և արդ անձանց մերոց : Օ ինչ է որ զանձնարժէ . զի՞նչ կշռորդ է արքայութեն երկնից : Ո հաւատարմագոյն է քեզ քան զիմաստուն . ո օգտակարագոյն է քեզ քան զբարի . ո ընդանի է քեզ քան զարարին :

ԱՅԼ ոչ լրային՝ ինչ եղեւ օգուտ օձին խրատ ։ զի առանձնեաց առաւելքան զմն։

Ո՛ անկարգութիւն բանից ։ ո՞չ պարապ ես ողջանալ ։ մի երեկք ցուցաներ ինձ զվոյս, և մի այրեր զիս, արքայ ։ Ո՞չ զայս ասես և դիպան այսմ, այլ ևս առաւել ևս քան զայս 'ի վայր ։ Օքեղ եթէ էր զրեալ 'ի պարտս արքունի, և ելաներ պարգել թողութեան զպարտսն, և յանկարծ ոք առ եպերելն իւրում անբաժին թեակոխսէր առնել զքեղ 'ի թողութենէ անտի, գաղանանայիր, աղաղակէիր, բողոքէիր ։ զի որ անգ էր քեղ 'ի հասարակաց շնորհաց անտի յայնմանէ չզրկէր զքեղ ։ Ո՞րդ քանզի ոչ միայն թողութիւն անցանէ 'ի քէն, այլ ևպարգեքն որ հանդերձեալ էր տալքեղ, որ կանխաւն քարոզեցաւ ։ արդ աւաղիկ քեղէն զանձն քո զլանաս ։ զի ոչ 'ի թշնամեաց քոց եպերեաց առնել քեղ զայդ ։ համարիս լաւ խորհել քեղ, և դիւրին իմանս վասն անձին քո, զի ոչ ընդունիս զթողութիւն, այլ մեռանիս 'ի պարտսն ։ Եւ զայս գիտեմ ես, զի որ բիւրն քանքարի պարտականն էր, եհաս թողութէ ։ եթէ ոչ ինքնին անձամբ իւրուզ զպահանձանս խոշտանդանաց 'ի ծառայակիցն իւր եցոյց զվայրենութիւն անողորմութէ, և նորոգեաց գարձեալ ըզպարտսն իւր ։ զի յայսմանէ և մեղ եղիցի պահել և զգուշանալ ։ գուցէ և ընդ մեղ նոյնպէս անցանիցէ, յորժամ զպարգեսն առնումք, և ոչ թողուցումք պարտականաց մերոց, զի պարգեն մեղ հաստատապէս մնասցէ ։

Ո՞ւտ յըշտեմարանս հոգւոյ քո, և յուզեալ զյիշատակ գործոց քոց ։ և եթէ բազում են մեղանք քո, մի զանգիտեր 'ի բազմութենէ անտի ։ վասն զի ուստի յաւելան մեղքն՝ առաւել եղեն շնորհքն, եթէ ընդունիս զշնորհսն ։ վասն զի որ պարտին շատ, շատ և թողցի նմա, զի աւելի սիրեսցէ զայն որ թողուն ։ Ո՞պա եթէ սակաւիկ և փոքրիկ են և ոչ մինչեւ 'ի մահ մեղքն, զի յոդիս ասլաստան լինիս վասն յառաջ ես ։ զի ցայսքան ոչ անարժանութիւն եղեր որ

անցուցեր զժամանակոն , և այս մինչեւ առաջնորդեցար յօրինաց : Վրդի իբրև 'ի կշիռս կալ համարիս զանձն քո աստի հրեշտակաց՝ որ ձգեն զքեզ , և անտի դիւաց , ում՝ արդեւք տացես զմէտս՝ սրտի քո . ո՞յ յաղթեսցէ քեզարդեօք . ցանկութիւն մարմնոյ , եթէ սրբութի՞ Հոգւոյ . վայելք առժամայս , եթէ ցանկութիւն կենացն յաւիտենից . հրեշտակք առցեն զքեզ յիւրեանս , եթէ կալցեն՝ ոյք ունին :

'Ի վերայ հանդիսի զօրագլուխք զօրաց՝ , որ ընդին քեամբք են՝ պարզեեն , զի և բարեկամքն դիւրաւ դարձին 'ի նոսա . և առ թշնամիսն 'ի խառնուրդս անդ ընդիւառնէինն , և դիւրաւ առնի մեկնել զնոսա 'ի նշանէ անտի : Օ քեզ ոք ոչ ճանաչէ , մերես , եթէ թշնամեաց , եթէ ոչ խորհրդովինչ և նշանակաւ ցուցանես զնմանութիւն . և ոչ նշանի 'ի քեզ լցոս երեսաց տն , զիարդ 'ի թիկունսիցէ քո՝ հրեշտակն , կամ որպէս թափեսցէ զքեզ 'ի թշնամեաց , եթէ ոչ ծանիցէ զբրոշմն . և կամ դու զիարդ ասացես՝ եթէ ես այ եմ , զի ոչ ունիս 'ի քեզ ծանօթսին : Եթէ ոչ զիտես , զկնքելովք տամբքն սատակին անցանէր , և յանկնիքսն մտանէր , և կոտորէր զանդրանիկոն : Ոսկի առանց կնքոյ դիւրին է դոզոց , և ոչսար անդրոշմ առանց պատժի է եթէ նենդի :

Ո՞անսուկ ես , զգուշացիր մանկութեան քում 'ի մկրտութեան սանձս . անցեալ ես ընդ իրօք , մի զեղծիր 'ի պաշարէ , մի կորուսանէր զպահապանն : Ո՞ի զմետասան ժամն իբրև զառաջին ժամն խորհիր . զի ում արժանն է , և ունի 'ի միտ զսկիզբն կենաց աշխարհիս , առաջի աչաց իւրոց իբրև զկատարած ունի : Եթէ ոք 'ի զիտնոց բժշկաց հնարօք ինչ և պատճառանօք խոստանայր քեզ դարձեալ 'ի ծերութենէ յերիտասարդութիւն դարձուցանել , ոչ ցանկայիր յօրն յայն՝ յորում զքեզ յերիտասարդութիւն տեսանէիր . արդ քանզի հոգւոյն զուարթանալ խոստացեալ է մկրտութեն , զոր դու հնացուցեր և

1 Յօրինակին պէտք :

2 Յօրինակին պէտք ... տրէսութիւն :

3 Յօրինակին պարագանեալ :

աղտեղացուցեր յանօրէնութեց և շաղախեցեր, արհամարչես զերախտաւորն, և ոչ միտ դնես աւետեացն: Ոչ ցանկաս տեսանել զմեծ սքանչելիս պարգևացն, զիարդ առանց մօր ծնանի վերստին մարդ: որ ծերացեալ և ապականեալ ըստ ցանկութեց պատրանաց, զիարդ զուարձանայ և փթթեի, և 'ի չըսմարիտ ծաղիկն մանկութեց դառնայ մկրտութքն:

Մկրտութիւն՝ գերեաց փրկանք, պարտեաց թռղութիւն, մեղաց մահ, միւս անգամ ծնունդ, նորոգութեց հոգւոյ, զգեստ լուսաւոր, կնիք առանց նենդելոյ, կառք ընդ երկինս, արքայութեանն առաջնորդ, որդեգրութեց չնորհք: Այսափ բարութեց, և այսքան պարգեաց մեծաց 'ի վեր համարիս զցանկութիւն թշուառութեց: Իմանամ զյապաղելոց քո, թէպիտ և դու խորշիս բանիւք, այլ իրքն ինքնին աղաղակեն, թէ և բարբառն լուռ կայ. թող, ասես, վարեցից զմարմինս 'ի վայելս զաղիրս, թաւալեցայց 'ի տիզմ ցանկութեց, զձեսս շաղախեցից յարեան, զերծից զայլոց, նենգութեամք զնացից և ստեցից, սուտ երգուայց, և ապա առից զմկրտութիւն յորժամ երբեք կասեցայց 'ի չարեաց անտի: Եթէ բարիոք են մեղք, պինդ կաց 'ի նոյն. ապա եթէ վնաս են սյնոցիկ ոյք առնեն, զի՞ստիպեալ կաս մնաս սատակելոյ: Ոչ մարթի այսմ որ խնդրէ 'ի փորէ անտի պարզել զմաղձն, և փութայ զնիւթս մաղձի և զախտս բազում առնել. այլ օրէն է այնոցիկ ոյք տրտմեցուցանեն զմարմինս, զի՞ս մի յինքեանս պատրաստեցեն զիւանդութիւ առաւելքան զզօրութիւ: Կաւ մինչ յայնքան ժուժէ ծանրութիւ, ալեաց համբերել որչափ կարէ. իրը աւելի քան չափն ծանըէ, ընկղմի. և դու մի կարի առաւելքան զմեղս առնես զթողութիւ, և վրիպեցես զթողութիւ 'ի յուսոյ անտի. յաստեաց նաւաբեկ գտանիցիս: Ոչ տեսսանէ ած զոր լինի, կամ ոչ իմանայ զլսորհութոց քո, և կամ գործակից է անօրէնութեց քում. զի ասէ, կարծեցեր, անօրէն, եթէ և ես քեզ նմանիցեմ: Կառ առն մահկանացուի բարեկամութիւ 'ի վախճանի առնես. յաղագս երախտեացն զնա յառաջնիս + զայն ասես և առնես՝ որ 'ի խնդութեանն իմա-

նաս : Խակ արդ դու այ ընդանի ես, և 'ի կարգս
որդւոյ յուսացեալ ես՝ եթէ ընկալցի, զայն գործ
գործես, որ այ թշնամի թուի, և յայլ աղջս օրիւ-
նաց յանցութեան անարդես զնա . յորմէ առաւել
ես հարկանիս ընդդէմ, անտի՝ յուսաս ընդանի լի-
նել : Տեսջիր մի 'ի յայս ֆրկութեն բաղում չարիս
ժողովես յանձին քում . զմեղս ժողովես, և 'ի թո-
ղութենէ անտի վրիպեսցիս . ած ոչ զեղծչի, մի իբրև
զվաճառ համարիր զնորհն :

Ո՞ի ասեր . բարիոք են օրէնք, այլ քաղցր են
մեղք . Հանկութի կարթ է սատանայի, 'ի կորուստ
ձգէ . ցանկութի մայր է մեղաց, խակ մեղք խայթոց
են մահու . ցանկութի դայեակ է որդանց, որ յաւե-
տենից է . առ ժամ մի քաղցրանայ այնց, որ վայե-
լեն, և յետոյ դառնագոյն քան զլեղի ցուցանէ ըզ-
պտուղ : Հապաղութի ոչ այլ ինչ աղաղակէ քան
զայս . թագաւորեսցեն յիս յառաջ մեղք, և առա-
երբէք թագաւորեսցէ յիս տը . հնազանդեցից զան-
գամնիմ զէն մեղաց և անօրէնութեան, և ապա եր-
բէք ուրեք հնազանդեցուցից զէն արդարութեան
'ի տը : Լայտէս և լայէն զպատարագս մատուցա-
նէր, զառաջինն իւրում ծառոյ 'ի վերայ ելեալ .
զերիրորդն այ, այնմ՝ որ հասատեաց զնա և չնոր-
չեաց նմա զբարութիւն : Հորժամ կարող ես գոր-
ծովք, զմանկութի քո յանօրէնուի վարես . և յոր-
ժամ խոնջի մարմին քո և ծերանաս, յայնժամ մա-
տուցանես այ . յորժամ յոչինչ¹ պիտոյ լինի քեզ
այնուշետե, այլ հարկ է նմա դադարել և կալ՝ ըստ
բաղում ժամանակացն թառամեալ և լուծեալ 'ի
զօրութէ : Ծերուե հանդարտութին ոչ է հանդար-
տութի, այլ տկարութիւն ընդ արձակն զնալց : Դի
ոչ պսակի, և ոչ արդարանալ ոք կարէ վասն տկա-
րութէ 'ի չարութէ : Ո՞ինչ է 'ի քեզ զօրուի բանի,
ժուժեա 'ի մեղաց . զի այս է արուեստ . խոտորեա 'ի
չարէ, և արա զբարի : Խակ իբրև վարէ ոք 'ի չարուէ,
ոչ զովութե արժանի լինի, ոչ տանջանաց ինչ զործ
կարէ զործել : Եթէ յաղագս ծերուե դադարեալ

Եմ՝ի մեղաց անտի, այն տկարութեն չնորհէ է: Պա-
վեմք մեք որ կամօք իւրովք բարի լինի, ու եթէ զայ-
նոսիկ, որ 'ի վշտաց ինչ կամ հարկաւյօրինի բա-
րին:

Ո՞վ արկ քեզ սահման կենաց, կամ ո՞վ ետ քեզ
ժամանակ ծերութե, կամ ո՞վ այնքան հաւատարիմ
է քեզ, զի երաշխաւոր լինի այնմ որ գալոցն է 'ի
վերայ քո: Ո՞չ տեսանես զտղայմ, որպէս յափշտա-
կին: ոչ զաւագն որպէս տանին: ոչ ունի աշխարհս
մի սահման: Օ ի մաս և անսաս տապոյն, կաշո-
առնելքեզ զմկրտութի, յորժամ և ոչ կարասցես
բարեառել զիրկուեն բան. թերեւս և ոչ լսես մաք-
րապէս. հրաման եղիցի քեզ, զի 'ի գլուխ անդ ընա-
կեալ իցէ ախտն: ոչ զձեռս կարասցես համբառնալ
ընդ երկինս: ոչ յոտս² կարասցես կանգնել. ոչ ծունը
կարասցես խռնարհեցուցանել յերկրպագութի: և
ոչ ուսանել կարասցես ստուգապէս զհաւատոց բանս,
և ոչ դաւանել կարասցես ճշմարտութք. ոչ ուխտ
գնել ընդ ոյ, և ոչ հրաժարել 'ի թնամնոյն. և ոչ
կարգօք զչետ երթալ խորհրդոյն ուսման: Երկ-
մուռթի է այնոցիկ որ առ քեզն գան. ասասցեն, ար-
դարե իմացաւ զշնորհսն, եթէ անզգայ իցէ, և ոչ
իմացաւ զոր առն: Ի այց թէպէտ և իմաստութեամբ
ընկալար զշնորհսն, զքանքարն ահա ունիս, զշահ
յետ քանքարին ոչ տանիս ընդ քեզ: 'Ամանեաներ
քինոյն, յորժամ եզիտ նա զուսուցիչն, ոչ անփոյթ
արար զուսմանն. 'ի կառս անդ եշան զտնանկն՝ մեծն,
և որ յաջ մարդկան արհամարհեալ էր՝ հպարտն և
փառաւորեան. իբրեւ ուսաւ 'ի նմանէ զաւետարանն
արբայութե, ընկալաւ զհաւատոն սրտիւ, և ոչ յա-
պաղեաց զդրոշն հոգւոյն. իբրեւ դիպեցան 'ի ջուր
ինչ, ասէ. ահա ջուր. ինդութի է բանն, և ասէ.
ահա զոր ինդրէաքն. արդ զինչ արդելու զիս 'ի
մլբտելց:

Ուր կամք պատրաստ են, չիք որ խափանէ. որ կո-
չեն՝ մարդասէր է. պաշտօնեայ՝ պատրաստ. չնորհք՝
առանց չարակնելց. յօժարութի 'ի ձեզ գտցի, և

Եւ որ որ խափանէ : Վայն որ ցանկեաց 'ի մէնջ զկեւնաց ճանապարհն , նմայ յաղթեսցուք իմաստութեք . նա զվեշերուի առնէ 'ի մեզ , և մեք զուարթասցնէք 'ի գործ . նա մնոտիս խոստանայ մեզ և պատրել զմեզ , մեք մի տգետք եղիցուք 'ի մասց նորա : Եթէ ոչ իմանայք , զի զմեզմն այսօր հրապուրէ առնել , և զարդարութիւն 'ի վաղիւ հաճէ զմեզ պաշել . վասն այսորիկ որ լուծանէ զնորա խորհուրդն չարութեն : Վայսօր եթէ ձայնի նորա լուիցէք . նա ասէ , զայսօրն ինձ , և զվաղիւն այ . իսկ որ ձայնատու լինի , այսօր ձայնի իմոււմ լուարուք : Խմացաւ թշնամին , ոչ համարձակի բնաւին խրատ տալ քեզ , զի ապստամբեւացես յայ . զիտէ , զի ծանր է այս լսել քրիստոնէից . այլ 'ի ճարտարութիս 'ի պատիրս մեքենայել թեւակուի . զիտուն է 'ի չարութիւն : Տեսանէ ընդ մեզ , զի յաշխարհի աստ կան մարդիկ , և ամենայն գործք մեր յաշխարհի աստ գործին , և զայսր աւուրն մեքենայիսք իւրովլք գողանայ , և զյոյսն մեր հապա 'ի վաղիւ առնէ : Խոկոյրժամ վաղիւն գայ , գարձեալ չարն՝ բաժանիչն մեր՝ աղաչէ զայսօր իւր առնել , և զվաղիւն տն . այսպէս հանապազ զառ աւուրն 'ի ցանկութիվ վարէ , և զյոյսն յապա առնէ 'ի մէնջ . ծածկեալ է այդ , զի արգելու 'ի կենաց : Վայսիսի տեսի ես երբեմն կեղծաւորուի հաւու մեքենաւոր . զի ձագք մատաղլինի , և զիւրին իմն երեւեցուցանէ զանձն իւր . յորժամ տեսանէ նա զորսորդ , զանձն իւր առաջի դնէ որսորդաց , թրթռէ , երթայ , ոչ ունել տայ որսորդացն , և ոչ բնաւ անյոյս առնէ , մինչև այնքան , որքան ձագուցն զիւրին եղիցի զերծանել , ապա յառնէ զնայ և ինքն : Երկիր արդ և դու , մի 'ի նմանութիւնայնը՝ որ ոչն երեկի քեզ յոյս զյայսանիս մերժես :

Օ ամենայն անձն քո փոխեամ 'ի որ կողմ . տոնւը յիս զանուն քո , զրեաց դույեկեղեցի : Որ զինուորն է , 'ի ժողովն թուեալ է , ընդ պատերազմոզս նա մարտնչի . որ հրապարակին մարդ է , գրի ընդ քազաքացիս . արդ ամենայնի այսր ընդ պարտիւք ես ,

1 Յօրինակին հրապարակ : 2 Յօրինակին հետեւայ : և ու :

իբրև զինուոր Վահի, իբրև նահատակ արդարուե՛, իբրև քաղաք ունիցիս յերկինս : Գրեաց ՚ի նմին դպրութե՛, զի գարձեալ եղիցի քեզ ՚ի կոն վերին : Ուսիր, խելամուտ լեր աւետարանին գնացից . ստացիր համեստութիւն, աչաց հաստատութիւն, լեզուի ժուժկալութիւն, մարմնոյ զծառայութիւն, խորհըդոց զիննարհութիւն, մտաց զմաքրութիւն : Կոր ՚ի քեն զբարկութիւն . պահակ ոք վարէ տարապարտուց, համբեր . զմիայն ոք մի դատեր . ատէ՞ ոք, գուսիրեա՞ . հալածէ՞ ոք, անսամ. հայհոյէ՞ ոք, աղաւեա՞ . լեր մեռեալ՝ ի մեղաց . ել՝ ի խաչ ընդ Վահի . զամենայն սէր քո փոխեա՞ ՚ի տըր :

Վսես . չար է այդ . և բարեաց ո՞ր է գիւրին : Ու որ ննջէ, և զճակատս վանէ . ո՞ բարեկենդանութք և փողովք՝ համբերութք պսակաւ զարդարեցաւ . ո՞ւ ոք առանց ընթանալոյ առ զնպատակն : Ու աստակք ծնանին զիառու . վաստակք պատրաստեն զպսակս : Շագումնեղութիւն մտանել յարքայութիւն ասեմ և ես . այլ զայս նեղութիւն յարքայութեն երկնից յերանութիւն հանգուցանէ . իսկ զմեղաց վաստակս գեշենին տաննջանք և պատիժք տրամուեն սպասեն : Վայլ ձցըրիտ որ միտ գնէ, սատանայի գործք գործեն զանօրէնութիւն, առանց վաստակոյ ո՞ւ լինի . ո՞ր քըրտունք են հանգարտութե՞ . իսկ պոռնկին՝ համակ ՚ի քրտան է, ՚ի ցանկութե՞ , և ՚ի մաշել . զի՞նչ այսչափ մաշէ ՚ի մարմնոյ ժուժկալիցն, որչափ պղծութեան կտղուցք և ընդարձակդնացացն մաշէ զմարմնն : Գիշերք առանց քնոյ են այնոցիկ՝ որ հսկեն յազօթս, այլ դժուարագոյն ևս է այնոցիկ՝ որ հսկեն ՚ի մեղս . քանի օն երկեղ է այնոցիկ որ առ ընկերին կին ժապրհին ՚ի ցանկութեն աւիւնդ՝ , և զամենայն հանգիստ ամենեին ՚ի բաց առնէ . իսկ նեղութիւն հանգարհի՝ որ ՚ի փրկութիւն ածէ, զընդարձակութիւն մեղաց ՚ի բաց առնէ : Վարդ երկնչիմ, մի գուցէ մինչև ՚ի կատարած զանդոյրն հանսպարհ գնայցէս, և հուտ յայն հանսպարհ գտցէս զիջելվանս : Վայլ զդժուարապահն գանձ հսկեալ, եղբայր, և

պահեմ , ունիս ընկերս , եթէ կամիս , զաղօթս պահ պահակիցս դիշերոյ , պահս ընդանի , սաղմոս զուար թացուցիչս հոգւոյ , զսոսա ընդ քեզ առ . սոքա եղիցին քեզ օթևանաց կցորդ , պահպահակից պատուական գանձուց : Ո՞ր քաջ է , ասա . մեծանալ , վասն պահ պահնութե պատուական գանձու ձգնել , եթէ բնաւ սկիզբն ոչ ունել զոր պահեսցուք : Ո՞չ ոք վասն եր կեզի պահելոյն զբարութին մերժէ յանձնէ . այսպէս և ոչ ոք 'ի մարդկութէ կարէ կեալ , թէ իւրաքանչ ընւր վասն որոյ փութայրն , զվրիպածն համարէր : Կայ արդէն , և լինի դեպ վրխտել և նաւարեկ լինել , և առնակնութե այրի լինել , և որ բազումն մնուցանէ որդիս , անորդութե . բայց 'ի գործ անդր թեակախէմք . 'ի բարի յոց անդր հաստատիմք : Կայց զյու սացելոց զկատարած այնմ յանձն առնեմք , որ 'ի վերայ մեր խնամ ունի ած :

Կայց դու բանիսւք միայն վերստին 'ի սրբութիւն , զործով ընդ ըստգտեալսն շրջիս : Տեսջիր , զուցէ զղջանայցես 'ի վերայ խորհրդոց չարեաց , յորժամ ոչ ինչ օգուտ առնիցի քեզ 'ի հեղանաց : Հանդարտեցուցեն զքեզ և կուսանայն օրինակք . նոքա զձէթն յամանս իւրեանց ոչ ունեին . յորժամ պարտ էր ընդ փեսային մտանել , յայնժամ երկիւղ կալան , և զվիշտան 'ի միտ առին : Ո ամս այնորիկ և անիւ մաստս կարդայ զնոսա բանն . վասն զի 'ի ժամանակս պիտոյին ձիթոյ առնել շահել ընդ վայր անցուցին . մոռացան զանձինս իւրեանց , և արդելան 'ի լրջմըտութենէ և յուրախութենէ հարսանեացն : Ո՞ի զուցէ և դու՝ ամ յամէ , ամիս յամոյ , և օր յօրէ յապաղես , և ոչ առնուտ զձէթն՝ որ կերակուրն է լրւոյ , անկանիցիս՝ յոր ոչ սպասիցես . յաւուր յորժամ պակասեացեն քեզ այնուհետեւ և կենաց պատճառք , անապտուղ իցես յամենայն կողմանց . հասանիցէ նեղութիւն առանց սփոփանաց , արարեալ հանդերձեալ զքեզ բժշկայ 'ի մահ , բարձեալ 'ի քեն զյոյս ընդանեաց . յորժամ ստէպ հեծի-

ցես ցամաքեալ բերանով . ստիպեցէ զքեղ տասդ
ուժգին վառեալ՝ ի փորի : Ուառանցես և հեծիցես
՚ի միջյ սրտէ . և որ տրտմիցի ընդ քեզ՝ ոչ դտանի .
և բարբառեսցես ընդ աղօտ ինչ աներեսոյթ . և զա-
մենայն զոր խօսեսցիս՝ իբրև բաղբաջանս արհամար-
չեսցեն :

Լամ ո՞ տացէ քեղ յայնժամ մկրտութի , կամ
ո՞ յիշեցուցէ լեզուաւ . կապին՝ որ ընտանիքն են՝
՚ի տրտմնութե . որ ՚ի բացեայ են ՚ի կարեաց՝ արհա-
մարհին . որ բարեկամն է , դանդաղի յիշեցուցանել
վասն խռովութե . թերես բժիշկն իսկ խարէ . և
ինքն իսկ ոչ ունի ակն առ այն . զի ընուի մարմնոյս
զաշխարհս սիրէ . բայց զիշել , մինուի հասեալէ յօդ-
նականաց . կամ կնքատուն ոչ պատահիցէ , և մահ
հասեալէ , և տանելիքն ստիպեն , և չիք ոք որ թափէ :

Լատուած , որ արհամարհեցաւն ՚ի քէն . նա վազ
ըսէ քեղ յայնժամ , զի դու և այժմնմա ըսես : յա-
մանակս զնէ քեղ . քանի՞ բարիոք վարս վարեցեր :
Վի՞ ոք պատրեսցէ ³ զքեղ յընդունայն խօսս . հաս-
ցէ ՚ի վերայ քո յանկարծօրէն սատակումն ՚ի նմա-
նութիւնն մըրկի . եկեսցէ հասցէ ՚ի վերայ քո հրեշ-
տակ խոժուագէմ , և տանի զքեղ բռնութիք . քա-
զէ զոգի քո կապեալ մեղօք : **Ո**տեպ դարձդարձիցէս
այսը անդը , բողոքիցես առանց ձայնի , ամանի քո
այնուհետեւ ողբք արգելեալեն ՚ի քէն : **Վ**լ , քա-
նի՞ անցուցեր ինչ ընդ անձն քո . քանի՞ հեծեսցես .
անյագ լայցես ՚ի խորհուրդս քո , յորժամ տեսցես
զլրջամտանս արդարոց ՚ի փայլիւնս բաշխելոյ սրար-
դեացն , և սուգ մեղաւորացն ՚ի խորն խաւարի .
որպիսի՞ ասասցես ՚ի ցաւս սրտի քո յայնժամ : **Օ** է-
արդ չեն յընկենուլ յինէն զնանըութիս , զրեռինս
մեղաց . զի այսպէս դիւրին էր ՚ի բաց առնել . այլ
շեզեցի զարիս , և ձգեցի ընդ իս , և ոչ եղեւ ինձ
լուանալ զիսիզնս ՚ի յինէն , այլ հաստատեալ կացի
՚ի մեզս աստ այժմ : **Վ**լ և ես ընդ արդարս այժմ ,
այլ և ես յերկնաւոր բարութիւնսն վայելէի ⁴ : **Վ**լ

1 Յօրինակին բարէ :

2 Յօրինակին գուն :

3 Յօրինակին պարպեշէ :

4 Յօրինակին շարէլւ :

խորհրդոց շարեաց , վասն առ ժամ՝ մի մեղաց հան-
գըստեան՝ զանմահ տանջանս տանջիմ . վասն ցանկու-
թեան մարմնոյ՝ ի հուր մատնիմ : Արդար են դա-
տաստանք այ՝ կարդային ինձ , և ես ոչ գնէի միտ .
վկայէին ինձ , և ես ծաղը առնէի : Այս և այսպի-
սիս ասասցես , և լացցես զանձն քո , եթէ յառաջ
քան զմկրտութիւնն յափշտակեսցիս :

1. մարդ , կամ 'ի գեհենէն երկիր , կամ զար-
քայութենէն պէտ արա . մի անարգեր զկոչն . մի
ասեր , եթէ հրաժարեալ ունիմ՝ զիս վասն այսր , և
վասն այսր . ոչ մի պատճառք գոն քեզ 'ի հրաժա-
րեն : Ինձ արտասուք դոն՝ յորժամ յիշեմ , զի զա-
մօթոյ գործ յարգես քան զմեծութիւն փառացն այ .
և յաղագս արձակն և համարձակն գնալոյ քաղցրա-
նայ քեզ , անհնարին է քեզ հրաժարելդ 'ի մեղաց .
և 'ի պարգևացն բարուե արգելուս զանձն քո , իրեւ-
ոչ կամիս տեսանել զբարութի յըրուսաղեմի երկնա-
ւորի . ուր բիւրք հրեշտակացն են , ժողովուրդն ան-
դրանկացն , առաքելոցն աթոռք , մարդարեիցն
գահք , հարց նահապետաց գաւաղանք իշխանութե ,
մարտիրոսաց պսակք , արդարոց գովութիք : Հան-
կալի է ընդ նոսսա թուել զանձն քո . լուակ զանձն քո ,
և սրբեալ ըստ պարգևացն Քիսի . զի նորա են փառք
և պատիւ այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից .
ամէն :

Ճ Ա Ռ Մ Ե Տ Ա Ս Ա Ն Ե Ր Ո Ւ Ր Դ

ԱՅՆ ԱԵՆՔԻ ԲԱՆՈՒԻ ԵՎ ԱՆ ԵՎ ԽՈՎՈՎՈՒԹԻ ԳԱՀՈՒՄ ՄԱՆ ՅՈՒՆԱԿԱՆ
ԱՅՐՈՒՄԱՆՑԻ :

ԵՏԵՍ զար փրկիչ և զած կենարար թշնամին
Ճշմարտութեալ, և խռովեցաւ . ետես զտէ-
բունական գալուստն յաւանակաւ, փառաւորեալ 'ի
մէնջ իբրեւ յառաջինն, և ջանացաւ 'ի խռովիւլ 'ի շա-
շիւն կառաց թրթրականաց՝ առ 'ի խափանել զար-
շաւանս յաւանակին, որ մեղմագնաց, և հանդար-
տագնաց ոտիւք խափանեաց զկառամարտիկ զերի-
վարս պատերազմողաց . քանզի զիտէր, եթէ յովա-
նակն առ. 'ի պարտութն կառաց երիվարաց պատրաս-
տեցաւ . քանզի եկն փրկչին յովանակաւ ոչ եթէ զտը-
կարութի ինչ ցուցանէր, այլ զհեզութի խոնարհու-
թէ, զի զամբարտաւանութի շիջուսցէ : Եւ քանզի
զիտէր թշնամին, եթէ որ ինչ լինելոց են իրք ըստ
մարդարէական բարբառոյն, նախանձեալ քինացաւ
ընդ յաւանակին . այլ զի զհպարտութի հպարտացե-
լոյն շիջուսցէ, և զմեծամեծ ամբարտաւանութիւնն
մեծամուելոց 'ի կառս և յերիվարս խոնարհեցուսցէ :

Օ որ բարւոք յառաջագոյն երանելի մարդարէն
ազդ արարեալ քաջալերէր ասելով : Ո՞ի երկնչիր,
դուստր Ոիովնի, քարոզեալ և ուրախ լեր, դուստր
Երուսաղեմի . զի ահա թագաւոր քո դայ հեծեալ 'ի
յաւանակ իշոյ, զի սատակեսցէ զկառս յիշփրեմայ,
և զերիվարս յիշրուսազեմի : Ծեսանես, զի զջօձե-
մական ամպարհաւաճութին մեզկոյր հեղութքն և
ցածուցանէր . զոր օրինակ չարչարանօք զարչարանս
եբարձ, և մահուամբ զմահ կապեաց, և փայտիւ-
նը խաչին զհակառակամարտին զօրութին խայտա-
ռակեաց, նոյնպէս և յաւանակաւն զձիամարտիկ
զուռողութին խրոխտացելոյն քակեաց :

Եւրախ լեր, ասէ մարդարէն, դուստր Ոիովնի,
յնծած և քարոզեալ, դուստր Երուսաղեմի : Օ ի պարտ
և պատշաճ է ածապաշտից՝ ոչ միայն յանձին ունել

զանձական պարգևս, այլ և յայլս սփռել զռարերա-
բութեն զքարովութիւն : Օի աշաւասիկ թագաւոր
քո գայ հեղ, և խոնարհ, և նստեալ յովանակի :
Ինարւոք զէեզն և զխոնարհն յառաջդիր հաստա-
տեաց . զի յայտ արասցէ, թէ ոչ չքաւորութեան
ինչ պատճառք էին, այլ հեղութեն և խոնարհութեն
աւետիք . զի եթէ ոք առ աղքատութեն ինչից, և
չքաւորութեան երիվարաց՝ հեծանիցի յիշամարուկ
յովանակի, չէ ինչ 'ի լաւութիւն և խոնարհութիւն
համարեալ . քանզի հարկ տնանկութեն ածէ զնա
յայն . իսկ եթէ ոք կառաւետ երիվարաշատ՝ առ
հեղութեն նստիցի 'ի մտըկի իշոյ, զարդարէ խոնար-
հութեն զկարգ հեղութեն : Չէր աղքատ 'ի կառաց
թագաւորն զօրութենց . չէր չքաւոր 'ի կառաց և
յերիվարաց միածինն . զորմէ մարդարէն ասէ, թէ
կառք այ բիւրապատիկք են, և հազարք ուղղիչք .
չէր աղքատ 'ի կառաց, որ զհողմն լծեալ արշաւեէ՝
սքանչելի և նորանշան երասանակօք : Լամ թէ ոչ
գիտիցես, թէ որպէս մեզ ձիք՝ են յերիվարս, նոյն-
պէս և նմա հողմք համարեալ են յերիվարս . ըստ
այնմ որ Դաւիթիթն ասէ, թէ որ շրջի 'ի վերայ թեսոց
հողմոց :

Դրդ եկն յովանակաւ միանգամայն քակել զամ-
բարտաւանուի խոնարհութեն, զի և զօրինակ մահին
հեթանոսաց կատարեալ աւետարանեսցէ : Վանզի
յաւանակն ընդ պիղծ անասունս համարեալ է . զի
ամենայն որ ոչ կճշգակահերձ իցէ, և ոչ որոճիցէ,
ընդ պիղծ անասունս զատեալ որոշեաց Ո՞վսէս . և
էշ, քանզի ոչ որոշայ և ոչ կճշգակահերձ է, ընդ
պիղծ անասունս համարեալ է : Հառաջաղոյն կա-
տարեր զկերպարանս մարդախնդիր տեսչութեանն .
քանզի հանդերձեալ էր անուանել երիվար անդա-
զան սրբական ժողովուրդն . զի որպէս ձիք երիվարք
են հեծելոց, այնպէս և հոգիք նըց երիվարք են այ
առ 'ի վարս և 'ի հըամանս խրատականս . ըստ այնմ
զոր մարդարէն ասէ, եթէ ելանիցես յերիվարս,
և հեծելութիւն քո փրկութիւն է : Այսպիսի ինչ

Երիվար տրմուղ աներասանակ էր Պաւղոս , յան-
սական անային սանձացն , անկուշող , կցատող անային
օրինացն : Որ ՚ի ճարակս օրինացն արածէր , և ա-
ւետարանական չնորհացն կիցս ընկենոյք . յորժամ
եդ նմա սանձա , նստեալ ՚ի վերայ նորա որդին ամե-
նատէրն , ասէր . Վաւուղ Վաւուղ , զի՞ հալածես զիս .
խիստ է քեզ ընդդէմ խթանի աքացել , և ընդդէմ
սուսերի կիցս ընկենուլ : Եւ քանզի ել փախեաւ ՚ի
կարգէ ճառիս յովանակն , աղաւեսցուք զտր յովա-
նակին , որ կարողն է ունել և ածել , և հաստատել
ընդ ճառու զյովանակն . քանզի ինքն է զորմէ ասէ
մարգարէութին , կապեսցէ զորթոյ զյաւանակ իւր :

Կատաւ ՀՅՌ ՚ի յաւանակի , որ նստին ՚ի քերութես .
որ ՚ի վեր ահաւորն է վասն անձական բնութեանն ,
և ՚ի խոնարհ տենչացեալ վասն մարդասէր չնորհացն .
որում ՚ի բարձունս գողութք երկիր պագանենն սե-
րովքէք , և յերկրի համարձակութեամք քարոզի ՚ի
մարմնականացս : Օի որչափ ՚ի վեր է ահագին
ծնունդն , նոյնակիս և ՚ի խոնարհ փափագանաց ինքն-
արձակեցիկն շառաւեիզի : Կատաւ ՀՅՌ ՚ի յաւանա-
կի , և տարածանէին ժողովուրդքն զհանդերձն ա-
ռաջի : Շարւոք էր պատիւն , այլ ոչ ինչ արժանի
ըստ պատուիրանին պատուչացն պատիւն . քանզի ոչ
եթէ ըստ իւրում արժանաւորութեն խնդրէ ան-
պարզես ՚ի մարդկանէ , այլ ըստ բաւականի պա-
տուղացն , նա և զիք իսկ այնպիսի ինչ՝ որ զած ըստ
իւրում արժանաւորութեանն պատուել կարացէ :
Ոչ երկիր ամենայն , և ոչ բնաւ երկինք բարբառս
ձուլեալ , և ամենայն բարբառք հրեշտակաց և հրեշ-
տակապետաց , երևելեաց և աներեւութից լիեալե-
զուք՝ բաւական են ըստ իւրում արժանաւորութեն
փառաւորել զնա :

Հեծաւ յաւանակի , որ յերկնականսն նստի մը-
տընթենաւորական : Տարածանէին մարդիկն զհան-
դերձն առաջի , որոց օրէն էր նախ քան զհանդերձն
զհողին տարածանել : Ով որ տարածանես ըզ-
հանդերձսդ . ՚ի կոխումն յաւանակին , տարածեա
զհողիդ այ ՚ի բնակութի . զոր և մլրտիչն Հյովաննէս
բարոզէր , պատրաստ արարէք զհանապարհս ան , և

ուղիղ արարէք զշաւիղս հորդեալս . այս է՝ զհոգիսն
առնել պատրաստական , յորում մտանէ և ընա-
կեցէ ածն և տեսառնորդին , իշտ ոստս արմաւենեաց
տռեալ՝ ելանէին ընդ առաջ . և զոր հրեշտակք փա-
ռաւորեն յերկինս աչիւ , օրհնէին և մանկտին՝ ցըն-
ծալով յերկրի , ասելով՝ ովսաննա , այս է ըստ եր-
ռայեցւոց բարբառոյն՝ փառաբանութիւ իսկ նշանա-
կեալ և մեծ դովութիւ :

ՃԱՌԻ ԵՐԿՈՏԱՍԱՍԱՆԻ ԵՐՈՐԴԻ

ԵՐՐՈՐԴԻ ԿԻՒՐԱԿԵԲԻ ԵՐԱՆՆԵԼԾՈՅՆ ԱՆՔԵՐԻՄԱՆՈՒԹԻ ԵՎԼԻԱԿՈԱՊՈԽԻ ԱՍԱՋՆԱԸ
ՃԱՏԵԿԱՊՐԱՆԻ ԱՆՂԻՆՈՒԹԵՆԿԻ :

ԱՅՐ մի իջանէր յլշըուսաղեմչյլշըիքով, և անկատ՝ ի ձեռս աւազակաց . որք մերկացուցին զնա, և վերս մեծամեծս եղին՝ ի վերայ նորա . թողեալ կիսամահ՝ և գնացին : Վպա գայր անցանէր հայրապետ մի, ետես և զանց արար . երկրորդ անդամ գայր անցանէր զետացի մի, ետես և ոչ գթացաւ . երրորդ անդամ անցանէր ընդ այն շամբտացի մի, ետես և գթացաւ՝ ի նա . առեալ լուաց զվերս նորա, արկ՝ ի նա զինի և ձեթ, պատեաց զնա, եղ՝ ի վերայ գրաստու իւրոյ, տարաւ ետ զնա ցպանտոկապետն . և հանեալ երկուս դահնեկանս՝ ետ ցպանտակապետն, և ասէ . պահնեալ զգա, մինչեւ՝ ի կրկն գալստեան իմում և հատուցից քեզ զվարձս :

ԱՐԴ յորժամ արար անձ զերկին և զերկիր և զմարդն ըստ պատկերի կերպարանաց, որպէս ասէ պատմութին . ստեղծ որ անձ զմարդն հող յերկրէ, և անկեաց զդրախտն յլշդեմ . և անդ եղ զմարդն զոր ստեղծ ձեռօք իւրովք, և փշեաց յերեսս նորա շունչ կենդանի . և եղեւ մարդն յոզի կենդանարար . և գործեսցէ զբարին, և արասցէ զհաճոյն առաջի այ : Եւ կամ զի կայր՝ ի նմա, և կամ երկիւղ իսկ յումմէ կայր, զի պահ տայր ունել . քանզի ոչ ոք կայր՝ ի նմա, բայց միայն Վգամ : Իսկ գիրք որ այսպէս ցուցանեն մեզ, ստեղծ որ անձ զմարդն, և անկեաց զդրախտն : Օ ո՞ր դրախտ . եթէ ոչ զկաթուղիկէ եկեղեցի . և եղ անդ զվամ, զի գործեսցէ զարգարութի : Եւ զի ասաց անձ, ասէ, յամենայն ծառոցգ՝ որ են՝ ի ներքս՝ ի դրախտիդ՝ ուտելով կերիցես : Յամենայն ծառոց . ուստի հրամայեաց ուտել . ամենայն պատգամք բարիք են՝ որ դրեալ են՝ ի գիրս նբառ Քամի, զոր թէ առնէ մարդ, կեցցէ նովիմք . և ծառ զիտութե բարւոյ և չարի, զոր ասաց անձ, մի

ուտիցեք 'ի նմանէ , պատգամք անսլիտանք են՝ չա-
րաշար գործք մարդկան , զոր գործէ մարդ , և նո-
վիմք մեռանի :

Այլ վիճը խորհուրդ իցէ 'ի դրախտին և 'ի պը-
տուղ նորա : Ի՞նչ մեք հաւատալ պարտիմք , եթէ
դրախտն օրինակ էր եկեղեցւոյ . և գետն , որ ելա-
նէր ոռոգանել զդրախտն , նոյն ինքն Վահ , որ ծնաւ
'ի Վարիամայ կուսէն , զի առակեաց զՎարիամ յլշ-
դեմ . վասն զի 'ի հողոյ ստեղծեալ էր զնա յերկրէ .
և յայդմ գետոյ ըրք առաջք ելանեն . որոց ա-
նուանքն յայտնի են . Վատթէոս , Վարկոս , Ուկաս
և Հոհաննէս , որ զբեալ են զըրս աւետարանսդ՝ ոռո-
գելով զամենայն տիեզերս :

Ենցմէք արդեւք , սիրելիք , զօձն զսատանայ , որ
նախանձեցաւ ընդ մարդոյն չարութեր և գայթակղե-
ցոյց . և ովէ սատանայ , եթէ ոչ մահ . զի յորժամ
անց Վդամընդ հրաման պատուիրանին , հրամայեաց
ած , և թագաւորեաց մահ 'ի վերայ նորա . իսկ իբրե-
ետես ած՝ եթէ մեղաւ Վդամ , ասէ ցօձն . անի-
ծեալ լիջիր դույամենայն անասունս . զի դու ապա-
կանեցեր զպտուղ որովայնի դորա , արդ դու 'ի
պորտքո սողեսջիր զամենայն աւուրս կենաց քոց :
Յորժամ մեղաւ Վդամ , բարձաւ 'ի նմանէ փառքն
և պատիւն , և թագաւորեաց մահ 'ի վերայ նորա :

Վրդ այրն որ իջանէր յլշրուսաղեմէ յլշրիքով ,
այրն Վդամ էր , և աւազակն սատանայ էր : Իսկ որ
ասէ , թէ վերս 'ի վերայ եդին , նոյն ինքն սատանայ
զի մեղօք վլրաւորեաց զնա : Եւ յլշրուսաղեմերկինք
թարգմանի , և յլշրիքով երկիրս այս 'ի ստորին կողմն :
Իսկ որ քահանայապետ մի գայր անցանէր , եկն անց
հայրապետն Վբրահամ , և ետես զադամայական
մարմինն 'ի մեղացն մեռեալ և ոչ կարաց բժշկել . իսկ
որ ասէն , եթէ երկրորդ անդամ գայր անցանէր քա-
հանայապետ մի . ովէ էր քահանայապետն , եթէ ոչ
Վովլսէս , որ ետես զադամայական մարմինն 'ի մե-
ղացն մեռեալ , և ոչ կարաց բժշկել :

Իսկ որ ասէն , եթէ երրորդ անդամ գայր անցա-
նէր շամբաւացի մի , ետես և զթացաւ 'ի վերայ նո-
րա . Վամբուացին ովէ էր , եթէ ոչ ինքն Վահ . լուաց

զվերս նորա՝ ոչ այլ ջրով, այլ Յորդանան գետով. արկ 'ի նա ձեթ և գինի . գինի առակէ օրինակաւ 'ի հոգին որ՝ որ էջ 'ի նմանութեա աղաւնոյ 'ի վերայ նորա . և ձեթն 'ի մկրտութե դրոշմն : Պատեաց զնա օրինօք և մարգարեիւք, եղ 'ի վերայ բեռին իւրց, այսինքն 'ի վերայ խաչափայտին . տարաւ ետ զնա 'ի պանդոկի մի: Պանդոկին եկեղեցի թարգմանի , քանզի հիւանդանոց է ամենայն մեղաւորաց . և պանդոկին ետ ցապանդոկապետն . եկեղեցին ցեղիսկոսուն : Եշւ ետ նմա երկուս պատուիրանս, զոր զրեալ է . լուր, Խսրայէլ, որ ածքո որ մի է, և սիրեսցնս զոր ած քո յամենայն սրտէ քումմէ և յամենայն զօրութենէ քումմէ և յամենայն անձնէ քումմէ . և զընկեր քո իբրև զմնձն քո, որ լաւ է քան զողջակի զս և զզոչս : Եշւ յորժամ սիրեսցուք զմիմեանս իբրև զանձինս, և որ ինչ մեզ չար թուի՝ ոչ արասցուք ընկերացն, յայնժամ ապա կատարեսցուք զպատուիրանն Վահ . և յայսմ ամենայնի փառաւորեսցուք զհայր և զորդի և զհոգին որ այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտեանից . ամէն :

ՃԱՌԻ Ե ՐԵ Ք ՏԱՍՄԱՆ Ե ՐՈՐԴ

Երանելոյն Ահւերիանոսի և պիտիովով ՚ի թաղենին որ ցամաքեցաւ :

Վայն տեսանելով ծառ ծաղկազգեաց¹, և կամբաղը բեւը ջրաբուղիս, նովին տեսութեամբ ընդձեռէ և զիրտն, և զմիտմն դարձուցանէ անդր. նմանապէս և ունկն լսելով՝ ՚ի ձեռն բանից զգործս և զպատմութիս, առ այնոսիկ զմիտմն ձգէ. մինչ զի լինել այնպիտումն յայնմ տեղւոջ, բայց մտօք անդր՝ ուր բանն զպատմութեն իրս նկարագրէ : **Վ**այփիսի ինձ դիպեցաւ այժմ, սիրելիք. լսելով յաւետարանչէն՝ որ պատմէ ՚ի յնթանիա ՚ի ՚ի՞սէ զթղենւոյն իրս լեալ. աստ եմ մարմնով, այլ մտօք անդր զիս գոյլ վարկանիմ. և կարծեմ զիեւ երթալով չ'չի՝ տեսանել զթղենին նախքան զտէրունոյն հրամանն ծաղկեալ և զուարձացեալ, և յետ ո՞ն հրամանին խամբեալ և զօսացեալ :

Վաւատուն, ասէ, երթայր ՚ի քաղաքն չ'ու. քաղցեաւ, և տեսեալ զթղենին՝ չոգաւ առ նա. և ոչինչ եզիտ ՚ի նմա, բայց միայն տերե. և ասէ ցնա, մի ևս ՚ի քէն պտուղ եղիցի յաւիտեան. և վաղվաղակի գօսացաւ : **Վ**այփիկ մեզ այժմ ընթերցեալ եղեն. հիացուցանեն զիս իրքն, և բաժանին միտքս. զի յորժամ կամիմ զպատմութեն իրս ասել վաղվաղակի հանդերձ տեսութեն սքանչելիքն յինքեանս զիս ձգեն : **Վ**այ յորժամ տեսանիցէ ոք ստոման ուկի՝ որ ունիցի յինքեան ականս² պատուականս, բերելով յինքեան զրեալ զիսորհուրդն, կամի տեսանել զստումանն յաղագս իւրոյ պայծառութեանն, ընդդէմ նմին ձգեալ լինին որ ՚ի ներքս ակունքն, վասն զի ճեպի և քարանցն տեսանել զգեղեցկութինկարացն, և որ ինչ ՚ի նոսա խորհուրդն է ճանաւել, **Վ**այնպէս և ես տեսանելով զգբոյն պատմութին

1 ԱՆՅԼ օրինակ ծաղկաբնակ :

2 ԱՆՅԼ օրինակ ունանա :

պայծառ շուրջ գեղեցիկ հանդիպելով , և անդք ըմբռնիմ մտօքս . զի ընդդեմ նորոգիմ և դարձեալ 'ի հոգւոյն տեսութենէ , որ մեծագոյն ինչ քան ըզպատմութիւնն խոստանայ ցուցանել զաքանչելիմն :

Վ. աւատուն , ասէ , երթայր չ' ի քաղաքն , քաղեաւ . ովլ անձառելի և անպատմելի խորհրդոյս . քաղցեաւ , որ զամենայն աշխարհս կերակրէր , և զինդ հազարսն հինդ հացիւն կերակրեաց 'ի յազեցումն . քաղցեաւ , որ 'ի կաւոյ կենդանի այս գործեաց . քաղցեաւ , որ 'ի վերայ փրփրոյ ալեացն զնաց , և զոտմն ոչ եթաց . քաղցեաւ , որ զթուլացեալ ողին 'ի մարմնոյն՝ դարձեալ անդրէն բնակեցոյց բանիւ : Խւ զիարդ ասէ Խսայի . անձնյաւիտենական ոչ քաղցեսցի և ոչ վաստակեսցի . իսկ չ' ամենայն հաւատացելոց քաջայայտ է . զիրք ասեն . 'ի սկզբանէ էր բանն , և բանն էր առ անձ , և անձ էր բանն : Քաղցեաւ ծառային կերպարանն , և կերակրեաց զինդ հազարսն՝ որ 'ի նմա էին միացեալ տէրունական կամքն . եկն 'ի թզենին տեսանելի մարդն , և էր ամենայն ուրեք որ 'ի նմա միացեալ էր անձուն . ետես իրեւ զմարդ զանպտուղ թզենին , և գոսացոյց զնա որ 'ի նմա միացեալն էր անձ : **Վ.** աց , մի ևս եղիցի 'ի քէն պտուղ յաւիտեան . և գործն զինտերթայր բանիցն , և թզենին գոսանայր վաղվաղակի . բանն մարդկային , և գործն այ մարմնացելոյ :

Բ. այց յաւէտ ինդրէլի է մեզ տեսութի թզենւոյն , սիրելիք . բազմաց մեկնեալ եղեւ որպէս ինձ թուի՞ ոչ հաւաստեաւ . այլ զյառաջասացողացն քան զմեղ զլուծումն ասացից , և զմէնջ ասացեալն 'ի մէջ բերից . դժուարըմբռնելիք որ 'ի պատմութեգրին . կան միտք յաւէտ , որ 'ի խորւոջ ունին զլսորհըրդոյն պայծառութին . վասն զի զի՞նչ հարկաւոր էրանիւ գոսացուցանել զթզենին , և ոչ բանիւ զնապտղաբեր առնել . զի բանիւ զնա գոսացոյց , կարօղ էր և զնա քաջապտուղ ցուցանել : **Օ** ի՞նչ մեղաւթզենին , ասիցէ ոք արդեւք , յորժամ ոչ էր նորաժամանակ , որպէս և **Ո** արկոս աւետարանին ասէ . ձմեռն էր 'ի ժամանակին յայնմիկ : **Վ.** դդ եթէ ոչ խորհուրդ ինչ իցէ յաղազս մարդկան 'ի նմա կա-

տարեալ, գտցի և տրն ըստ միում¹ օրինակի գովելի, վասն զի բանիւ զնա գօսացոյց . և ըստգտանելի, զի անիրաւաբար զնա նզովեաց : Ի յլ պարտ և արժան է այսուհետեւ, սիրելիք, իմանալ . զնոյն կերպաւ բանս բերէր թղենին, վասն զի մշնչ էին 'ի ՚ թու լեալ իրք՝ որ ոչ ունէին խորհուրդ յաղագս մարդկան կատարման . բոլորովին իսկ ոչ է 'ի նմանէ լեալ գործք՝ որ ոչ յոյժ օգտակարագոյն էր, և ոչ առերկնային ընդունելութին շարժէր զմիտս :

Օ այս թղենի առաջնորդն ասացին հրէից ժողովարանին . յոր եկն, ասէ, տրն խնդրել զպտուղ հաւատոց, և ոչ եղիտ, բայց միայն բանիւք մարդարէից և օրինօք վարսաւորեալ իրեւ տերեւով . մի ևս լիցի 'ի քէն պտուղ յաւիտեան : Ի այց ես մեկնութեանս այսմ ընդդէմ ձեռնարկիմ ասել, սիրելիք . վասն զի ոչ այսպէս ունի հաստատութի մոտաց . զիարդ արդեօք անիծանէր տրն, որ ասէր . օրհնեցէք, և մի անիծանէք . զիարդ և զժողովարանն նզովեաց և գօսացոյց, որ ասէրն . ոչ եկն որդի մարդոյ կորուսանել, այլ խնդրել և կեցուցանել զկորուսեան : Ի պաեթէ ոք ընդդէմ վիճի՝ ասելով հրէից ժողովարանին նման լինել զթղենին, զիարդ արմատաքի գօսացուցեալ զժողովարանն, որ այնպիսի քաջապտուղ շառաւել բուսոյց զքաղցրն զՊաւղոս . յուղէ և այս ծաղկեալս 'ի հրէից ժողովարանէն . նաև Վտեփաննոս քարկոծեալ 'ի նմին ժողովարանէ . հանդիպեցաւ և Վկիւղաս, և յոլով այս, զորոց համար անուանցն յաղագս այժմ յոլովութեան բանից հրաժարեմք ասել :

Եւ զի ոչ ամենեին մերժեաց զժողովուրդն հրէից տրն, վկայեսցէ ինձ Պաւղոս ասելովն . մի թէ մերժեաց ած զժողովուրդ իւր . քաւ լիցի, քանզի և ես իսրայէլացի եմ յազգէ Աթքահամու, 'ի ցեղէ Իւենիամենի . ոչ մերժեաց ած զժողովուրդ իւր, այլ և փրկութի ևս ժողովորդեանն 'ի վերջին աւուրմն խոստացաւ ասելով . յորժամ լրումն հեթանոսաց մոցէ, յայնժամ ամենայն Կարայէլ կեցցէ : Օ ի թէպէտ

և թշնամիք եղեն հրեայքն այ յաղագս մեր , այլ զի նոյցա անհաւատութեն ողորմութիւն գտցուք . որպէս վկայէ ինձ Պաւղոս ասելով , ըստ աւետարանիս թշնամիք են վասն ձեր , և ըստ ընտրութեն սիրելիք վասն հարցն . քանզի անզեղջ են չնորհքն և կոչումն սուրբ :

Խնդրելի է այսուհետեւ , սիրելիք , յաղագս թշնամություն բան , թէ զյըր ուրուք բերէ զկերպարանս : Այլ թէ զԼուամայ յիշես որ 'ի դրախտին մերկացաւն , զորոյ զտերեն առնլով արար ինքեան պատմուձան , աեսեր իրաւացի զիարդ զնա գօսացոյց . կամ թէ ոչ արդեւք և քո տերեւ թշնամություն առեալ զամօթ քո ինքեամբ ծածկէիր : Արդ եկն նորն , և տակաւին ևս 'ի քեզ ծածկէալ եր թշնին՝ ամօթոյ քո ծածկոյթ , բանիւ գօսացոյց . և առ զքո զաղշքատութիդ , և ետ քեզ զՃոխութին . էառ զամօթոյն քո ծածկոյթ , և ետ քեզ զՃիւնափայլ պատմուձանն 'ի ջրոյ և 'ի հոգւոյ անկեալ . ցամաքեցոյց զտերեւ թշնամություն , և ետ քեզ զկապուտ հոգւոյն : Օ որ կապուտ . զոր օճն կողովատեաց 'ի դրախտին փափկութե , զանապականուե պատմուձան : Ի՞սկ երթիցուք վերստին 'ի ձառն :

Առաւօտուն երթալով ՀՅՇ 'ի քաղաքն՝ քաղցեաւ : ՀԵտ անցանելոյ մոլորութեն գիշերոյն , և զառաւօտն ՎՐՇի զյարութեն զՃառագայթն պայծառացուցանելով յաշխարհի . վասն զի առաւօտ եր ՎՐՇ , որպէս և ասէ մարդարէն . որպէս առաւօտ պատրաստական գտցուք զնա : Առաւօտուն երթալով ՀՅՇ . յառաւօտու , յետ ապականելոյ խաւարզգեստ մահուն լուսով փառացն ՎՐՇի , և զոսկէձանձանէ ձառագայթս արեգականն արդարութեան խաւարելոց մարդկան ծագելով . առաւօտուն զջերմն զՃառագայթս անձիւթեն ուսուցանելով , և զմեռեալ անձինս 'ի սատանայէ ծեռուցանելով . զի ոչ ոք իցէ՝ ոք թագիցէ 'ի ջերմութենէնորա . վասն զի սառամանօք մեղացն սատանայ զսիրտս մարդկան սպան , մարդարէն աղօթէր ասելով . հրացն վերիկամունս իմ և զսիրտ իմ . քանզի սառամանեօք ամբարշտութե ամենայն մարդկուիս կապեցաւ , և նորին աղագաւ

մարդարեքն բոլորեքեան 'ի միասին աղաւեին զանձ՝
ասելով. դարձն զգերութիւնս մեր որպէս զուիս 'ի
հարաւոյ . այս է որպէս հարաւ ջերմ չնչելով զա-
ռուցեալ ջուր յառաջին բնութիւն ջրոյն վերստին ա-
ծելով . նոյնպէս և մեզ՝ որպէս և բանսարկուին մե-
զօք մեռաք , իբրև հարաւ ջերմ չնչեալ՝ յառաջին
բնութիւն անապականութեալ դարձոյց . զայս ջերմութիւն
չնչեալ զհարաւոյ . և հարսն Վահի եկեղեցի յերգս
երգոցն գոչէ ասելով . զարթիք զարթիք հիւսիսի , և
եկ հարաւ , չնչեալ 'ի սարտեղ իմ , և բուրեսցին
խունկք իմ :

Վռաւօտուն երթայր ՀՅԱ . գեղեցիկ էր երթալն ,
զի նշանակիցէ՝ զոր 'ի դրախտին անկաւ Վռամ ,
դարձեալ տորն մեր եկեալ՝ 'ի նոյն տեղի , վերստին
երթալովն , տանէր : Վռաւօտուն ՀՅԱ երթալով 'ի
քաղաքն . քաղաք այժմ ասելով մի ինչ 'ի ստորինս
հայեսցիս , այլ 'ի վերինն Երուսաղեմ յերկնային
տեղին . վասն զի մեր քաղաքականութիւն է յեր-
կինս : Վռաւօտուն ՀՅԱ երթայր 'ի քաղաքն , քաղ-
ցեաւ , ոչ 'ի կերակրոց մարդկան , քանզի իմ կերա-
կուր է , ասէ , զի արարից զկամն հօր իմոյ . այս են
կամք հօր իմոյ՝ որ առաքեացն զիս , զի որ հաւա-
տասցէ 'ի նա , որպէս ասէ ինքն , մի մեռցի յաւի-
տեան : Վռաւօտուն երթայր ՀՅԱ 'ի քաղաքն , քաղ-
ցեաւ մարդկային արդարութեն , և տեսեալ զթղե-
նին՝ չոգաւ առ նա . գեղեցիկ չոգաւ առ նա . քանզի
եթէ զանց էր արարեալ զթղենեաւն , ունէր արդեւք
'ի թղենւոցն օձն զործն մահաբեր . այլ չոգաւ 'ի թղե-
նին , և զնա գօսացոյց : Ինդ այսմ թղենւովս մինչ
էրն Կաթանայէլ ետես տորն . վասն զի նախ քան
զայնելն զքեղ Փիլիսոփոսի՝ զի էիր ընդ թղենւովն
տեսի զքեղ : Օ այս թղենի յառաջ տեսեալ ան-
պտուղեալ , ասէր . ելից 'ի ժողովուրդն պանդխտու-
թե իմոյ . զի թղենի ոչ պտղաբերեսցէ : Հայս թղե-
նի ել և Օ ակքէսո . ել տեսանել զտորն . առ որ
ասէր , փութակ էջ այտի . անդուսա՞ուր օձն շաղեալ
էր , 'ի նմա որջացաւ , 'ի նմա թաքեաւ :

Հնորհալից աւետարանին ասաց յիմար թղե-
նի զակեէին , զի նշանակեսցէ՝ թէ լայն և լնդար-

ձակ է Ճանապարհն յիմարութեն, և շարամանեալ.
ուստի չարագոյն ծնաւ զյիմարութիւն։ Չոդաւ 'ի
թղենին տըրն . այս թղենին օրինակ բերէ զբայն և
զբնդարձակ Ճանապարհն՝ որ տանի 'ի կորուստն .
քաղցը է պտուղ թղենացն և մատնող . քաղցը է
հեշտութիւն, և գայթակղումն մեղաց որք մերձենան
առ նա : Օ արկուցանելով փախիր 'ի նորա Ճաշակ-
մանեն, զի դառն է յետ գործելոյն . մեղը կաթէ 'ի
շրթանց կնոջ պոռնկի, որ առ ժամանակ մի պարարէ
դքիմն քո, և յետոյ դառնագոյն քան զլեզի դտանի,
և սրեալառաւելքան զսուր երկսայրի : Ի՞ոզ է հեշ-
տութիւն . քաղցը է, և ընդ քեզ խօսի 'ի սկզբանն
զանխլաբար արկանելով խօսիւքն զդառնութիւն
հու . այսպիսի էր օճն, քաղցը բանիւն և դառն նեն-
գութեն . քաղցը կերակուրն, և դառն անկանեն .
փախիր 'ի հեշտութենէ՝ որպէս յշղիաս { } եղարելէ :

Վրդէկն ի՞սյերկնից՝ քաղցեալ զկեանս մարդկան
դտանելց . եղիտ զլայն և զբնդարձակ Ճանապարհն
հաստատեալ . չոգաւ առ նա, և եղիտ զնա սաղար-
թովք վարսաւորեալ . այս է աղանդովք մեղացն
ծաղկեալս, և ոչ ունելով յինքեան պտուղ մահու :
Ի՞ոզէր . վասն զի ոչ էր ժամանակ . քանզի զայսյա-
ւելաւետարանին . ոչ ունէր, ասէ, պտուղ, վասն զի
ոչ իսկ էր ժամանակ : Օ խարդ կարէր մահ պտղա-
բեր լինել 'ի գալն ի՞նչի, և յարուի աշխարհի քա-
րոզել . ոչ ևս էր ժամանակ պտղաբերել զմահն, քան-
զի թագաւորեաց մահ յ վամայ մինչեւ յ վովլսէս,
այս է մինչեւ յօրէնսն ¹ . Կիտեն զիրք վովլսէս ²
զօրէնսն ասել որ յաւետարանին ասէ . ունին զյովլ-
սէս և զմարդարէսն, նոցա լուիցեն : յշւ զինչ նմա-
նըն . մի ևս 'ի քէն պտուղ եղիցի յաւիտեան, և վալ-
վաղակի գօսացաւ թղենին . և լցաւ գրեալն, ընկլաւ
մահու յաղթութիւն . ուր է մահ յաղթութիւն քո, և
ուր է խայթոցք քո :

Ի՞ոզէր և ձմեռն լեալ ասաց աւետարանին՝
յայնմ ժամանակի, յորում թղենին սաղարթովքն

1 Յօրինակին մէկւ յանիւնն : 2 Յօրին պտղասէր Ա՞վէս :

վարսաւոր էր, եթէ ոչ ամենայն ուստեք դեկուցանէ
տակաւին մեզօք ծաղկեալ զսատանայական ձմեռնն՝
որ 'ի վերայ կայր ամենայն մարդկութես : Ա ասն զի
նախ քան իշխանիս խաղաղուն զընթի գալուստն՝ զա-
նազան հողմովք ազգ մարդկան դանդաշէր կռա-
պաշտութք, արիւնահեղութք, արբեցութք, և ա-
մենայն անկարգ պակշոտութիւն վարուք . իսկ եկեալ
տորն՝ խաղաղութիւն մեր՝ շիջոյց զհակառակ հողմոցն
մրրիկս, որք ամբոխէին զկենցաղոյս այսորիկ զգառ-
նաբեր ծովս¹, և զփրփրաբեր հեշտութեցն նստոյց
զալիս : Կասացոյց զթզենին, և տնկեաց զխան՝ որ
հաւատովք ծաղկեալ է, և զկեանս ամենեցուն պայ-
ծառացուցանէ 'ի ԿՐԱ ՀՅԱ 'ի տը մեր . որում փառք
յաւիտեանս յաւիտենից . ամէն :

1 Յօրինակին պէտքառ . . . զժօնաբէր յահա . եդաք ըստ յունին :

ՃԱՌ ՉՈՐԵՔ ՏԱՍՄԱՆ ԵՐՈՐԴ

Երանելոյն Եմասու և պիտուղով ի չարչարան Քրիստով :

ԻՍԿ զքարչարանացն ԲՇի լուելոչ պարտիմք . քան
զի առնու յանձն և տեղիս : Ծակ վասն մեր մեռաւ, մեք
զքարչարանն ոչ պատմիցեմք . այլ բազում փութով
քարոզեցուք . սա 'ի խաչին վասն քո, և դու յուն և եթ
վասն քո . ոչ պարտիս և դու զանց առնել զքարչարա-
նօքն, զի մեռցի և այժմ սատանայ : Վատնիչն եղե 'ի
խնդիր, և երթեալ կայր կազմ, ոչ յանխուլ տեղիս,
այլ զոր մատնիչն ճարտար գիտեր . առ ձեզ է տե-
ղին : Եւ զի՞նչ այն՝ որ առ ձեզն իցէ . մօտ 'ի տեղին՝
զոր դուք այլոցն ցուցանեք, եկեալ հասեալ էր մատ-
նիչն, և բազում ամբոխ ունելով, զի բազումքն կա-
րացեն յաղթել այ զօրութեն : Եկեալ սուսերօք
որդին սատանայի իւրոյ հօրն չարութեքն . քանզի
նա առ ՎՃամ իրրե 'ի բարեկամ մատեաւ, և ցու-
ցանէր զգործ թշնամոյն . իրրե զմարդ խարեալ
պատրեաց և յաղթեաց . և սա զնենդութին համ-
բուրելովն թագուցանէր . այլ յանդիմանեալ կըշ-
տամբիւր . համբուրելով, ասէ, եկիր մատնել . ոչ համ-
բուրել եկիր՝ այլ մատնել . չքաժարեմ, արա զոր
կամիսդ . դու քեզէն եղեր քո չարեացդ պատճառ :

Օ այս առ մատնիչն . և յունելիսն ասէ . զով խրն-
դրէք . Օ ՅՇ, ասեն, զնազովրեցին : Ես եմ, ասէ .
չքաժարեմ չփախչիմ, քանզի 'ի դոյն իսկ եկի, և 'ի
սոյն եմ ծնեալ . և 'ի բարբառելն՝ զարկան առ հա-
սարակ մատնչովն հանդերձ զգեանի . զի յայտ է թէ
կամաւ եկն ցուցանել . զի բարբառոյն չհանդուր-
ժեցին, զիարդ կարէին ակամայ ունել : Եթէ զիս
խնդրէք, թողէք զգոսա երթալ .

ՎԱՐ ՊԵտրոս որ յամենայնի ջերմագոյնն էր, և
անդ ևս յառաջ քան զայլսն . որ երբեմն բարոռք
յառաջեաց, և երբեմն որպէս կարծեաց 'թէ բար-
ոք իցէ : Որ գիտաց զազոււագոյն իջանելն 'ի նաւէ
անտի . որ ջերմաջերմ հաւատաց, և վաղվազակի

կասեաց . և այն՝ յառաջքան զվիմանալն , և յառաջքան զհոգւոյն ունելն . զի յորժամ զհոգին ընկալաւ , ոչ յաղջկանէ երկնչէր , և ոչ 'ի հողմոյ շարժէր , այլ կայր անշարժ 'ի տեղի հիման զետեղեալ : Ո՞նչ մեղադիր լինել , եղբարք , թէպէտ և ծայրաքաղ տամ զպտուղ ոտն . զիւրոյ առաքինութեցյն փութամ որչափ կարօղ եմ . և եթէ յերկարիմ , մի վաստակիր , քանզի զիսալէն է ձառս :

Երկաց Պետրոս զուրը իւր , զոր հրամայեաց առնուլ 'ի մարդկուն կատարումն . ըստ այնմ զոր Պ ուկաս մեկնեաց . զի կատարեսցի , ասէ , այն՝ թէ ընդ անօրէնս համարեցաւ . զի այլ աւետարանիչքն 'ի խաչելն 'ի մէջ աւազակացն՝ առնուն : Եշատ զունկն ծառային . բարւոք և կարի արժանի . զի ունկն որ ոչ լսէ , ոչ է պարտ կալ 'ի տեղւոցն . և տայ որ բարի առնել ունողացն , զի թէպէտ և ունկն հատաւ , անդէն եղեալ սքանչելեօքն . սակայն ձեռքն յուն երախտաւորին ոչ թափեցաւ : Կալեալ տանէին զէ յապանօք . զի մի ստեսցի մարդարէութին Եսայեաց , թէ իրեւ զոխար 'ի սպանդ վարեցաւ : Աւրախ էին հրեայքն ընդ կորուստ անձանց . խընդայր մատնին իրեւ ուղղութին ինչ կատարելով :

Երթայր և Պետրոս զէկտ կատարածի կասկածագին 'ի կանխասաց ուրացութենէն . լուաւ թէ ուրանալոց ես , և հակառակէր թէ ոչ ուրանամ . յօժարութիւնն բարւոք և գեղեցիկ էր , այլ տգիտութի . վամն զի ոչ զիտէր զինչելոցն , զի նուազագոյն էր : Երթայր զէկտ կեղակարծեօք ընդոստ ըրտաթունդ : Եկն ընդառաջ աղջիկն , միթէ և դուգալիլեացի ես , ասէ . ուրանայր մխտէր Պետրոս . սակայն բարւոք էր ուրացութին 'որ վկայ լինելոց էր յարութեանն . զի թէ որ մեռաւն՝ մեռեալ էր , և չէ կենդանի , զինչ հարկ էր նմա ելանել 'ի խաչ յետոյ գլխիվայր վամն մեռելոցն : Եւ փոխեցաւ 'ի մեռս տեղի , և չփոխեցաւ յուրացութենէն . առոգեաց առ վտանգի և զեղուն կամէր շրջել . գալիւ լեացի ես դու , ասէր . մխտէր ² թէ չեմ գալիլեացի .

և յանդստին յիւրմէ լեզուէն յանդիմանէր։ Ո՞ր այս
պէս առ ողեաց վտանգին տակնապէր՝ ՚ի խուժա-
դուժ աղջկանէ անտի, տեսանես զիսըդ զհուոմայե-
ցիս հաւանեցոյց ձարտարախօսս։ Վ. յլ՝ ՚ի յարութի՝
անդր երթիցուք։ քանզի գեռ զիսաչէն ձառեցուք։
Վահանայքն ծառայազունք նստէին, և դատա-
ւորն ամենեցուն իբրև զծառայ կայր առաջի. վար-
դապէտք օրինացն՝ անձանց օրէնս ոչ ուսուցին, հար-
ցանէին թէ որդի՞ ես այ, նմանեալք սատանայի. զոր
ասաց յառաջազոյն՝ եթէ էք դուք ՚ի հօրէ սա-
տանայի։ Երդմնեցուցանեմ զքեզ, ասէ քահա-
նայապէտն, ասա ինձ, թէ իցես որդի այ կենդան-
ւոյ. ոչ զի ուսանիցի, այլ զի ՚ի միջյ բառնայցէ։
Վատնեցին զթագաւորն դատաւորին. կայր յատեան
իբրև զորոջ առաջի կտրչի՝ ըստ կայեայ ասելցն։
ակնածէր դատաւորն, և չակնածէին չարախուպն։
թագաւոր, ասէն, առնէ զանձն, զի անհրաժեշտ լիցի
վշիոն։ Օ արհուրեալ կին դատաւորին յանութիւն՝
առաքէր պատգամն առ այր իւր. որոյ բարւոք յօ-
ժարեալ, և յօժարութի՝ ոչ սպանանել, այլ արձա-
կել։ հրամայէր հարկանել դան, զի զցասունն մոլե-
կանացն ցածուսցէ. կատարէր զկանիսասացունն, որ
առ վիրօքն բժշկեցաք։ Վիաբարբառ աղաղակէին
և ասէին. բարձ ՚ի մէնջ, բարձ ՚ի մէնջ, և համ ՚ի
խաչ. զի կատարեացի որ գրեալն է զտեառնէ, թէ
արձակեաց յիս զբարբառ իւր։

Օ ի՞նչ կարէին նմա վնաս դնել հրեայքն։ ո՞ր
կոյր ոչ բացաւ, կամ ո՞ր կաղ որ ոչ զնաց. թէրես
որ յողջացելցն իւր ընդ ունելինն². և զի՞ ասէմ
թէրես, և զորոց լեզուս պարզեաց՝ նոքա աղաղա-
կէին ըստ հրէիցն մտաց. կարծեմ զորոյ ասէն,
զի՞նչ ինչ առնելի է այգւոյ իմոյ, և ես ոչ արարի.
կացի մնացի՝ զի բերցէ խաղող, և երեր փուշ և տա-
տասկ. Վ աստակեցաւ ՚ի հրաժարելցն Պիղատոս,
յաղթեցին լիրբքն յանդգնեալք. լուաց զձեռս, զի
ոչ պղձեաց. աղաղակէին, արիւն նորա ՚ի նոսա և
յորդիս նոցա. Եթէ ոչ կատարեցաւ զոր յառա-

ջագոյնն խնդրեցին , ապա ոչ յարեաւ զոր սպանինն : Հյորժամբ զւարաչարն յաղթէին զյաղթութին , յորժամ չարաչար հակառակութքն մոլէին , դատաւորն հրաժարէր 'ի չարեացն , նոքա ըստ կանխասացութեց մարդարէին կատարէին զարդիւնքն . այլ զի կանխաւ դիտէին զարին , յառաջագոյն գուշակէին զձեռնաւ մուս լինելն յօծեալն ո՞ն . կամեցաւ Պիղատոս արդելուլ զար կամն նոցաւ , և ոչ կարաց :

Ելեալ էր Հյորժութաղաքն¹ , և բարձեալ էր ինքնին զխաչափայսն . զի միւս ևս խաչակայ բարձեալ էր զփայտ պատարագին , դատարկ ինչ գործ համարիցիս : Ացին դստերք Երուսաղէմի 'ի դէպ ժամանակի , և ոչ դիտացին զն արժան իցէ լալ . լացէք , ասէ , զձեզ և զորդիս ձեր , մի զիս , զի ես զինչ կամեցայ զնոյն կատարեմ . և եթէ ոչ լան մինչեւ ցայժմ , ապա ոչ յարեաւ զոր բարձինն 'ի միջյու Շառեսցուք ուրախութք զմերոյ փրկութենէն . ելեալ էր թայր Հյորժի մէջ աւազակացն , զի կատարեսցի այն , թէ ընդանօրէնս համարեցաւ , երախտաւորն ընդ աւազակն և ընդ մեզաւորմն :

Եւ արդ խաչելութէ օր՝ օր յանցանացն Վդամայ . 'ի վեցերորդ աւուրն ստեղծաւ Վդամբ , և 'ի նմին աւուր յանցեաւ . Հնազանդ եղեւ Հյորժի նմին աւուր կըել զքարչարանսն , 'ի վեցերորդ ժամ ձաշուն . զի յորում ժամու պարտեցաք՝ 'ի նմին և յաղթեսցուք : Փայտ 'ի դրախտին , փայտ խաչին . անդ կին՝ որով մեղք յաշխարհս մտին . աստ կոյս՝ որ լսէր . ահա մայրքու : Զգեաց Վդամ յայսմ աւուր չարաչար զձեռն իւր . պարզեաց Հյու զգեղեցիկ և նք բազուկսն . Վդամ մերձեցաւ 'ի ծառն , Հյու բեկուեաց զոտսն և զձեռն 'ի փայտին բեւեռօք² . Վդամ առ ցանկութեան ճաշակեաց 'ի պտղոյն , և Հյու ճաշակեաց 'ի լեղւոյն և զքացախ դառնութին . Վդամ լոււր , եթէ փուշ և տատասկ բուսցի քեզ յերկրէ , Հյու յօժարութք պսակեցաւ փշովքն Վդամայ . Վդամ ընկալաւ զանէծս , Հյու օրհնեալն ընդ այլոց անիծից կախեցաւ իբրև զանիծեալ զիհայտէ :

1 Յօրինակին Յու Կառավար :

2 Յօրինակին Բարեկար:

Խրբել յասպարիսի ընթանամք . մի ընդ աջմէ , և
մի ընդ աչեկէ , զի և մովսիսեան տիպք կատարե-
ցան . քանզի և նա ելեալ՝ ի լեառնն ՚ի ժամանակին
յորում ժողովուրդն այ ընդ ամաղեկացիսն տային
պատերազմ , Հեսու որդի՝ Կաւեայ զօրավարն տա-
րածեալ ուներ զգաւազանն ՚ի ձեռինն , ՚ի վերայ
գաւազանին զօրինակ խացին յառաջագոյն նկարէին :
Ենդ Ովր և Հարոսն , մի ընդ աջմէ և մի ընդ աչե-
կէ Ովովէսի . աստ երկու աւազակք՝ մի ընդ աջմէ
և մի ընդ աչեկէ . և ընդէր աւազակք . այլ զի դի-
տասցես , եթէ վասն մեղաւորայ են չարչարանքն .
մինն նախատէր , և միւսն խոստովաներ :

Եշ զի՞նչ տեսեր , ովաւազակ , մանաւանդ թէ ա-
ւետարանիչ . ոչ նշանս , ոչ սքանչելիս . ՚ի խացին կայ
ընդ քեզ , լեզի ըմպէ՝ զոր դու ոչ արթեր . փողք
պսակեալ՝ զոր դու ոչ պսակեցար . և մեւսն նախա-
տէր , և յընկերէն ոչ կամէր ուսանել : Օ ո տեսա-
նես . այր մի ՚ի խացի և ՚ի թշնամանս , և յիշեալ զիս
յարքայութե քում , ասես . զնա՝ որ վճիռ մահու ա-
ռեալ ՚ի դատաւորացն , տէր կոչես՝ զխացեալն , և
դատաւոր զդատապարտեալն : Գուշակէր թէ վասն
մեղաւորաց է խաչեալ . կեցուցանել զկորուսեալն
փութայ . գառնն է փոխանակ բազմաց պատարա-
գեալ : Եշ արդ զի՞նչ կամիցիս , հաւատացեալդ , որ
և ոչ աւազակ : Օ ի յիշեսցես յարքայութե քում :
Դու զառ ՚ի յերկարն խնդրես , ես այժմիկ արարից .
ոչ յերկարեցեր զհաւատսոդ , ոչ արարից առ յասրայ
զշնորհան . այսօր ընդ իս իցես ՚ի դրախտին . ապա ու-
րեմն ՚ի դրախտին էր՝ որ յերկուական ՚ի դժոխս էջ :

Եշ ընդէր այսօր . այլ քանզի Վդամ որ ելն ՚ի
դրախտին ՚ի նմին աւուր , ՚ի նմին ժամու եքաց ա-
ւազակն և եմուտ ՚ի դրախտ անդր . և յորում ժա-
մու եկեր Վդամ ՚ի պտղոյ դրախտին , մինչեւ յոր-
ժամ ել , յամեաց ՀՅՇ ՚ի խացին , մինչեւ կատարեսցէ
զտարածումն բազկացն Ովովէսի :

Ծակեցին զձեռս իմ և զոտս իմ ըստ ՚ի աւթայ
ասելցյն : Օ ի ՚ի փոյ պսակեալն զեղին և զրաժակն
արք՝ փոխանակ Վդամայ ցանկութեն . զի զհակառա-

կորդն խայտառակեալ, զթշնամեռյն պարտութիւնն
ձգեաց միանդամայն՝ ի խացին, և կարաց հանդուրժել
զանարդանսն : Վայլոր յարեւելից ծագեաց աստղն՝
գուշակեսցեն երկինք զծնունդն, ամփոփելով ճա-
ռագայթիցն՝ յայտ առնեին զսուգ չարչարանացն,
զի ծածկեսցեն զմոլեկանն և զյանդզնուին : Երիս
ժաման թագեաւ լոյսն, մինչ դեւ արեգակն արդա-
րութե էր՝ ի խացին և ՚ի չարչարանսն . ասկա երեւ-
ցաւ՝ զի մի կարծիցես թե գիշեր եկն եհաս . և ոչ ա-
րեգակն զարհուրեաց խաւարել . երիս ժամն թա-
քեաւ արեգակն, զի զերիս տիւս և զերիս գիշերս
կատարեալ լիներ ՚ի սիրտ երկրի զորդւոյն մարդոյ
գուշակեսցէ մեւսանգամերեւելովն : Եւ երկինք ամ-
փոփելովն և ծածկելովն զբոյսն՝ քարոզելով զսքան-
չելիսն . իսկ երկիրս շարժելով չհանդարտէր տեսա-
նել . զի պարտ և պատշաճ էր ամենայն արարածոց
դաւանել թէ ով է որ չարչարեցաւն . քակտէին պա-
տառեին գողք երկրի ընդունել զազատն ՚ի մե-
ռեալս : Տիպք և օրինակք չովսեփայ կատարէին,
որպէս ճառեցաւն, ՚ի հարց հրեիցն՝ յորդին, որ մատ-
նեցաւ մեռաւ ՚ի նոցանեն, և միշտ կենդանի է ընդ-
հօր :

Վայլ և անդէն իսկ զարչարանօքն լիցուք, և առ
խաչն չոփի : Վազակքն ընդ նմին խաչեցան . իրք
կարեռոք . զի ուսցուք թէ որպէս մարդիկ մեռա-
նին, և որպէս անձ կամաւ և ոչ ակամայ մեկնեցաւ :
Որք ընդ ընութեան կապանօքն էին, նոցա բարձքն
խորտակեցան, զի ըստ բնութենն նոյնպէս և զմահն
կրեսցեն . իսկ որ զիշխանութինն ուներ զնել զանձն
և առնուլ, որպէս ՚ի կուսէն կամաւ և ոչ ակամայ
առ զմարմինն, նոյնպէս ՚ի խաչին կամաւ և ոչ ակա-
մայ արար որոշումն իւրոյ հոգւոյն : Հայր, ՚ի ձեռս
քո աւանդեմ զշոգի իմ . ոչ ՚ի ձեռն ամբարշտայն,
զոր վեր ՚ի վայր պարսաւեն : Վայն են զարմանք մեծ,
քանզի կամաւ և ոչ ակամայ մեռանի, այլ ոչ եթէ
ցաւոց ինչ հարկ անգամ, կամ այլոց իւրիք հարկաւ .
իսկ յօրժամ ինքն կամի՝ արձակէ զոգին :

Եւ արդ իցէ արդեւք միածինն յամենայնի . զի
որպէս ՚ի հօրէ միայն ծնաւ, և ՚ի կուսէ միայն ըստ

մարմնաւոր ծննդեանն , նոյնպէս և 'ի մահուն կա-
մաւ և ոչ ակամայ մեռանի : Ծակրահաւատ լինին
լսողքն , թէ մարդ իւրովք կամօք՝ յորժամ կամեսցի՝
արձակէ զոգին . և այնպէս՝ որպէս զի մի ոմն 'ի զի-
նուորաց անտի , որպէս անհաւատալի թէ արդարե-
այնշափ վաղվազակի մեռաւ , երաց գեղարդեամբ
զկող մի 'ի կողիցն . և ոմանք զարմացեալ էին , թէ
արդարե որդի այ է : Խւ ընդէր ոչ զսիրան կամ
զայլ կարևոր տեղին խոցեաց գեղարդեամբն . այլ
յոր արկ զժանիս օձն , քանզի 'ի կողից առաւ Խւայ .
և որ բժշկիցէ զվերս օձին զթիւնիցն տեղի պարտ
իցէ հատանել , զոր վայր հարեալն իցէ . ապա ուրեմն
պարտ և պատշաճ էր կողընդ կողոյն . զի ճշմարտի-
ցէ որ ասացն , թէ ահաւասիկ կատարեցաւ ամե-
նայն ինչ :

Վիս զիր և աւուրն , զի յորժամ բազարջն , և
զատիկն չարչարանաց . և յորժամ ոչխարն , յայնժամ
և գառնն . եթէ սխալէ ինչ թիւն , մի պարտասիր .
քանզի ոչ եթէ եկեղեցի սխալէ , այլ հրեայքն թո-
ղին զիւրեանց թիւն : Այսօր եղեւ մահու մահ , մե-
ղաց սատակումն , մեզ պատարագ քաւութե՛ , թշնամ
ւոյն խայտառակութե՛ : Այսօր եղեւ մեզ սկիզբն կե-
նաց , և նշանակ յաղթութե՛ ընդդէմ ախոյեանին :
Այլ վասն մահուն չէ ոք երկմիտ , քանզի ամենեքեան
խոստովանին . չեթանոսք նախատեն , հրեայք ասեն ,
մեք սպանաք . այլ նոքա կը եսցեն պատիժս , և եկե-
ղեցի պարծի 'ի Ք՛ս Ք'ս 'ի առ մեր . որում փառք
յաւիտեանս . ամէն :

ՃԱՌԻ ՀՆ ԳԵՏԱՍԱՍԱՆԵՐՈՒԴԻ

Երանելոյն Եւսեբի եպիսկոպոսի 'ի խորհուրդ մատնութեան :

ՓՈՒԹԱՍՑՈՒԲ 'ի խաջն ՎՅջի , ոչ զի 'ի խաչ ելաւ նիցեմք , այլ զի Երկիր պատանիցեմք . եկեսցէ և չըուղա 'ի մէջ քաղաքայինն ձերոյ քաղաքիս , ապախտաւ ւորն երախտեաց , գողն յամենայնի . զոր թէպէտ և զիտէր որն զնա գող և կծծի , կամեցաւ հատանել 'ի բարոյիցն , և կարձել զախտս զողութեն . հաւատայր նմա զարկին՝ զքսակն մտից . հաւատայր զքսակն , զի իցէ գող և մի մատնիչ :

Ոչքացաւ Հուդա տեսանել ընդ կոյրսն բացեալս , և ոչ ողջացոյց զոտսն որպէս զկազս ողջացեալս ու տիւք , և ոչ սպարզեաց զձեռուն ընդ կարկամեալսն ձեռօք որ պարզեցան , և ոչ բժշկեցաւ ընդ ցաւածն որ բժշկեցան . ոչ փոխեցաւ ընդ ջրոյն 'ի զինի , և ոչ նահանջեցաւ ընդ ծովոյն դադարելց . ոչ ակնածեաց 'ի փառացն՝ զոր պատմէին 'ի լեռնէ անտի իշեալ ընկերքն :

Այլ խնդրէր ժամանակ հայր նորա սատանայ , չզանգիտեաց և նա . այլ մեւս ժամանակ խնդրէր օձ երկրորդ , որ եղեւ գործի և աման չարին : Եզիտ զնա սատանայ անոթ պիտանացու 'ի պէտս իւրոյ նենդութեանն . յախտս անկեալ գնի , ասէ , յընչասիրութեան . գտի պատճառս , կարօղ է լինել ինձ երիւղարս :

Եւ որպէս անդ խոստանային վաճառականքն տալ եղբարցն Հովսեփայ երեսուն դաշեկան՝ զնել զՀովսեփի 'ի ծառայութիւն . նոյնպէս և աստ տային երեսուն արծաթի , զի վաճառեսցի տեառնորդին 'ի սպանդ : Երեսուն առ երեսուն , զի կատարեսցի կանխական օրինակն : Ենդ առին՝ զի աստ տայցեն . անդ վաճառեցին , և աստ զնեցին արիւն արդար յիւրեանց դատապարտութի :

Երես ախտայցեալ զՀուդա թշնամին արծաթու-

ըութքն, եղիտ դուռն բաց, և մտեալ՝ եղեւ բնակիչ։ Ոչ եթէ 'ի հարկէ բռնաբարեաց և եմուտ, այլ նա կամեցաւ ընդունել . զի եթէ 'ի հարկէ վարեր, ապա զոք ոչ կարեր յաղթել և յամօթ առնել զթշնամին։ Ոտեալ ընակէր 'ի սիրտ մատնչին սատանայ, որում ինքն կամեցաւ լինել վանք։

Գիտէր և ողբն, տայր իւրաքանչիւր օրհնութի, և սկսանէր ասել՝ մի ոմն 'ի ձենջ մատնելոց է զիս, զի թերեւս զանգիտիցէ ինչ որոյ խիղճն կայր'ի մտի։ Համարձակքն՝ անխիղճ ընդ առաջ ելեալ բանիցն, ասէին մի մի . մի թէ ես իցեմ, ողբ . կասկածեալք'ի կարծեացն, և չերկուցեալք յանխղճական մտացն . իսկ մատնիչն պապանձեալ կայր՝ գիտակ իւրոյ մտացն խղճականաց։ Եւ իբրեւ կատարեցին իւրաքանչիւր ամենեքեան ասել համարձակութեամք, ապա կաղ'ի կաղս ընդ քիմսն կիսաբերան՝ ծանօթական խըղճիւն՝ ասէր . մի թէ ես իցեմ։

Օ որ օրինակ 'ի ժամանակին յորում էր ինդիր բաժակին՝ որ 'ի բեռինս եղբարցն զովսեփու, յետոյ յուղեցաւ բեռնի ենիամենի, յորում գտաւ բաժակն գողունի չգողացեալ . նոյնպէս և 'ի կատարել ամենայն աշակերտացն զհամարձակական հարցուածսն, ապա գտանէր յանդիմանեալ մատնիչն՝ ընդ ատամունսն տալով պատասխանի . մի թէ ես իցեմ, ռաբբի։ Վո՞ բերանդ անդէն կշտամբէ զքեզ։

Ետ նմա հաց . գիտէք զինչ ասի, մանկունք խորհրդոյ։ Գրեալէ՝ թէ ընդ պատառոյն եմուտ 'ի նա սատանայ . ոչ եթէ հացն զօրացոյց 'ի նմա զկամն թշնամոյն, այլ չնորհքն յանդիմանեցին զանարժանն՝ իբրեւ չարժանաւոր։ Երթեալ մտանէր այնուհետեւ չար ոմն 'ի յանձին կորուստ, և ոչ ևս լսէր¹, եթէ մի արասցես, այլ եթէ զոր առնելոց ես արա վաղվաղակի։

Պատրաստ էր ամենեիմք ամենայնի իսկ ամէնիմաստն և հեղն յամենայնի . թէպէտ և բաղում անգամ խոյս տայր, ոչ զանգիտեալ կամ երկուցեալ, այլ ժամանակին սպասեալ . ոչ զի զժամա-

նակս և զժամս խտրե՞ , այլ զխորհուրդս յիւրեանց
ժամանակին կատարեսցե՞ . զատիկ ընդ զատկի , և
զենումն ընդ զենման . գառն փոխանակ ոչխարցն ,
արիւն ընդ արեան . փայտ փոխանակ փայտի , մահ
ընդ մահու՞որ եղեւ կեանք արարածոց . 'ի ՚ Յըիսուս
Հիսուս 'ի տէր մեր . որում փառք յաւիտեանս .
ամէն :

1 Յօրինակին Խոշե :

ՎԱԽ ՃԱՆ

